1—2 A. *Եւ պարտ է — իմաստասիրութեան]* El. *չիք*. 2—4 El. ἦν γὰρ ἐκτελεῖ χρείαν ἡ στάθμη τῷ τέκτονι διακρίνουσα τὰ εὐθέα ἀπὸ τῶν καμπύλων καὶ παρὰ τοῖς οἰκοδόμοις τὸ βαρύλλιον διακρῖνον τὰ ὀρθὰ ἀπὸ τῶν κεκλιμένων 117,9-11. 8—9 El. ταῦτα ἔχει καὶ ἡ παροῦσα πρᾶξις 117,13—14. 11 A. *եւ ոչ գիտեմք]* El. καὶ διὰ τοῦτο οὐκ ἴσμεν 117,16. 13 El. φέρε τρία τινὰ ζητήσωμεν 117,17. 17 El. ἀπὸ τῆς φυσικῆς 117,20. 19 A. *Բոյիթի*. 19—22 El. Βοηθὸς ὁ Σιδώνιος ἀπὸ τῆς φυσικῆς λέγει, Ἀνδρόνικος δὲ ὁ Ῥόδιος ὁ Περιπατητικὸς ὁ ἑνδέκατος διάδοχος τῆς Ἀριστοτέλους σχολῆς ἀπὸ τῆς λογικῆς ἔλεγε 117,21—24.

*նախ եւ առաջին զարդարել զքարս եւ մաքրել զհոգի յամենայն չարաքարոյականացն բարուց, վասն զի մաքուր գոլով մաքրագունապէս մերձեսցի յիմաստասիրութիւնն. քանզի „անմաքուր ի մաքուրն հպել ոչ իրաւ" ըստ Պղատոնի, որպէս եւ ի բժշկականութեան ասեն, եթէ „զանմաքուրս ի մարմնոցն որչափ դարմանեսցես՝ առաւել մնասեսցես՝ նիւթ տալով չարամաղձութեան", եւ որպէս ոչ կարողութիւն է բլշականաւքն աչաւք եւ այտուցելաւք ստուգաբանել յաղագս տեսանելեացն, նոյնպէս եւ որ չարաբարոյականաւք կարծեաւք հասեալ ունի զհոգին եւ ձեռնարկէ ուսուցանել մեծ սկզբմունս՝ սուտ կարծելութեան շնորհէ, եւ անվարժ ո՛չ այն որ ոչինչ գիտէ, այլ որ զմանկայինն յինքեան ոչ ունի ամփոփեալ ի չարէ. քանզի է մանկային ինչ ի մեզ եւ ծերոցելոց՝ անբան հոգի, զոր պարտ է վարժել.** եւ վարժեալ առ ի Պղատոնէ ոչ այն որ բազում ինչ գիտէ եւ հոսէ յինքենէ վկայաբանութիւնս, այլ որ զմանկականն յինքեան ամփոփեալ ունի, որպէս ասացաք, ի չարէ: Վասն որոյ ասէ Պղատոն. „Իմաստասէր կոչեմ՝ ես՝ որ զքարիոք վարս ստացեալ է, թէպէտ եւ ոչ գիր ուղղեալ (°) գիտէ", զփութազոյնն առ ի յԱթենացւոց. քանզի զգիրս վասն իմաստասիրութեան ուսանէին, իսկ ուղղել (°) վասն նաւամարտութեան: Արդ այսոքիկ այսպէս:*

*Իսկ որք ասէին, եթէ ի բնաբանութենէն արժան է առնել սկիզբն՝ ասէին եթէ բնականքն կակղագոյնք են, որպէս սննդակիցս մեր եւ ի մանկութենէ շաւշափեալք առ ի մէնջ՝ մարմին եւ ջիլք եւ երակք, եւ վասն զի բժիշկք սկիզբն առնելով բժշկու-*

---

4—5 El. κατὰ τὴν Πλάτωνος φωνήν, ὡς καὶ οἱ ἰατρικοί φασι 117,29.
10—11 El. ἐπιχειρῶν διδάσκειν μείζονας ἀρχὰς αὐτῇ ψευδοδοξίας παρέχει 117,33.
10 A. *սկզբմունս.* 12 A. *ի չարէ]* El. *չիք.* 13—15 El. τοῦτ' ἔστιν ἡ ἄλογος ψυχή, ἣν δεῖ παιδεύειν· ὅθεν καὶ παιδεία εἴρηται ἡ ἀναγωγὴ ὡς τοῦ ἐν ἡμῖν παιδὸς οὖσα κατασταλή. καὶ πεπαιδευμένος παρὰ Πλάτωνι οὐχ ὁ πολλὰ εἰδὼς καὶ ῥέων χρήσεις 118,2–5. 16 A. *որպէս ասացաք, ի չարէ]* El. *չիք.*
16—17 El. διό φησιν αὐτὸς ὅτι 118,6. 18 El. κἂν μήτε γράμματα μήτε νεῖν ἐπίσταται 118,7. 20 A. *ուսանէին]* El. *չիք.* 20 A. *ուղղել]* El. νεῖν 118,8.
22 El. ἀπὸ τῆς φυσικῆς 118,9. 23 A. *սննդակիցս.* 24—25 A. *մարմին — երակք]* El. οἷον σάρκες φλέβες νεῦρα 118,11. 25 A. *բժշկութեան.*

*թեան՝ ի կակղագունից դեղոցն սկիզբն առնեն. եւ վասն զի առաւել թուի Արիստոտէլ քաջափորձ լինիլ ի բնականս իրողութիւնս: Արդ այսպէս եւ սոքա: Իսկ որք ասեն, եթէ պարտ է յուսումնականէն սկիզբն առնել՝ ասեն եթէ արժան է նախ զուսումնականն ընթեռնուլ վասն հաստատութեան ապացուցին (քանզի զայսոսիկ ստուգապէս ուսանիմք, իսկ զայլն ամենայն կարծեաւք համանեմք եւ քննութեամբ քան թէ ուսանելով), եւ վասն զի յայսոսիկ ուսանիմք, եթէ զիարդ ուսանել պարտ է, եւ եթէ գործականաւք հաստատարմութեամբ եւ ոչ յարժանահաստատարմութիւնս երեսաց յեցեալք, եւ վասն Պղատոնի մակագրեցելոյ ի համալսարանէն՝ „Աներկրաչափն մի՛ ներամտեսցէ":*

*Իսկ որք ասենն, եթէ արժան է ի բանականէն սկիզբն առնել՝ ասեն եթէ գործի է բանականն իմաստասիրութեան, եւ արժան է նախ գիտել զգործին եւ այնպէս պիտանանալ նմա: Քանզի այսպէս առնեն եւ ի ձեռնարհեստականսն, վասն զի երթեալն ի հիւսնականն նախ եւ առաջին ուսանի զգործին՝ զդուրն, զշաղափն, եթէ յի՛նչ պէտս են, եւ ապա պիտանանայ նոցա ըստ իւրաքանչիւր գործոյ: Արդ այսպէս եւ այսոքիկ: Բայց բե՛ր մեք ասասցուք, ուստի՛ պարտ է սկիզբն առնել: Արդ պարտ է մեզ սկիզբն առնել ի բարոյականէն, վասն զի ոչ այլ կարծրագոյն քան զսոսա ունիմք, որք ասեն եթէ պարտ է ի բարոյականէն սկիզբն առնել. քանզի ուսանիմք զբարս ոչ ի սովորութենէ՝ հարուածով որպէս ճարակայինք ի կենդանեաց. այլ պարտ է ի բանականէն սկիզբն առնել: Սակայն եւ ոչ այնպէս պարտ է անփոյթ առնել զբարոյականէն, այլ եւ զնոսա զարդարել ի ձեռն զգաւնութեանց ներագրեցելոցն եւ անգրիցն, որպիսիք են Իսոկրատայն, որպէս զի պատրաստ գտեալ բա-*

3 A. *այլք*, *ուղղ. որք.* 6—7 A. *իսկ զայլն — ուսանելով]* El. τὰ δὲ εἰκάζομεν ἥπερ μανθάνομεν 118,16. 8—9 A. *եւ եթէ — հաստատարմութեամբ]* El. ὅτι γραμμικαῖς ἀνάγκαις 118,17. 11 El. πρὸ τοῦ μουσείου 118,18. 11 El. ʽἀγεωμέτρητος μηδεὶς εἰσίτω' 118,18—19. 12 A. *ի բնաբանականէն]* El. ἀπὸ τῆς λογικῆς 118,20. 13 A. *գործի է բնաբանականն իմաստասիրութեան]* El. ὄργανον ἡ λογική 118,20—21. 16—18 El. πρῶτον μανθάνει τὰ ὄργανα, οἷον τρύπανον τέρετρον, καὶ εἶθ' οὕτως ἄρχεται αὐτῆς τῆς τεκτονικῆς 118,23—24.
19 El. εἴπωμεν τἀληθές 118,25. 23 El. καθάπερ τὰ πληγῇ νεμόμενα ζῷα 118,28.
27—1 El. ἵν' ἕτοιμον εὕροι ὁ λόγος τὸ ὅ τι ἀκριβῶς ἐπαγιώθῃ ἐν αὐτῷ 118,30.

*նին՝ զմաքրագոյնս վարուցն կառուցի ի նոսա: Եւ գիտելի է՝ եթէ իմաստասիրութեան ի տեսականն եւ ի գործականն բաժանեցելոյ, եւ տեսականին յաղագս ճշմարտին որ ի բանս է լինելոյ եւ զսուտն որոշելոյ, իսկ գործականին յաղագս բարւոյն որ ի գործսն է եւ զչարն որոշելոյ, եւ ի ներքսանց շարաբանութիւնն՝ այսինքն ապացոյցն՝ գործի գոլով իմաստասիրութեան ընտրութիւն եւ բացընտրութիւն, որպէս զի ի տեսականին ընտրեսցէ զճշմարիտն եւ բացընտրեսցէ զսուտն, նոյնպէս եւ ի գործականին ընտրեսցէ զբարին եւ բացընտրեսցէ զչարն. որպէս զի մի՛ սուտ ինչ կարծեսցուք եւ ստոյն հաստատեսցուք եւ մի՛ չար ինչ գործեսցուք: Եւ եթէ էր լեալ յատուրս Պղատոնի բանականն՝ ո՞չ արդեւք մակագրէր ի դրունս համալսարանին՝ „աներկրաչափն ոք մի՛ ներամտեսցէ“, զորոյ զաւրութիւն եւ ինքն եցոյց երբեմն ասելով ի Սոփիստէս տրամաբանութեանն այսպէս. „Կրթեա՛ զքեզ ինքն կոչեցելովքն առ ի յոքունց թախանձութեամբ, տակաւին եւ նոր գոլով համբակ, ապա եթէ ո՛չ՝ փախիցէ ի քէն ճշմարիտն“, թախանձութիւն կոչեաց զհեռակացութիւն իրացն՝ այսինքն զբանականն: Քանզի Արիստոտէլ ի բանականութեան փոխանակ իրաց դնէ զտառս զ՝ զայբն, զքեն, զգիմ, ասելով եթէ այբն քենին գոյանայ եւ քենն զգիմին՝ ապա ուրեմն եւ զգիմին գոյանայ այբն, եւ ի ծնոտն սոցա ուսուցանէ զշարահիւսմունս շարաբանութեանցն, յարաժամ դոցա պիտանանալով թախանձէ զընթերցաւղն. զայսոսիկ եւ մեք ասացաք՝ ուստի՛ պարտ է սկիզբն առնել:*

---

3—7 A. *յաղագս — բացընտրութիւն]* El. περὶ τὸ ἐν λόγοις ἀληθὲς καὶ ψεῦδος καταγινομένου τοῦ δὲ πρακτικοῦ περὶ τὸ ἐν πράξει ἀγαθὸν καὶ κακόν, παρῆλθεν ὁ συλλογισμὸς ὄργανον κοσκίνου δίκην οἷον ἐκλογῆς καὶ ἀπεκλογῆς 118,33—35. 7 A. *ընտրութիւն.* 8—9 A. *ուղղ. ի բաց ընտրեսցէ.* 10—11 A. *եւ ստոյն հաստատեսցուք]* El. *չիք.* 12 A. *բանականն]* El. ἡ διαλεκτική 119,3. 12—13 El. πρὸ τοῦ οἰκείου μουσείου 119,4. 14—15 A. *տրամաբանութեանն]* El. *չիք.* 18 A. *զհեռակացութիւն]* El. τὴν ἀποστασίαν 119,7. 19 A. *դնէ զտառս զ]* El. εἰσφέρει ταῦτα τὰ στοιχεῖα 119,9· 20—21 A. *ասելով — գոյանայ այբն]* El. *չիք.* 22 A. *ուղղ. շարաբանութեանցն տառին.* 22—24 El. διὸ συνεχῶς αὐτοῖς χρώμενος ἐν τῇ λογικῇ οἷον ἀδολεσχίαν τινὰ ποιεῖ ἑκάστοτε τὰ αὐτὰ λέγων 119,10—11.

## ԸՆԴ ԱՅՍՈՍԻԿ ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՎ ԵՒ ԱՌԱՋԻԿԱՅ ԳՈՐԾՔՍ. ԳՈՐԾՔ Ը

*Եւ վասն զի եցոյց մեզ բանս. եթէ պարտ է ի բանականէն սկիզբն առնել՝ նախազարդարել զբարս, որպէս զի մաքուրք գոլով մաքրապէս մերձեսցուք յիմաստասիրութիւն. եւ եւս իմաստասիրութեան բաժանեցելոյ ի տեսականն եւ ի գործականն՝ բանականն զաւրէն մաղի գոլով, որպէս յառաջագոյն ասացաք, ընտրէ ի տեսականէն զճշմարիտն եւ ի գործականէն զբարին, եւ բացորոշէ ի տեսականէն զսուտն եւ ի գործականէն զչարն, զի մի՛ սուտ կարծիս ընկալցուք վասն գոյից եւ մի՛ չար ինչ գործեսցուք, ունելով զբանականն որոշիչ՝ այսինքն զապացոյցն, որ է արդարեւ Հերմէական մոլութիւն, որով զինեալքն ոչ մեղկին եւ պարտին ի յուշկապարկաց՝ այսինքն յայլակարծեաց հերձուածոցն իմաստասիրութեան, որպէս Ոդիսեւս՝ ընկերաց նորա խոզացելոց ի դեղոցն Կիրկեայ, իսկ որ ապացուցիւ ոչ է զինեալ՝ լինի խոզ Բիոտացի: Արդ հաւաքեաց բանս՝ եթէ պարտ է ի բանականէն սկիզբն առնել եւ յառաջագոյն զարդարել զբարսն:*

*Եւ վասն զի սակաւիկ ինչ յառաջագոյն վասն սկզբանց ճառեցաք, իսկ ուր սկիզբն է՝ անդ եւ կատարումն, բե՛ր յաղագս կատարմանն՝ եթէ զի՞նչ կատարումն է Արիստոտելի իմաստասիրութեանն՝ խնդրեսցուք. վասն զի գտանելով զկատարումն՝ յաժարագոյն լինիմք յընթեռնուլն, զի որք ո՛չ գիտեն զկատարումն կուրաց զոն քատակեալք՝ զնացելոց եւ ի նոյն բերելոց: Արդ է կատարումն Արիստոտելի իմաստասիրու-*

---

1—2 El. ἐν οἷς ἡ πρᾶξις 119,12. 7 A. *ուղղ. եւ ի բանականն.*
10 A. *զի մի — գոյից]* El. ἵνα μήτε ψευδῆ δοξάσωμεν 119,19. 11—13 A. *այսինքն — ի յուշկապարկաց]* *լու. «չէր գրոց».* 12 El. τὸ Ἑρμαϊκὸν μῶλυ 119,20.
13 A. *եւ պարտին]* El. *չիք.* 13 A. *ի յուշկապարկաց]* El. ὑπὸ τῶν Σειρήνων 119,21. 19 A. *սակաւիկ ինչ յառաջագոյն]* El. συνεχῶς 119,26.
20—22 A. *բեր — խնդրեսցուք]* El. φέρε περὶ τοῦ τέλους ζητήσωμεν, ἐπειδὴ καὶ τέταρτον κεφάλαιον ἦν τῶν προτεθέντων ζητῆσαι τί τὸ τέλος 119,27—28.
22 A. *գտանելով]* El. γινώσκοντες 119,28. 23 A. *յընթեռնուլն]* El. *չիք.*
24 A. *ըզկատարումն.* 24—25 A. *եւ ի նոյն բերելոց]* El. καὶ φερομένοις οἱ μὴ δεῖ 119,30. 25—1 A. *իմաստասիրութեանն.*

*թեանն զիտելն՝ եթէ մի է սկիզբն ամենայն գոյից: Քանզի ընդունել զասացեալսն ի քերթողէն ի վերայ Աստուծոյ, քան թէ ի վերայ թագաւորի՝ եթէ ոչ բարիոք է յոքնատէրութիւն՝ մի է տէր եւ թագաւոր: Եւ զի մի սկիզբն է բոլորից գոյից՝ ցուցանէ Արիստոտէլ, Յետ բնաքանութեան աստուածաբանելով այսպէս՝ եթէ սկիզբն կամ մի է կամ յոքունք, եւ եթէ մի է՝ ահա ունիմք զոր ինչ խնդրեմքն, իսկ եթէ բազումք են՝ կամ կարգաւորեալք են կամ անկարգք: Եւ եթէ անկարգք են՝ անկարգագոյնք եւ այնք որք ի նոցանէն, եւ ոչ եւս եղիցի այս աշխարհ զարդարեալ կարգաւորութեամբ, եւ նոյն ժամայն քակտելի եղիցի առանց բնութեան եւ ըստ բնութեան ոչ եղոյ: Իսկ եթէ կարգաւորեալք զոն՝ կամ յընքեանց զոն կարգաւորեալք կամ արտաքուստ յայլմէ ումեքէ պատճառէ: Եւ եթէ յընքեանց զոն կարգաւորեալք՝ ունին հասարակ ինչ մի, որ կարգաւորեաց զնոսա, եւ այն է սկիզբն: Իսկ եթէ յարտաքուստ յայլմէ ումեքէ պատճառէ՝ կամ ի միոջէ եւ կամ ի բազմաց: Եւ եթէ ի միոջէ՝ աստուստ մի է եւ սկիզբն: Իսկ եթէ ի բազմաց՝ կամ ի կարգաւորելոց կամ յանկարգից: Եւ ոչ դադարեսցիք զնոյնս շրջապատել մինչեւ ցանքան: Իսկ անքանին ոչ եղոյ՝ ահա մի է բոլորեցուն սկիզբն: Եւ այսպէս՝ սկիզբն կամ մի է կամ՝ յոքունք: Եւ եթէ յոքունք՝ կամ զնոյնս յարածեն ի գոյս եւ կամ այլք զայլս: Եւ եթէ զնոյնս յարածեն՝ աւելորդ է միւսն, իսկ ոչինչ ի սկզբանն եւ կամ յաստուածութեան աւելորդ: Իսկ եթէ այլ եւ այլք յարածեն ի գոյսս՝ պակաս եղանի իւրաքանչիւր ոք. քանզի պակաս է յարածեալն ի միոյն ի միւսմէն: Այլ ոչինչ սկիզբն եւ աստուածութիւն անկատար եւ թերի եւ*

---

1 A. *ամենայն գոյից]* El. πάντων 119,31. 2 A. *ընդունել]* El. ἀποδεκτέον 119,31. 4 A. *մի է տէր եւ թագաւոր]* El. *չիք.* 5 El. ἐν τῇ Μετὰ τὰ φυσικά 120,1. 9—11 A. *եւ ոչ — եղոյ]* El. καὶ οὐκέτι κόσμος ὁ κόσμος ἀλλ' ἀκοσμία, καὶ ἔσται τὸ παρὰ φύσιν τοῦ κατὰ φύσιν μὴ ὄντος 120,4—5. 20 A. *որ փխ. մի.* 20 El. μία ἄρα τοῦ παντὸς ἡ ἀρχή 120,11. 20 A. *սկիզբնսն.* 20 A. *Եւ այսպէս]* El. ἢ καὶ ἄλλως 120,11. 21—22 A. *կամ — զայլս]* El. ἢ τὰ αὐτὰ παράγουσιν ἢ ἕτερα 120,12. 22—23 A. *աւելորդ է — աւելորդ]* El. περίεργος ἡ μία τῆς ἄλλης πάντα παραγούσης καὶ περιττὴ ἡ μία 120,13. 24 A. *յարածեն ի գոյսս]* El. *չիք.* 25 El. λείπει γὰρ τῇδε τὰ παραγόμενα ὑπὸ τῆσδε 120,14. 26 A. *սկիզբն եւ]* El. *չիք.* 26 A. *եւ թերի եւ]* El. *չիք.*

*ոչ երբեք. ապա ուրեմն՝ մի է բոլորեցուն սկիզբն: Եւ նա է արարիչ երկնայնոց եւ այնոցիկ, որք ընդ լուսնով են ենթակացեալք: Քանզի եթէ համայն աստուած եւ համայն աշխարհ ըստ Արիստոտելի. այլ պատճառաւ յառաջ է աստուած քան զաշխարհն: Եւ ոչ եթէ ինքնեղ է աշխարհն՝ զաստուած պատճառ ունելով, որպէս եւ արեգակն յառաջագոյն գոյ իւր լուսոյն ըստ պատճառի միայն: Ապա եթէ ոք ասէ, եթէ բազում՝ սկզբմունք են ըստ Արիստոտելի (քանզի որչափ ինչ են, որ շուրջն շարժին՝ այնչափ են եւ շարժառք նոցա. քանզի ասէ եւթն շրջանակացն եւթն միտս վերակացեալս շարժառս, իսկ զնոսա գոլ անշարժ), այլ եւ այսպէս մի է սկիզբն, ընդ որով յարմարեալք գոն ամենայն ստորադասեալք միտք՝ նաեւ մի միտք գոլով անշարժ եւ անպատճառ՝ որ շարժէ զանմոլարն: Ապա եթէ ասես. „վասն էր զմիտսն ասէ նախկին եւ նախագոյն զսկիզբն եւ ոչ զբարին՝ որպէս Պղատոն", գիտասցես զի յետ բնաբանականացն աստուածաբանելով իսկոյն Յետ բնականաց խոսութեանց յիրաւի զանպատճառ միտսն ասէ սկիզբն՝ որպէս բնաւորականագոյն. այլ գիտէ եւ ինքն զբարին զմին զբոլորից սկիզբն, որպէս յայտ առնէ ի նախերգանութեան Բարոյականին՝ այսպէս ասելով, եթէ „ամենայն արհեստ եւ ամենայն հնար եւս եւ գործք եւ յաւժարութիւն բարւոյ ումեք թուի տենչալ": Եւ բարիոք երեւեցոյց զբարին, քանզի ամենայն ոք նմա տենչայ: Եւ գիտելի է, եթէ միշտ աստուածաբանելով բնաբանէ (քանզի թէպէտ յաղագս այնոցիկ՝ որք շարժին՝ բնաբանութիւն լինի, իսկ յաղագս անշարժիցն աստուածաբանութիւն, այլ սակայն անշարժքն՝ այսինքն աստուածայինքն՝ պատճառք լինին*

---

2 A. *ենթակացեալք]* El. *չիք.* 3 A. *ուղղ. ոչ եթէ.* 4 *ըստ Արիստոտելի]* El. *չիք.* 5—6 El. ἀλλὰ τὸν θεὸν ἔχει αἴτιον 120,18. 9 A. *այնչափ—նոցա]* El. τοσαῦτα καὶ ἀκίνητα 120,20—21. 11—13 A. *ընդ որով—զանմոլարն]* El. ἐξηρτημένοι γὰρ εἰσι πάντες οἱ ὑποβεβηκότες νόες τοῦ ἑνὸς τοῦ κινοῦντος τὴν ἀπλανῆ 120,23. 15 A. *յետ բնաբանականացն.* 17 El. εὐλόγως τὸν νοῦν φυσικωτέραν ἀρχὴν εἶπεν 120,26. 18 A. *զբոլորից]* El. τοῦ ὄντος 120,7. 19—20 El. ὡς δηλοῖ τὸ προοίμιον τῆς Ἠθικῆς αὐτοῦ πραγματείας ἔχον οὕτως 120,28. 23 A. *բնաբանէ]* El. ὁ Ἀριστοτέλης φυσιολογεῖ 120,31. 25—1 El. ἀλλ' οὖν τὰ ἀκίνητα, φημί, τῶν διὰ κινήσεως εἰσιν αἴτια 121,1—2.

*շարժելութեան), որպէս դարձեալ Պղատոն միշտ բնաբանելով աստուածաբանէ, եւ ամենայն ուրեք շրջապատելով զիմանալեացն տեսանէ կարծիս: **

*Հինգերորդ գլուխ էր, յորում խնդրէաք՝ եթէ զինչ է ընդ մէջ ճանապարհն: Եւ պարտ է գիտել, թէ ե աստիճանք են ամենայն իմաստասիրութեան՝ բանականն, բարոյականն, բնաբանականն, ուսումնականն, աստուածաբանականն. յորոց ծայրք են երկու՝ բանականն եւ աստուածաբանականն, իսկ մէջք այլքն: Ի սոցանէ ոմանք զսրսկարանաց եւ մաքրարանաց քատակեցան, իսկ ոմանք հուպ ի կատարեալսն եւ ոմանք ի կատարելոց եւ նոցին խորհրդածութեանց: Արդ սրսկարանաց եւ մաքրարանաց քատակեցաւ բարոյականն՝ մաքրելով զոգին ի չար բարուականաց կարծեաց, որպէս զի մաքուր եւ կարգաւոր եղեալ՝ մաքրապէս մերձեսցի յիմաստասիրութիւն**, իսկ հուպկատարելոցն քատակեցաւ բնաբանականն, քանզի թէպէտ եւ անշարժ խնդրեմք ի բնաբանութեանն եւ շարժեցեալս յաստուածաբանութեան, այլ սակայն աստուածայինքն պատճառք զոն շարժելութեան բնականացն, եւ շարժելոցն ի հանգամայնս զամք շարժողաց անշարժիցն. իսկ աներեւելին յերեւելոյն փութագոյն ունի զճանաչելն: Իսկ նոցին կատարելոց քատակեցաւ ուսումնականն՝ որպէս սանդուխք ինչ եւ կամ կամուրջ յամենեւիմք նիւթականացն առ ամենեւիմք աննիւթականսն: Այսոցիկ ամենեցուն բագին եւ տաճար եղեւ Արիստոտելի իմաստասիրութիւնն: Իսկ բանականս զաւրէն ցանկոյ շուրջ*

---

2—3 A. *եւ ամենայն — կարծիս]* El. πανταχοῦ παρεγκυκλῶν τὸ δόγμα τῶν ἰδεῶν. ἐν οἷς καὶ τὸ τέταρτον κεφάλαιον 121,3—4. 4 A. *հինգերորդ.* 4—5 El. αἱ μεταξὺ ὁδοὶ 121,5. 6 A. *ամենայն]* El. *չիք.* 6 A. *բնաբանականն]* El. φυσική 121,6. 10—11 A. *իսկ ոմանք — խորհրդածութեանց]* El. τὰ δὲ προτελείοις καὶ αὐταῖς ταῖς μυήσεσι 121,9. 14 El. (ἡ γὰρ τάξις πρὸς τῷ ἑνί, ἡ δὲ ἀταξία πρὸς τῷ πλήθει) 121,11—12] A. *չիք.* 15 A. *բնաբանականն]* El. ἡ φυσική 121,13. 15—17 El. εἰ γὰρ καὶ ἀκίνητα ζητοῦμεν ἐν τῇ θεολογίᾳ κινούμενα δὲ ἐν τῇ φυσιολογίᾳ 121,13—14. 18 A. *բնականացն]* El. *չիք.* 18—19 El. καὶ ἐκ τῶν κινουμένων εἰς ἔννοιαν ἐρχόμεθα τῶν νοητῶν 121,14—15. 21 A. *կամուրջ]* El. γέφυρα διαβιβάζουσα ἡμᾶς 121,17. 23—2 A. *Այսոցիկ — ապացուցի]* El. τοῦτο δὲ πάντως ὅλον τέμενος ἡ Ἀριστοτέλους φιλοσοφία, ἡ δὲ λογικὴ τριγχοῦ δίκην φρουρεῖ τὰ ἐν αὐτῇ θεωρήματα 121,18—19.

*եկեալ պահպանէ զամենայն տեսութիւնս որ յիմաստասիրութեան ի ձեռն ապացուցի:*

## *ԸՆԴ ԱՅՍՈՍԻԿ ՀԱՄԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԱՌԱՋԻԿԱՅ ԳՐԱՆՔՍ. ԳՐԱՆՔ Ը*

*Յառաջիկայումս գործառութեանս խնդրեմք զվեցերորդ եւ զեւթներորդ գլուխն. քանզի նկար զմեզ եւ զձեզ ըննել: Եւ խնդրեսցի ի վեցերորդ գլխումս, եթէ որպիսի՛ պարտ է գոլ լսողին ըստ վարուց եւ ըստ գիտութեան: Իսկ յեւթներորդն՝ եթէ որպիսի՛ պարտ է լինել եւ մեկնողին: Արդ եղիցի լսողն կարգաւոր ըստ վարուց եւ փոքր աշխարհ. որպէս զի ի ձեռն կարգաւորութեանն, որ ի նմա, զմինն զբոլորեցունց զակիզբն ծանիցէ (վասն զի կարգաւորութիւն ի միոջէ, իսկ անկարգաւորութիւն ի բազմաց), զի ի ձեռն աշխարհիկն, որ յինքեան, զբոլոր աշխարհս ծանիցէ: Արդ եղիցի լսողն փոքր աշխարհ. արդ որպէս ի բոլորում աշխարհում լաւագոյնքն ընդ ինքեամբ անկեալ ունին զյոռեգոյնսն՝ այսպէս պարտ է բանի ընդ իւրեւ ունել զբարկութիւն, բարկութեան զցանկութիւն: Քանզի յոռի է, որպէս ասէ Պղատոն, եթէ այր ոքմի ի մասին յոռեգունին անկանիցի. քանզի զարդարէ զբան խոհեմութիւն. եւ զբարկութիւն՝ արութիւն, եւ զցանկութիւն՝ ողջախոհութիւն: Եւ այսոցիկ բարիոք յարդարելոց եւ առանձնագործն եղելոց՝ երեւի արդարութիւն, ոչ յայս միայն մասին անձին կամ յայն. այլ որպէս յարմարումն ինչ գոլով՝ նոցին յամենեսին տեսանի: Արդ այսպէս եղիցի ըստ վարուց լսողն: Իսկ ըստ գիտութեան եղիցի ստոյգ՝ ոչ յանգչելով յարժանահաւատութիւնս երեւաց: Քանզի այս պրակիս ոչ հաւատալով, վայրապար համարելով՝*

3—4 A. *ընդ այսոսիկ - պրակք ը]* El *չէք.* 5 A. *զվեցերորդ.* 8 A. *յեւթներորդն.* 11 A. *զսկիզբն.* 12 A. *ուղղ. ի միոջէ է.* 13 A. *զի—յինքեան]* El. δὶα δὲ τοῦ ἐν αὐτῷ μικροῦ κόσμου 121,26. 14. 24 A. *լսողն]* El. *չէք.* 21 A. *ուղղ. զայսոցիկ.* 23 A. *այլ—տեսանի]* El. ἀλλ' οἷον ἁρμονία τις οὖσα τούτων καὶ τὸ ἐπιγινόμενον εἶδος 121,33. 26—1 El. ὁ γὰρ τοιοῦτος μὴ πιστεύων ὡς ἔτυχε τοῖς παλαιοῖς ἄλλῳ τρόπῳ πιστεύει. πιστεύει γὰρ Σωκράτει λέγοντι 122,1—2.

*այլ յեղանակաւ հաւատացէ Սոկրատում՝ որ ասէ՝ „Սոկրատում սակաւ ինչ հոգ տարցի, իսկ ճշմարտութեան յոյժ", հաւատացէ եւ Արիստոտէլում՝ որ ասէր ի Բարոյականումն՝ „եթէ սիրելի է այրն՝ սիրելի եւ ճշմարտութիւնն, եւ երկոցունց սիրելեաց եղեալ՝ ընտրելի է եւ մանաւանդ ճշմարտութիւնն": Եւ վասն այլ իրաց պարտ է ստոյգ լինել լսաւղին, վասն զի ի միջէ իւրէ բնաւորեցաւ լինել եւ ատելաքանութիւն եւ մարդատելութիւն, որպէս ասէ Պղատոն ի Փեդոնում տրամաբանութեան՝ ի դիւրապէսն հաւատալոյ բարուց կամ՝ բանից: Քանզի ոմանք յառաջ քան զփորձ առնուլ ընտանեցուցեալ ընքեանց զոմանս, որպէս պիտանացու բարուց ստացաւղս, իսկ ինքնագիտաւղք եղեալք յետնագունից նոցա բարուց՝ յայնմհետէ մարդատեցողք եղեն: Եւ որք հաւատացին բանից ոմանց հաստատնոց եւ անխզից՝ եւ յետոյ տեսեալ զնոսա ացտեալ եւ եղծեալս ի տրամաբանականացն՝ յայնմհետէ բանատեցողք եղեն: Արդ զի մի եղիցուք մարդատեցողք եւ բանատեցողք՝ պարտ է մեզ լսաւղացն ստոյգս լինել, պարտ է նմա ոչ ընդունել զերկարաձգութիւնս բանից, այլ տալ զինքն ըստ հարցմանց եւ պատասխանեաց վասն Սոկրատայ որ ասէ „թէ ոչ դու քեզ ինքեան լսես այլում՝ ասելոյ մի՛ հաւատասցես", այսինքն՝ եթէ դու որ տաս զառաջարկութիւն, ի հարկէ եւ զեզրակացութիւնս տաս՝ ոչ հաւատաս. քանզի տվաւղ սերմանցն է պատճառ չարաչար բուսոցն: Քանզի պարտ է ասել առ այն՝ որ արտաքուստ ծեռնարկէ ասել զեզրակացութիւն եւ ոչ ետ զառաջարկութիւն՝ „Զիա՞րդ արդեւք դու ինձ ասասցես՝ զոր ինձ պարտ է ասել",*

---

2 A. *հաւատացէ]* El. *չիք.* 3 A. *է թէ փխ. եթէ.* 4 A. *ճշմարտութիւնն.* 4 A. *սիրելեաց.* 5—6 A. *Եւ վասն — լսաւղին]* El. καὶ δι' ἄλλην δὲ αἰτίαν ἔστω ἀκριβής 122,5—6. 8 A. *ուղղ. ի Փեդոնում.* 8 A. *տրամաբանութեան]* El. *չիք.* 13 A. *հաստատնոց եւ անխզից]* El. ὡς ἀρραγέσι 122,10. 14 A. *ացտեալ եւ եղծեալս]* El. ταραττομένους 122,11. 17 A. *պարտ է նմա]* El. *չիք.* 19—20 El. 'εἰ μὴ σὺ σεαυτοῦ λέγοντος ἀκούσῃς, ἄλλῳ λέγοντι μὴ πιστεύσῃς' 122,16. 19 A. *զոյ փխ. դու.* 19—20 A. *ուղղ. մի լսես այլում ասելոյ եւ մի հաւատասցես.* 20—22 A. *եթէ դու — ոչ հաւատաս]* El. εἰ μὴ σὺ ὁ δεδωκὼς τὰς προτάσεις καὶ ἐξ ἀνάγκης τὸ συμπέρασμα δεδωκώς, ἄλλῳ μὴ πιστεύσῃς 122,14—15. 24 A. *եւ ոչ ետ զառաջարկութիւն]* El. ἄλλου δεδωκότος τὰς προτάσεις 122,19.

*եւ առ այն որ զառաջարկութիւնն եւր եւ կազի վասն եզերակացութեանն՝ եթէ «ի քէն եւ ոչ յինէն զայդ լսես»: Պարտ է նմա ոչ լինել հակառակող եւ վիճող. «Քանզի որ յայտնագունիցն ընդդէմ երթայ», որպէս ասէ Արիստոտէլ, «կամ՝ զգայութեանց պէտս ունի կամ՝ տանջանաց. եթէ գիտելով ընդդէմ ասէ ճշմարտութեանն՝ տանջանաց, իսկ եթէ անգիտանալով՝ զգայութեանց եւ ուսմանց»: Արդ այսպիսի եղիցի մեզ լսողն:*

*Իսկ մեկնիչ եւ պատմաւղ եղիցի միանգամայն եւ պատմաւղ եւ մակացաւղ: Եւ է պատմաւղին գործ մեկնութիւն անհասարակաց բառից, իսկ մակացուին՝ որոշմունք ճշմարտիցն եւ ստից, այսինքն՝ ծնընդականացն ի հողմայինս: Պարտ է նմա ոչ փոփոխակից լինել՝ զորս պատմէն եւ մեկնէ՝ զայլէն տաղասարականացն որ զանազան երեւս զգենուն վասն նմանութիւն առնելոյ զանազանից բարուց, եւ Արիստոտէլականն լինել՝ յորժամ զԱրիստոտէլին պատմէ, եւ ասել՝ եթէ ոչ եղեւ այսպիսի իմաստասէր, եւ Պղատոնական լինել՝ յորժամ զՊղատոն մեկնէ, եւ ասել՝ եթէ ոչ եղեւ որպէս Պղատոն իմաստասէր: Պարտ է նմա ոչ ամենայն իրաւք բռնադատել եւ ասել՝ եթէ ամենայն իրաւք ճշմարիտ է* զոր մեկնէն, այլ ամենայն ուրեք ասել՝ «սիրելի այր, սիրելի է եւ ճշմարտութիւն, եւ երկոցուն սիրելեաց ելոց՝ ընտրելի է ճշմարտութիւնն»: Պարտ է նմա ո՛չ կրակից լինել հերձուածոյ ումեք, որպէս Յամբլիքոսն եղեւ. քանզի սա կրակից եղեալ Պղատոնի՝ շնորհէ Արիստոտելի ոչ ընդդէմ ասել Պղատոնի վասն տեսակացն, այլ մանաւանդ ծայնակցել: Պարտ է նմա ոչ ընդդիմակիր լինել ի կարծեաց ումեք, որպէս Աղէքսանդրոս. քանզի Աղէքսանդրոս ընդդիմակիր եղեալ անմահութեան բանականի անձին զասա-*

7 A. *եւ ուսմանց*] El. *չիք*. 7 El. τοιοῦτος μὲν ὁ ἀκροατής 122,24. 8 A. *եւ պատմաւղ*] El. *չիք*. 10 A. *բառից*] El. ἐν τῇ λέξει 122,26. 11 A. *այսինքն — ի հողմայինս*] El. ἤτοι ἀνεμίων καὶ γονίμων 122,27. 12—13 A. *զորս — տաղասարականացն*] El. οἷς ἂν ἐξηγῆται δίκην τῶν ἐν σκηνῇ ὄντων 122,28. 13 A. *երեւս. ուղղ. երեսս.* 19 A. *բառ մի քերեալ.* El. ὅτι πάντως ἀληθεύει ὁ ἀρχαῖος ὃν ἐξηγεῖται 122,33. 20 A. *ի ճշմարտութիւն.* 22 A. *կրաւնակից լինել*] El. συμπάσχειν 123,1. 22—23 El. ὃ πέπονθεν Ἰάμβλιχος 123,2. 24—25 A. *այլ մանաւանդ ծայնակցել*] El. *չիք*. 25—26 A. *ի կարծեաց ումեք*] El. αἱρέσει 123,4. 27—1 A. *զասացեալսն առ ի յԱրիստոտելէ*] El. El. τὰς εἰρημένας ῥήσεις 123,5.

*ցեալսն առ ի յԱրիստոտելէ յերրորդում ճառին Վասն անմահութեան անձին, որք ցուցանեն եթէ անմահ է բանական անձն՝ փորձի զամենայն շրջմունս շրջել առ ի մահկանացու ցուցանել զբանաւոր անձն: Պարտ է նմա զամենայն զԱրիստոտէլականսն գիտել, որպէս զի ձայնակից իւր արարեալ զԱրիստոտել ի ձեռն Արիստոտելի պատմեսցէ: Պարտ է նմա եւ զամենայն զՊղատոնականսն գիտել, որպէս զի զՊղատոն ձայնակից իւր արասցէ եւ զԱրիստոտէլականսն Պղատոնականաց ներածութիւն արասցէ:*

## *ԸՆԴ ԱՅՍՄԻԿ ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՎ ԵՒ ԱՌԱՋԻԿԱՅ ՊՐԱԿՔՍ. ՊՐԱԿՔ Թ*

*Ութերորդ գլուխ առաջադրելոցն խնդրել՝ եթէ զինչ տեսակ է՝ այսինքն յարմարաբանութիւն՝ Արիստոտելի շարագրածութեանց: Արդ է ոչ մի տեսակ, այլ զանազան. բայց եթէ ոք ասիցէ այլ յեղանակաւ մի գոլ՝ յամենայն ուրեք նմանն գոլով եւ պատշաճագոյն ըստ ենթակայից իրողութեանց. քանզի որպէս նման են ենթակայից իրողութեանց՝ թուի մի գոլ. քանզի զանազան իրաց բուռն հարեալք՝ ամենայարմար տեսակաւք բանից պատշաճեցոյց, կերպարանակցելով զյարմարաբանութիւնս ենթակայից իրողութեանց: Վասն որոյ ի մասնականսն, այսինքն՝ ի թուղթսն, փոյթ եւ կարճառաւտ է, հասարակ միանգամայն եւ առանձինն. եւ հասարակ՝ վասն զի ոչինչ զանազանի թղթական յարմարաբանութիւն հասարակ խօս-*

---

2 A. *որք ցուցանեն*] El. καὶ ἀποδεικνυούσας 123,6. 2 A. *բանական անձն*] El. ἡ ψυχή 123,7. 3—4 A. *առ ի մահկանացու ցուցանել զբանաւոր անձն*] El. *չիք*. 5—6 El. ἵνα σύμφωνον δείξας τὸν Ἀριστοτέλην ἑαυτῷ τὰ Ἀριστοτέλους διὰ τῶν Ἀριστοτέλους ἐξηγήσηται 123,8–9. 10—11 El. ἐν οἷς ἡ πρᾶξις 123,11. 12—14 A. *եթէ — շարագրածութեանց*] El. τί τὸ εἶδος τῆς Ἀριστοτέλους ἀπαγγελίας 123,12–13. 15 A. *ուղղ. զամենայն.* 15—17 A. *յամենայն — գոլ*] El. τῷ πανταχοῦ πρόσφορον εἶναι αὐτὸ τοῖς ὑποκειμένοις πράγμασιν· ὡς γὰρ πρόσφορον δοκεῖ ἓν εἶναι 123,14–15. 18 A. *ուղղ. զզանազան.* 18 A. *բուռն հարեալք*] El. ἀψάμενος ὁ Ἀριστοτέλης 123,16. 19—20 El. συμμεταμορφῶν ἀεὶ τοὺς λόγους τοῖς πράγμασι 123,17. 21 A. *փոյթ եւ կարճառաւտ*] El. σύντομος 123,18.

*սից, բայց միայն ներագրաւորն գոլով եւ առ տարացիս. իսկ առանձինն, զի մի՛ ի տգիտականն նմնկցուք: Վասն որոյ եւ Հերմոգենէս, որ զճարտասանական արհեստն գրեաց՝ ասէ. „Զնորն հասարակաբար եւ զհասարակաբարն որպէս(*)“. քանզի, որ հասարակ մտածութիւն ունին՝ պարտ է աստարավայելուչ բառիւք յարմարել, զի մի արհամարհեսցի վասն զետնաքարշ բառիցն եւ մտածութեանցն. իսկ զնորագոյնսն դարձեալ եւ զաւտարավայելուչ մտածութիւնսն պարտ է հասարակական բառիւք յարմարել, որպէս զի խորագոյնք գոլով իմասցին: Այլ եւ կծու է, եւ զի կծու է՝ յայտ առնէ մի ումն ի Թղթոցն. քանզի յետ մահուն Սոկրատայ, ելեալ յԱթենից՝ տածիւր ի Քաղաքիդում, եւ վերստին կոչելով որ յԱթենս եւ ոչ հասանեալ՝ գրեաց այսպէս. „Ոչ հաւանեցուցից զԱթենացիս երկիցս մեղանչել զիմաստասիրութիւն, առ որս*

*խոզատանձ ի վերայ խոզատանձի ծերանայ եւ թուզ ի վերայ թզոյ“:*

*„Թուզ ի վերայ թզոյ“ գրելով՝ զզրպարտողսն նշանակեաց:*

*Իսկ ի միջակսն, այսինքն՝ յերկուս պատմագրութիւնսն, ստոյգ տրամայաւղեալ, որ մանաւանդ պատշաճ է պատմագրութեան. քանզի ոչ է, որպէս յայլսն՝ արտաքուստ ինչ ճեռնարկութիւնս առնել՝ նոյնպէս եւ ի պատմագրութեան: Իսկ ի յընթանրականսն ի տրամաբանականսն, որպէս առ արտաքոյս իմաստասիրութեան խաւսելով, իսկ ի տրամաբանականսն՝ խիստ եւ զանազան, նմանութեամբք Աստղական ան-*

2—3 El. διὸ καὶ ὁ Ἑρμογένης ἐν τῇ Ῥητορικῇ τέχνῃ φησὶ 123,21. 4 El. 'τὰ κοινὰ καινῶς καὶ τὰ καινὰ κοινῶς' 123,21—22. 6 A. *բանիւք*] El. λέξεσι 123,22. 6—7 A. *վասն — մտածութեանցն*] El. διὰ τὸ χαμαίζηλον τῆς λέξεως 123,23. 9 A. *ուղղ. որպէս զի մի՛ խորագոյնք գոլով ոչ իմասցին.* 11—12 El. ἐν Χαλκίδι 123,27. 12 El. ὑπὸ Ἀθηναίων 123,27. 15 A. *ծերանայ.* 15 A. *թուզ փխ. թուզ. Հմմտ.* Hom. η 120. 121. 17. A. *զզրպարտողսն նշանակեաց*] El. ἠνίξατο τοὺς συκοφάντας πολλοὺς ὄντας Ἀθήνησι καὶ ἀεὶ δεχομένους αὐτοὺς καὶ μηδέποτε λήγοντας 123,30—31. 18 A. *ուղղ. յերկուսն.* 19 El. ἀκριβὴς καὶ διηρθρωμένος 124,1—2 22 A. *ուղղ. եւ ի տրամաբանականսն.* 21—1 A. *իսկ — լի*] El. ἐν δὲ τοῖς καθόλου ἐν μὲν τοῖς διαλογικοῖς, τοῖς καὶ ἐξωτερικοῖς, σαφὴς ὡς πρὸς τοὺς ἔξω φιλοσοφίας διαλεγόμενος, ὡς δὲ ἐν διαλεκτικοῖς ποικίλος τοῖς μιμήσεσιν, Ἀφροδίτης [ὄνομα] γέμων καὶ χαρίτων ἀνάμεστος 124,3—6.

*ուամբք եւ շնորհաւք լի: Իսկ ի հանրականսն եւ յինքնադէմսն, որ եւ յունկնդրականսն, ըստ բառից անհաւաստի, իսկ ըստ անուանաքերութեան հաւաստի, որպէս յորժամ ասէ ստորոգութիւն եւ քեղաւոր եւ տեղի. ոչ զայն տեղի որոյ եզրն պարունակաւղ է այնմ՝ որ պարունակի ի նմանէ, որպէս սահմանեաց ի Բնաբանութեան, այլ տեղի անուանէ զձեռնարկութիւնն՝ որ բազում ձեռնարկութիւնս պարունակեալ ունի յինքեան: Դարձեալ՝ որպէս յորժամ մեկնութիւն ասէ զանպաճոյճ բառն* մեկնութեանն: Եւ այլազգ դարձեալ անհաւաստի է Արիստոտէլ. քանզի տարակուսելով ոչ իսկոյն առընթեր դնէ զլուծումն, այլ շարամանէ զերկրորդ եւ զերրորդ տարակուսութիւնն, եւ այնպէս ապա ի ձեռն լուծման յերրորդ տարակուսութեանն լուծանէ զառաջին տարակուսութիւնն, զոր ոչ կարէ ի միտ առնուլ ընթերցաւղն եւ ոչ ի վերայ կալ երեւելեացն. իսկ մտածութիւնն ոչ հեռի կայ յերեւելեացս, վասն զի աղաչէ զամենեսեան եւ հարկաւորէ ի ներգործութենէ երեւելեացն զցուցեալսն հաստատուցանել: Եւ զցուցեալսն ի ձեռն բանից՝ վկայութեամբք հնոցն վերակնքէ; ասելով այսպէս թուի Եռակղիտեայ եւ Էմպէդոկղեայ: Եւ զվերագոյնս քան զբնութիւն քննելով՝ հաստատարմանս յայնցանեաց՝ որ ըստ բնութեանն են. վասն որոյ միշտ աստուածաբանելով բնաբանէ, որպէս եւ*

---

1—9 A. *իսկ — մեկնութեանն]* El. ἐν δὲ τοῖς καθόλου τοῖς αὐτοπροσώποις, τοῖς καὶ ἀκροαματικοῖς, κατὰ μεν τὴν λέξιν ἀσαφής· γίνεται δὲ ἡ ἀσάφεια διὰ τοῦ ὀνοματοποιεῖν, ὡς ὅταν λέγῃ κατηγορίας, οὐ τὰς ἐπὶ ἐγκλήμασι δίκας, ὡς ἔθος, ἀλλὰ τὰ γενικώτατα, ὡς ἔθος ἔχει ἀεὶ κατηγορεῖσθαι καὶ μηδέποτε ὑποκεῖσθαι, καὶ κεφαλωτὸν καὶ πηδαλιωτὸν καὶ πτερωτόν, ὡς ἡνίκα λέγει **, ἢ πάλιν τόπον, ὡς ἡνίκα λέγει οὐ τὸ πέρας τοῦ περιέχοντος καθ' ὃ περιέχεται τὸ περιεχόμενον, ὡς ὡρίσατο ἐν τοῖς Φυσικοῖς, ἀλλὰ τὸ ἐπιχείρημα τὸ πολλῶν ἐπιχειρημάτων περιεκτικόν, καὶ ἑρμηνείαν, ὡς ἡνίκα λέγει τὴν ἀκαλλώπιστον λέξιν ἐν τῷ Περὶ ἑρμηνείας 124,6—14. 9 El. ἀλλὰ καὶ ἄλλως ἀσαφής ἐστιν 124,14. 13—14 A. *զոր — երեւելեացն]* El. *չէք*. 15 El. ἐν δὲ τῇ διανοίᾳ οὐκ ἐξίσταται τοῦ φαινομένου 124,17. 15—16 A. *աղաչէ զամենեսեան]* El. δυσωπεῖ ἀεὶ 124,17. 16 A. *եւ հարկաւորէ]* El. καὶ καταναγκάζει τοὺς ἀκροατάς El. 124,18. 17 A. *զցուցեալսն հաստատուցանել]* El. *չէք*. 17 A. *ի ձեռն բանից]* El. διὰ τοῦ λόγου 124,19. 18 A. *ասելով]* El. ὅτι 124,20. 20 A. *հաստատունս*, ուղղ. *հաստատարմանս*. 21 El. διὸ ἀεὶ ὁ Ἀριστοτέλης θεολογῶν φυσιολογεῖ 124,21—22.

*Պղատոն բնաբանելով աստուածաբանէ. ամենայն ուրեք յարաշրջեցուցանելով զկարծիս տեսակացն: **

*Մեներորդ գլուխ է առաջադրեցելոցն խնդրել. թէ զի զանհաւաստութիւն ախորժեաց Արիստոտէլ. վասն զի ոչ էր բնութեամբ անհաւաստի՝ արդեաւք վասն պատմական տկարութեան զայս ախորժեաց (քանզի ի յոլով իրս հաւաստաբար պատմէ, որգովն ի մասնականսն յամենեսեան եւ յայնս՝ որք ընդ մէջսն են, եւ ի հանրականացն ի տրամաբանականսն յամենեսեան եւ յինքնադիմացն յոմանս, որպէս յԱմբարձականսն եւ ի Տեղիս եւ յԻմաստականս յանդիմանութիւնս), եւ բնութեամբ գոլով հաւաստի՝ զանհաւաստութիւն ախորժեաց: Բայց ախորժեաց զանհաւաստութիւն վասն երից պատճառաց՝ կամ թագուցանելոյ սակս, կամ փորձելոյ, կամ կրթելութեան. քանզի որպէս առ ի քերթողացն առասպելքն եւ առ ի քահանայիցն վայրագոյրք՝ նոյնպէս առ ի յԱրիստոտելեան հաւաստութիւն, բայց զի զՈրփիականն միայն ոչ երգէ զայն եթէ*

*„Երգեմ հանճարողաց, եւ դրունս ի վերայ ունկան դիք պղծք“.*

*Նմանն սորին՝*

*„Չարախոհիցն պղծաց*
*զթաւս ականջացն պարածածկեսցեն սարդի ոստայնիք“.*

*Եւ զկաղղիմաքայինն՝*

*„Ցիջանել կողովլին ընդ գետին հայեցարուք կանայք.*
*եւ ոչ ի ծեղուանց եւ մի՛ ի բարձանց ճաճանչէք“:*

*Եւ Արիստոտէլուս՝ երբեմն մեղադրելով Աղեքսանդրոս վասն արտատրութեան կրոց շարագրածացն՝ „եւ արտատրեալ է“ ասաց „եւ ոչ արտատրեալ“, առակելով զանհաւաստութիւն* իմն ի Պիւթագորականացն արտատրեալ զասացեալ*

---

1 A. *ամենայն ուրեք*] El. παντελῶς 124,23 (πανταχοῦ 121,3) 2 El. ἐν οἷς καὶ ἡ παροῦσα θεωρία 124,23—24] A. *չէր.* 3 A. *մեներորդ.* 3 A. *է*] El. ἦν 124,25. 15—18 A. *նոյնպէս — պղծք*] El. τοῦτο τῷ Ἀριστοτέλει ἡ ἀσάφεια μονονουχὶ ἐπάγοντι τὸ Ὀρφικὸν ἐκεῖνο ʻἀείδω ξυνετοῖσι, θύρας δʼ ἐπίθεσθε βεβήλοιςʼ 125,1—3. 19 A. *…. զնմանն.* 21 El. οὔατα λαχνήεντα περισκεπέτωσαν ἀράχναι 125,6. 28 A. *իմն ի Պիւթագորականացն*] El. ὥς καί τις τῶν Πυθαγορείων 125,12.

*միայնագիրսն որ Վասն քանից գծաց՝ ի նաւաբեկութեան ըմբռնեցաւ որպէս զանճառն արտակաքաւեալ. եւ զոր ասէն Պղատոն վասն անհաւաստութեան, „եթէ եւ տախտակագիրն ուրեք կիրս կրեսցէ յերկրում եւ կամ ի ծովում, որ ընթեռնուն մի՛ գիտասցէ“. արդ՝ այսպէս թագուցանելոյ սակս: Եւ կամ սակս փորձելոյ զպատկանաւորս եւ զանպատկանաւորս իմաստասիրութեան, որպէս զի անպատկանաւորքն առ իմաստասիրութիւն թիկունս դարձուսցեն (առ որս պարտ է ասել զՀոմերականն՝ եթէ*

*„Ո՞ւր փախչեսցին թիկունս դարձուցեալ, որպէս յոռի ոք ի պատերազմում“),*

*իսկ պատկանաւորք առ իմաստասիրութիւն յորդորագոյնք եղիցին, ուսանելով՝ եթէ որչափ ինչ պէտս ճգնութեան ունին առ իյուղղիլ իմաստասիրութեամբ. առ որս է ասել զՊղատոնականն՝ զոր ի Մանկաւրէնումն ասէ. „Արդ՝ եթէ դժուարք եւ եթէ դեւրք՝ ընդ այս ուսմունս գնալի է՝ այս է ճանապարհ. անփոյթ առնել ոչ է պարտ“: Արդ՝ այսպէս եւ արծուիք որոշեն զհարազատագոյնսն եւ զխորդսն ի ծագուց՝ կացուցանելով զնոսա ընդդէմ արեգականն. եւ որ միանգամ անքթթակի կարող գոն հայել ընդ ճառագայթսն արեգական, հանելով այնուհետեւ ի բոյնս՝ որպէս հարազատս սնուցանեն: Իսկ որք ոչ կարեն հայել ընդդէմ ճառագայթից արեգականն՝ որպէս խորթս՝ ի բաց ընկենելով ի բունաց՝ անտի սատակեն: Քանզի որպէս արամազդային թագաւորական գոլով արծուի՝ եւ զթագաւորականն ի զգայութեանց ստուգեալ ունի, այսինքն՝ զտեսարանն: Եւ զի թա-*

1 El. Περὶ τῶν ἀλόγων γραμμάτων 125,12. 3—5 El. 'ἵν' εἰ ἡ δέλτος τι πάθῃ ἢ ἐν γῇ ἢ ἐν θαλάσσῃ, ὁ ἀναγνοὺς μὴ γνῷ' 125,14—15. 4 A. *զիրս զրեսցէ* փփ. *կիրս կրեսցէ*. 8 A. *զՀոմերականն*] El. չիք. 10—11 Hom. Θ 94. 10 A. *ու՞ր փախչեսցին*] El. πῇ φεύγεις 125,18. 13—14 A. *եթէ—իմաստասիրութեամբ*] El. ὡς πλείονος ἐπιμελείας δέονται τὰ μαθήματα 125,20. 16 A. *ընդ—գնալի է*] El. ταύτῃ ἰτέον, ταῦτα ‹τὰ› μαθήματα 125,21—22. 16—17 A. *չէ. եւ այս է ճանապարհ զոր անփոյթ առնել ոչ է պարտ*. 17—18 A. *որոշեն—զխորդսն*] El. κρίνουσι τὴν γνησιότητα καὶ τὴν νοθείαν 125,23. 19 A. *միանգամ*] El. չիք. 20 A. *այնուհետեւ*] El. չիք. 22—23 A. *ի բաց—սատակեն*] El. ἀποβάλλονται 125,27. 23—24 A. *արամազդային թագաւորական*] El. δῖος καὶ βασιλικός 125,27. 24 A. *զթագաւորականն*] El. τὴν βασιλικωτέραν 125,27. 25 A. *այսինքն զտեսարանն*] El. φημὶ δὲ τὴν ὄψιν 125,28.

*զաւորական է արծուին՝ յայտ է. զի ոչ երբեք կերակրի մեռեալըտեալք: Այսպէս եւ Կեղտացիք Ռինոսիւ գետով որոշէին զհարազատս յորդեացն եւ զշնայինսն. քանզի դնելով զնոսա ի վերայ վահանաց՝ թողուին ի հոսանս գետոյն այսր եւ անդր բերիլ: Եւ որք միանգամ ընկղմէին ի հոսանացն՝ որպէս որդիս շնացելոց կարծելով՝ անփոյթ առնէին, իսկ որք ապրէինն՝ առ հարազատս ունելով՝ խնամով սնուցանէին: Իսկ Պիւթագորականք զպատկանաւորս եւ զանպատկանաւորս առ իմաստասիրութիւն երազովք փորձեալք նախաճանաչէին. քանզի քննէին զնոսա յետ բազում աւուրց յաղագս կալ հրամայելոյ եթէ որպիսիս երազս տեսին: Եւ զորս կարծէինն պատկանաւորս գոլ առ իմաստասիրութիւն՝ ընդունէին ի պարապարանն, իսկ զանպատկանաւորսն հալածէին ամենայն գոյիւ: Եւ այնուհետեւ ունայնաշիրիմս շինելով նոցա՝ որպէս ընդ մեռելոց կաճառէին: Վասն որոյ եւ Քիղովն Լակեդմոնացի զայս կիրս կրեալ ի նոցանէ՝ հուր հարեալ զպարապարանէն նոցա՝ զբազումս ապականեաց: Իսկ Պղատոն ի ձեռն զինոյ որոշէր զպատկանաւորս եւ զանպատկանաւորսն, լաւագոյն եւ ճարտարագոյն քան զՊիւթագորաս առնելով. վասն զի յերազս մարթ գոյ եւ յաւելուլ եւ պակասեցուցանել, բայց արբեցեալք զամենայն ինչ անքաժ եռակի արտապատմեմք, զոր յառաջն բազում ծածկութիւնք (°) թագուցանէաք: Արդ՝ այսպէս եւ փորձելոյ սակս: Իսկ կրթութեան՝ որպէս Պղատոն զղաժանութիւն կարծմանցն ախորժեաց կրթութեան սակս: Այսպէս եւ Ապողոն զառշեղութիւն նախասացութեան՝ փորձելոյ սակս. վասն որոյ եւ Կռխոսի տուաւ անհաւաստի պիտած.*

*"Կռիւսոս ընդ Հաղէս անցեալ մեծ իշխանութիւն քակտեսցէ":*

---

2—5 A. *որոշէին — բերիլ]* El. κρίνουσι τὰ γνήσια τέκνα καὶ τὴν νοθείαν τῶν βρεφῶν ἐμβάλλοντες γὰρ εἰς ἀσπίδα τὰ βρέφη ἀφιᾶσιν ἐν τοῖς ὕδασι 125,30—31. 12 A. *ընդունէին ի պարապարանն]* El. εἰσεδέχοντο ἐν τῇ σχολῇ ἤγουν ἐν τῷ ὁμακοΐῳ 126,8. 14—15 A. *որպէս—կաճառէին]* El. ὡς περὶ ἀποιχομένων ἤγουν τεθνεώτων διελέγοντο 126,8. 17—18 A. *որոշէր—զանպատկանաւորսն]* El. ἔκρινε τὴν γνησιότητα τῶν ἐπιτηδείων καὶ μή 126,11. 18 A. *լաւագոյն եւ ճարտարագոյն]* El. ἄμεινον 126,11. 21 A. *անքաժ եռակի]* El. ἀτρεχῶς 126,13. 21—22 A. *զոր—թագուցանէաք]* El. ἃ πρώην πολλοῖς ἐκρύπτομεν περιβολαίοις 126,13—14. 25 A. *զառաւելութիւն նախասացութեան]* El. τὸ λοξὸν τῶν μαντευμάτων ἐπετήδευσε 126,16. 26 A. *առխոսի.*

*քանզի անյայտ էր՝ եթէ զիւրն եթէ զՆիւրոսին. ուստի զաւրաժողով եղեալ՝ զյետնագոյն վիճակեցաւ: Եւ Աթենացւոց երբեմն պիտած տուաւ.*

*„Պարիսպ Տրիտածնի փայտեղէն տայցէ մեծազանձն Արամազդ“.*

*քանզի յայտնէր՝ եթէ ի ձեռն եռավարիցն պարտ է նոցա նաւամարտել. քանզի զայս նշանակէր փայտեղէն պարիսպն: Յորոյ վերայ եհաս Թեմիստոկղէս դժնեայ գոլով յիմանալ: Եւ Սաղամինացւոց տուաւ պիտած որ ասէր.*

*„Ո՜վ աստուածային Սաղամիսս, յուզես դու զորդիս կանանց“. անյայտ գոլով՝ եթէ զորոց արդեւք կանանց, զիւրեանցն եթէ զնակառակամարտիցն: Արդ՝ միանգամայն ասել, եթէ որպէս քերթողացն առասպելք եւ քահանայից վայրագոյրք՝ այսպէս եւ Արիստոտէլի ըստ բառիցն անհաւաստութիւն, թագուցանելոյ սակս: Դարձեալ՝ որպէս արծուեաց արեգակն եւ Կեղտացւոց Ռինոս գետ, Պիւթագորականաց երազք, Պղատոնի զինին՝ այսպէս եւ Արիստոտելի ըստ բառիցն անհաւաստութիւն, փորձելոյ սակս: Եւ որպէս դարձեալ Պղատոնի կարծմանն դաժանութիւն եւ Ապողղոնի առշեղութիւն նախասացութեանցն՝ այսպէս եւ Արիստոտելի ըստ բառիցն անհաւաստութիւն, կրթութեան սակս:*

## *ԸՆԴ ԱՅՍՈՍԻԿ ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՎ ԵՒ ԱՌԱՋԻԿԱ ՊՐԱԿՔՍ. ՊՐԱԿՔ Ժ*

*Տասներորդ եւ վերջին գլուխ առաջադրեցելոցն խնդրելի է, քանի՞ս եւ որպիսի՞ս ոմանս գլուխս պարտ է յառաջագոյն առնուլ ամենայն Արիստոտէլական շարագրութեան: Արդ՝ վեց գլուխս պարտ է ամենայն Արիստոտելականի յառաջագոյն*

---

1 A. *եթէ զՆիւրոսին]* El. ἢ τὴν τῶν ὑπεναντίων 126,19. 1—2 El. διὸ ἀπατηθεὶς ἐπεστράτευσε καὶ κατόπιν ἔπραξε 126,19—20. 3 A. *երբեմն]* El. *չիք*. 4 El. Τριτογενεῖ 126,21. 4 A. *տանց եւ փխ. տայցէ]* El. διδοῖ 126,21. 4 A. *մեծազանձն]* El. εὐρύοπα 126,21. 10 A. *յուզես]* El. ἀπολεῖς 126,25. 12 A. *Արդ—ասել]* El. καὶ συνελόντι φάναι 126,26. 15 A. *կեղտացիոց*. 16 A. *ուղղ. եւ պիւթագորականաց*. 16 A. *Պղատոնի զինին]* El. τῷ Πλάτωνι ἡ χαλεπότης τῶν δογμάτων, ἡ μέθη 127,1. 18—20 A. *Եւ որպէս—կրթութեան սակս]* El. *չիք*. 21—22 A. *ընդ այսոսիկ—պրակք ժ]* El. *չիք*. 23—24 El. Δέκατον ἦν κεφάλαιον τῶν προτεθέντων τὸ ζητῆσαι 127,3. 26 A. *ամենայն Արիստոտելականի]* El. *չիք*.

առնուլ՝ զդիտաւորութիւն** յորժամ ի մակագրութենէ անտի քարոզի. վասն զի ամենայն ինչ առ ի դիտաւորութիւն հայի. որպէս եւ Պղատոն ասէ. „Ո՛վ մանուկ դու, մի է սկիզբն գեղեցկաքարն խոհելոյ. գիտելն յաղագս ո՛յր է մտածութիւնն. ապա եթէ ոչ՝ հարկ է յամենայնէն վրիպել*: Բայց քարոզի դիտաւորութիւնն ի մակագրութենէ, որպէս Յաղագս անձին եւ Յաղագս երկնի եւ Յաղագս լինելութեան եւ ապականութեան: Բայց մանաւանդ խնդրելի է դիտաւորութիւն, յորժամ ոչ ի մակագրութենէ քարոզի, յորժամ յոյժ անհաւաստի է մակագրութիւն եւ տարալսելի՝ որպէս Ստորոգութիւնք, որպէս Յաղագս մեկնութեան: Իսկ պիտանացուն խնդրելի է վասն յաւժարագոյնս լինելոյ զընթերցաւղսն՝ հայցեալս որպէս կեր ինչ կարկառեալ զառ ի նմանէ շահն առ տրփականս զուարդակցութիւն: Բայց մանաւանդ խնդրելի է զպիտանացուն առ թուեցեալսն վարկպարազի գրեալս գիրս, որպէս Տեղիք՝ զնոյն ստեղծանելով եւ եղծանելով, կամ առ չար ինչ գրեալս, որպէս Սոփեստականք յանդիմանութիւնք՝ յեղանակս խաբէութեան ուսուցանելով: Յաղագս որոց է ասել, եթէ եւ Տեղիք առ բարիոք իրս գրեցան՝ սակս կրթութեան, որպէս զի նեղելով հոգի յիւրաքանչիւրսն ձեռնարկութեանց բացածնեսցի զճշմարտութեանն լոյս, զաւրէն հրահանաց քարանցն յարշփելոց ընդ միմեանս եւ հուր բացաթողլոց ընդ միմեանս եւ լոյս: Եւ ոչ Իմաստական յանդիմանութիւնքն առ չար ինչ գրեցան, թէպէտ եւ յեղանակս խաբէութեան ուսուցանեն. այլ ոչ որպէս զի խաբեսցուք, այլ զի մի՛ խաբեսցուք: Քանզի այսպէս եւ բժիշկք ուսուցանեն զմահացուսն ոչ վասն պիտոյից, այլ որպէս զի փախիցեն ի նմանէ: Իսկ զպատճառս մակագրութեանն խնդրելի է, եւ յորժամ զդիտաւորութիւն քարոզէ, բայց մանաւանդ խնդրելի է զմակագրութիւն, յորժամ անհաւաստի զոյ, յորժամ անուանա-

1—2 A. *զդիտաւորութիւն — քարոզի]* El. τὸν σκοπὸν τὸ χρήσιμον καὶ τὰ ἑξῆς. ζητητέον δὲ τὸν σκοπὸν καὶ ὅτε κηρύττεται ὑπὸ τῆς ἐπιγραφῆς 127,5—6. 12—13 A. *հայցեալս — զուարդակցութիւն]* El. οἷον δέλεαρ ὁρῶντας προσγινόμενον τὸ ἐξ αὐτοῦ κέρδος πρὸς ἐρωτικὴν διάθεσιν 127,14—15. 12 A. *կեր, լուս. կերակուր.* 13 A. *ուղղ. առ տրփականսն.* 13 A. *զհարդակցութիւն.* 16 A. *⟨կամ առ⟩ չար]* El. ἢ ἐπὶ κακῷ 127,17. 16—17 A. *կոփեստականք.*

*ստեղծէ Արիստոտէլ՝ որպէս ի Ստորոգութիւնսն, որպէս Ցաղագս մեկնութեան: Քանզի յորժամ ասէ Ստորոգութիւն, ո՛չ զատենական դատախազութիւն, որպէս սովորութիւնն է՝ նշանակէ, այլ զսեռականագոյնսն, որք սովորութիւն ունին միշտ ստորոգիլ եւ ոչ ստորակայիլ: Եւ դարձեալ յաղագս տեղեաց, ո՛չ զեզր պարունակողին՝ ըստ որում պարունակող է պարունակիցեալն, որպէս ասեմք պարունակիցեալ զգինին ի ներքուստ մակերեւութենէն, այլ զորոշումն ի բազմաց որոշմանց պարունակական: Եւ դարձեալ Ցաղագս մեկնութեան ասելով, ո՛չ ըստ բառին մեկնութիւն նշանակելով, այլ զմտածութիւնս հոգւոյն:*

*Ընդ որս խնդրելի է եւ յաղագս եղելոց խորթութեանց: Քանզի խորթանան գիրք ըստ հինգ յեղանակս. կամ յաղագս բարեմտութեան աշակերտաց, որք զիւրեանց շարագրածութիւնս իւրեանց վարդապետացն ծանեցին, որպէս պատճառաց բարեաց, որպէս Պիւթագորի եւ Սոկրատայ** Պիւթագորականաց եւ Սոկրատականաց:*

*Եւ կամ վասն թագաւորականի պարգեւի. քանզի Յովբատայ Լիւբէացւոց թագաւորի հաւաքեցելոյ զայնս, որք Պիւթագորին գոյին, իսկ Պտղոմիոսի՝ զայնս, որք Արիստոտէլի՝ ոմանք վասն շահի վայրապար շարագրածութիւնս առնելով խայտաղանէին եւ փտեցուցանէին, դնելով ի նորս ցորեանս, որպէս զի ընկալցին խոստովանաբար զառ ի ժամանակէն արժանահաւատութիւն:*

*Կամ վասն համանանութեան շարագրողաց եւ շարագրածութեանց եւ ստորայիշատակմանց. եւ շարագրաւղաց՝ ո՛չ եթէ միայն Արիստոտէլ Ստագիրացին այսպէս կոչէր, այլ եւ այլք Արիստոտէլք եղեն առ Ստագիրացեաւն, որպէս մանկնամարզն եւ մականուանեալն Առասպել, եւ յետ նորա՝ նոյն Ստագիրա-*

---

5 A. *ոչ փխ. ոչ.* 7 A. *ի ներքուստ մակերեւութենէն]* El. ὑπὸ τῆς τοῦ κεραμίου ἔνδοθεν ἐπιφανείας 127,31. 11 A. *խնդրելի է եւ]* El. ζητητέον καὶ τὸ γνήσιον 128,1. 14—15 A. *որպէս պատճառաց բարեաց]* El. *չիք.* 15—16 El. ὡς τὰ Πυθαγόρου καὶ Σωκράτους ἐπιγραφόμενα βιβλία μὴ ὄντα Σωκράτους ἢ Πυθαγόρου ἀλλὰ Σωκρατικῶν καὶ Πυθαγορικῶν 127,3—5. 28—1 A. *եւ յետ նորա — Աղէքսանդրի]* El. καὶ μετὰ ταῦτα, ὡς ὁ διδάσκαλος Ἀλέξανδρος· ἔδει γὰρ αὐτὸν οἷον δεύτερον ὄντα Ἀριστοτέλην 128,12—13.

*ցին՝ վարդապետն Աղեքսանդրի: Արդ՝ սոցա ամենեցուն շարագրութիւնս արարելոց՝ կարծին այնք շարագրութիւնք Ստագիրացւոյն գոլ վասն անուանի երեսուն ունելոյ:*

*Այլ եւ վասն հոմանուանութեան շարագրածութեանց լինին պատրանք. քանզի եւ շարագրածութիւնս հոմանուանս թողին հոմանունք Արիստոտէլք. եւ կարծի ամենայն Ստագիրացւոյն գոլ վասն անուանին գոլոյ:*

*Այլ եւ վասն հոմանունութեան ստորայիշատակման լինին պատրանք. քանզի Աղեքսանդրի ո՛չ միայն Ստագիրացւոյն Արիստոտելի զգիրս ստորայիշատակեալ, այլ եւ զայլոց Արիստոտէլացն, եւ կարծին ամենայն ստորայիշատակմունք ի Ստագիրացւոյն գիրս արարեալ վասն նշանաւոր գոլոյ առնն:*

*Եւ կամ վասն յընտրութիւնս գոլ այլոց՝ կարծեցան նորին իսկ գոլ արարաւղին զընտրութիւնս, եւ ոչ նախատպից շարագրաւղացն:*

*Եւ կամ վասն ամպարհաւաճութեան ստացաւղին տարավայելուչ գիրս. քանզի ոմանք անանուանիք գոլով շարագրաւղք, զնշանաւորաց շարագրաւղացն զգիրս առեալ, վասն կարծելոյ եւ տարավայելուչս* ունիլ գիրս՝ մակագրէին զանուն նշանաւոր շարագրաւղին: Ընդ այսոսիկ է հարազատն: Իսկ զկարգն խնդրելի է ոչ առ անհամատեսակսն միայն, որ ասացաւ մեզ, յորժամ ասէաք՝ եթէ պարտ է զբանականն նախադասել եւ յետ այսորիկ զբարոյականն եւ այնպէս մի ըստ միոջէ, որպէս ասացաք, այլ առ համատեսակսն խնդրելի է զկարգ բանական գրոցն՝ զո՛ր դաս ունի առ բանականսն, եւ առ բարոյականսն (՛) բնաբանականն: Իսկ զառ ի մասունս բաժանումն խնդրելի է, որպէս վերահատման դաս ունելով: Քանզի որպէս*

2 A. *այնք շարագրութիւնք*] El. *չիք*. 3 A. *վասն — ունելոյ*] El. *չիք*. 4—7 A. *Այլ եւ—գոլոյ*] El. *չիք*. 11 A. *ուղղ. կարծէին*] El. νομίζονται 128,13. 11—12 El. εἰς τὰ τοῦ Σταγειρίτου γεγράφθαι 128,17—18. 18 A. *զնշանաւորաց—առեալ*] El. *չիք*. 18—19 A. *վասն կարծելոյ—գիրս*] El. διὰ τὸ δόξαι ξενοπρεπεῖς εἶναι καὶ τοιαῦτα ἔχειν βιβλία 128,21. 21 A. *ոչ առ համատեսակսն*] El. οὐ πρὸς τὰ ἀνομοιοειδῆ 128,23. 24 El. ὡς εἴρηται 128,25. 25 A. *բանական գրոցն*] El. λογικοῦ ὄντος τοῦ βιβλίου 128,25—26. 25 A. *ուղղ. եթէ զոր դաս*. 25—26 A. *եւ առ բարոյականսն բնաբանականն*] El. ἢ πρὸς τὰ φυσικὰ τὸ φυσικόν 128,26. 27 A. *ուղղ. ի վերահատման*] El. ἀνατομῆς 128,27.

*վերահատումն խորագունից մասնկացն վերափոխելութիւնս առնելով՝ իւրաքանչիւրոյ մասնկան զպէտսն յարկացուցանէ. նոյնպէս եւ ի մասունս բաժանումն ուսուցանէ՝ զինչ կամի առաջին հատած գրոցն: Իսկ եթէ որպիսի՛ մասն յո՛ր մասնիկ վերաբերի՝ ոչ խնդրեմք, որպէս վերագոյն ասացեալ է, յորժամ ասէաք, եթէ որպիսի՞ ինչ բաժանումն Արիստոտէլականի*** որ Ստորոգութիւնք ցուցանէ, եթէ բանք ինքեանք իւրեանց զաւրութեամբ կարացին գոլ այնպիսիք, որպիսիք եւ իրքն իսկ են: Վասնզի նոյնպէս Առիստիդիս զարութիւն վկայելով զՅաղագս քառիցն մակագրեաց ի վերայ բանիցն այսպէս՝ Կիմոն, Մեղտիադիս, Պերիկղիս, Թէմիստոկղիս: Այլ եւ Պղատոն մակագրէ այսպէս՝ Գորգիաս, Փէդոն, Փեդրոս: Իսկ որք մակագրեն Յաղագս ստորոգութեան կամ Սակս տասն սեռից էակին* ցուցանեն, եթէ բանք ինքեանք վասն իւրեանց տկարութեան ոչ կարացին գոլ այնպիսիք, որպիսիք իրքն գոն: Բայց յաղթէ եւ այնմ մակագրութիւն՝ որ ասէ Յառաջ քան զտեղիսն: Քանզի թէպէտ եւ պարտ է զդասաւորութիւնն մակագրութիւն առնել, որպէս Յետ բնականացն, այլ ոնդ յիրաւի. քանզի եւ միայն հետեւի Բնականացն եւ միայնոց: Իսկ առաջիկայ գիրքս ոչ միայն յառաջապետէ Տեղեաց, այլ եւ այլոց իրաց: Գիտէ զամենայն մակագրութիւնս Արիստոտէլ՝ մակագրելով Ստորոգութիւնս, Տեղիս եւ այն Յաղագս երկնի եւ Յաղագս աշխարհի: Արդ՝ այսպէս եւ պատճառ մակագրութեանն:*

*Յորս ասասցուք եւ զհարազատն. եթէ հարազատ է նախնոյն առընթերակայ գիրքս մի ի չփոթակցութենէ յարմարա-*

---

2 A. *յարկացուցէ]* El. παρίστησιν 128,29. 2—6 A. *նոյնպէս—Արիստոտէլականի]* El. οὕτω καὶ ἡ εἰς τὰ μόρια διαίρεσις τῶν Ἀριστοτέλους συγγραμμάτων ἀρίστη. τὸ δὲ τίς ὁ τρόπος τῆς διδασκαλίας οὐ ζητοῦμεν, ὡς καὶ αὐτοῦ ἀνωτέρω εἰρημένου, ὅτε ἐζητοῦμεν τί τὸ εἶδος τῆς φράσεως τοῦ Ἀριστοτέλους 128,29—129,3. 6 El. 129,3—132,28] A. *չիք*. 9 A. *Առիստիդիս]* El. Ἀριστείδης 132,30. 10 A. *Մեղտիադիս]* El. Μιλτιάδης 132,31. 11 A. *Պէգիկղիս]* El. Περικλῆς 132,31. 13—15 A. *Սակս—իրքն գոն]* El. Περὶ τῶν γενῶν τοῦ ὄντος ἢ Περὶ τῶν καθόλου λόγων ἐνδείκνυνται ὅτι οἱ λόγοι δι᾽οἰκείαν ἀσθένειαν κατόπιν ἐγένοντο τῶν πραγμάτων καὶ οὐκ ἴσχυσαν γενέσθαι ὡς αὐτὰ τὰ πράγματα 132,31—133,2. 19 A. *բնականացն]* El. ταῖς Φυσικαῖς 133,5. 20 A. *ուղղ. զայլոց*. 24 A. *է նախնոյն]* El. ἐκ τοῦ παλαιοῦ 133,9. 25 A. *մի ի չփոթակցութենէ յարմարաբանութեանցն]* El. ἀπὸ τῆς φράσεως 133,10.

*քանութեանցն, ի դաժանութենէ մտածութեանցն եւ վասն յանուանէ յիշելոյ գյառաջիկայ գիրսս յայլ յիւր յիրողութիւնս. ասելով՝ եթէ „որպէս ասացեալ է ի Ստորոգութիւնսն", եւ յայնմանէ որ ի հոմանուն գիրս գրեցին ընկերք նորա եւ ի մակագրութեան գրեցին զ„յաղագս" նախադրութիւն, եւ վասն զի ընդ քննութիւնս մտիցելոյ յԱստուկեցոց պատմողացն. քանզի քառասուն գրոց գտելոց ի հնում գրանոցումն Վերլուծականացն եւ երկուց Ստորոգութեանցն**: Եւ դարձեալ, եթէ ոչ էր հարազատ յարակայ գիրքս՝ անգլուխ լինիւր ամենայն բանական իրողութիւն: Վասն որոյ Սիւրիանոս փիլիսոփոս մակագրեաց ի վերայ Փեդոնի զոր խորթացուցանէր ումն ի Պանետիոս. „Եթէ ոչ Պղատոն գրեաց զիս՝ ապա ուրեմն երկուք Պղատոնք եղեն. Սոկրատականաց զքաւսանացն զամենայն ծաղիկս բերեմ: Այլ զիս խորթ բացակատարեաց Պանէտիոս, որ զհոգի մահկանացու ասաց, նաեւ զիս խորթ բացակատարեաց": Իսկ ես ասեմ՝ ծեր վարդապետս, մակագրեմ Ստորոգութիւնս. „Եթէ ոչ Արիստոտելի եղեալ էի այսպիսի նաւարկութիւն՝ արդարեւ անգլուխ իմաստասիրութիւն լինէր թանց իմ": Արդ այսպէս եւ հարազատն:*

*Ցորոց վերայ ասասցուք զառ ի մասունս բաժանումնն: Ցերիս բաժանի առընթերակայ գիրքս՝ ի ստորոգութիւնս, այսինքն՝ ի նոյն իսկ ի հանդէսս, եւ առ ի պիտանացուն ստորոգութեանցն՝ զառաջինն եւ զվերջին զհատածսն. քանզի ուսուցանէ զոր պիտանացու են ի ստորոգութիւնսն, սակայն ոչ զնոյնս: Քանզի յառաջնումն հատածումն զայն պիտանացուս ուսուցանէ, որոց եւ ոչ մի ինչ առ կոչմունս ունիմք ի սովորութենէ՝ յաղագս հոմանունութեանց, յաղագս ենթակայի, յաղագս*

---

3—5 A. *եւ յայնմանէ — նախադրութ[իւ]ն]* El. καὶ ἐκ τοῦ κατὰ ζῆλον αὐτοῦ γράψαι τοὺς ἑταίρους αὐτοῦ ὁμώνυμα βιβλία καὶ χρήσασθαι τῇ 'περὶ' προθέσει 133,13—14. 5 A. *նախագրութեան.* 8 El. τέσσαρα μόνα τῶν Ἀναλυτικῶν ἐκκρίνουσι καὶ τῶν Κατηγοριῶν ἕν 133,16—17] A. *չկք.* 11 A. *Փեդոնսի]* El. τῷ Φαίδονι 133,19. 11 A. *ումն ի Պանետիոս]* El. ὑπό τινος Παναιτίου 133,19. 12 A. *որ փխ. ոչ.* 15—18 A. *Իսկ ես — թանց իմ]* El. ἐγὼ δὲ, φησὶν ὁ ἡμέτερος διδάσκαλος, ἐπιγράφω ταῖς Κατηγορίαις· εἰ μὴ Ἀριστοτέλους γενόμην, ἢ δίπλοος οὗτος, ἢ σοφίην ἀκάρηνον ἐδείματο νόσφιν ἐμεῖο 133,25—26. 16 A. *ուղղ. յԱրիստոտելի.* 17 A. *ուղղ. յայսպիսի.* 24 A. *ուղղ. զորս.*

*ստորոգեցելոյ. իսկ ի վերջնումն զայնս ի պիտանեացն ուսուցանէ, զորս եւ ի սովորութենէ գիտեմք՝ յաղագս նախկնին, յաղագս համայնզամայնից, սակս ունելոյ, սակս շարժութեան: Բայց ոչ կամեցաւ զամենայն պիտանիսն ի միում մասին ասել, զի մի՛ մեծագոյնս քան զհանդէսն արասցէ զնախերգանն: Արդ՝ զի մի՛ եւ մեք մեծագոյնս արասցուք զնախերգանացն՝ ի նոյն ինքն ի հանդէսն երթիցուք:*

## ԸՆԴ ԱՅՍՈՍԻԿ ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՎ ԵՒ ԱՌԱՋԻԿԱ ՊՐԱԿՔՍ. ՊՐԱԿՔ ԺԳ

*Վասն զի դիտաւորութիւն ստորոգութիւնք են, իսկ էակն համանունաբար ստորոգի ստորոգութեանցն, բայց ամենայն ստորոգութիւն զընդ ընքեամբք տեսակացն փաղանունաբար ստորոգի, որպէս սեռ տեսակում, վասն այսորիկ Արիստոտէլ նախադասէ զվարդապետութիւն համանունաց եւ փաղանունաց, եւ յայսոսիկ նախադասէ զհամանունսն յառաջագոյն քան զփաղանունսն, վասն զի մին քան զերկուսն յառաջագոյն է: Քանզի ի համանունսն միում պէտք են՝ անուան միայն հասարակութիւն որ առնէ զհամանունսն, իսկ զփաղանունսն եւ հասարակութիւն անուան եւ հասարակութիւն իրի: Բայց վասն զի Արիստոտէլ եթէ զի՞նչ է համանունն միայն եւ զի՞նչ փաղանունն ասէ, թողեալ զեթէ էն՝ մեք նախ քան զասելն զինչ է զեթէ էն ասասցուք: Եւ յիրաւի խնդրեմք զեթէ էն, վասն զի ոմանք ծեռնարկեն ի բաց բառնալ զհամանունսն, ցուցանելով թէ ոչ են:*

*Բե՛ր ցուցցուք՝ եթէ են համանունքն: Եւ ցուցցուք այսպէս, խոստովանեալ առած յառաջագոյն առնլով զայս, եթէ եզերեցելոցն եւ շարամանութիւնքն եզերեալք գոն: Արդ՝ եզերեալք*

---

5—9 A. *Արդ—արասցուք ժգ]* El. καὶ ἡμεῖς οὖν ἵνα μὴ τὰ προοίμια μείζονα ποιήσωμεν, τῶν μὲν προοιμίων ἅλις, ἐπ' αὐτοὺς δὲ τοὺς ἀγῶνας λοιπὸν χωρήσωμεν καὶ τὴν ἐξήγησιν τῆς λέξεως. ἐν οἷς καὶ τὰ προλεγόμενα τῶν Κατηγοριῶν. ἀρχὴ σὺν θεῷ τοῦ κειμένου. 134,9—12  10—11 A. *իսկ—ստորոգութեանցն]* El. τὸ δὲ ὁμώνυμον κατηγορεῖται τῶν κατηγοριῶν 135,3.  25 A. *խոստովանեալ—զայս]* El. λῆμμα ὁμολογούμενον τοῦτο προλαμβάνοντες 135,13—14.  25 A. *աւել. առածելով.* 25—26 A. *եզերեցելոցն]* El. τῶν στοιχείων πεπερασμένων 135,14.

զոն տառքդ (քանզի քսան եւ չորք են թուով). իսկ տառիցդ շարամանութիւնք են փաղառութիւնքն, ապա ուրեմն՝ փաղառութիւնք եզերեալք զոն: Իսկ փաղառութեանցն շարամանութիւնք են անուանք՝ յայտ է եթէ եւ անուանք եզերեալք զոն:

Իսկ անհատքն անեզերք եւ անքաւք՝ ոչ միայն ըստ առաջիկային, այլ եւ ըստ միշտ լինելոյն: Վասն որոյ ոչ երբեք համդուրժէ եզերեալն յարաձգիլ ընդ անեզրին, եթէ ոչ բազում անգամ վերայշրջեսցի. ապա ուրեմն են հոմանունքն. քանզի ոչինչ է հոմանունն՝ եթէ ոչ վերաշրջութիւն նորին անուան:

Արդ՝ այսպէս ցուցեալ Արիստոտէլի, եթէ են հոմանունք յիմաստական յանդիմանութիւնս եւ եթէ ի հարկէ զոն՝ ոմանք փորձին ի բաց բառնալ զհոմանունսն, այսպէս եւ ըստ այսմ՝ աւրինակի ասելով, եթէ հոմանուն իր եւ զանուն հոմանուանն ընդունի եւ զսահմանն. իսկ որք զնոյն անուն եւ զնոյն սահման ընդունին՝ այնպիսիքն փաղանունք զոն. ապա ուրեմն՝ հոմանունքն փաղանունք զոն: Եւ զի՞նչ յայլոցն եղիցին հոմանունք նոցին հոմանունացն փաղանունաց ելոց: Առ որս ասեմք երկուս լուծմունս, զմին այսպէս՝ եթէ ոչինչ անպատեհ է զնոյն իր եւ հոմանուն զոլ եւ փաղանուն ըստ այլ եւ այլ անուան: Քանզի ըստ որում Ճաս եւ Ճաս հոմանունք են. քանզի զանազանս ստորագրութիւնս ունի իւրաքանչիւր ոք ի դոցանէ. իսկ ըստ որում՝ Ճաս եւ Ճաս հոմանունք զոն՝ ըստ նորին հոմանունութեան իմացուածոյ եւ անուամբ փաղանունք զոն. արդ՝ ոչինչ անտեղի զոյ զնոյն եւ հոմանուն եւ փաղանուն զոլ ըստ այլում եւ այլում: Եւ կամ այլազգաբար. ասել, եթէ ըստ նորին անուան եւ հոմանուն եւ փաղանուն կարող զոյ լինել. քանզի ենթակայեսցին երկուք ոմանք անուանեալք Բարեխոհանէսք. արդ՝ աստանաւր որպէս Բարեխոհանէս եւ Բարեխոհանէս հոմանունք զոն, իսկ եթէ դէպ լինիցի եւ խոհեմք եւս զոլ՝ փաղանունք են: Քանզի զտանին եւ

5—6 A. *Իսկ—լինելոյն]* El. τὰ δὲ πράγματα ἄπειρά εἰσι τῷ πολλάκις καὶ ἀεὶ γίνεσθαι 135,18—19. 7—8 A. *եթէ ոչ—վերայշրջեսցի]* El. εἰ μὴ ἀνακύκλησις τοῦ αὐτοῦ ὀνόματος πολλάκις γινομένη 135,21—22. 11 A. *ուղղ. զան փխ. զոն.* 11—12 A. *ոմանք փորձին]* El. πειρῶνται 135,23. 21—23 A. *իսկ—զոն]* El. καθὸ μέντοι τὸ Αἴας καὶ Αἴας ἄνθρωποι, συνώνυμά εἰσιν 136,3.

*Բարէխոհանէսք կոչեցեալք եւ բարեխորհուրդք՝ զսահմանն եւ զանուն բարեխոհանութեան ընդունելով: Այս մի լուծումն կրկին: Երկրորդ լուծումն, եթէ զանցաքանին այնոքիկ՝ որ ասենն ցուցանել զհոմանունսն փաղանունս: Վասն զի ոչ ցուցին զոր ինչ խոստացանն, վասն զի փաղանունն ստորոգութիւն եւ հասարակաքար ընդունականանայ, որոց ընդունականայ եւ առանձինն, թէպէտ եւ ոչ գոյ մին. որգոն՝ մարդոյ ոչ ելոյ՝ կարող գոյ ծի կենդանի եւ ասիլ եւ գոլ. եւ դարձեալ մարդ կենդանի ասի եւ կենդանի է, թէպէտ եւ ոչ է ծի: Իսկ ի վերայ հոմանունացն ոչ ողջ գոյ այսպիսի սահման. վասն զի եւ ոչ մի Էաս յամենայն աշխարհում եւ կարող գոյ հոմանուն լինիլ, այլ Էանտեայ ոչ ելոյ: Եւ արդ՝ զի՞նչ ժողովեաց բանս: Եթէ կարող գոյ նոյն եւ հոմանուն գոլ եւ փաղանուն ըստ այլ եւ այլ անուան, ըստ նորին անուան, ըստ այլ եւ այլ նշանակութեան, որպէս Եւբուղոս Եւբուղոս:*

## *ԸՆԴ ԱՑՍՈՍԻԿ ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՎ ԵՒ ԱՌԱՋԻՆԱ ՊՐԱԿՔՍ. ՊՐԱԿՔ ԺԴ*

*„Հոմանունք ասին որոց անուանքն միայն հասարակ".*

*Յետ եթէ էին հոմանունացն եկեսցուք եւ ի զինչ էն, նոյն ինքն ասել յենթագրութիւնն: Արդ սահմանէ զհոմանունսն Արիստոտէլ այսպէս. „Հոմանունք ասին որոց անուանքն միայն հասարակ, իսկ ըստ անուանն բան գոյացութեանն այլ", որպէս Էաս եւ Էաս. քանզի երկուք Էանտեայքն անուն միայն ունին հասարակ, իսկ ենթագրութիւնս զանազանս: Արդ՝ հաւաստեսցուք զիւրաքանչիւր ոք ի բառիցն, որք յենթագրութեանն գոն:*

*„Հոմանունք".*

*Ահա վաղվաղակի աստուստ իսկ ի գրոցս Ցամպղիքեանն երեւի դիտաւորութիւնն, որ ասէ, եթէ վասն ծայնից եւ մտա-*

---

1—2 A. *զսահմանն — ընդունելով]* El. ὡς καὶ τὸν ὁρισμὸν τοῦ εὐβούλου δεχόμενοι 136,9. 7 A. *թէպէտ — մին]* El. κἂν μὴ ᾖ τὸ λεῖπον 136,18. 13—15 A. *անուան — Եւբուղոս]* El. ὁμώνυμα μὲν κατ' αὐτὸ τὸ ὄνομα κατ' ἄλλην δὲ καὶ ἄλλην σημασίαν συνώνυμα, ὡς ἐπὶ τοῦ Εὔβουλος 136,18—20. 17 A. *պրակք ժդ]* El. *չիք.* 19—20 A. *ուղղ. ի նոյն ինքն.* 27 A. *աստուստ իսկ ի գրոցս]* El. ἐκ θυρῶν 136,20.

*ծութեանց եւ յաղագս իրողութեանց է դիտաւորութիւն Ստորոգութեանցս. քանզի հոմանունքն ոչ յիրողութիւնս միայնս եւ ոչ իրողութիւնք գոլ տեսանին. ապա եթէ ոչ՝ եղիցի եւ հոմանունութիւնն նոյնութիւն իրողութեան, որ է անտեղի: Եւ ի ձայնս միայն եւ ոչ ձայնք գոլ տեսանին. ապա թէ ոչ՝ եղիցի անուն անուան՝ որ է անտեղի: Այլ յիրողութիւնս տեսանի հոմանունութիւնն ի կրեալսն զհոմանունութիւնսն: Արդ՝ եթէ կարեւորապէս եւ յիրողութիւնս եւ ի ձայնս տեսանին հոմանունք՝ կարեւորապէս եւ ի մտածութիւնս, զի ուր ձայնք՝ եւ իրողութիւնք անդ հարկաւորապէս, ի մէջ նոցա եւ մտածութիւնք:*

*„Ասին".*

*Արդ՝ ոչ եթէ վասն զի ասաց „ասին", ամենայն իրաւք յաղագս ձայնից պարտ է իմանալ զդիտաւորութիւն. քանզի ասիլ եւ ի վերայ ձայնից եւ ի վերայ իրողութեանց եւ ի վերայ մտածութեանց տեսանի. վասն զի կարող գոյ ասիլ եւ զբերսեան նշանակել. քանզի այդպէս եւ զխուժադուժն, որ հայերէնն խօսին՝ յետնաբար ասեմք ասել, վասն զի ի ձայնսն են սխալանքն. եւ զայն որ յիմարաբարն բարբառի՝ յետնաբար ասեմք ասել, վասն զի ի մտածութիւնսն են սխալանքն. այսպէս եւ որ սուտն խօսի՝ յոռաբար ասեմք ասել, վասն զի ի յիրողութիւնսն են սխալանքն: Իսկ յիմարաբարն խօսել ըստ երից լինի յեղանակաց, կամ յոչինչ նշանակելոցն ասէ ի բառիցն, որպէս եղջիւրուաքաղն, եւ կամ ի նշանակելոցն ասէ, բայց ոչ հետեւողացն միմեանց, որպէս յորժամ ասէ ոք „մարդ կենդանի է, այլ եւ քար*

---

**2—4 A.** *քանզի—որ է անտեղի]* **El. τὰ γὰρ ὁμώνυμα οὐδὲ ἐν πράγμασι μόνοις ἢ πράγματά εἰσι θεωροῦνται, ἐπεὶ ἔσται ἡ ὁμωνυμία ταυτότης πραγμάτων, ὅπερ ἄτοπον 136,31—32. 4—6 A.** *Եւ ի ձայնս—որ է անտեղի]* **El.** *չիք.* **6—7 A.** *Այլ—զհոմանունութիւնսն]* **El. ἀλλ' ἐν πράγμασιν ἡ ὁμωνυμία πεπονθόσι τὴν ὁμωνυμίαν 136,33. 16—17 A.** *քանզի—ասել]* **El. καὶ τὸν βαρβαρίζοντα κακῶς λέγειν φαμέν 137,6—7. 18 A.** *յետնաբար ասեմք ասել]* **El.** *չիք.* **20 A.** *յոռաբար ասեմք ասել]* **El.** *չիք.* **21—2 A.** *Իսկ յիմարաբարն—ի հոմանունաց]* **El. ἀδιανόητοι λέγονται οἱ ταῖς ἀσήμοις λέξεσι χρώμενοι, οἷον τῷ βλίτυρι σκινδαψός· οὐδὲν γὰρ τούτων σημαίνει τι· ἢ σημαίνουσι μὲν αἱ λέξεις καθ' ἑαυτάς, εἰς ἀλλήλας δὲ εἰσιν ἀνακόλουθοι· λέγων γὰρ οὕτως 'ὁ ἄνθρωπος ζῷον, ἀλλὰ καὶ ὁ λίθος σῶμα, ἡ ψυχὴ ἄρα ἀθάνατος', ταῦτα ἀδιανόητα ὡς ἀνακόλουθα 137,9—13.**

*մարմին է. ապա ուրեմն՝ հոգի անմահ է“. եւ կամ ի նշանակելոցն ասէ, բայց ի հոմանունից:*

*<„Հոմանունք ասին“>.*

*Աստուստ տարակուսեն ոմանք ասելով, եթէ ընդէ՞ր եզական յոգնականում բացատրեաց. քանզի պարտ էր ասել * ասաց: Առ որս ասեմք, եթէ վասն այսորիկ այսպէս ասաց Արիստոտէլ, ոչ եթէ Ատտիկեցի ինչ բաղակարգութեանն հոգ տանելով եւ սովորութեան (վասն զի ոչ այսպիսի ինչ իրաց հոգ տանի Արիստոտէլ, որպէս եւ ոչ այլ իմաստասէրք, բայց միայն այնմ հոգ տանին, զի մի գտցին ի վերջոյ ճշմարտութեանն): Այլ վասն այսորիկ այսպէս ասաց Արիստոտէլ եւ եզական յոգնականում բաղակարգեաց, որպէս զի յայտ արասցէ, եթէ հոմանունքն բազում իրք գոլով՝ միով անուամբ անուանին:*

*„Որոց ասաց, այսինքն որոց իրաց եւ անունն“ (*).*

*Աստուստ տարակուսեն ոմանք ասելով, եթէ եւ ի բայսն գոն հոմանունք. որպէս կարեմ եւ կարեմ. վասն զի կարեմ նշանակէ եւ զոյժ, նշանակէ եւ կարել զհանդերձ ինչ կամ այլ: Արդ զիարդ ասաց՝ եթէ „որոց անունն միայն հասարակ“, որովհետեւ եւ ի բայսն ցուցաւ հոմանունութիւն: Առ որս ասեմք, եթէ վասն զի անուն երկակի է, մի որ ըստ ամենայն մասանց բանի բերի, ըստ որում ասեմք զՊղատոն եթէ զեղեցիկ անուանս էած ի կիր, որպէս ոչ եթէ բայս ոչ էած ի կիր զեղեցիկս, այլ անուանս ասեմք՝ նշանակելով եւ զանուանս եւ զբայս: Իսկ մին որ հա-*

3 El. Ὁμώνυμα λέγεται 137,14] A. *չիք*. 4—5 A. *Աստուստ—ասաց*] El. Ἀποροῦσιν ὅτι διὰ τί πληθυντικὸν ἑνικῷ ἀποδέδωκεν· ὀφείλων γὰρ εἰπεῖν 'λέγονται', λέγεται εἶπε 137,15—16. 12 A. *որպէս զի յայտ արասցէ եթէ*] El. ἐπειδὴ καὶ 137,20. 14 A. *Որոց—անունն*] El. Ὧν ὄνομα 137,22. 15 A. *ի բայսն*] El. ἐν ῥήμασιν 137,23. 16—17 A. *որպէս կարեմ—կամ այլ*] El. τὸ γὰρ ἐρῶ ῥῆμα σημαίνει καὶ τὸ ἐπιθυμῶ καὶ τὸ λέξω 137,23—24. 19 A. *Առ որս ասեմք եթէ*] El. τί οὖν φαμεν; 137,25. 22—3 A. *որպէս ոչ—բերի*] El. οὐχ ὅτι ῥήμασιν οὐκ ἐχρήσατο, τὸ δὲ ἀντιδιαστελλόμενον τοῖς ἄλλαις μέρεσι τοῦ λόγου τὸ κυρίως ὄνομα τὸ πτωτικόν. ἐνταῦθα οὖν ὄνομα ἀκουστέον τὸ κατὰ ῥημάτων φερόμενον καὶ τῶν ἄλλων μερῶν τοῦ λόγου 137,27—30.

*կորոշի այլոց մասանցն քանի. որ եւ տիրական եւ հոլովական կոչի, իսկ աստանաւր անունս լսելի է՝ զայն որ ըստ ամենայն մասանցն քանի բերի:*

*„Միայն“.*

*Միայնդ երկուս իրս նշանակէ. կամ՝ զմիակն՝ ըստ որում՝ ասեմք մի գոլ Աստուած, եւ կամ՝ այն՝ որ հակորոշաբար ասի առ այլ լծակիցսն, որպէս բազում անգամ՝ ասի, եթէ մնաց ի պատերազմին նիզակ միայն ունելով. որպէս ոչ եթէ ձեռս ոչ ունելով եւ ոտս, այլ զլծակից զէնսն ոչ ունելով՝ սուսեր եւ վահան:** Իսկ աստանաւր ասացաւ միայն այն, որ առ հակորոշումն լծակցի: Քանզի անուն լծակցէ սահմանին. քանզի անուն է սահման ամփոփեալ, իսկ սահման է անուն տարածեալ:*

*„Հասարակն“.*

*Հասարակն քառակի ասի. կամ՝ անբաժանելի, որպէս չուի փող հասարակ է երկուց փողահարաց, եւ կամ՝ որպէս ծառայ երկուց եղբարց. եւ կամ՝ բաժանելի, որպէս անդաստան՝ որ հասարակ է, կամ՝ տուն. եւ կամ՝ այն ասի հասարակ, որ յառաջեցելումն առանձինն՝ որպէս թէատրոնին տեղիք. քանզի ի թէատրոնին տեղիք հասարակ գոլով՝ յառաջեցելումն առանձինն լինի. կամ՝ այն հասարակ, որ հանգիտաբարն լինի հաղորդութիւն ընդունաւղացն՝ որպէս ձայն քարոզչի. քանզի ձայն քարոզչի համաբար ամենեցուն լինի հաղորդութիւն. կամ՝ որպէս նիւթ: Բայց աստանաւր հասարակ պարտ է առնուլ զայն, որ հանգիտաբար բոլորեցուն լինի հաղորդութիւն. քանզի զէաս զձայն հանգիտաբար ունին երկուք ճանտեայքն:*

9—10 A. *այլ—վահան*] El. ἀλλ' ὅτι τὰ ὁμόζυγα τούτου οὐκ εἶχεν οἷον ἀσπίδα καὶ κνημῖδας 188,5—6. 10 El. καὶ πάλιν ἀπελείφθη τις ἐν ἀρίστῳ ἄρτον μόνον ἔχων πρὸς ἀντιδιαστολὴν τῶν ὁμοζύγων ἐδεσμάτων 188,5—7] A. *չիք*. 11 A. *ուղղ. լծակցեալ է փխ. լծակցի*. 11 A. *ուղղ. լծակցեալ է փխ. լծակցէ*. 11 A. *Քանզի—սահմանին*] El. τὸ γὰρ ὄνομα ὁμόζυγον τοῦ ὁρισμοῦ, διὸ καὶ ἀνθορίζονται 188,8—9. 14—23 A. *որպէս—նիւթ*] El. ὡς ὁ αὐλὸς κοινὸς ἢ οἰκέτης, ἢ τὸ διαιρούμενον ὡς ἀγρὸς ἢ οἰκία, ἢ τὸ τοῦ προκαταλαμβάνοντος ἴδιον, ὡς ὁ τοῦ θεάτρου τόπος κοινὸς ὢν τοῦ προκαταλαμβάνοντος γίνεται ἴδιος, ἢ τὸ ἐπίσης μετεχόμενον ὡς ἡ τοῦ κήρυκος φωνή (αὕτη γὰρ ἐπίσης ὑπὸ πάντων μετέχεται) [καὶ ἡ ὕλη] 188,12—16. 16 A. *անտաստան*. 21 A. *քարոզի*.

*„Իսկ ըստ անուանն".*

*„Ըստ անուանն" յաւելուլ ասելով՝ յայտ արար զյառաջագոյն ասացեալ իրս. քանզի կանխաւ ասացաք մեք, եթէ ամենայն որ վերաբերական է, այսինքն՝ յիշեցուցիչ յառաջագոյն ծանուցելոյ իրի:*

*Բայց տարակուսեն ոմանք ասելով, եթէ զիա՞րդ Արիստոտէլ կարճառօտ ասող գոլով՝ աւելորդս աստանաւր ասէ. քանզի շատ էր աստանաւր ասել, եթէ համանունք են՝ որոց անուն միայն հասարակ: Քանզի այսորիկ տուիցելոյ՝ ի հարկէ հետեւիւր եւ այլն, այսինքն՝ զսահմանս նոցա զանազանս գոլ: Եւ եթէ ասացեալ էր, եթէ համանունք են, որոց սահմանն միայն զանազան է՝ այլն ի հարկէ հետեւիւր, որ ասէ՝ եթէ անունն նոցա միայն հասարակ: Արդ՝ աւելորդ ասաց, եթէ „ըստ անուանն բան գոյացութեանն այլ": Առ որս ասեմք, եթէ ոչ վարկապարազի ասաց զայս, այլ զի ցուցցէ՝ ո՛ր սահման զոյ զանազան. ոչ եթէ այն սահման՝ որ ըստ մարդկութեանն նոցա է զանազան, այլ այն՝ որ ըստ անուանն իսկ բացատրի. քանզի Էաս եւ Էաս ոչ ըստ մարդկութեանն զանազանին, վասն զի մի սահման է երկոցունց Էանտեայցն. եւ ոչ ըստ Էաս ձայնին զանազանին ի միմեանց, վասն զի երկոքին երկփաղառականք են յարաշեշտոլորք մաքուր զայբն ունելով. այլ զայն սահման ունին զանազան համանունքն, որ ի նորին իսկ ի ձայնէ նշանակի. քանզի Էաս ձայն նշանակէ՛ ի վերայ միոյն, եթէ որդի Տեղամոնի է ի Սաղամինայ, իսկ ի վերայ միւսոյն նշանակէ, եթէ որդի Ուղեայ եւ Ղոկրատացի. քանզի այսոցիկ առանձնականացս ի վերայ երկաքանչիւրոցս տեսանելով՝ զանազան ենթագրութիւնք նոցա եղանին:*

---

2—5 A. *Ըստ անուանն— ծանուցելոյ իրի]* El. Κατὰ τοὔνομα τὸ εἰρημένον· τὰ γὰρ ἄρθρα ἀναφορικά εἰσιν 138,20. 9 A. *Քանզի—տուիցելոյ]* El. εἰ γὰρ ἕν τι τούτων δοθῇ 138,22. 15—21 A. *ոչ եթէ—ունելով]* El. οὐδὲ γὰρ ὁ ὡς ἀνθρώπων ὁρισμὸς διάφορος (ὁ αὐτὸς γὰρ λόγος τῶν δύο Αἰάντων ὡς ἀνθρώπων), οὐδὲ κατὰ τὸ Αἴας καὶ Αἴας διαφέρουσιν (ὁ αὐτὸς γὰρ λόγος τῆς Αἴας φωνῆς, ὅτι δισύλλαβος βαρύτονος καθαρὸν τὸ ᾱ ἔχουσα) 138,27—139,1.

„Գոյացութեանն“.

Գոյացութիւն աստանաւր զհասարակն պարտ է առնուլ. քանզի երկակի ասի գոյացութիւն՝ մի որ հակորոշի ինն ստորոգութեանցդ, որ եւ տիրապէս գոյացութիւն ասի, եւ միւսն՝ որ եւ ըստ պատահմանցն բերի, զոր եւ աստանաւր պարտ է լսել:

„Այլ“.

Աստուստ ոմանք ասեն, եթէ վասն էր երկուց եւեթ հակադրութեանց՝ հասարակի եւ յատկի, նոյնի եւ այլոյ՝ զի՞ ոչ վաղվաղակի յիշելով զհասարակն յիշեաց եւ զհակակայն սորա, այսինքն՝ զյատուկն. եւ յիշելով զայլն, զի՞ ոչ յիշեաց եւ զնոյն: Եւ ասեմք, եթէ կամելով արուեստաւորս զմեզ առնել եւ բազում՝ հակադրութեանց գիտունս՝ մի ծիր յիշելով յերկաքանչիւրոց հակադրութեանցն՝ հրամայէ իմանալ զնորին հակակայն. քանզի յիշեցեալ զհասարակն՝ հրամայէ քեզ իմանալ զյատուկն եւ յիշեալ զայլն՝ հրամայէ քեզ իմանալ զնոյնն:

## ԸՆԴ ԱՅՍՈՍԻԿ ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՎ ԵՒ ԱՌԱՋԻԿԱ ՊՐԱԿՔՍ. ՊՐԱԿՔ ԺԵ

Սահմանեալ Արիստոտելի զհոմանունսն „որոց անունն միայն հասարակ, իսկ ըստ անուանն բան գոյացութեանն այլ“, յարացուցի պիտանանայ առ ի յարակացութիւն հոմանուանցն ճշմարիտ մարդումն եւ գրիցելումն: Քանզի երկաքանչիւր ոք ի նոցանէն կենդանի ասի (եւ զի գրիցեալն եւս կենդանի ասի, յայտ է աստուստ, քանզի ստեղծիչն նորա կենդանագրաւղ ասի), իսկ սահման նոցա զանազան է. քանզի ճշմարիտ մարդն գոյացութիւն ներշնչաւոր զգայական է, իսկ գրիցեալն ոչ գոյացութիւն, այլ պատահումն, ոչ շնչական՝ այլ անշունչ, ոչ զգայական՝ այլ անզգայ. կենդանի ասի՝ որպէս պատկեր ներշնչաւորի եւ զգայականի:

---

2 A. *Գոյացութիւն—առնուլ]* El. Οὐσίαν ἐνταῦθα κοινότερον ἀκουστέον τὴν καὶ κατὰ τῆς ὑπάρξεως φερομένην 139,8—9. 11 A. *կամելով]* El. βουλόμενος 139,16. 13 A. *հրամայէ—հակակայն]* El. κελεύων καὶ τοῦ ἄλλου ὑπακούειν 139,17. 16—17 A. *ընդ—պրակք ժե]* El. ἐν οἷς καὶ ἡ παροῦσα πρᾶξις 139,19. 27—28 A. *կենդանի—զգայականի]* El. ἀλλὰ ζῷον λέγεται ὡς εἰκὼν οὐσίας ἐμψύχου αἰσθητικῆς 139,27—28.

*Եւ զի ծանիցուք, եթէ յորպիսմ՛ ինչ հոմանունսն վերաբերի յարացոյցդ՝ քեր ասասցուք զբաժանումն հոմանունցդ: Հոմանունսն ոմանք ի բաստէ անուանեցան, որպէս յորժամ ոմանք յայլ եւ յայլ տեղիս գոլով՝ նոյն անուամբ անուանին, եւ ոչ մի ինչ մտածութիւն ունելով անուանաւղացն զնոսա՝ որպէս Աղէքսանդրոս, որ եւ Պարիս, եւ Մակեդոնացին. իսկ ոմանք ի տրամախոհութենէ, որպէս յորժամ կամիցի ոք անուն ինչ անուանել: Արդ՝ այնք որ ի բաստէն են՝ անքաժանելիք են. քանզի բաժանմունք յարհեստից եւ ի մակացութեանց վերաբերին, որպէս ասէ Պղատոն, եթէ հմտութիւն ըստ արհեստում պատրաստէ զկենցաղս մեր գնալով, իսկ անհմտութիւն ըստ բախտում: Իսկ այնց հոմանունց որք ի տրամախոհութենէ գոյանուանեցեալք՝ ոմանք ըստ ժամանակականում մտածութեան զոն անուանեցեալք, իսկ ոմանք՝ ոչ ըստ ժամանակականում: Եւ այնց որք ըստ ժամանակականում մտածութեան գոյանուանեցեալք՝ ոմանք՝ ըստ յիշողութեան, որպէս յորժամ ոք յիշելով զհայր իւր՝ եւ զորդին նորին անուամբ անուանիցէ: Իսկ ոմանք՝ ըստ յուսում, որպէս յորժամ ոք անուանիցէ զիւր որդի Պղատոն, յուսալով լինել այնպիսի (քանզի գիտեն հաւատարիմ մարդկան անուամբ զրգռել զմեզ առ ի նմանութիւն նոցին՝ որոց անուանքն. զի մի լուիցուք զայն, եթէ ահա որ կոչեցաւ Պղատոն):*

*Իսկ ոմանք՝ ըստ երկաքանչիւրումդ՝ եւ ըստ յիշողութեան եւ ըստ յուսումն: Արդ՝ այսպէս ըստ ժամանակականում մտածութեանց:*

*Իսկ այնց հոմանունց՝ որք ոչ ըստ ժամանակականում մտածութեանց զոն անուանեցեալք՝ ոմանք՝ ըստ հաղորդութեան, որպէս յերաժշտականութենէ երաժշտական, իսկ ոմանք՝ ըստ փոխաբերութեան: Արդ՝ զանազանի փոխաբերութիւն վերաբերութեան. քանզի փոխաբերութիւն է կալ-*

---

4—5 A. *եւ ոչ — զնոսա*] El. μηδεμίαν ἔννοιαν ἐσχηκότος τοῦ ὀνομάσαντος τῶν ἐν ἄλλῳ τόπῳ οὕτως ὀνομαζομένων 139,32—33. 11—14 A. *իսկ այնց — անուանեցեալք*] El. τὰ δὲ ἀπὸ διανοίας ἃ μὲν κατὰ χρονικὴν ἔννοιαν 140,4—5. 21 A. *զի մի լուիցուք — Պղատոն*] El. չէք. 27 A. *որպէս — երաժշտական*[ El. ὡς ἀπὸ τῆς μουσικῆς μουσικὴ γυνή 140,12. 29 A. *վերաբերութեան*] El. ἀναλογίας 140,13.

ճառուստ վերաբանութիւն, իսկ վերաբանութիւն է, որպէս յորժամ ասեմ, եթէ որպիսի ինչ բան ունի վեց առ չորս՝ զնոյն բան ունի եւ ինն առ վեց: Իսկ փոխաբերութիւն է ոչ այն՝ որ բանումն պիտանանայ, այլ անուանումն. քանզի յորժամ պարտ է ասել՝ եթէ „զոր ինչ բան ունի հովիւ առ ոչխարս, զնոյն բան ունի թագաւոր առ ժողովուրդս“: Ոչ այդպէս ասէ եւ այդպէս պիտանանայ վերաբանութեանն, այլ անդուստ իսկ, որպէս Հոմերոս, հովիւ ժողովրդոց կոչէ զթագաւոր փոխաբերաբար: Արդ՝ այսպէս եւ ըստ փոխաբերութեան:

Իսկ ոմանք դարձեալ՝ որպէս ի միոջէ, եւ այլք դարձեալ, որպէս առ մի: Իսկ այնք համանունք, որ որպէս ի միոջէն զոն անուանեցեալք՝ կամ որպէս յարարչականէ կամ որպէս ի բժշկականէ՝ բժշկական գիրք, բժշկական գործի, եւ կամ որպէս ի յարացուցականէ՝ որպէս ի ճշմարիտ մարդոյ գրիցեալն. քանզի պատկեր է գրիցեալն ճշմարիտ մարդոյն: Իսկ ոմանք՝ որպէս առ մին կատարումն նայիցեալք՝ առողջականն մէզ, առողջական կերակուր, առողջական ջուր: Արդ՝ յարացոյցդ առեալ երեւի առ ի միոջէն եւ այն յարարչականէն: Եւ արդ՝ այսոքիկ յաղագս այսոցիկ:

Բայց պարտ է համանունացն ոչ ըստ յառաջաբերութեանն միայն հաղորդիլ միմեանց, այլ եւ ըստ այլ պարակայական իրաց.** եւ ըստ հոլովականին, վասն զի առն եւ առն ոչ ասին համանունք. զի մին ուղղական է եւ զշիկերէ նշանակէ, իսկ միւսն սեռական է եւ զայր նշանակէ՝ որպէս այր առն. եւ ըստ միում մասին բանի զոյոյն, վասն զի կալ եւ կալ ոչ ասին համանունք, վասն զի ոչ են միոյ մասին բանի. վասն զի մին անուն է եւ նշանակէ որ զարդիւնս կասուն, իսկ միւսն բայ է հրամայական:

1 A. *վերաբերութիւն]* El. ἀναλογία 140.14. 1—3 A. *որպէս—առ վեց]* El. ὡς ὅταν εἴπω ὅτι οἷον λόγον ἔχει τόδε πρὸς τόδε, τοῦτον ἔχει τόδε πρὸς τόδε 140,14—15. 6—8 A. *Ոչ այդպէս—փոխաբերաբար]* El. καὶ χρήσασθαι οὕτω τῇ ἀναλογίᾳ, μὴ εἴποι οὕτως ἀλλὰ ποιμένα καλέσαι λαῶν τὸν βασιλέα μεταφορικῶς 140,17—19. 16 A. *ուղղ. ի կատարումն.* 16 A. *ուղղ. առ առողջականն մէզ.* 17 A. *առողջական ջուր]* El. *չիք.* 18 A. *յարարչականէն]* El. ἀπὸ τοῦ παραδειγματικοῦ 140,25. 22 El. 140,27 οἷον τόνον πτῶσιν—*մինչեւ* 141,16] A. *չիք.* 22—28 A. *եւ ըստ հոլովականին—բայ է հրամայական]* El. *չիք.*

## ԸՆԴ ԱՅՍՈՍԻԿ ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՎ ԵՒ ԱՌԱՋԻԿԱ ՊՐԱԿՔՍ. ՊՐԱԿՔ ԺԶ

*„Փաղանունք ասին՝ որոց եւ անունն հասարակ եւ բան գոյացութեան նոյն".*

*Յետ հոմանունացն գոյ Արիստոտէլ եւ ի փաղանունսն, վասն զի պէտս ունի եւ նոցա ի ստորոգութիւնսն, եթէ արդարեւ ամենայն ստորոգութիւն իւրոց տեսակացն փաղանունաբար ստորոգի: Բայց վասն զի եւ աստանաւր զինչ են փաղանունքն միայն ասէ, իսկ եթէ էն յառաջագոյն քան զզինչ էն՝ ցուցցուք եթէ են փաղանունք ըստ երից պատճառաց. նախ եթէ նոյն իսկ հոմանունքն փաղանունք ցուցան. երկրորդ՝ եթէ չորից ոմանց յարակացելոց միմեանց՝ հոմանունաց, փաղանունաց, յոքնանունաց, այլանունաց՝ գոյ միով բանիւ ցուցանել, եթէ են այսոքիկ, եւ զինչ է իւրաքանչիւր ոք ի դոցանէ: Զոր եւ ցուցանեմք ի բաժանմանէ այսպէս. յամենայն ժամ երկուց իրաց առնիցելոց, ունասղաց անուն եւ սահման՝ հանդիպի նոցին կամ ըստ երկուց իրաց հաղորդիլ, եւ ըստ անուանում եւ ըստ սահմանում՝ եւ լինին փաղանունք, եւ կամ ոչ ըստ անուանում եւ ոչ ըստ սահմանում հաղորդին՝ եւ գոյանան այլանունքն, եւ կամ ըստ ումեմն հաղորդին եւ ըստ ումեմն զանազանին. եւ այս դարձեալ՝ կամ ըստ անուան հաղորդին եւ ըստ իրաց զանազանին՝ եւ գոյանան հոմանունքն, եւ կամ ըստ իրաց հաղորդին եւ ըստ անուան զանազանին՝ եւ լինին բազմանունքն՝ որպէս խաղ, դալապր, մարտացու, վաղակաւոր, սուսեր, նրան: Արդ՝ ցուցաւ եթէ են եւ զինչ է իւրաքանչիւր ոք ի սոցանէ: Այս երկրորդ:*

*Երրորդ այն՝ զի սուտ ցուցանի բանն, որ ի բաց բառնայ զփաղանունսն, ասելով, եթէ փաղանունքն ի ստորոգութիւնսն*

1—2 A. *ընդ այսոսիկ—պրակք ժզ*] El. ἐν οἷς καὶ ἡ παροῦσα πρᾶξις 141,15—16. 6 A. *ի ստորոգութիւնսն*] El. εἰς τὰς δέκα κατηγορίας 141,20. 9 A. *եթէ են.* 9 A. *զզինչ են.* 10 A. *ըստ երից պատճառաց*] El. εἰσὶ τοίνυν τὰ συνώνυμα διὰ τριῶν αἰτιῶν 141,23. 13 A. *եթէ են այսոքիկ*] El. ὅτι εἰσὶ τὰ τέσσαρα 141,26. 15 A. *առնիցելոց*] El. λαμβανομένων 141,27. 23—24 A. *որպէս—նրան*] El. οἷον ξίφος ἄορ μάχαιρα φάσγανον σπάθη 141,33—34. 27 A. *ի ստորոգութիւնսն*] El. ἐν ταῖς δέκα κατηγορίαις 142,1—2.

*տեսանին, եթէ արդարեւ իւրաքանչիւր ոք ի ստորոգութեանցն իւրոց տեսակացն փաղանունաբար ստորոգի: Իսկ այն որ ընդ երկու ստորոգութեամբք եղանի՝ ոչ միայն ասեմ՝ ընդ տասամբք այսպիսին հոմանուն ասի. ապա ուրեմն՝ փաղանունք ոչինչ են, որովհետեւ հոմանունք ցուցան: Զոր լուծանեմք այսպէս ասելով, եթէ ոչ քաջիոք շարամանէք զյառաջարկութիւնսն. քանզի այն որ ի տասն ստորոգութիւնսն վերաբերի՝ երկակի վերաբերիլ ասի. կամ որպէս տեսակ նոցին վերաբերի եւ կամ որպէս նիւթում պէտս ունելով տասն ստորոգութեանցն: Եւ որպէս տեսակ այսպէս. սպիտակ ի զանազան ստորոգութիւնսն որպէս տեսակ վերաբերի. քանզի եթէ զսպիտակացեալն առնու ոք՝ ի գոյացութիւն վերաբերի, իսկ եթէ զգոյնն՝ յորակութիւն վերաբերի: Արդ՝ այսպէս որպէս տեսակ: Իսկ եթէ որպէս նիւթում պիտանանայ տասն ստորոգութեանցն՝ այնպէս ասի զոլ՝ որպէս առինչքն. քանզի առինչք իւրեանց բնաւորական նիւթ ոչ ունելով՝ ի տասն ստորոգութիւնսն տեսանին: Արդ՝ այսպէս եւ փաղանունքն ոչ եթէ որպէս տեսակ վերաբերին ի տասն ստորոգութիւնսն, այլ որպէս նիւթում պէտս ունին ի տասն ստորոգութիւնսն՝ որպէս առինչքն: Քանզի եւ հոմանունքն առինչիցն ասի զոլ. քանզի եւ փաղանունքն փաղանունակի ասին փաղանունք: Արդ՝ այսորքիկ եւ յաղագս փաղանուանցն:*

*Յետ որոյ քուռն հարկանէ եւ զյարանունցն. զորս եւ երրորդս դասեաց վասն երից պատճառաց. կամ վասն զի մին յառաջագոյն է քան զերկուսն եւ երկուքն քան զերիսն: Արդ՝ ի վերայ հոմանունցն միում պէտք են՝ անուան հասարակութեան, իսկ ի վերայ փաղանունցն երկուց՝ եւ անուան եւ սահմանում, իսկ ի վերայ յարանունցն չորից են պէտք՝ հաղորդութեան անուան եւ զանազանութեան անուան, հաղորդութեան իրի եւ զանազանութեան իրի: Այս առաջին պատճառ:*

*Երկրորդ պատճառ, եթէ հոմանունցն եւ փաղանունցն յամենայն ստորոգութիւնս ունին պէտս, իսկ յարանունցն յորակու-*

---

5—6 A. *Զոր—զյառաջարկութիւնսն]* El. λύομεν δὲ τοῦτο οὕτως· ὅτι παραλογίζεσθε 142,4—5. 19 A. *Քանզի եւ հոմանունքն]* El. καὶ τὰ συνώνυμα 142,13. 24 El. καὶ τὰ δύο τῶν τεσσάρων 142,17. 30 A. *ուղղ.* *հոմանունքն եւ փաղանունքն.*

թիւն միայն: Այս երրորդ պատճառ. եթէ յառաջագոյն ընատրեցան զոլ համապազ հարազատագոյնքն քան զխորթսն: Արդ՝ ի վերայ հոմանունցն եւ փաղանունցն հարազատագոյն եւ հաղորդութիւնք եւ զանազանութիւնքն, իսկ ի վերայ յարանունցն՝ խորթաքար: Արդ՝ այսոքիկ յաղագս կարգաւորութեան նոցին: Այլ վասն զի եւ սոցին այսոցիկ զզինչ էն միայն ասէ, ոչ եթէ եւ զեթէ էն՝ ցուցցուք եթէ են յարանունքն ի ծեռն երկուց պատճառաց. նախ եւ առաջին՝ եթէ այնոցիկ որոց ընդ մէջ են յարանունք՝ նոքա ցուցան զոլ, այսինքն՝ փաղանունքն եւ այլանունքն: Երկրորդ՝ եթէ սուտ է բանն որ ասէ զնոցանէ ոչ զոլ, այսպէս ասելով՝ եթէ ոչ են յարանունքն. զի եթէ էին յարանունքն՝ պարտ էր նոցա ընդ բաժանմամբքն, զոր արարաք յառաջագոյն, անկանիլ (քանզի ըստ բաժանական հնարն ոչինչ պանծասցի փախչել): Իսկ արդ՝ որովհետեւ ոչ անկան ընդ այն բաժանմամբքն՝ յայտ է եթէ ոչ զոն: Զոր լուծանեմք այսպէս. եթէ ոչ կարէին յարանունքդ անկանել ընդ այսպիսի բաժանմամբք, վասն զի բաժանումն ըստ հարազատ հաղորդութեան եւ զանազանութեան եղեւ, իսկ յարանունք խորթաքար ունին եւ զհաղորդութիւնս եւ զզանազանութիւնս: Արդ՝ այսոքիկ եւ յաղագս այսոցիկ:

Աստուստ պարտ է գիտել, եթէ չորից պէտք են լինելութեան յարանունցն՝ հաղորդութեան անուան եւ զանազանութեան, հաղորդութեան իրի եւ զանազանութեան իրի. ուստի Տիգրան եւ Տիգրանուհի ոչ են յարանունք. քանզի թէպէտ եւ ունին հաղորդութիւն իմն անուան, վասն զի առաջին փաղառութիւնք անուանցն նոյնք են. այլ եւ զանազանութիւն անուան ունին ըստ վերջնում՝ փաղառութեանն: Այլ վասն զի Տիգրան եւ Տիգրա-

---

1 A. *Այս երրորդ պատճառ]* El. αὕτη καὶ δευτέρα αἰτία. τρίτη δὲ αἰτία 142,28. 3 A. *ուղղ. հարազատագոյն են.* 6—9 A. *ոչ եթէ — եւ այլանունքն]* El. οὐ μὴν καὶ τὸ εἰ ἔστι, δείξωμεν ὅτι εἰσὶ τὰ παρώνυμα. ἔστι τοίνυν τὰ παρώνυμα, πρῶτον μὲν ὅτι τὰ ὧν εἰσι μέσα ἐδείχθη ὅτι εἰσί, τὰ συνώνυμα καὶ ἑτερώνυμα 142,26—29. 11 A. *եթէ ոչ են յարանունքն]* El. *չիք.* 11—13 A. *պարտ էր — անկանիլ]* El. ἔδει αὐτὰ ἐντὸς πεσεῖν τῆς ἀνωτέρω λεχθείσης διαιρέσεως 142,30—31. 15 A. *զոր լուծանեմք այսպէս]* El. λέγομεν πρὸς ταῦτα οὕτως 142,33. 18—19 A. *իսկ յարանունք — զզանազանութիւնս]* El. *չիք.* 22—23 A. *ուստի — յարանունք]* El. ὅθεν τὸ Ἕλενος καὶ Ἑλένη οὐκ ἔστι παρώνυμον 143,1. 25 A. *զանազանութիւնք.* 26 A. *Տգրան եւ Տգրանուհի]* El. Ἕλενος καὶ Ἑλένη 143,4.

*նուճի եւ ոչ մի ինչ հաղորդութիւն ունին (վասն զի իւրաքանչիւր ոք ի նոցանէ այլ եւ այլ առանձինն ունի ենթագրութիւն). վասն այնորիկ ոչ են յարանունք: Եւ ոչ կոյս եւ կուսիկ յարանունք ասին, վասն զի ոչ ունին զանազանութիւն իրաց. քանզի զնոյն նշանակեն երկոքեան բառքն: Եւ ոչ հարստութիւն եւ փարթամն ասին յարանունք, վասն զի ոչինչ ունին հաղորդութիւն անուան. թէպէտ եւ իրաց ունին հաղորդութիւն եւ զանազանութիւն՝ որպէս հաղորդութիւն եւ հաղորդեալ: Եւ ոչ դարձեալ երաժշտական կին եւ երաժշտական մակացութիւն ասին յարանունք՝ վասն ոչ ունելոյ զանազանութիւն անուան:*

*Արդ՝ այսոցիկ այսպէս յառաջագոյն ասացելոց տեսցուք, եթէ զիա՛րդ սահմանէ Արիստոտէլ զյարանունսն: Արդ՝ սահմանէ այսպէս ասելով. «Յարանունք են, որք յումեքէ տարբերեալք հոլովիւ ըստ անուանն եւ զառասութիւնն ունին». յորոց ձեռն զչորս զայսոսիկ յայտ արար. քանզի ասելովն՝ «որք յումեքէ»՝ զհաղորդութիւն իրին եւ զզանազանութիւն յայտ արար (քանզի յումեքէն հաղորդի ամենայն իւրաւք այնմ՝ յորմէ էն. իսկ զանազանի, վասն զի ոչ ամենայն իրաւք նոյն է հաղորդ եւ հաղորդիցեալն): Իսկ ասելովն՝ «տարբերեալք հոլովիւ», զզանազանութիւն անուան յայտ արար (քանզի «հոլովումն» առ ի յԱրիստոտելէ յանգումն բառին լսի): Իսկ ասելով «ըստ անուանն զառասութիւնն ունին»՝ զհաղորդութիւն անուանն յայտ արար:*

*Այսոցիկ յառաջագոյն ասացելոց պարտ է գիտել, եթէ ոչ է ընդունելի քերթողն, որ զհոմանունսն փաղանունս ասաց. որպէս յորժամ ասէ.*

*«Հանգէտ անձինս ունէին երկոքին Էանտեայքն».*

*հոմանունք զոլով փաղանունս կոչեաց ի ձեռն հանգէտ անձանձն: Եւ ոչ զայնոցիկ, որք զբազմանուանսն փաղանունս*

---

4—5 A. *քանզի—բառքն]* El. τὸ αὐτὸ γὰρ αἱ δύο λέξεις δηλοῦσι, καὶ ἔστι πολυώνυμον 143,7. 5—6 A. *Եւ ոչ—յարանունք]* El. οὐδὲ τὸ ἀρετὴ καὶ σπουδαῖος 143,7—8. 8 A. *որպէս հաղորդութիւն եւ հաղորդեալ]* El. ὡς μετέχοντος καὶ μετεχομένου 143,9. 11 A. *ուղղ. ասացելոց փխ. ելոց.* 22 A. *զհաղորդութիւն փխ. զառասութիւնն.* 26 A. *Հանգէտ—Էանտեայքն]* El. ἶσον θυμὸν ἔχοντες 143,24. *Հմմտ.* Hom. P. 720. 28—2 A. *Եւ ոչ—նոցա]* El. οὐδὲ τοὺς λέγοντας τὰ πολυώνυμα συνώνυμα ἀποδεκτέον, ὡς τὸ ξίφος μάχαιρα σπάθη ἄορ 143,25—27.

*կոչեն. որպէս խաղ, ղաղապր, մարտացու, վաղակաւոր, սուսեր, Նրան: Եւ ոչ զքերդողս պարտ է ընդունել, որք հակորոշեն զյարանունսն անուանականաց եւ բայականաց: Քանզի է Փափկանէս ի փափկութենէ եւ Աստուածանէս յաստուծու. իսկ բայականք՝ ի սիրելոյ սիրեմ եւ յիմանալոյ իմաստուն. զոր պարտ է զամենայնս յարանունս կոչել. իսկ նոքա զոմանս անուանականս կոչեն եւ զոմանս՝ բայականս:*

*Արդ՝ յետ խնդրելոյ զզանազանութիւնս յարանունցն՝ խնդրեսցուք եւ զզանազանութիւնս զառ ի միոջէն եւ առ մին: Արդ՝ զանազանին այսոքիկ միմեանց, վասն զի ի վերայ յարանունցն չորից պէտք, որպէս ասացաք, իսկ ի միոջէն եւ առ մին երկուց պէտք են՝ հաղորդութեան իրի եւ զզանազանութեան. որպէս պատկերին եւ յարացուցի (քանզի ոչ ունին անուն հասարակ), եւ դարձեալ՝ առողջային աւդ եւ առողջային կերակուր ոչ ունին անուն հաւասար, այլ իր: Արդ՝ այսոքիկ այսպէս: Բայց արդ եկեսցուք ի նոյն ինքն բառիցն հաւաստութեանն մեկնութիւն:*

*„Փաղանունք ասին՝ որոց եւ անուն հասարակ եւ բան գոյացութեանն նոյն. որպէս՝ կենդանի՝ մարդ եւ արջառ".*

*Զնոյն յարացոյց առնու ի պէտս՝ զոր եւ հոմանունցն. քանզի անդ ասէր՝ „կենդանի մարդն եւ գրիցեալն", իսկ աստ՝ „որզոն՝ կենդանի՝ մարդն եւ արջառն": Զոր վասն այսորիկ ասի առնել, զի ցուցցէ՝ եթէ մարթ գոյ զնոյն եւ հոմանուն գոլ եւ փաղանուն. քանզի նոյն ինքն նոյնում ըստ նոյնում եւ հոմանուն եւ փաղանունն՝ որպէս երկու Բարեխոհանէսք. քանզի եթէ որպէս տիրա-*

---

2 A. *զքերդողս]* El. γραμματικούς 143,27. 3—5 A. *Քանզի — իմաստուն]* El. εισι δὲ ὀνοματικὰ τὸ Τρύφων ἀπὸ τοῦ τρυφὴ καὶ τὸ Θέων ἀπὸ τοῦ θεός, ῥηματικὰ δὲ τὸ Φιλήμων νοήμων ἀπὸ τοῦ φιλῶ καὶ νοῶ 143,28—30. 11A. *…ղղ. պէտք են]* El. χρεία 143,34. 12 A. *զզանազանութեան]* El. διαφορᾶς ὀνόματος 143,35. 12—13 A. *որպէս պատկերին եւ յարացուցի]* El. ὡς ἐπὶ τοῦ ἰατρικὸν βιβλίον, ἰατρικὸν σμιλίον 143,35—36. 13—15 A. *եւ դարձեալ — այլ իր]* El. καὶ ὑγιεινὸν οὖρον καὶ ὑγιεινὸν αιτίον· ταῦτα γὰρ ὄνομα οὐκ ἔχει κοινὸν ἀλλὰ πρᾶγμα 143,36—1. 15—16 A. *բայց — մեկնութիւն]* El. χωρήσωμεν δὲ καὶ ἐπὶ τὴν κατὰ λέξιν ἐξήγησιν 144,2. 21 A. *կենդանի]* El. *չիք.* 24 A. *որպէս երկու Բարեխոհանէսք]* El. ὡς οἱ δύο Εὔβουλοι 144,9. 24—4 A. *քանզի եթէ — փաղանունք եղանին]* El. *չիք.*

*կանս անուն առցէ զղուա զԹարեխորհրդանէսաղ՝ հոմանունք զոն. իսկ եթէ ի վերայ շարագրեցելոց առցի, որպէս առասականք բարեխորհուրդ եւ բարեխորհուրդ՝ յայնժամ փաղանունք եղանին. եւ կամ նոյն ինքն այլում եւ այլում ըստ այլում եւ ըստ այլում եւ հոմանուն եւ փաղանուն, որպէս Սոկրատէս իւր պատկերումն հոմանուն, իսկ Պղատոնում՝ փաղանուն, որպէս մարդում. եւ կամ նոյն ինքն նոյնում ըստ այլում՝ եւ այլում հոմանուն կամ փաղանուն, որպէս երկու Հանտեայքն (քանզի երկու Հանտեայքն ըստ Հաս եւ Հաս ծայնի հոմանունք, իսկ ըստ մարդ գոլումն փաղանունք). կամ նոյն ինքն այլում՝ եւ այլում ըստ նոյնում հոմանուն եւ փաղանուն, որպէս յարացոյցն Արիստոտելի. քանզի կենդանին նոյն ինքն գոլով այլում՝ եւ այլում հոմանուն եւ փաղանուն. քանզի գրիցելում՝ կենդանումն հոմանուն, իսկ ծիում եւ արջառում փաղանուն՝ որպէս կենդանեաց:*

*„Զի եթէ բացատրեսցէ ոք, զինչ է նոցա երկականչիւր ումեք կենդանին գոլ՝ յատուկ իւրաքանչիւր ումեք բան բացայտրեսցէ“:*

*Այլ է ասել կենդանումն գոլ եւ այլ է ասել կենդանի գոլ: Այլ է ասել մարդում գոլ եւ այլ է ասել մարդ գոլ. քանզի ի վերայ պարզիցն նոյն է՝ աստուծոյ գոլ եւ աստուած գոլ. իսկ ի վերայ շարադրիցելոցն ոչ նոյն. քանզի եթէ ասեմ „զմարդ“, զերկուսին նշանակեմ՝ զհոգի եւ զմարմին. իսկ եթէ ասեմ „մարդում“, զպարզն նշանակեմ՝ զհոգի միայն. քանզի բանական հոգի է, որ տեսակարարէ զմարդն. քանզի ամենայն իրողութիւնք տեսակաւ որոշին եւ ոչ նիւթով: Եւ արդ՝ վասն զի կենդանին պարզ է, որպէս տեսակ՝ մարթ գոյ զանազանաբար* (°) *անուանել. վասն որոյ եւ Արիստոտէլ՝ ընդարձակութիւն ունելով „կենդանումն գոլ“ ասաց:*

---

**10—12 A.** *կամ—Արիստոտելի]* **El.** ἢ τὸ αὐτὸ ἄλλῳ καὶ ἄλλῳ κατὰ τὸ αὐτό, ὡς τὸ παράδειγμα Ἀριστοτέλους 144,14—15. **18—20 A.** *Այլ է—աստուած գոլ]* Ἄλλο ἐστὶν εἰπεῖν ζῴῳ εἶναι καὶ ζῷον εἶναι καὶ ἀνθρώπῳ εἶναι καὶ ἄνθρωπον εἶναι· ἐπὶ μὲν γὰρ τῶν ἁπλῶν ταὐτόν ἐστιν, οἷον θεῷ εἶναι καὶ θεὸν εἶναι 144,20—22. **20 A.** *աստուած փխ. աստուծոյ.* **23 A.** *մարդում]* **El.** 'ἀνθρώπῳ εἶναι' 144,23—24. **26 A.** *զանազանաբար]* **El.** ἀδιαφόρως. **27—28 A.** *վասն որոյ—ասաց]* **El.** αὐτὸς δὲ ὡς ἄδειαν ἔχων τὸ ζῴῳ εἶναι ἔθηκεν 144,26—27.

## ԸՆԴ ԱՅՍՈՐԻԿ ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՎ ԵՒ ԱՌԱՋԻԿԱ ՊՐԱԿՔՍ. ԺԷ

*„Յասիցելոցն՝ է ինչ որ ըստ շարամանութեան ասի".*

*Յետ հոմանունից եւ փաղանունցն եւ յարանունցն, որոց իւրաքանչիւր ոք յայտ առնէր զՅամպղիքեան դիտաւորութիւնն յաղագս ձայնից գոլ պարզից՝ նշանակաւղաց զպարզ իրողութիւնսն ընդ մէջ պարզից մտածութեանց՝ զայս Արիստոտէլ եւ ի նոյն ինքն ի ստորոգութիւնսն:*

*Այլ յառաջ քան զսոցայցն վարդապետութիւն բաժանէ զասացեալսն ըստ շարամանութեան եւ առանց շարամանութեան. իսկ զգոյսն՝ յընդհանուր գոյացութիւն եւ յընդհանուր պատահումն, ի մասնական գոյացութիւն, ի մասնական պատահումն: Եւ զայս առնէ, որպէս զի ցուցցէ՝ եթէ որպիսիք ասիցեալք գոն ստորոգութիւնքն առանց շարամանութեան եւ որպիսիք ոք են ընդհանուր գոյացութիւն եւ ընդհանուր պատահումն*, մասնական գոյացութիւն եւ մասնական պատահում:*

*Արդ՝ զերկոսին բարժանէ Արիստոտէլ՝ եւ զասիցեալսն եւ զգոյսն: Բայց յայսոսիկ նախադասէ զբաժանումն ասիցելոցն՝ որպէս կարճառաւտ. զի մի՛ նախ եւ առաջին յաղագս այլ բաժանման ասելով, ի բազում ժամանակս զնովաւ փարելով եւ ոչ յիշելով զմիւսն եւս՝ կարծիս տացէ զնմանէ միայնոյ բուռն հարեալ. որ երբեմն եւ այսպէս յառնել նորա՝ կարծեցին ոմանք զմիոյ միայնոյ բուռն հարեալ: Քանզի ոմանք յաղագս ձայնից միայն եւ ոմանք յաղագս իրողութեանց միայն, որպէս վերագոյն ասացաք: Եւ զմի միայն բաժանումն եթէ առեալ էր ի կիր՝ կամ զասիցելոցն միայն եւ կամ զգոյիցն միայն, զտեալ լինէր եւ այնպէս զխնդրելին, ի ձեռն ասիցելոցն զիրողութիւնսն՝ եթէ արդարեւ ասին ձայնք եւ ասին իրողութիւնք. եւ զգոյս միայն, եթէ բաժանեալ էր յընդհանուր գոյացութիւն եւ յընդհանուր*

3 A. *ասի եւ է պրակք ժէ.* 9—10 A. *բաժանէ — շարամանութեան*] El. διαιρεῖ τὰ λεγόμενα καὶ τὰ ὄντα, τὰ μὲν λεγόμενα εἰς τὰ μετὰ συμπλοκῆς καὶ ἄνευ συμπλοκῆς 145,3—4. 14—16 A. *եւ որպիսիք — պատահում*] El. ποῖα δὲ ὄντα, ὅτι καθόλου οὐσία <καὶ> καθόλου συμβεβηκός, ἀλλ' οὐ μερικὴ οὐσία οὐδὲ μερικὸν συμβεβηκός 145,7—8. 22 A. *նոյայ.*

*պատահումն, եւ ի մասնական գոյացութիւն եւ ի մասնական պատահումն՝ եւ այնպէս գտեալ լինէր զինդրելին. քանզի հանուրն եւ մասնականն ճայնից են, իսկ գոյացութիւն եւ պատահումն՝ իրողութեանց:*

*Արդ՝ երից բաժանմանց ի կիր արկեցելոց առ ի յԱրիստոտէլէ եւ որոշեցելոց ի միմեանց՝ միոյն որ ասէ, եթէ յասիցելոցն ոմանք ըստ շարամանութեան եւ ոմանք առանց շարամանութեան. իսկ միւսոյն, որ ասէ, գոյիցն ոմանք ընդհանուր գոյացութիւն եւ ընդհանուր պատահմունք եւ մասնական գոյացութիւն եւ մասնական պատահումն. եւ միւսոյն եւս բաժանման, որ բաժանէ զառանց շարամանութեանն ի տասն ստորոգութիւնսն:*

*Արդ՝ ոմանք զբաժանումս զայս զերիս մի իմացան շարունակ, ասելով այսպէս՝ եթէ ասիցելոցն ոմանք ըստ շարամանութեան ասին եւ ոմանք առանց շարամանութեանն. եւ առանց շարամանութեան ի տասն ստորոգութիւնս, իսկ ըստ շարամանութեանն յընդհանուր գոյացութիւն, յընդհանոր պատահումն, ի մասնական գոյացութիւն, ի մասնական պատահումն: Առ որ ասեմք, եթէ խաբիմք յառաջաբերութենէ բանիցդ՝ ընդհանուր գոյացութիւն իմանալով ընդհանուր պատահումն, մասնական գոյացութիւն մասնական պատահումն եւ շարամանեալ զնոսա կարծէք: Քանզի շարամանեալն եւ պարզն առ ի յԱրիստոտելէ ոչ յառաջաբերութեամբ որոշի, այլ նշանակեցելով. եւ պարզ առ ի նմանէ վարկանի շարադրեալ անուանցն՝ Ագռաւ վէմ, Արէոպագոս, Նոր քաղաք. եւ նոյն ինքն սահմանդ պարզ է առ ի յԱրիստոտելէ, որ ասէ՝ մարդ կենդանի բանաւոր մահկանացու մտաց եւ հանճարոյ ընդունակ, վասն զի մի իրս նշանակեն:*

---

6—8 A. *եթէ յասիցելոցն — որ ասէ գոյիցն]* El. *չիք.* 8 A. *ուղղ. թէ ի գոյիցն.* 8—9 A. *ուղղ. ընդհանուր գոյացութիւն են եւ ոմանք ընդհանուր պատահմունք.* 11 A. *զառանց շարամանութեանն]* El. καὶ τὰ μετὰ συμπλοκῆς καὶ τὰ ἄνευ συμπλοκῆς 145,23—24. 17—20 A. *Առ որ ասեմք — մասնական պատահումն]* El. πρὸς οὓς λεκτέον ὅτι κακῶς ἀπατᾶσθε ἐκ τῆς προφορᾶς τῆς καθόλου οὐσίας καὶ μερικῆς οὐσίας, καθόλου συμβεβηκότος καί μερικοῦ συμβεβηκότος 145,28—30. 23 A. *շարադրեալ անուանցն]* El. τὰ σύνθετα τῶν ὀνομάτων 145,33. 23—26 A. *Ագռաւ վէմ — ընդունակ]* El. Κόρακος πέτρα, Ἄρειος πάγος, Νεάπολις καὶ αὐτὸ τὸ ζῷον λογικὸν θνητὸν νοῦ καὶ ἐπιστήμης δεκτικόν, ὁ ὁρισμός, ἁπλᾶ πάντα ταῦτα παρὰ τῷ Ἀριστοτέλει 145,33—35. 24 A. *Արիսպագոս.*

Իսկ շարադրեալք առ ի նմանէ այն են, որ բազում իրս նշանակեն, որպէս հոմանունք ամենայն՝ որպէս շուն ձայն. քանզի շուն ձայն բազում իրս նշանակէ:

Դարձեալ տարակուսեն ոմանք ասելով, եթէ զիարդ զայնուսիկ, որք ըստ շարամանութեանն են՝ դասեաց այնց, որք ոչ ըստ շարամանութեանն են: Եւ ասեմք՝ եթէ որպէս հաւաստագոյն եւ ծանաւթագոյնս (քանզի հաւաստագոյնք են շարադրեալքն քան զպարզսն), եւ վասն զի շարամանեալքն դրութիւն իմն յայտնեն (իսկ դրութիւնն յառաջագոյն է քան ի բաց բարձումն), եւ զի յանգուսն կանխեցելոցն սկիզբն հանդերձելոցն եղիցի, եւ զի յանգեսցի առաջին հատածն ի սուղ թիւս ստորոգութեանցն, եւ սկիզբն արասցէ երկրորդի նոյն ինքն ի վարդապետութենէ ստորոգութեանցն:

„Որգոն՝ մարդ, արջառ, ընթանայ, յաղթէ“.

Բարւոք յարացոյցս արկ ի կիր ի մէջ անուան եւ բայից այլ եղեալ անուն, որպէս զի մի՛ եւ կամաւք յընթեռնուլն սխալեսցուք եւ ըստ շարամանութեան ընթերցցուք: Քանզի ըստ շարամանութեան է ասելն „մարդ ընթանայ“. զոր մարթ է ընթեռնուլ եւ առանձին „մարդ“, առանձինն եւ „ընթանայ“: Այլ եթէ այդպէս դրեալ էր, եթէ „մարդ, ընթանայ“՝ բազում անգամ սխալէր ընթերցաւղն եւ ըստ շարամանութեան կարծէր գոլ: Վասն որոյ ի միջի եդելոյ այն անուն „մարդ, արջառ, ընթանայ, յաղթէ“՝ եւ ոչ կամաւք սխալել կարէ յընթեռնուլն: Իսկ բայս ի կիր էառ զերրորդ դիմին եւ ոչ զառաջնոյն եւ ոչ զերկրորդին, վասն զի այսոքիկ սահմանեալ դիմին են. քանզի յորմէ բանն եւ առ ոյ բանն: Իսկ երրորդ դիմին բայք, թէպէտ

---

2—3 A. *որպէս շուն—նշանակէ]* El. ὡς τὸ κύων (τοῦτο γὰρ πολλὰ σημαίνει) 146,1. 3 El. 146,1 καὶ αὐτὸ—146,9 ἀπαμειβόμενος] A. *չիք*. 16 A. *զի մի եւ կամաւք]* El. ἵνα μηδὲ ἄκοντες 146,19. 17—18 A. *Քանզի—ընթանայ]* El. μετὰ συμπλοκῆς γὰρ ἦν τὸ 'ἄνθρωπος τρέχει' ὅλον τοῦτο 146,20—21. 19 A. *ուղղ. եւ զընթանալն առանձին փխ. ընթանայ*. 20—22 A. *բազում—գոլ]* El. ἴσως ἐσφάλλετό τις περὶ τὴν ἀνάγνωσιν κατὰ συμπλοκὴν αὐτὰ νομίζων εἶναι 146,23—24. 23 A. *եւ ոչ—յընթեռնուլն]* El. οὐδὲ ἄκοντες ἁμαρτάνομεν περὶ τὴν ἀνάγνωσιν 146,25. 25 A. *վասն զի—դիմին են]* El. ἐπειδὴ ταῦτα ὡρισμένα εἰσὶ τὰ πρόσωπα 146,26—27.

*եւ ածեն ի ներքս ղէմս, սակայն անորիշ ղէմս ածեն. քանզի ամենայն սահմանական բայ ղէմս ածէ ի ներքս, վասն այսորիկ շարամանել կարծի: Իսկ երրորդ դիմլին բայք, թէպէտ եւ ի ներքս ածեն ի հարկէ ղէմս, սակայն անորիշ ածեն եւ վասն այսորիկ ոչ թուին գոլ շարամանեալք: Եւ եթէ ի կիր առեալ էր զանորիշ բայսն, որք ամենեւին ոչ գոն շարամանեալք վասն ոչ ղէմս ի ներքս ածելոյ, բայց զի զառաջին յարացոյցն լուծանել կամեցաւ՝ եւ ըստ շարամանութեան եւ առանց շարամանութեան զնա առնել:*

## *ԸՆԴ ԱՑՍՈՄԻԿ ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՎ ԵՒ ԱՌԱՔԻՆԱ ՊՐԱԿՔՍ. ՊՐԱԿՔ ԺԸ*

*„Էակացն է ինչ որ զենթայ“...*

*Ցետ բաժանման ասիցելոցն զայ եւ ի բաժանումն գոյիցն: Եւ երկուս առնու հակաղրութիւնս, զմին՝ յասիցելոցն եւ զմին՝ ի գոյիցն. յասացելոցն՝ զընդհանուրն եւ զմասնականն, իսկ ի գոյիցն՝ զգոյացութիւն եւ զպատահումն: Եւ չորս առնէ շարամանութիւնս՝ զընդհանուր գոյացութիւն եւ զընդհանուր պատահումն, զմասնական գոյացութիւն եւ զմասնական պատահումն: Եւ յայսոսիկ նախադասէ զընդհանուր գոյացութիւն՝ որպէս գոյացութիւն եւ որպէս սահման: Իսկ երկրորդ դասէ զմասնական պատահումն, որպէս ամենեւիմբ հակակայ հանուր գոյացութեանն. զոր պարտ էր ի վերջոյ դասել՝ որպէս զստորուկս յառաջունիցն եւ քարշել յընդհանուր գոյացութենէ. քանզի հակակայիցն մի է գիտութիւն: Իսկ այլ երկուս եւս հակակացելոց եւ ասացելոց ումեմն գոյացութիւն գոլ եւ ումեմն հանուր գոլ՝ զտիրական վարկն տայ ընդհանուր պատահման վասն չորից*

---

10—11 A. *ընդ—պրակք ժը]* El. *չիք.* 19—20 A. *որպէս գոյացութիւն եւ որպէս սահման]* El. καὶ ὡς καθόλου καὶ ὡς οὐσίαν 147,12. 22—23 A. *որպէս զստորուկս—գոյացութենէ]* El. ὡς ὄντος συλλογῆς τῶν χειρόνων καὶ ἑλκομένου ὑπὸ τῆς καθόλου οὐσίας 147,14—15. 24—26 A. *Իսկ այլ—վարկն տայ]* El. τῶν δὲ λοιπῶν δύο δικαιολογουμένων καὶ τοῦ μὲν λέγοντος οὐσίας εἶναι τοῦ δὲ καθόλου εἶναι, τὸ κῦρος δίδωσι καὶ τὴν ψῆφον 147,16—17.

*պատճառաց. նախ եւ առաջին՝ զի ընդհանուրքն կերպարանին ստորոգութիւնք եւ ոչ գոյացութիւնք գոլով. եւ զի ընդհանուրն մակացուս զմեզ առնէ եւ ոչ մասնականն, եւ այսու նախապատուագոյնք եմք քան զանքանսն՝ ճանաչելով զհանուրսն. ապա թէ ոչ՝ ի մասնական գիտութիւնսն պատուականագոյնք են քան զմեզ անասունքն, ունելով սգայութիւնս ոմանս ստուգագոյնս քան զմերս. եւ զի ի գոյացութենէ սկիզբն արասցէ եւ ի գոյացութիւն յանգեսցէ եւ ի միջի պահեսցէ զպատահմունսն՝ որպէս զտկարս. քանզի ամենայն ուրեք ըստ քերդողականին „զյոռիսն ի մէջ վարեաց“: Քանզի այսպէս եւ ի վերայ երկնայինցն եւ ենթալուսնեայցն տեսանեմք. վասն զի երկնայինքն պարունակեն, եւ ենթալուսնեայքն պարունակին. եւ դարձեալ՝ յենթալուսնեայսն զխոնաւսն եւ զծորագոյնսն, այսինքն՝ զջուր եւ զաւդ. քանզի աւդ եւ ջուր պնդին ի ցամաքիցն՝ ի հրոյ եւ յերկրէ: Եւ արդ՝ այսոքիկ յաղագս այսոցիկ:*

*Այլ եթէ այսպէս էր անուանեալ Արիստոտէլի, որպէս մեք՝ ընդհանուր գոյացութիւն, ընդհանուր պատահմունս, մասնական գոյացութիւն, մասնական պատահմունսն՝ թերեւս արդեւք զերծեալ էաք յաշխատութենէ: Այլ վասն զի ոչ այսպէս անուանէ զնոսա, այլ փոփոխէ զանուանս նոցա՝ պարտ է խնդրել, եթէ վասն էր փոփոխեաց զանուանս նոցա: Եւ ասեմք՝ եթէ վասն երկուց պատճառաց. կամ վասն ենթագրելոյ միանգամայն եւ գոյացելոյ զիրողութիւնսն. քանզի ասել „ըստ ենթակայում“՝ եւ ենթագրեաց եւ գոյացոյց. քանզի ըստ ենթակայումն զըստ ումեք ստորոգիլն յայտ առնէ: Եւ զնոյն եւ ի վերայ այլոցն ասասցես: Եւ կամ զի ցուցցէ, եթէ ոչինչ կայ աւելի քան զչորսս զայսոսիկ. վասն այսորիկ հակասաբար ասաց, որպէս զի կամելով մի՛ վրիպեսցուք եւ կարծեսցուք ընդ մէջ ինչ գրել այլս*

---

2 A. *գոյացութիւնն]* El. οὐσίαι 147,19. 9—10 A. *քանզի—վարեաց]* El. πανταχοῦ γὰρ τὸ 'κακοὺς δ' ἐς μέσσον ἔλασσεν' 147,24—25. *Հմմտ.* Hom. Δ 299. 27 A. *կամելով]* El. ἄκοντες 148,5. 28—2 A. *եւ կարծեսցուք—կոճատին]* El. καὶ νομίσωμέν τι μέσον εἶναι τούτων· πάντως γὰρ δύο πραγμάτων καταφατικῶς προφερομένων καὶ ἀντικειμένων ἀλλήλοις νομίζεταί τι μέσον εἶναι διὰ τὸ ἄλλων ὁμοίως καταφατικῶς προφερομένων εὑρῆσθαί τι μέσον, οἷον ἀρτίου καὶ περισσοῦ 148,5—8.

*այսոցիկ. վասն զի է այլոց նմանաբար ստորասաբար յառաջբերեցելոց գտանել ինչ միջակ. որգոն՝ դարին եւ կոճառին, հիւանդութեան եւ ողջութեան կարծի ինչ ընդ մէջ գոլ վասն գտանելոյ եւ ի վերայ այլոց հակակայիցն միջակ. որգոն՝ սպիտակին եւ սեւոյն՝ գորշն, եւ ջերմոյն եւ ցրտոյ՝ գաղջն: Նոյնպէս եւ ի վերայ այսոցիկ տեսանիւր, եթէ ասացեալ էր ստորասաբար. զի եթէ ասացեալ էր ընդհանուր եւ մասնական գոյացութիւն եւ պատահումն՝ կարծիւր լինել միջակ ինչ նոցա: Արդ՝ վասն զի ոչինչ է միջակ նոցա, վասն այսորիկ հակասաբար՝ զընդհանուրն կոչելով „ըստ ենթակայում", իսկ զմասնականն՝ „ոչ ըստ ենթակայում", իսկ զպատահումն՝ „ննթակայում", իսկ զգոյացութիւն՝ „ոչ ննթակայում". քանզի հակասաբար ասիցելոցն ոչինչ գտանի միջակ: Իսկ հակասութիւն է կռիւ ստորասութեան եւ բացասութեան. որգոն՝ որպէս յորժամ ասեմ „սպիտակ է — ոչ է սպիտակ". որոց ոչինչ միջակ գոյ: Եւ այսոքիկ այսպէս:*

*Բայց խնդրեսցի, եթէ վասն է՞ր չորից ելոց զերկուսն միայն ենթադրէ՝ զպատահումն եւ զմասնական: Եւ ասեմք, եթէ որպէս կարճառատասէր զերկուսն միայն ենթադրէ. իսկ որպէս արուեստաւոր՝ զերկուսն ոչ վայրապարս, այլ զմինն յերկաքանչիւրոցն առնլով հակադրութեանց՝ հրամայէ մեզ յաղագս այլոցն մտածութիւն ունել. քանզի ի ձեռն „ննթակայումն" գամք ի մտածութիւն „ոչ ննթակայումն", եւ ի ձեռն „ոչ ըստ ենթակայումն" գամք ի մտածութիւն „ըստ ենթակայումն" եւ ոչ ննթակայումն: Բայց զի խնամաղ յոռագունիցն զայսոսիկ ենթադրէ, զի մի՛ վասն նուաղութեան գոլոյն սողոսկեսցի որպէս եթէ եւ կարծեսցի ամենեւին ոչ գոլ:*

---

9—10 A. *վասն այսորիկ հակասաբար՝ զընդհանուրն կոչելով]* El. ἀντιφατικῶς αὐτὰ προήγαγε, τὸ μὲν καθόλου καλῶν 148,13—14. 14 A. *որգոն՝ որպէս յորժամ ասեմ]* El. οἷον ὡς ἐὰν εἴπῃς 148,17. 23—24 A. *եւ ի ձեռն ոչ ըստ ենթակայումն]* El. διὰ δὲ τοῦ <οὐ καθ'> ὑποκειμένου 148,23—24. 26—27 A. *զի մի՛— ոչ գոլ]* El. ἵνα μὴ δι' ἀμυδρότητα τοῦ εἶναι ὀλισθήσῃ πως καὶ δόξῃ μηδ' ὅλως εἶναι 148,26.

## ԸՆԴ ԱՅՍՈՍԻԿ ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՎ ԵՒ ԱՌԱՋԻԿԱ ՊՐԱԿՔՍ. ՊՐԱԿՔ ԺԹ

*„Նենթակայում ասեմք որ յումեք ոչ իբր մասն գոլ"...*

*Զորից բարբառոց անծանաւթից մեզ ելոց՝ Նենթակայում, ոչ նենթակայում, ըստ ենթակայում, ‹ոչ ըստ ենթակայում› երկուս միայն յայսցանէ ենթագրէ իմաստասէրս. զայնս՝ որք յոռիքն են՝ զնենթակայում, որ է պատահումն եւ մասնականն: Եւ նախադասէ զենթակայումն կարող գոլ եւ ընդհանուր. այլ նա զի եւ ստորոգութիւնքն ընդհանուրքն որոշին, այլ ոչ եթէ մասնականաւն. իսկ մասնականն ընդհանուր գոլ եւ ոչ երբեք կարող գոյ: Եւ պարտ է գիտել, թէ ենթակայում ոչ է սահման՝ որպէս հոմանուան. վասն զի յինն ստորոգութիւնսն տեսանի: Բայց ընդհանրապէս իսկ ասելն, եթէ եւ ոչ միում ընդհանուր բարբառոյ մարթ գոյ սահման տալ. որովհետեւ սահմանք զհաղորդութիւն իրաց խնդրեն, իսկ հոմանունք անուան միայն: Բայց սակայն ենթագրութիւնն ենթակայումն ունի զհամեմատն սահմանի. քանզի նոյն ինքն „յումեքն" սեռում համեմատի, իսկ բաղկացուցչաց զանազանութեանց „ոչ իբր մասն ելով, անկար զատ գոլ յայնմանէ՝ յորում էն": Զորից պէտք են, որպէս զի եղիցի նենթակայում. քանզի պարտ է յումեքն գոլ ամենայն իրաւք (քանզի ահա միտք աստուածայինք, բանական հոգի, ոչ է պատահումն, վասն զի եւ ոչ յումեքն է). եւ դարձեալ՝ պարտ է ոչ որպէս մասն գոլ յումեքն*

---

1—2 A. *ընդ այսոսիկ—պրակք ժթ*] El. *չիք.* 4 A. *Զորից—ելոց*] El. Τεσσάρων φωνῶν γνωστῶν ἡμῖν οὐσῶν 148,29. 5 A. *ենթայկայում.* 5 A. *լուս. ոչ ըստ ենթակաում.* 7 A. *ուղղ. զնենթակայումն*] El. τὸ ἐν ὑποκειμένῳ ‹καὶ τὸ οὐ καθ' ὑποκειμένου› 148,31—32. 7 A. *ուղղ. զմասնականն.* 7—8 A. *Եւ նախադասէ—ընդհանուր*] El. καὶ προτάττει τὸ ἐν ὑποκειμένῳ τοῦ μερικοῦ, διότι τοῦτο δύναται καὶ καθόλου εἶναι 148,32—33. 11 A. *թէ ենթակայում*] El. ὅτι τοῦ ἐν ὑποκειμένῳ 148,35. 13—14 A. *բայց—սահման տալ*] El. καθόλου δὲ εἰπεῖν οὐδεμιᾶς ὁμωνύμου φωνῆς ἐστιν ὁρισμός 148,36—37. 16 A. *ենթակայումն*] El. τοῦ ἐν ὑποκειμένῳ 149,2. 18 A. *ասելով փխ. ելով.* 20 A. *ուղղ. Նենթակայում յումէքն.* 21—22 A. *քանզի—հոգի*] El. ἰδοὺ γὰρ ὁ νοῦς, ἤγουν ἡ λογικὴ ψυχή 149,5–6. 23 A. *եւ դարձեալ—գոլ յումեքն*] El. θέλει μὴ ὡς μέρος ὑπάρχειν 149,6–7.

*(քանզի ահա ձեռն յումեքն գոլով, ի մարմնում, ոչ է պատահումն, վասն զի մասն է մարմնոյն). պարտ է եւ անկար զատ գոլ յայնմանէ՝ յորում էն (քանզի ահա Սոկրատէս յումեք տեղում գոլով, ի Լիւկիւում, եւ ոչ գոլով մասն տեղոյն՝ ոչ է պատահումն, վասն զի կարող գոյ զատ գոլ յայնմ տեղւոջէ՝ յորում էն). պարտ է եւ ի նմա զգոյութիւն ունել. քանզի ահա Սոկրատէս յումեքն գոլով ի Պեղղոպոննիսիական ժամանակս եւ ոչ գոլով մասն ժամանակացն եւ ոչ կարելով զատ գոլ ի նոցանէ, սակայն ոչ է պատահումն, վասն զի ոչ ունիւր զգոլն ի նոսա. քանզի եւ ոչ գոյացութիւն ի ժամանակում զգոլն ունի պատահման ելում. այլ ժամանակն ի գոյացութեան ունի զգոլն՝ որպէս պատահումն: Բայց են մետասան նշանակութիւնք յումեքն. կամ ի ժամանակում՝ որպէս Սոկրատէս ի Պեղղոպոնէսիականսն, կամ ի տեղւոջ՝ որպէս ի Լիւկիւում Սոկրատէս, եւ կամ յամանում՝ որպէս գինի սափորում եւ ցորեն ի կեղթում (եւ է թերեւս ուրեք տեղի ամանն անշարժ, իսկ սահմանն տեղի շարժուն), եւ կամ որպէս բոլոր ի մասունս՝ որպէս տասն ի յեւթան եւ յերիս, կամ որպէս մասունք ի բոլորում՝ որպէս եւթն եւ երեք ի տասին (եւ բարիոք ասացաք զբոլորն եզաբար, իսկ զմասունսն յոքնաբար. քանզի ամենայն բոլոր մի է, իսկ մասունքն յոքունք). եւ կամ որպէս սեռ ի տեսակում՝ որպէս կենդանին ի մարդում, եւ կամ որպէս տեսակ ի սեռում՝ որպէս մարդ ի կենդանումն (եւ աստանաւր յիրաւի եզականաբար արտածայնին երկոքին՝ սեռ ի տեսակում եւ տեսակ ի սեռում, իսկ ի վերայ բոլորին եւ մասանցն՝ բոլորն եզաբար եւ մասունքն յոքնաբար, վասն զի բոլորն յիւրում միում մասին բոլորաբար ոչ կարող գոյ տեսանիլ, իսկ սեռն բոլորիւ ինքեամբ ի միում տեսակում կարող գոյ տեսանիլ. քանզի ահա հանգիտաւոր ունիմք ամենեքեան*

---

2—3 A. *պարտ է—յորում էն]* El. θέλει τὸ μὴ δύνασθαι χωρὶς ὑποστῆναι· 149,8—9. 5 A. *յորում էն]* El. *չիք.* 9 A. *ի նոսա]* El. ἐν τῷ χρόνῳ 149,14. 15—16 A *եւ է թերեւս—շարժուն]* El. καὶ εἴη ἂν ὁ μὲν τόπος ἀγγεῖον ἀκίνητον τὸ δὲ ἀγγεῖον τόπος κινούμενος 149,18—19. 19 A. *եւ բարիոք—եզաբար]* El. καὶ ὅλως τὸ μὲν ὅλον ἑνικῶς λέγεται 149,21. 28—1 A. *քանզի—զսահմանն]* El. ἰδοὺ γὰρ τοῦ ὁρισμοῦ ἐπίσης ἅπαντα μετέχει 149,28.

*զսահման), եւ կամ որպէս տեսակ ի նիւթում՝ որպէս տեսակ անդրոց ի պղնձում, եւ կամ որպէս յարարչականում, ըստ որում ասեմք, եթէ ոչ են ի սա դիրք, այլ ի բնութեան, որ ստեղծանէ զաղմն՝ կամ՝ յիշխանականումն. կամ որպէս յաւարտականում, ըստ որում ասեմք՝ յիմաստասիրութեան ունի զյոյս. եւ կամ որպէս ենթակայում՝ որպէս զպատահումն ի գոյացութեան: Զայսոսիկ զմետասան նշանակութիւնս յումեքն յուր ստորոգութիւնս վերաբերէ Արիստոտէլ: Քանզի իւրաքանչիւր ոք ի սոցանէ յայտ առնէ զայս ինչն յայսում կալ. իսկ կալն ուր ստորոգութեանն է: Բայց այսոքիկ մետասան նշանակութիւնք ըստ բնութեան են յումեք. իսկ այլքն անբնականք են, որպէս ապականութիւն յապականելումն անբնաւորապէս է:*

*Աստուստ տարակուսեն ոմանք երիս տարակուսանս. մի զայս՝ եթէ ըստ որում նշանակութեան մետասանից նշան ի գծում է: Եւ ասեմք, եթէ որպէս տեսակ ի նիւթում. քանզի տեսակարարէ զեզերեալ գիծն նշանն: Երկրորդ տարակուսութիւն է որ ասէ, եթէ բոլորն ի մասունս է՝ եւ ոչինչ է բոլորն բայց մասունք՝ զիարդ ոչ ինքն յինքեան գտանի զոլ ասացեալ: Առ որ ասեմք, եթէ ոչ բովընդակ ընթացակցութիւն ամենայն մասանց առ ի լինիլ բոլոր ինչ, այլ պէտք են եւ դրութեան եւ ձեւոյ եւ տեսակի՝ որ ի վերայ եղանին.*

*Երրորդ տարակուսութիւն է որ ասէ, եթէ զիարդ ենթակայումն, պատահումն զոլով հակորոշեց տեղում եւ ժամանակում, պատահմանց ելոց եւ նոցին: Եւ ասեմք, եթէ ոչ եթէ տեղում եւ ժամանակում հակորոշեաց, պատահմանց ելոց, այլ այնոցիկ, որք ի տեղում եւ ի ժամանակում են՝ գոյացութեանց ելոց:*

---

2 A. *անդրոց*] El. τοῦ ἀνδριάντος 149,29    3 A. *եթէ ոչ են ի սա դիրք*] El. ὅτι οὐκ ἔστιν ἐν ἐμοὶ τὸ πρᾶγμα 149,30.    5—6 A. *եւ կամ — ի գոյացութեան*] El. ἢ ὡς ἐν ὑποκειμένῳ, καθό φαμεν τὸ συμβεβηκὸς ἐν τῇ οὐσίᾳ 149,32—33.    7 A. *յիւր փխ. յուր.*    11—12 A. *իսկ այլքն — անբնաւորապէս է*] El. εἰσὶ γὰρ καὶ παρὰ φύσιν, ὡς ἡ φθορὰ ἐν τῷ φθειρομένῳ καὶ τὸ πῦρ ἐν τῷ ξύλῳ· καθόλου γὰρ ἡ φθορὰ ἐν τῷ φθερομένῳ παρὰ φύσιν 149,35—38.    17 A. *ուղղ. եւ այլ ոչինչ.*    18 A. *զոլ ասացեալ*] El. *չիք.*    19—20 A. *Առ որ — բոլոր ինչ*] El. πρὸς ὅ φαμεν ὅτι οὐκ ἀρκεῖ ἡ συνδρομὴ ὅλων τῶν μερῶν πρὸς τὸ γενέσθαι τὸ ὅλον 150,5—6.    23 A. *ուղղ. հակորոշեցաւ.*

„Նենթակայում ասեմ“.

Բարւոք ասաց „ասեմ“, քանզի ինքն այսպէս անուանեաց. քանզի որ այլոց են դրութիւնք՝ անդ „ասին“ դնէ, որպէս „հոմանունք ասին, փաղանունք ասին“: Բայց մեք ցուցաք զընթերականն ենթագրութիւնս, եթէ զիարդ ունի զհամեմատն սեռում եւ բաղկացուցչաց զանազանութեանց. զի այսպիսի ենթագրութիւնս որոշէ զնա ի տասն նշանակիցելոցն. քանզի յումեքն որոշեաց զնա յորպէս բոլոր ի մասունսն. քանզի բոլորն ոչ որպէս այլ յայլում, այլ որպէս ինքն յինքեան կարծի գոլ: Իսկ ասելովն „ոչ որպէս մասն“՝ որոշեաց զնա ի յորպէս մասն ի բոլորում եւ յորպէս սեռ ի տեսակում եւ տեսակ ի սեռում. քանզի կարծի իմն, թէպէտ եւ ոչ տիրապէս, մասն գոլ տեսակ սեռի. քանզի զանազանութիւնս առեալ՝ կատարէ զտեսակ, եւ տեսակ մասն գոլ կարծի սեռի՝ որպէս մասնականագոյն քան զնա. քանզի ոչ ասաց՝ „յումեքն մի մասն գոլ“, այլ „մի որպէս մասն գոլ“. քանզի այսոքիկ ոչ են տիրապէս մասունք: Իսկ ասելովն „յորում էն“, այսինքն յորում զգոլն ունի՝ որոշեաց զնա ի ժամանակէ եւ յարարչականէն եւ յաւարտականէն. քանզի ոչ եթէ յայսոսիկ ունի զգոլն, որպէս ցուցաք: Իսկ յորպէս տեսակ ի սեռում որոշէ զնա՝ յայն որոշէ որպէս տեսակ ի սեռում:

## ԸՆԴ ԱՅՍՈՍԻԿ ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՎ ԱՌԱՋԻՆԱ ՏԵՍՈՒԹԻՒՆՍ. ԳՐԱԿՔՍ Ի

„Նենթակայումն ասեմ“.

Եւ վասն զի ուսաք զենթագրութիւն նենթակայում եւ ցուցաք, եթէ ունի համեմատեալ սեռում եւ բաղկացուցիչ զանազանութեանց, սեռում՝ զումեքն, իսկ բաղկացուցիչ զանազանու-

7 A. ի տասն նշանակիցելոյն] El. ἀπὸ τῶν δέκα σημαινομένων τοῦ ἔν τινι 150,17.  8 A. զնայ.  12—13 A. մասն — սեռի] El. μέρος εἶναι τοῦ εἴδους τὸ γένος 150,21—22.  17 A. այսինքն — ունի] El. καὶ ὃ λέγομεν ἐν αὐτῷ τὴν ὕπαρξιν ἔχειν 150,26.  18 A. ի ժամանակէ — յաւարտականէն] El. ἀπὸ τοῦ χρόνου, ἀπὸ τοῦ τόπου, ἀπὸ τοῦ ποιητικοῦ, ἀπὸ τοῦ τελικοῦ 150,27.  19—20 A. Իսկ յորպէս — ի սեռում] El. τοῦ γὰρ ὡς εἶδος ἐν ὕλῃ χωρίζει αὐτὸ τὰ χωρίζοντα ἀπὸ τοῦ ὡς γένος ἐν εἴδει 150,28—29.  23 A. ասեմ պրակքս ի.

*թեանց՝ զայլս ի բառիցն՝ բն՛ր այսուհետեւ եւ առ բաղկացեալ ենթագրութիւնս զվայելուչ տարակուսանսն տարակուսեսցուք: Եւ այսոքիկ են, որք ըստ առաւել ունականութեան եւ ըստ նուազութեան դատախազեն: Եւ այնոքիկ, որ դատախազենն զառաւել ունակութիւն՝ այսպէս ձեռնարկեն, եթէ եւ գոյացութեան պատկանի այսպիսի ենթագրութիւն. քանզի ահա Սոկրատէս յումեք ի տեղւոջ է եւ ոչ է մասն տեղւոյ եւ ոչ կարէ զատ գոլ ի տեղւոջէն յորում էն (քանզի ամենայն ուրեք ի տեղոջ է), սակայն ոչ է պատահումն: Առ որ ասեմք, եթէ զո՞ր տեղի առնուք. զիւրաքանչիւրն յորմէ որոշի թէ զհանուրն. իսկ եթէ զընդհանուրն՝ ամենեւիմք ոչ է ի նմա: Իսկ եթէ նեղեալք ասիցեն, եթէ ոչ ըստ իւրաքանչիւրն ասեմք զսահմանեալն եւ ոչ զհանուրն, այլ զմասնականն՝ որ անորիշն է. թէպէտ եւ ամենայն իրաւք յումեմն տեղւոջ է Սոկրատէս. դարձեալ ասեմք, եթէ վերջին զանազանութիւնք ենթագրութեանդ ոչ պատկանի գոյացութեան, որ ասեն անկար զատ գոլ յայնմանէ յորում էն. քանզի ոչ եթէ Սոկրատէս գոյացութիւն գոլով՝ ի տեղում ունի զգոլ՝ որպէս պատահումն, այլ տեղի ունի ի գոյացութեան զգոլն: Այս առաջին տարակուսութիւն:*

*Իսկ երկրորդ տարակուսութիւն է, եթէ ահա բոլորն ի մասունս գոլով՝ ոչ է բոլորն մասն մասանցն եւ ոչ կարող գոյ բոլորն զատ գոլ ի մասանցն, սակայն ոչ է պատահումն: Առ որ ասեմք, եթէ ենթագրութիւն զումեքն ունի եւ ոչ զումեքսն. իսկ բոլորն յումեքսն ասի գոլ եւ ոչ յումեք. քանզի մինչ կարի նուազ երկուս ունի մասունս ամենայն իրաւք բոլորն. վասն որոյ եւ վերստին տարակուսեն, եթէ եւ բոլորն յումեք ասի. քանզի մի ումն ի մետասան նշանակութեանցն ասիւր գոլ յումեքն,*

---

1 A. *զայլս ի բառիցն]* El. τὰ λοιπά 151,1. 10—11 A. *զիւրաքանչիւրն — ի նմա]* El. εἰ μὲν τὸν καθ' ἕκαστα, τούτου χωρίζεται, εἰ δὲ τὸν καθόλου, οὐδ' ὅλως ἐστὶν ἐν αὐτῷ 151,7—8. 12 A. *ըզսահմանեալն.* 14—16 A. *դարձեալ — յորում էն]* El. ἡμεῖς φαμεν ὅτι ἡ τελευταία διαφορὰ τῆς ὑπογραφῆς οὐχ ἁρμόζει αὐτῷ, τὸ μὴ δύνασθαι χωρὶς ὑποστῆναι· 151,11—12. 18 A. *այլ — զգոլն]* El. ἀλλ' εἰ ἄρα ὁ τόπος ἐν τῇ οὐσίᾳ ἔχει τὸ εἶναι 151,18. 23 A. *զումեքն,* ուղղ. *յումեքն.* 24—25 A. *քանզի — բոլորն]* El. τοὐλάχιστον γὰρ ἐν δύο μέρεσι τὸ ὅλον θεωρεῖται 151,18. 27 A. *մի ումն* ուղղ. *ի մի ումն.*

*որպէս բոլոր ի մասունս: Եւ ասեմք. եթէ այս ասացաւ առ ի ցուցումն ոչ կարելն պատահման ըստ ընքեան գոլ, եւ զի թէպէտ եւ եզական է արտածայնութիւնն, սակայն բազմութիւն նշանակէ. քանզի յումեք բազմութեան մասանց գոյ բոլորն եւ կամ յումեք քանակութեան մասանց տեսանի: Եւ այլազգ այսոքիկ տրամորոշին, զի բոլոր թիւ յիւր մասունս՝ որպէս ինքն յինքեան գոլ, իսկ պատահումն՝ որպէս այլ յայլում է: Այլ տարակուսութիւն է որ ասէ, եթէ եւ տեսակ ի նիւթում գոլով՝ ոչ մասն է նիւթոյ եւ ոչ անջատի (քանզի յանջատելն ապականի), սակայն ոչ է պատահումն՝ որպէս տեսակարարու նոյն ինքն եւ տեսակ, այլ գոյացութիւն. քանզի տեսակարարեցելոյ գոյացութիւն է: Առ որ ասեմք, եթէ պատահումն է տեսակ՝ վասն զի նիւթում որպէս եթէ պատահեաց, սակս եւ անջատի ի նմանէ: Իսկ շարադրեցելոյ գոյացութիւն է տեսակ եւ նիւթ, որպէս աւարտիչք նորին: Վասն որոյ եւ նորա մասունք ասին եւ ոչ միմեանց. քանզի ոչինչ պակասին. քանզի ինքն մասն կարող գոյ լինիլ. վասն զի եւ ոչ եւթն երից մասն կարող գոյ լինիլ պակասելոյ քան եւթնն: Այսոքիկ են տարակուսանք այնոցիկ, որք զառաւելութիւն դատախազեն զենթագրութեանն: Իսկ որք զպակասութիւն դատախազեն՝ այսպէս ծեռնարկեն ասելով, եթէ ոչ ամենայն պատահման պատկանի բացատրեալ ենթագրութիւնդ, բայց միայն անանջատականումն: Առ որ ասեմք, եթէ որչափ ինչ յանջատիլ եւ ոչ յանջատիլ պատահման՝ ումն անջատական եւ ումն անանջատական է. իսկ որչափ ինչ կարողն գոլ զատ գոլ յայնմանէ յորում էն՝ ամենայն պատահումն անանջատելի է.*

2—3 A. *եւ զի — արտածայնութիւնն]* El. καὶ ὅτι ἑνικὴ μὲν ἡ ἐκφώνησις τοῦ ἔν τινι 151,22. 6 A. *բոլոր թիւ]* El. τὸ μὲν ὅλον 151,24. 7 A. *յայլմէ, ուղղ. յայլում է.* 9 A. *եւ ոչ անջատի]* El. καὶ οὐ χωρίζεται τῆς ὕλης 151,27. 10 A. *ուղղ. այլ է որպէս փխ. որպէս.* 10—11 A. *սակայն — գոյացութիւն է]* El. καὶ ὅμως οὐκ ἔστι συμβεβηκὸς ὡς εἶδος καὶ ὡς εἰδοποιὸν τὸ εἶδος αὐτό, ἀλλ' οὐσία· τοῦ γὰρ εἰδοπεποιημένου οὐσία ἐστί 151,27—29. 12—13 A. *վասն զի — պատահեաց]* El. τῇ γὰρ ὕλῃ συμβέβηκεν 151,30 A. *վասն զի [illegible] է.* 12 A. *նիւթիմ.* 14 A. *գոյացութեան եւ.* 15—18 A. *եւ ոչ — քան եւթնն]* El. οὐκ ἀλλήλων μέρη· οὐδὲν γὰρ τοῦ λοιποῦ δύναται παρ' ἑαυτὸ μέρος εἶναι· οὐδὲ γὰρ ὁ ἑπτὰ τοῦ τρία λοιποῦ ὄντος παρ' ἑαυτὸν δύναται μέρος τοῦ δέκα εἶναι 151,32—34. 19 A. *զենթագրութեանն]* El. *չկ.* 21 A. *բացատրեալ ենթագրութիւնդ]* El. αὕτη ἡ ὑπογραφὴ 151,36. 23 A. *ուղղ. եւ ոչ յանանջատիլ.* 24—25 A. *իսկ — անան-*

*քանզի ոչ ասաց, եթէ «որ ոչն կարէ անջատիլ», այլ «որ անկարն գոլ զատ գոլ»: Եւ ապա ասեն եթէ այո՝ կարող գոյ զատ գոլ պատահումն. քանզի ահաւանիկ անուշութիւն խնձորոյն պատահումն գոլ՝ թողեալ զխնձորն՝ մնայ ի զգայարանում կամ՝ ի գոյացումն: Զայս տարակուսանս լուծանեն զանազանապէս. Պղատոնն այսպէս՝ եթէ ոչ որոշեցաւ յենթակայէն, բայց ի ձեռն անաւսր բացազեղմանց գայ առ մեզ, որպէս յայտ առնեն ըստ մասին նորա թառամութիւնք. քանզի ի ծառն ոչ թառամի՝ վասն առաւել գոլոյ ներզեղման քան զարտազեղումն: Իսկ Արիստոտէլ զարքանեկութիւն աւդոյն պատճառս ունի. քանզի որով քանիւ թափանցատեսական է եւ թափանցահնչական է՝ նովին քանիւ եւ թափանցահոտական: Իսկ Պղոտինոս, որ եւ զՊղատոնին եւ զԱրիստոտելին հաւաքեաց, ասէ՝ եթէ փոփոխի մասն ինչ աւդոյս. քանզի անուշութիւն խնձորոյն, մնալով ի նմա՝ ծնանի փոփոխէ մասն ինչ աւդոյս, որում զգամք եւ հոտ առնումք: Ցորոց կարծեաց ոչ մի ինչ ըստ ինքեան ճշմարիտ գոյ՝ ոչ զՊղատոնին որ ասէ բացազեղմունս ոմանս. քանզի բացազեղումն մարմին է, իսկ ամենայն մարմնոյ մի է ըստ բնութեանն շարժումն (քանզի կամ՝ թեթեւ եւ ի վեր միտէ կամ՝ ծանր եւ ի վայր): Իսկ անուշութիւն խնձորոյն ամենեքեան համապատուաբար զգամք շուրջ կալով. ապա ուրեմն՝ ոչ է բովանդակ բացազեղմունս միայն ասել: Նա եւ ոչ Արիստոտելին միայն ըստ ինքեան ճշմարիտ. քանզի ահաւասիկ խոզք առաւել վերաբերելով զաղբս, վասն առաւել զգալոյ բացազեղմանց կտոցն, այլ եւ ըստ ժահահոտ տեղիս անցանելով բազում անգամ կափուցանեմք զունչս կարկատանաւք ոմամբք, եւ այն ինչ չնչե-*

*ջատելի է]* El. ὅσον δὲ ἐπὶ τὸ μὴ δύνασθαι χωρὶς ὑποστῆναι πᾶν συμβεβηκὸς χωριστὸν ἀχώριστον 152,2—3. 1—2 A. *այլ — զատ գոլ]* El. ἀλλ' ὃ ἀδύνατον χωρὶς ὑποστῆναι 152,4. 4—5 A. *ի զգայարանում կամ ի գոյացումն]* El. ἐν τῷ αἰσθητηρίῳ ἢ τῷ χιβωτίῳ 152,6—7. 6 A. *եւ փխ. եթէ.* 6 A. *Պղատոնն — յենթակայէն]* El. ὁ μὲν Πλάτων ὅτι οὐκ ἐχωρίσθη τοῦ ὑποκειμένου 152,7—8. 7—8 A. *որպէս — թառամութիւնք]* El. ὡς δηλοῖ ἡ κατὰ μέσον αὐτοῦ ἴσχνανσις 152,9. 13—16 A. *եթէ — առնումք]* El. ὅτι μεταβάλλεται μέρος τοῦ ἀέρος τῇ εὐωδίᾳ ἡ γὰρ εὐωδία μείνασα ἐν τῷ μήλῳ γεννᾷ ὁμοίαν ἑαυτῇ ἑτέραν ποιότητα μεταβάλλουσαν μέρος τοῦ ἀέρος, ἧς αἰσθανόμεθα 152,13—15. 23 A. *ըստ ինքեան]* El. *չիք.* 25 A. *կտոցն այլ]* El. *չիք.* 25 A. *բազում անգամ]* El. *չիք.*

*լով՝ ոչ զգամք ժահահոտութեան. որպէս պարզեցելոց բացազեղմանցն կարկատանաւքն եւ մաքուր աւդոյն ելելոյ առ մեզ: Եւ ոչ Պղոտինոսին միայն ճշմարիտ, որ ասէ որակել զբոլոր աւդ. քանզի առասպելական է ասելն որակիլ զբոլոր աւդ՝ որպէս անգեղ, որք զգան անթաղ մարմնոցն որք յայլ քաղաքս են: Իսկ երեքեան միանգամայն ճշմարիտք են. այլ ի վերայ վատ հոտոտելոցն պէտք են բացազեղմանց, իսկ ի վերայ ստուգաբար հոտոտիցելոցն՝ բաւական է թափանցանոտականն աւդոյ, իսկ ի վերայ չափաւորապէս հոտոտելոցն՝ բաւական է եւ փոփոխումն աւդոյ: Այսոքիկ այսպէս: Պարտ է գիտել, թէ ոչ ըստ միում ումեք ի կարծեաց որակութիւնք ի յենթակայէ յենթակայ փոփոխին, քանզի ի նմին են՝ յորում ենն, յայնմ յորում լինին. ացտեսցի ինքն յինքենէ որակութիւնն եւ կամ յայլում եւ յայլում այժմէն: Եւ քանզի ամենայն երկուց այժմ՝ է ինչ ընդ մէջ ժամանակ՝ յայնմ ժամանակում առանց ընթակայում եղիցին: Բայց զոյր եւ պարզաբար լուծանել զայսոսիկ, եթէ զայս ոչ ասաց Արիստոտէլ „անկար զատ զոլ յորում էր“, այլ եթէ „յորում է“, վասն զի յորում է ամենայն իրաւք յենթակայում է:*

## *ԸՆԴ ԱՅՍՈՍԻԿ ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՎ ԵՒ ԱՌԱՋԻԿԱ ԳՐԱԿՔՍ. ԳՐԱԿՔՍ ԻԱ*

*„Յորժամ այլ զայլ ստորոգիցի իբր զենթակայէ“...*

*Եւ վասն զի ստորոգութիւնքս եւ լայնութիւն ունին եւ խորութիւն (խորութիւն ի մասնականսն կոյս է նոցա ելք, իսկ լայնութիւն զզառ ի կողմն փոխանակութիւն, որպէս զի զխորութիւնն առցես այսպէս՝ զգոյացութիւն եւ զմարմին, զշնչաւոր մարմին եւ*

4—5 A. *քանզի—անգեղ]* El. πλασματῶδες γὰρ τὸ λέγειν ὅλον τὸν ἐν μέσῳ ἀέρα ποιοῦσθαι ἐπὶ τῶν γυπῶν 152,25—26. 10 A. *Այսոքիկ—գիտել թէ]* El. *չիք*. 12—13 A. *քանզի—լինին]* El. ἡ γὰρ ἐν τῷ αὐτῷ νῦν εἰσι, κἂν τῷ ἐν ᾧ εἰσι κἂν τῷ ἐξ οὗ 152,31—32. 14—15 A. *Եւ քանզի—ժամանակ]* El. ἐπεὶ δὲ πάντως μεταξὺ τῶν δύο νῦν ἐστι χρόνος μέσος 152,33—34. 15 A. *ուղղ. ժամանակաւ փխ. ժամանակ*. 17—18 A. *այլ եթէ—յենթակայում է[* El. ἀλλὰ τοῦ ἐν ᾧ ἔστιν, ὅπου δ'ἂν ᾖ ἡ ποιότης, ἐν ὑποκειμένῳ ἐστίν 153,1—2. 23—2 A. *խորութիւն ի մասնականս—որ ի կարգին է]* El. βάθος μὲν τὴν εἰς τὰ μερικώτερα αὐτῶν πρόοδον, πλάτος δὲ τὴν εἰς τὰ πλάγια μετάστασιν, οἷον ἵνα βάθος μὲν λάβῃς οὕτως, τὴν οὐσίαν καὶ τὸ σῶμα καὶ τὸ ἔμψυχον καὶ τὸ ζῷον, καὶ οὕτως ἐφεξῆς, 153,6—9.

զկենդանին եւ որ ի կարգին է, իսկ լայնութիւն՝ զշնչաւորն եւ զանշունչն եւ այնպէս՝ որ ի կարգին է), վասն այսորիկ Արիստոտէլ պայմանս մեզ եւ լայնութեան եւ խորութեան յարատրէ, եւ այժմ խորութեան, իսկ ապա զլայնութեանն։ Եւ է պայմանն եւ կանոն այսպիսի. յորժամ առաջինն երկրորդումն ստորոգի՝ իբր ենթակայում՝ եւ երկրորդն երրորդումն՝ ապա եւ առաջինն երրորդումն ստորոգեսցի՝ որպէս ըստ ենթակայում. որգոն՝ եթէ շնչաւորն կենդանումն ստորոգի եւ կենդանին մարդումն՝ ապա եւ շնչաւորն մարդումն ստորոգեսցի։ Եւ բարւոք առկայացաւ ի կանոնումդ „ըստ ենթակայումն“. քանզի եթէ հանդերձեալ է ընաւ ճշմարիտ զոլ պայմանդ եւ կանոնդ՝ պարտ է երկաքանչիւրոց նախադասութեանցն ըստ ենթակայում զոլ. քանզի եթէ երկոքին ի նենթակայում գոյասցին՝ ոչինչ ճշմարիտ ժողովի. այլ եւ եթէ մինն ըստ ենթակայում ասի եւ մին ի նենթակայում՝ առաջինն կամ երկրորդն, եւ ոչ այնպէս ճշմարիտ ինչ ժողովի։ Եւ արդ՝ առցին երկոքին նենթակայում, որգոն՝ „մարդ սպիտակ, սպիտակն երկփաղառական՝ ապա ուրեմն՝ եւ մարդն երկփաղառական է“։ Արդ՝ եթէ այդպէս եզերասցի՝ սուտ ժողովի։ Դարձեալ առցի մին նենթակայում, իսկ երկրորդն ըստ ենթակայում. որգոն՝ „մարդ սպիտակ, սպիտակ գոյն՝ ապա ուրեմն եւ մարդն գոյն է“. որ է սուտ։ Դարձեալ առցի առաջինն ըստ ենթակայում՝ որգոն „մարդ կենդանի է“, իսկ երկրորդն նենթակայում՝ որգոն „կենդանին երեքփաղառական“. եւ ոչ այսպէս ճշմարիտ ինչ ժողովի. քանզի ժողովի՝ ապա ուրեմն եւ մարդ երեքփաղառական։ Եւ... դարձեալ ի ձեռն այսր պայմանի ..... զամենայն զգոյսդ ի տասն ստորոգութիւնս վերաբերէ. քանզի որպէս պայմանն ցուցանէր զառաջինն երկրորդին զոլ եւ զերկրորդն երրորդումն՝ նոյնպէս եւ ի վերադարձմանէն է ցուցանել զվերջագոյնսն եւ զերկրորդսն յառաջինսն վե-

---

4—5 A. *Եւ է — այսպիսի]* El. ἔστι δὲ ὁ κανὼν οὕτως 153,11. 11 A. *պայմանդ եւ կանոնդ]* El. ὁ κανὼν 153,16. 15 A. *առաջինն կամ երկրորդն]* El. καὶ ἢ ἡ μία ἢ ἡ δευτέρα 153,19. 23 A. *կենդանին երկքփաղառական]* El. τὸ ζῷον δισύλλαβον 153,23. 24—25 A. *քանզի ժողովի — մինչեւ երեքփաղառական]* El. *չիք*. 25. 26 A. *կէտերը տեղերը ջնջուած*. 25—27 A. *Եւ—վերաբերէ]* El. καὶ ἔχομεν διὰ τούτου τὸ ἀνάπαλιν τοῦ κανόνος· οὗτος γὰρ πάντα τὰ ὄντα ὑπὸ τὰς δέκα κατηγορίας ἀνάγει 153,26—28.

*րաքերել, որգոն՝ մարդ կենդանի է, եւ կենդանին՝ շնչաւոր, եւ շնչաւորն՝ մարմին, եւ մարմինն՝ գոյացութիւն, ապա ուրեմն՝ եւ մարդ ի գոյացութիւն վերաքերեսցի: Եւ ի վերայ այլոց ստորոգութեանցն նոյնպէս:*

*Աստուստ տարակուսեն ոմանք ասելով, եթէ սահմանէ Արիստոտէլ եւ զըստ ենթակայումն, յորժամ ասէ, եթէ առաջինն երկրորդումն գոյանայ եւ երկրորդն երրորդին՝ ապա եւ առաջինն երրորդին գոյասցի. այլ եւ ոչ նենթակայումն սահմանեաց, այսինքն զգոյացութիւն, յորժամ ասէ զյատուկս գոյացութեան. քանզի ենթագրութիւնք ի յատկացն առնուն: Այս է տարակուսութիւն: Զոր պարտ է այսպէս լուծանել. եթէ պայման եւ կանոն է ճառիցեալդ եւ ոչ սահման կամ ենթագրութիւն. քանզի եւ ոչ ի միում ենթագրութեան կամ սահմանում զսահմանելին եւ կամ զանուն սահմանելոյն ի յենթագրութեանն առնու. քանզի ոչոք ասէ, եթէ մարդ է կենդանի մարդ. իսկ այժմ ի կանոնումս բազում անգամ սահմանելին յարառոցաւ, այսինքն՝ ըստ ենթակայումն: Իսկ առ միւս եւս տարակուսութիւնն ասեմք, եթէ ոչինչ ի յատկացն գոյացութեան յորս ասէ զենթագրութիւն գոյացութեան. քանզի զամենայն, զոր միանգամ զյատուկսն ասէ՝ կամ գոյացութեան միայն գոյ կամ ամենայնի եւ կամ ամենայնում եւ ոչ՝ միայնում իսկ ենթագրութեան: Եւ տիրաբար յատուկքն միայնում եւ ամենայնում եւ միշտ կամին գոլ՝ որպէս ուսաք:*

*Արդ՝ երկակի ելոյ ստորոգութեան՝ միոյն ըստ ենթակայում, իսկ միւսոյն նենթակայում՝ ի նենթակայում ստորոգութեանն այլ այլում ասելով գոլ՝ եւ ոչ մի ինչ խնդիրս զարթուցանէ: Իսկ զըստ ենթակայում ստորոգութիւնն կամելով ցուցանել՝*

---

1—3 A. *որգոն — վերաքերեսցի]* El. οἷον ὁ ἄνθρωπος ὑπὸ τὸ ζῷον τὸ δὲ ζῷον ὑπὸ τὸ ἔμψυχον καὶ τὸ σῶμα καὶ τὴν οὐσίαν, καὶ ὁ ἄνθρωπος ὑπὸ τὴν οὐσίαν ἀναχθήσεται 153,30—32. 8 A. *զենթակայումն փխ. ոչ նենթակայումն]* El. τὸ οὐκ ἐν ὑποκειμένῳ 154,1. 11—12 A. *պայման եւ կանոն]* El κανὼν 154,4. 18 A. *ուղղ. ոչինչ է.* 19—22 A. *քանզի — ենթագրութեան]* El. πάντα γὰρ ὅσα ἴδια αὐτῆς καταλέγει ἢ μόνῃ μὲν οὐσίᾳ ὑπάρχει οὐ πάσῃ δὲ, ἢ πάσῃ μὲν οὔ, μόνῃ δὲ τῇ ὑπογραφῇ 154,10—11. 21 A *ենթագրութիւն.* 27—4 A. *Իսկ զըստ — ընդհանրականագոյն]* El. ἡ δὲ καθ' ὑποκειμένου κατηγορία θέλουσα δεῖξαι τὸ ἕτερον <ὅπερ τὸ ἕτερον>, τοῦτ' ἔστι τὸ κατηγορούμενον ὅπερ τὸ ὑποκείμενον, ζήτησιν παρέχει· ἐρεῖ

*զմին յայն ինչ որ ի միում է, այսինքն՝ ստորոգեալն եւ որ ինչ ենթակայն էր՝ խնդիրս զարթուցանէ. քանզի եւ ասէ իսկ ոք, եթէ „որ կենդանի է մարդում ստորոգի՝ նոյն ինքն ներդասիցեալն ի նմա՝ եթէ այլ ինչ ընդհանրականագոյն: Եւ եթէ ներդասիցեալն ի նմա՝ թախանձումն ունի ստորոգութիւն ինքն ինքեան ստորոգելով. իսկ եթէ ընդհանուր է՝ բաղաձգեսցի մասնականն ընդհանրականին եւ եղիցի մասնականն՝ որ ինչ ընդհանուրն է“: Առ այսոսիկ ասեմք, եթէ ամենայն իրաւք որ ստորոգիլոցն է՝ պարտ է նմա եւ հասարակագոյն գոլ ենթակային եւ յատկագոյն. քանզի եթէ ընդհանրականագոյն է՝ ոչ երբեք թախանձումն ունի ստորոգութիւնն. իսկ եթէ յատուկ է իւրաքանչիւրոյ ուրուք՝ ոչ բաղաձգեսցի մասնական ենթակայն ընդհանրականին, որպէս եւ է ի վերայ միջակիտի բոլորակին. քանզի նշանն այն որ միջակէտն է եւ բոլորակին ամենայնի ուղղական, որ ի նմանէ արտահանի՝ եւ հասարակ է ամենեցուն եւ յատուկ իւրաքանչիւրոյ ուրուք: Եւ ձայն քարոզչի՝ եւ հասարակ է ամենեցուն եւ յատուկ իւրաքանչիւրոյ ուրուք. քանզի եւ յամենեսեան է եւ յաւղում է՝ մի գոլով: Այլ եւ նոյն իսկ ինքն յատուկն, որ կարծի հաւասարն եւ հանգէտն գոլ ընդհանրականագոյն ասի գոլ, վասն զի ամենայն յատուկ ընդհանուր տարորոշմանց համազաւր գոյ. քանզի ասելն „մարդն ծիծաղական է“, ոչ այլ ինչ ասեմք, բայց զայն՝ եթէ ամենայն մարդ ծիծաղական է. իսկ ամենայնն փոխանակ իւրաքանչիւրոյ իմանի. քանզի իւրաքանչիւր ուրուք ծիծաղական գոլն ընդհանրականագոյն է: Բայց է եւ այլազգ ասել, եթէ կարող գոյ նոյն ինքն ընդհանրականագոյն եւ յատկագոյն ենթակային գոլ. քանզի անա տեսանեմք, զանտեսակ նիւթ յառաջ գալով ի գոյացու-*

---

γάρ τις 'ποῖόν ἐστι τὸ κατηγορούμενον ζῷον τοῦ ανθρώπου, αὐτὸ τὸ ἐγκατατεταγμένον ἢ ἄλλο καθολικώτερον; 154,15—18. 10 A. *ընդհանրականագոյն]* El. κοινότερον 154,23. 12—16 A. *ոչ բաղաձգեսցի — իւրաքանչիւրոյ]* El. οὐ συνεπεκταθήσεται τὸ μερικὸν τῷ καθόλου, ὡς ἐπὶ τοῦ κέντρου καὶ τοῦ σημείου τοῦ κύκλου· τὸ γὰρ σημεῖον ἐκεῖνο πασῶν τῶν ἐξ αὐτοῦ εὐθειῶν ἐκλαβόμενον καὶ κοινόν ἐστιν ἁπασῶν καὶ ἴδιον ἑκάστης 154,24—26. 16 A. *ուղղ. եւ որպէս ձայն.* 16 A. *ուղղ. որ հասարակ է ամենեցուն]* El. καὶ κοινῇ ἐστιν ἅπασιν ἀκουστή 154,27. 18—21 A. *Այլ եւ — համազաւր գոյ]* El. καὶ αὐτὸ δὲ τὸ δοκοῦν ἐξισάζειν ἴδιον καθολικώτερον δοκεῖ εἶναι, ἐπειδὴ τὰ ἄρθρα τοῖς καθόλου προσδιορισμοῖς ἰσοδυναμοῦσιν 154,28—30.

*թենէ՝ նախ որպէս տեսակարարի իմն զտարածացութիւնն առնլով եւ քանակելով, եւ ապա որակի, եւ ապա առնէ զներշնչաւոր մարմինն, յետ այսորիկ զկենդանին, ի վերայ այսոցիկ եւ զմարդն, ապա զՍոկրատէս, եւ անդ վախճանէ: Արդ՝ ամենայն, որ յառաջ քան զՍոկրատէսն են՝ տեսակարարաւք զանազանութեամբք զանազանին ի միմեանց. իսկ Սոկրատէս առանձնական ինչ յեղանակաւք զանազանի յայլոց մարդկանց, որոյ ի վերայ գայ մասնական տեսակն մարդու ումեք ոչ երբեք այլ ըստ բնութեանն զանազանութիւն ընդունելով. վասն որոյ եւ մնայ անքաժանելի: Եւ արդ՝ տես եթէ որպէս ինքն նիւթ, որ ամենեցուն գոյ ենթակայ հաւասարապէս՝ եւ առանձինն իւրաքանչիւրոյ ումեք ենթակացեալ գոյ ամենեցուն: Նոյնպէս եւ ի վերայ կենդանոյն է տեսանել եւ ի վերայ ներշնչաւորին. քանզի նոյն ինքն եւ յատուկ եւ հաւասար իւրաքանչիւրոյ եղանի. հաւասար՝ որպէս բազմաց գոլով, իսկ յատուկ՝ որպէս առեալ զտեսակարարուս զանազանութիւնս եւ եղեալ տեսակ այլ ինչ այլ, ըստ համեմատութեան նիւթոյն, որ ամենեցուն ենթակայ է հաւասարապէս եւ առանձինն իւրաքանչիւր ումեք:*

## *ԸՆԴ ԱՑՍՈՍԻԿ ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՎ ԵՒ ԱՌԱՋԻԿԱ ՊՐԱԿՔՍ. ՊՐԱԿՔՍ ԻԲ*

*„Ցայլայսեռից եւ ոչ ընդ միմեամբք“...*

*Ցետ խորութեանն կանոնի գայ եւ ի կանոն լայնութեան:*

*Եւ վասն զի զլայնութիւն զանազանութիւնք առնեն, երկակի գոն զանազանութիւնք (քանզի կամ բաղկացուցիչք գոն կամ բաժանականք), այլ եւ սեռքն երկակի գոն՝ ոմանք ընդ միմեամբք եւ ոմանք ոչ ընդ միմեամբք: Արդ՝ ի խնդիր է ի ձեռն այսոցիկ Արիստոտէլ, եթէ զիա՞րդ ունին բաղկացուցիչք զանազանութիւնքն եւ բաժանականքն առ սեռսն, որք ընդ միմեամբքն են*

---

12 A. *ամենեցուն]* El. *չիք.* 14—15 A. *քանզի — եղանի]* El. τὸ αὐτὸ καὶ κοινὸν καὶ ἴδιον ἑκάστου γίνεται 155,5—6. 17 A. [illegible] *եւ ոչ այլ ինչ այլ]* El. ἄλλοτε ἄλλο 155,7. 22 A. *անդ փխ. ընդ.* 27 A. *եւ ոմամբք փխ. եւ ոմանք.*

*եւ որք ոչ են ընդմիմեամբք, եւ բացերեւեցուցանէ ասելով, եթէ „այլասեռիցն եւ ոչ ընդ միմեամբք դասիցելոցն այլ են տեսակաւ զանազանութիւնքն". իսկ ընդ միմեամբք դասիցելոցն բաղկացուցիչքն ամենայն իրաւք նոյնք, իսկ բաժանականքն երբեմն նոյնք, երբեմն այլ: „Բայց այլ սեռս" լսելի է զայնս, որք ի զանազան ստորոգութիւնս վերաբերին՝ որպէս կենդանին եւ մակացութիւն, եւ կամ՝ այնք, որ թէպէտ ի մի ստորոգութիւն վերաբերին, սակայն բաժանաբար՝ որպէս բանականն եւ անբանն: Արդ՝ ի զանազան ստորոգութիւնս վերաբերելոցն՝ եւ բաղկացուցիչքն եւ բաժանականքն ամենայն իրաւք այլք են, որպէս կենդանոյն եւ մակացութեան, որոց ստորոգութիւնքն զանազանք են: Արդ՝ բաղկացուցիչքն կենդանւոյն՝ ներշնչաւորն եւ զգայականն, իսկ բաժանականք՝ բանականն եւ անբանն, մահկանացուն եւ անմահն. իսկ բաղկացուցիչք մակացութեանն՝ անսխալն եւ անշարժն եւ յաղագս այնոցիկ լինիլն, որք միշտ այնպէս բնաւորեցան գոլ. իսկ բաժանականք են, որպէս բաժանեաց Պղատոն ի Գորգիում, ասելով, եթէ արհեստիցն ոմանք բանականք միայն, որպէս տրամաբանականն, եւ ոմանք՝ գործականք միայն, որպէս կենդանագրողականն, իսկ ոմանք բանականք միանգամայնք եւ գործականք: Եւ այս երկակի. կամ՝ հանգիտաբար ունի բանումն զգործս, որպէս փանդռներգութիւն (քանզի այն ինչ ... երգէ եւ հարկանէ) եւ կամ որպէս տաղախաղացութիւն յառաջագոյն ասելով.*

*„Եկ վեց եւ վեց քաջի Կանանիայի.*

*եւ կամ առաւել ունի զբանն քան զգործս՝ որպէս որ ասեն.*

*„Ի բաց տուր զառ ի յիմմէն առեալ ի հաւրէ",*

*եւ նորա ըստ լռութեան ի վեր միայն ակնարկեալ ի վերայ ածէ դարձեալ Ոռեստոս.*

---

8 A. *վերայբերին*. 8 A. *որպէս բանականն եւ անբանն]* El. ὡς τὸ σῶμα καὶ ἀσώματον 155,21. 14—15 A. *իսկ—անշարժն]* El. τῆς δὲ ἐπιστήμης συστατικαὶ μὲν τὸ ἄπταιστον καὶ βέβαιον 155,26. 20 A. *երկակի]* El. τριχῶς 155,30. 21—1 A. *որպէս փանդռներգութիւն—ասացեցուցես]* El. ὡς ἡ κιθαρῳδία καὶ ἡ πεττευτικὴ προλέγουσα τὰς βολὰς ὧν χρείαν ἔχει, ἡ πλείονα ἔχει τὸν λόγον τῆς πράξεως, <ὡς ἡ ὑποκριτική>, ὡς ἐπὶ τοῦ· 'ἃ δ' ἔλαβες, ἀπόδος, πατρὸς ἐμοῦ λαβὼν πάρα', εἰπόντος τοῦ δὲ κατὰ τὸ σιωπώμενον ἀνανεύσαντος μόνον 'ἄπαγε' πάλιν ['Ορέστης]· 'οὐ χρήματ' εἶπον', 155,31—156,4.

„Եթէ ոչ ասացի զինչս, այլ զայն ասեմ ինչս զի զիս ապրեցուցես".

եւ կամ վերադարձապէս՝ յորժամ առաւել ունի զգործն քան զքանն, որպէս բժշկականն՝ որ գործական առաւել է քան քանական. վասն զի եւ քանում պիտանանայ վասն տրամագիտութեան վասն բժշկելոյն. զի որ քաջ եւ լաւագոյն ծանեաւ զցաւս՝ լաւագոյն եւ բժշկէ: Բայց ոչ միայն ի վերայ զանազան ստորոգութիւնս վերաբերելոցն կանոնս ճշմարիտ է, այլ եւ ի վերայ այնոցիկ՝ որք ոչ ընդ միմեամբքն են: Եւ ոչ ընդ միմեամբքն ասին այնք, որք հակաբաժանին միմեանց, որպէս անմարմին մարմնում եւ ներշնչաւորն անշնչումն եւ որք միանգամ այսպիսիք են. քանզի եւ ոչ մի ոք ի սոցանէ ընդ միով ընկերումն է: քանզի մարմնոյ բաղկացականք զանազանութիւնք են եռակի տրամակայիլն դրութիւնս, այսինքն՝ դրութիւն ունիլն. իսկ բաժանականք են ներշնչաւորն եւ անշունչն: Իսկ անմարմնոյն բաժանականք են աստուածայինն եւ հրեշտակականն. իսկ բաղկացուցիչք են որ յառաջ քան զբաժանականսն անտարակացելին, անդրելին:

Վասն որոյ եւ տարակուսեն ասելով, եթէ եւ այնոցիկ, որք ի մի ստորոգութիւն վերաբերին եւ հակաբաժանին եւ ոչ են ընդ միմեամբք՝ կարողութիւն է զնոյնս գոլ բաժանականս. քանզի եթէ բաժանեմ զկենդանին ի ցամաքային եւ ի ջրայինն, եւ դարձեալ բաժանեմ զցամաքայինն՝ յարիւնաւոր, որպէս ի մարդ եւ ի ձի, եւ յանարիւն, որպէս ի մեղու եւ ի մարախ եւ ի մրջիւն. դարձեալ բաժանեմ զջրայինսն՝ յարիւնաւոր՝ ի ղաբրաքս եւ ի թիւնոս եւ յորփոս եւ յայսպիսիս, իսկ յանարիւն՝ որպէս ի միպրիկ եւ թիսիւր, կարապոս. արդ՝ ահա այլոց սեռիցն հակաբաժանիցելոց եւ ոչ ընդ միմեամբք ելոց՝ նոյնք են

---

5—6 A. *վասն զի — վասն բժշկելոյն*] El. ἢ λόγῳ μὲν διὰ τὴν διάγνωσιν χρῆται καὶ θεραπείαν 156,6—7. 5 A. *վասն զի*, ուղղ. *թէպէտ*. 8 A. *վերաբերիցելոցն*] El. ἀναγομένων ἑτέρων γενῶν 156,8. 12—13 A. *քանզի — ընկերումն է*] El. οὐδὲ γὰρ τελεῖ τὸ ἕτερον ὑπὸ τὸ ἕτερον ἐπὶ τούτων· 156,11—12. 14 A. ուղղ. *ի դրութիւնս*. 18 A. ուղղ. *անտարակայեալ են*. 21 A. *կարողութիւն է — բաժանականս*] El. δυνατὸν τὰς αὐτὰς εἶναι διαφορὰς 156,17—18. 25 A. *եւ ի մրջիւն*] El. չիք. 26—27 A. *իսկ յանարիւն — կարապոս*] El. ἢ εἰς ἄναιμον, οἷον σηπίαν τευθίδα κάραβον 156,21. 27 A. ուղղ. *ի կարապոս*.

*զանազանութիւնք: Թէպէտ եւ բաժանէ ոք զկենդանին յարիւնաւոր եւ յանարիւն, եւ զարիւնաւորն՝ ի ցամաքային եւ ի ջրային, եւ նմանապէս զանարիւնն բաժանէ ի ցամաքայինն եւ ջրայինն, եւ այսպէս դարձեալ նոյնք գտանին բաժանականք զանազանութիւնք, եւ յարացոյցք յայտնի են: * Եթէ այլս տեսակաւ զանազանութիւնս ասէ Արիստոտէլ, որք այլ տեսակս առնեն՝ միշտ զանազանեալս միմեանց եւ ոչ երբեք նոյնն մնայ. քանզի արիւնաւորն ցամաքային * ջրայնւոյն ոչ երբեք է նոյն տեսակաւ, եւ ոչ վերադարձապէս անարիւն ջրային անարեան ցամաքայնոյն ոչ երբեք է նոյն տեսակաւ: Արդ՝ զանազանութիւնք ոչ եթէ ինքեանք զանազանին միմեանց. քանզի զիա՞րդ արիւնաւորն զանազանի արիւնաւորում՝ որպէս արիւնաւոր, եթէ ոչ առցէ այլ յատկութիւնս ոմանս եւ եղիցի ուրեք ուրեք մարդ եւ ուրեք ուրեք ձուկն, թէ պատահիցէ: Բայց պարտ է եւ զայս գիտել, որպէս ասէ Նիստաթիոս փիլիսոփոս՝ ստորայիշատակեալ Ստորոգութիւնսդ, եթէ յորժամ ասէ Արիստոտէլ „ոչ ընդ միմեամբք սեռիցն դասիցելոց ոչինչ արգելու զնոյնս գոլ", եթէ վասն բաժանականացն ասէ եւ ոչ բաղկացուցչացն. քանզի բաղկացուցիչքն մասունք թերեւս յիրաւի ասացին՝ որոց ենն բաղկացուցիչք, որպէս ներշնչաւորն եւ զգայականն կենդանոյն. քանզի մասունք այսոքիկ թուին գոլ կենդանւոյն, որպէս լցուցիչք նորին, եւ ոչ երբեք զանազանութիւնք նորա, թէ ոք ստուգաբար տեսանիցէ: Իսկ բաժանականքն տիրաբար զանազանութիւնք են, որպէս զանազանից տեսակաց արարչականք: Արդ՝ ի վերայ այսոցիկ բաժանականաց յայտնոսիկ, որք ընդ միմեամբք են՝ կարողութիւն է երբեմն զնոյնս գոլ բաժանականս զվերագոյնն ներքագունում. քանզի եթէ բաժա-*

---

4—5 A. *եւ այսպէս—յայտնի են]* El. καὶ οὕτως πάλιν εὑρίσκονται αἱ αὐταὶ τῶν αὐτῶν ἀντιδιαιρουμένων αἱ διαφοραί, καὶ τὰ παραδείγματα δῆλα 156,25—26. 5 A. *յարացոյցքս.* 5 El. τί οὖν φαμεν πρὸς ταῦτα; 156,26] A. *չիք.* 8—9 A. *քանզի—տեսակաւ]* El. τὸ γὰρ ἔναιμον τὸ χερσαῖον τῷ ἐναίμῳ τῷ ἐνύδρῳ οὐδέποτε ἐστι ταὐτὸν τῷ εἴδει 156,28—29. 15—16 El. ὑπομνηματίσας τὰς Κατηγορίας 156,34] A. *ուղղ. ի ստորայիշատակեալ Ստորոգութիւնսդ.* 17—18 A. *ոչ ընդ—զնոյնս գոլ]* El. τῶν δέ γε ὑπ' ἄλληλα οὐδὲν κωλύει τὰς αὐτὰς εἶναι 156,35—157,1. 19—20 A. *քանզի—բաղկացուցիչք]* El. αἱ γὰρ συστατικαὶ μέρη εἰσίν 157,2. 27 A. *զվերագոյնն ներքագունումն]* El. τοῦ ὑπεράνω καὶ τοῦ ὑποκάτω 157,7.

*նեմ զկենդանին ի թեւաւոր եւ ի ջրային՝ ոչ կարեմ զնոյն առնել բաժանականս կենդանւոյ պարզաբար թեւաւորի եւ ջրայնւոյ. քանզի ոչ եթէ զթեւաւորն կարող ի բանական եւ յանբան բաժանել եւ ոչ զջրային կենդանին, եթէ ոք զայսոսիկ բաժանեալն կամիցի բաժանել ի բանական եւ յանբան՝ ոչ կարող գոյ. քանզի ոչ է հնար: Իսկ եթէ բաժանեմ զկենդանին ի ցամաքային եւ ի ջրային, զցամաքայինն կարող գոմ բաժանել ի բանական եւ յանբան՝ ի մարդ եւ ի ձի: ** Եւ զկենդանին ի բանական եւ յանբան՝ ի մարդ եւ ի ձի: Եւ ահա նոյնքն գտանին վերակացելոյ կենդանւոյն զանազանութիւնք՝ բանականն եւ անբանն, եւ ցամաքայնոյն որ ի բաժանմանէ կենդանւոյն եղեւ. քանզի եւ ցամաքայինն բաժանի ի բանական եւ յանբանն:*

*Բայց այլ են այսոցիկ բաղկացուցիչք եւ բաժանականք զանազանութիւնք. քանզի անմարմնոյն զանազանութիւնքն թէպէտ բաղկացուցիչք գոն թէպէտ բաժանականք՝ ոչ են նոյնք բաժանականացն եւ բաղկացուցչացն որք մարմնոյն են: Իսկ ընդ միմեամբք են այնոքիկ, որք ըստ խորութեան առաջաբերին, որպէս մարմին եւ շնչաւորն եւ կենդանին եւ մարդն: Իսկ ի վերայ այնոցիկ, որք ընդ միմեամբքն են բաղկացուցիչքն՝ ամենայն իրաւք նոյնք են (քանզի այնոքիկ, որք ընդ միմեամբքն են՝ ամենայն իրաւք վերագոյնքն զներքնագունիցն ստորոգին), իսկ բաժանականքն երբեմն նոյնք երբեմն այլք. զի եթէ բաժանես զկենդանին ի բանական եւ յանբան՝ ոչ կարես դարձեալ բաժանել զբանականն ի բանական եւ յանբան: Իսկ եթէ բաժանես զկենդանին ի մահկանացու եւ յանմահ, եւ դարձեալ զբանականն՝ ի մահկանացու եւ յանմահ՞ նոյնք են ստոյգ: Ցորժամ ասես, ո՛վ Արիստոտէլ, եթէ „այնց, որք ոչ են ընդ միմեամբք դասիցեալք՝ ոչինչ արգելու նոյնս գոլ“՝ յաղագս բաղկացուցչացն ասես եթէ յաղագս բաժանականացն. եթէ յաղագս*

---

3 A. *ուղղ. կարող եմ.* 4—6 A. *եթէ ոք — ոչ է հնար]* El. ἐάν τις τὸ ζῷον τὸ εἰς αὐτὰ διαιρεθὲν ἐπιτήδευη διελεῖν εἰς λογικὸν καὶ ἄλογον· ἀδύνατον γὰρ 157,10—11. 5 A. *ուղղ. ի բաժանելն փխ. բաժանեալն.* 8—10 A. *Եւ զկենդանին — զանազանութիւնք]* διαιρῶ δὲ καὶ τὸ ζῷον εἰς λογικὸν καὶ ἄλογον (ἐξὸν γάρ)· καὶ ἰδοὺ αἱ αὐταὶ εὑρίσκονται τοῦ ζῴου καὶ τοῦ ὑποκάτω διαφοραὶ 157,13—15. 15 A. *ուղղ. եւ թէպէտ եւ բաժանականք լինին.* 24 A. *եւ յանբան]* El. καὶ ἄλογον· διὸ ἕτεραι 157,25. 26 A. *ստոյգ]* El. *չիք.*

բաղկացուցչացն ասես, վասն զի ամենայն իրաւք նոյնք են, զի՞նչ կամի ասելն եթէ „ոչինչ արգելու“, որպէս միշտ ի վերայ միջակի ուրուք ասացեալ: Իսկ եթէ յաղագս բաժանականացն ասես՝ զի՞նչ ասեմք առ կանոն խորհրդեան՝ որ յաղագս բաղկացուցչացն ասացեալ է: Եւ ասեմք, մի գուցէ եթէ վասն երկուցունցն ասէ՝ եւ վասն բաժանականացն եթէ „ոչինչ արգելու“ եւ վասն բաղկացուցչացն, եթէ ամենայն իրաւք նոյնք են, որպէս եւ ունի կանոնն խորհրդեան: Աստ տարակուսեն ոմանք ասելով, եթէ վասն է՞ր նախադասեաց զստորասականն բացասականին: Եւ ասեմք, եթէ որպէս կարեւոր մարթականում. քանզի ամենայն իրաւք ի վերայ բացասականին, այսինքն այնոցիկ՝ որ ոչ ընդ միմեամբքն են՝ այլ եւ այլ են, իսկ ի վերայ ստորասականին, այսինքն՝ որ ընդ միմեամբքն են՝ մարթ գոյ զբաժանականսն եւ նոյնս գոլ եւ այլս: Եւ վասն է՞ր ոմն կարեւոր եւ ոմն մարթ գոլ: Եւ ասեմք, եթէ վասն զի հակբաղադրական զուգաղարձութիւն միշտ ի հետեւողէն եղանի. իսկ Արիստոտէլ յառաջնորդականէն արար. քանզի ասելով, եթէ այլոց սեռիցն եւ ոչ ընդ միմեամբք դասիցելոցն այլք են ամենայն իրաւք տարբերութիւնքն երկոքեան. եւ պարտ էր ասել, եթէ „որոց նոյնքն են զանազանութիւնքն՝ այնոքիկ ընդ միմեամբք են“: Բայց բարիոք առկայացաւ ասելն „այլք տեսակաւ“, որպէս զի զգոյեղուտսն առցուք զանազանութիւնս. զի եթէ ոչ զայսոսիկ, այլ զպատահականսն առնումք՝ կարողութիւն է այնոցիկ, որք ի զանազան ստորոգութիւնս վերաբերին՝ զնոյնս գոլ. քանզի, բաժանեմ զկենդանին յոտնաւոր եւ յանոտն, եւ զանաւթ՝ ի յոտնաւոր եւ յանոտն. յորոց կենդանին ի գոյացութիւն վերաբերի, իսկ անաւթն՝ որպէս գործի՝ յառ ինչ: Բայց պարտ է եւ զայս գիտել, եթէ մանաւանդ ընդ միմեամբ պարտ է ասել եզականաբար՝ քան եթէ ընդ միմեամբք յոքնաբար. քանզի եթէ

---

9 A. *եթէ — բացասականին]* El. ὅτι διὰ τί προέταξε τὸ ἀποφατικὸν τοῦ καταφατικοῦ 157,34—35. 15—17 A. *եւ ասեմք — արար]* El. ἐπειδὴ τὸ τῇ συναντιθέσει ἀντίστροφον ἀεὶ ἀπὸ τοῦ ἑπομένου γινόμενον αὐτὸς ἐκ τοῦ ἡγουμένου ἐποίησεν 158,2—3. 22 A. *ուղղ. զզանազանութիւնս.* 24 A. *զնոյնս գոլ]* El. τὰς αὐτὰς εἶναι διαφορὰς 158,8—9. 29—2 A. *քանզի — որ է անկար]* El. τὰ γὰρ ὑπάλληλα δοκοῦσιν ὑφ' ἑαυτὰ ἀνάγεσθαι, ὅπερ ἀδύνατον· 158,12—13.

*ասեմք ընդ միմեամբք՝ կարծիս տայ յինքեանս վերաբերիլ, այսինքն՝ զվերնագոյնն ընդ ներքնագունիւքն զոլ, որ է անկար. քանզի ոչ երբեք կենդանին ընդ բանականաւն է՝ որպէս բանականն ընդ կենդանեաւն:*

## *ԸՆԴ ԱՅՍՈՍԻԿ ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՎ ՆԻ ԱՌԱՋԻԿԱ ՊՐԱԿՔՍ. ՊՐԱԿՔՍ ԻԴ*

„Յայնցանէ՝ *որք եւ ոչ ըստ միում՛ շարամանութեան ասացեալ*".

*Բաժանեալ Արիստոտէլի զասացեալսն յայնս, որք ըստ շարամանութեան են, եւ զգոյսն յայնս, որք ոչ ըստ շարամանութեան են, եւ զգոյսն՝ որ յընդհանուր գոյացութիւն եւ ի մասնական գոյացութիւն ** աստանաւր բաժանէ զայնս, որք ոչ ըստ շարամանութեան են՝ ի տասն ստորոգութիւնս:*

*Եւ տարակուսեն ոմանք ասելով, եթէ ընդէ՞ր անդուստ իսկ ի վերուստ ոչ եւ ընդ ամենայն բաժանմունսն, յորժամ՛ բաժանէր զասիցեալսն: Եւ ասեմք, եթէ կարեւորապէս արար՝ որ ի վերոյ պահեաց զայս բաժանումն, որպէս զի յանգեսցի առաջին հատածն ի սոսկ թիւ ստորոգութեանցն եւ սկիզբն արասցէ երկրորդին նոյն ինքն ստոյգ վարդապետութեան. քանզի որպէս ճարտարք ի կենդանագրաւղացն՝ յառաջ քան զկատարեալ կերպարանն՝ որ ի ձեռն գունոցն եղանի՝ նուաղ ինչ մտածութիւնս տան ի ձեռն գծագրութեանն, այսինքն՝ սպիտակագրութեանն՝ այսպէս եւ Արիստոտէլ, բանիւն կենդանագրելով զիրողութիւնս՝ նուաղ երեւումն մեզ տայ ստորոգութեանցդ. քանզի թանձրամասն վարդապետութիւն նոցա սոսկ յարացուցիւք միայն յառաջաբերի, իսկ մանրապատումն եւ զյատուկսն իւրաքանչիւրոյ ստորոգութեան ասէ եւ զբաժանումն, զի եւ զայնսն իմասցուք, որ ի ձեռն յատկացն գոյանան ստորոգութեանց, եւ զայնսն՝ յորոց*

---

1 A. *վերայբերիլ*. 7 A. *Հացանէ փխ. յայնցանէ*. 10—11 A. *եւ զգոյսն — գոյացութիւն*] El. καὶ τὰ ὄντα εἰς καθόλου οὐσίαν καὶ μερικὴν οὐσίαν, καθόλου συμβεβηκὸς καὶ μερικὸν συμβεβηκός 158,18—19. 14—16 A. *յորժամ՛ — բաժանումն*] El. ὅτε διήρει τὰ λεγόμενα καὶ τὰ ὄντα. καὶ λέγομεν ὅτι ἀναγκαίως τελευταίαν ἐφύλαξε τὴν διαίρεσιν ταύτην 158,21—22. 20—21 A. *նուաղ — սպիտակագրութեանն*] El. ἀμυδρὰν ἔννοιαν παρέχονται τοῦ γραφησομένου διὰ τῆς σκιαγραφίας ἢ λευκογραφίας 158,25—26.

*նոքա դարձեալ փոյթանան ի ձեռն բաժանմանն: Այլ Արիստոտէլ ի ձեռն տասն յարացուցից առնէ զթիւ տասն ստորոգութեանցս. Իսկ քե՛ր մեք ի վերայ միոյ եւ նոյն յարացուցի արասցուք զվարդապետութիւն՝ ի վերայ Սոկրատայ. քանզի Սոկրատէս եւ գոյացութիւն է, որպէս մարդ եւ քանակ՝ որպէս երկուկանգնեան կամ երեքկանգնեան, եւ որակ՝ որպէս սպիտակ եւ երաժըշտական, եւ առ ինչ՝ որպէս հայր կամ որդի, եւ առնէ՝ որպէս կտրելով, եւ կրէ՝ որպէս կտրիլ, եւ կայ՝ որպէս նստեալ կամ յոտն կացեալ, եւ ունի՝ որպէս զգեցեալ եւ զինեալ, եւ ուր՝ որպէս ի Լիկիայ, եւ երբ՝ որպէս ի Պեղղէպոնիսական ժամանակին. Իսկ Արիստոտել սակ արարեալ ստորոգութեանցս, եթէ տասն են, եւ ոչ ասացեալ զպատճառն, եթէ վասն է՛ր տասն են՝ քե՛ր այսուհետեւ եւ զպատճառսն եւս առաջրեսցուք, եթէ վասն է՛ր տասն են: Զոր եւ ցուցանեմք այսպէս ի բաժանմանէ. էակն կամ՝ ներնթակայում՝ է կամ՝ ոչ ներնթակայում: Եւ եթէ ոչ ներնթակայում՝ առնէ զգոյացութիւն, իսկ եթէ ներնթակայում՝ կամ ըստ ինքեան է կամ ոչ ըստ ինքեան: Եւ եթէ ըստ ինքեան է՝ կամ բաժանելի է կամ անբաժանելի: Եւ եթէ բաժանելի է՝ առնէ զքանակն, իսկ եթէ անբաժանելի է՝ առնէ զորակն. քանզի թէպէտ եւ կարծի բաժանելի գոլ որակն, այլ սակայն վասն նիւթոյն է բաժանելի: Իսկ եթէ ոչ ըստ ինքեան՝ կամ կայուածս միայն է եւ առնէ զառինչսն, եւ կամ ըստ կալման այլոց իմանի՝ եւ լինին վեց ստորոգութիւնքն. քանզի չորից եւս պարզ ստորոգութեանց՝ գոյացութեան, քանակի, որակի, առինչի՝ ի շարամանութենէ սոցա այլ ստորոգութիւնքն ծնանին. յէութենէ եւ ի քանակէ՝ ուրն եւ երբն, յէութենէ եւ յորակութենէ՝ առնելն եւ կրելն, յէութենէ եւ յառինչէ՝ ունելն եւ կալն: Վասն որոյ եւ տարակուսեն, եթէ*

---

2 A. *ի ձեռն տասն յարացուցից*] El. ἐπὶ παραδειγμάτων 158,32. 2 A. *առնէ առնէ*. 8—9 A. *եւ կայ — եւ զինեալ*] El. καὶ κεῖται ὡς καθήμενος ἢ ἑστὼς ἢ ἀνακεκλιμένος (ἢ γὰρ πάντα ὄρθιά ἐστι τὰ μέλη καὶ λέγεται ἑστάναι ἢ πάντα ὕπτια καὶ λέγεται ἀνακεκλίσθαι ἢ τὰ μὲν ὄρθια τὰ δὲ ὕπτια καὶ λέγεται καθῆσθαι), καὶ ἔχει ὡς ὑποδεδεμένος ἢ ἠμφιεσμένος ἢ ἔχων δακτύλιον 159,2—5. 10 A *ի Լիկիայ*] El. ἐν Λυκείῳ διδάσκων 159,5. 11 A. *իսկ — ստորոգութեանցս*] El. τοῦ δὲ Ἀριστοτέλους ψιλὴν ἀπαρίθμησιν ποιησαμένου τῶν κατηγοριῶν 159,7. 22—23 A. *եւ լինին վեց ստորոգութիւնքն*] El. καὶ ποιεῖ τὰς λοιπὰς ἓξ κατηγορίας 159,15—16. 24 A. [illegible] *եւ շարամանութենէ* փխ. *ի շարամանութենէ*.

*զիարդ ասէք՝ եթէ պարզք են տասն ստորոգութիւնքդ. որովհետեւ չորք միայն են պարզքն, իսկ վեցն շարադրեալք: Եւ ասեմք. եթէ շարադրեալս զնոսա կոչեմք. քանզի երեւմունս ոմանս շարադրութեան ներածեն մեզ. այլ ինքեանք պարզ են. քանզի ոչ եթէ ստորոգութիւն է, որ ի տեղւոջն է, եւ ոչ ստորոգութիւն է այն, որ ի ժամանակումն՝ այլ գոլն ի տեղւոջ ստորոգութիւն է եւ գոլն ի ժամանակում. վասն այսորիկ եւ անորիշ անուամբք անուանեաց զոմանս ի նոցանէ, որպէս զի մի ի քարշելն յինքեանս դէմս ինչ շարադրութիւն ի ներքս ածիցէ. որպէս առնելն եւ կրելն եւ կալն եւ ունելն* անորիշք են* ժ ստորոգութիւնքն կարող գոն եւ դասումն ինչ ընդունել. քանզի նախագոյն է գոյացութիւն ամենեցուն, որպէս ենթակացեալ ամենեցուն. երկրորդ՝ քանակն, վասն զի անտեսակ նիւթն նախ քանականայ եւ ապա որականայ. երրորդ՝ որակն եւ յառաջագոյն քան զառինչն, վասն զի ըստ ընքեանն յառաջագոյն է այնմ՝ որ ըստ կալման է: Արդ՝ այսոցիկ այսպէս եղեց՝ ապա եւ այնք յառաջագոյնք են, որք ի գոյացութենէ եւ ի քանակէ բաղկացեալք են ստորոգութիւնք, քան զայնս՝ որք ի գոյացութենէ եւ յորակութենէ. եւ դարձեալ՝ որք ի գոյացութենէ եւ յորակէ՝ յառաջագոյնք են քան զայնս, որ ի գոյացութենէ եւ յառընչէ: Արդ՝ այսոքիկ յաղագս այսոցիկ:*

*Յե՛ր այսունհետեւ յետ բաժանման ստորոգութեանցն բազմութեան եւ եթէ տասն են՝ ոչ աւելի եւ ոչ նուազ՝ տարակուսութիւնս ոմանս ընդդէմ ստորոգութեանցս տարակուսելով՝ լուծցուք: Արդ՝ տարակուսեն ոմանք նուազութիւն *** ասի ձայնիցն՝ վասն ասելոյն իսկագոյն, եւ իմացուածոցն՝ վասն*

---

8 A. *անուանեաց զոմանս ի նոցանէ]* El. ὠνόμασεν αὐτὰ ὁ Ἀριστοτέλης 159,25. 9 A. *ուղղ. շարադրութե*. 10 A. *անորիշք են]* El. ἅπερ ἀπαρέμφατά εἰσιν 159,27. 10—12 A. *ժ ստորոգութիւնքն—ենթակացեալ ամենեցուն]* El. ἐπειδὴ δὲ μὴ γένος τὸ ὂν τῶν δέκα κατηγοριῶν, δύνανται καὶ τάξιν ὑποδέχεσθαι· προτέρα ἡ οὐσία ὡς ὑποκείμενον πᾶσι 159,27—29. 17—18 A. *բաղկացեալք են ստորոգութիւնք]* El. *չիք*. 22—25 A. *Յեր—նուազութիւն]* El. Ἐφ' οἷς μετὰ τὴν διαίρεσιν τῶν κατηγοριῶν καὶ τὸ πλῆθος ὅτι δέκα καὶ οὔτε πλείους οὔτε ἐλάττους, ὡς ἐδείξαμεν, φέρε τὰς εἰωθυίας ἀπορίας φέρεσθαι κατὰ τῶν κατηγοριῶν ἀπορήσαντες εἴπωμεν τὰς λύσεις αὐτῶν. ἀποροῦσι τοίνυν οἱ μειονεξίαν 159,34—160,2. 25 El. 160,2 αὐτῶν—166,6 οὐσίαν] A. *չիք*. 26—4 A. *ասի ձայնիցն—որ ոչն է]* El. Ἐπαινέσας ὁ Ἀριστοτέλης πανταχόθεν τὴν ἀτο-

*ասելոյն նախկին, իսկ իրողութեանցն՝ վասն ասելոյն մանաւանդ եւ վասն զի սգացաւ վասն իւր ոչ արժանի գովութեանն ենթագրեալ (քանզի ըստ ճշմարտութեանն ոչ որ ինչ էն ասէ, այլ որ ոչն է), եւ եթէ պատկանի այնպիսի ենթագրութիւն ոչ ուրեք եւ ոչ երբեքումն՝ վերացուցանէ զնա ի ձեռն ենթագրութեան, որ լուռ կալով՝ այսպէս ասէ՝ եթէ ոչ է պարտ կալ մնալ անդէն ի բացասութեանն. այլ պարտ է կալ եւ ի հակակայսն՝ վասն զի ըստ ճշմարտութեանն բացասութիւնք ոչ եթէ զոր ինչ էն ասեն, այլ որ ինչ ոչն է. եւ վասն այսորիկ ոչ ասեմ զնա զենթակայէ ումեքէ, վասն զի ենթակայանայ այնոցիկ, որք զենթակայէն ասին. եւ վասն այսորիկ ոչ ասեմ զնա նենթակայում, վասն զի ենթակայանայ այնոցիկ, որք նենթակայոցքն են, որպէս զի ի ձեռն այսոցիկ պարզեսցէ ամենեցուն զպէտսն անհատ գոյացութիւնն. քանզի եռակի ելոյ ամենայնին՝ կամ առաջին գոյացութեանցն կամ երկրորդին կամ պատահմանցն՝ առ անհատ գոյացութեամբքն գոն պատահմունք եւ երկրորդ գոյացութիւնք, այլ պատահմանցն պէտս տայ առ ի գոլ, եւ երկրորդ գոյացութեանցն՝ առ ի ստորոգիլ: Արդ՝ եթէ ամենեցուն պէտս տայ, որք առ նովաւն են՝ զիարդ ոչ է առաջին եւ իսկագոյն եւ մանաւանդ գոյացութիւն: Եւ զի ամենեցուն պէտս տայ, որք առ նովաւն են՝ արհեստաբար նիւթէ ինքն եւ ցուցանէ, եթէ տեսակական գոյացութիւնն պէտս ունի անհատ գոյացութեանն առ ի ստորոգութիւն, որգոն՝ մարդ (քանզի այս երեւելի է ամենեցուն, եթէ բազում անգամ զտիրական անունն յառասական փոխարկեմք եւ փոխանակ ասելոյ. եթէ „կոչեա զՍոկրատէս“՝ ասեմք, եթէ „կոչեա առ իս զայրն զայն“, եւ ցուցանեմք զնա. եւ զի կենդանին պէտս ունի անհատ գոյացութեանցն՝ այսպէս յարդարէ՝ ոչ է կենդանի. որ ոչ է մարդ կամ*

μον οὐσίαν, ἀπὸ τῶν φωνῶν διὰ τοῦ κυριώτατα. ἀπὸ τῶν νοημάτων διὰ τοῦ πρώτως, ἀπὸ τῶν πραγμάτων διὰ τοῦ μάλιστα, ἐπειδὴ ᾔσθετο ἑαυτοῦ μὴ ἀξίως τῆς εὐφημίας ὑπογράψαντος (τῷ γὰρ ὄντι οὐ τί ἔστιν εἶπεν, ἀλλὰ τί οὐκ ἔστι) 166,6—9.
5—6 A. *ի ձեռն — ասէ]* El. διὰ τῆς ὑπογραφῆς δυνάμει ταῦτα λέγων 166,10—11.
8 A. *ըստ ճշմարտութեանն]* El. *չիք*. 11—13 A. *եւ վասն այսորիկ — մինչեւ նենթակայոցքն են]* El. *չիք*. 13 A. *ամենեցուն]* El. πᾶσι τοῖς παρ' ἑαυτήν 166,15.
19—20 A. *զիարդ — գոյացութիւն]* El. πῶς οὐ δικαίως κυριώτατα καὶ πρώτως καὶ μάλιστά ἐστιν οὐσία; 166,19—20. 25. 26 A. *կոչեայ*.

*ձի կամ եզն, եւ ոչ է մարդ, որ ոչ է Սոկրատէս կամ Պղատոն կամ ով ոք եւ իցէ՝ ապա ուրեմն՝ ոչ է կենդանի, որ ոչ է Սոկրատէս կամ Պղատոն: Նմանապէս եւ ի վերայ պատահմանցն ոչ ցուցանէ, եթէ այս ինչ սպիտակ պէտս ունի անհատ գոյացութեան, այլ եթէ գոյնն, այսպէս ասելով. ոչ է գոյն, որ ոչ է ի մարմնի, եւ ոչ է մարմին, որ ոչ է մարդ կամ ձի կամ այլ ինչ՝ ապա ուրեմն՝ ոչ է գոյն, որ ոչ է յայս կամ յայնմ մարմնում: Արդ՝ այսպէս Արիստոտելի ցուցեալ, եթէ ամենեցուն առ նովաւցն տայ պէտսն անհատ գոյացութիւնն եւ թէ ոչ ելոյ սորա ոչինչ յայլոցն ստորակայանայ. իսկ Աղէկսանդրոս Ափրոդիսեցի եւս առաւել յարաձգելով նորաձեւումն յիմաստասիրութիւն փորձի նիւթել, եթէ եւ բնութեամբ առաջին է անհատ գոյացութիւնն ամենեցուն. եւ զի շարաբառնայ՝ եցոյց ինքն իսկ Արիստոտէլ, եւ զի ոչ շարաբառնի՝ ինքն իսկ փորձի ցուցանել. քանզի ահա, ասէ, ընդհանուր արեգակն ի բաց բարձեալ՝ զոմն արեգակն ոչ եբարձ: Առ որ ասեմք, եթէ հանուրն երկակի ասի՝ մինն ըստ կալման, որպէս՝ ամենայն մարդ (քանզի ամենայնն միշտ ըստ կալման), իսկ միւսն՝ միայնին ըստ ինքեան բնութեան ասացեալ, որպէս՝ մարդ այսպէս սոսկ ասացեալ: Արդ՝ բոլորն այն ընդհանուր՝ ոչ որ ընդ կալմանն է, այլ միւսն եւս՝ տարեալ եղեւ ի մի արեգակնումն. քանզի կարող եղեւ արեգակն զամենայն յատկութիւնս հանուր արեգական ընդունել, որ է ի վերայ միոյ մարդոյ անհնարին. քանզի ոչ ոք ի մարդկանէ կարող գոյ զամենայն յատկութիւնս հանուր մարդոյ ընդունել՝ վասն լինելոյ զոմն քերդող եւ զոմն բրուտ, վասն զի եւ կտրածն մարդոյ զըստ մասին մարդիկ ասաց Պղատոն: Եւ այսոքիկ այսպէս:*

*Բայց տարակուսէ Սւրիանոս այսպէս. եթէ ասեմ զհանուր պատահումն յանհատ գոյացութեանն ըստորակացեալ՝ եղիցի*

---

1—3 A. *եւ ոչ է—Պղատոն]* El. οὐκ ἔστιν ἄνθρωπος ὃς οὐκ ἔστι Σωκράτης ἢ Πλάτων ἢ Ἀλκιβιάδης, οὐκ ἔστιν ἄρα ζῷον ὃ οὐκ ἔστιν ἐν Σωκράτει ἢ Πλάτωνι ἢ Ἀλκιβιάδῃ 166,27—29. 6—7 A. *եւ ոչ է մարմին—մարմնում]* El. οὐκ ἔστι δὲ σῶμα ὃ μή ἐστι λευκὸν ἢ μέλαν ἢ πυρρόν, οὐκ ἔστιν ἄρα χρῶμα ὃ μή ἐστιν ἐν τῷδε τῷ σώματι ἢ ἐν τῷδε 166,31—33. 9 A. *տալ փխ. տայ.* 14 A. *ինքն—ցուցանել]* El. παραδεικνύει αὐτὸς οὕτως 167,1. 21 A. *ուղղ. ի արեգակն զամենայն.* 24—25 A. *վասն լինելոյ—բրուտ]* El. διὰ τὸ ἄλλον μὲν εἶναι γραμματικὸν ἄλλον δὲ ἰατρόν 167,3.

*եւ մասնական պատահումն յընդհանուր գոյացութիւն: Առ որ ասեմք, եթէ զընդհանուր պատահումին ասեմք յանհատ գոյացութեանն գոլ. ոչ եթէ ըստ ճշմարտութեան ի նոյն իսկ յանհատ գոյացութեան ունի զգոլն, այլ զի նախաքար ամենայն պատահումն յանհատ գոյացութիւնս ունի զգոլն. Թէպէտ եւ անմարմին եւ ուրեք գոյ անհատ գոյացութիւնն՝ նախաքար ի նմա գոյանան պատահմունքն, որպէս եւ յանձնում է տեսանել (քանզի յանձնում ումեք է տեսանել առաքինութիւն կամ չարութիւն՝ քանզի փոփոխի ըստ այսոցիկ), իսկ ըստ երկրորդ քանի եւ յընդհանուր գոյացութիւնսն ասին գոլ, Թէպէտ եւ մտածութեամբ միայն: Իսկ առ երկրորդն ասեմք՝ զի Թէպէտ եւ է մասնական պատահումն յընդհանուր գոյացութեանն՝ ոչ եթէ ըստ ճշմարտութեան ինչ է (Թէպէտ եւ մարմին ասասցես զընթանուրն, սակայն եւ այնպէս անմարմին է), այլ եթէ քանս ունի ընդհանուր գոյացութիւնն, այսինքն՝ հանուր մարմինն՝ նախանձական պատահմանց:*

*„Իսկ նենթակայումն էակացն մակաւելեացն եւ ոչ անունն եւ ոչ քանն ստորոգի զենթակայէն".*

*Ստորոգիցելոցն՝ է ինչ որ ըստ քնութեան է եւ է որ առանց քնութեան. եւ առանց քնութեան ասեմք գոլ, յորժամ գոյացութիւն պատահման ստորոգի՝ յորժամ ասեմք, եթէ սպիտակն որ գոյն մարդ է եւ կամ դարձեալ՝ յորժամ անհատ գոյացութիւն հանուր գոյացութեան ստորոգի, որգոն՝ որ զայ մարդդ Սոկրատէս է, եւ կամ յորժամ տեսակք սեռից ստորոգին՝ որպէս յորժամ ասեմք, եթէ որ զայ կենդանիդ մարդ է. իսկ ըստ քնութեան են այսոքիկ, յորժամ հանուր գոյացութիւն անհատ գոյացութեան ստորոգի՝ որպէս մարդ Սոկրատում, կամ պա-*

3—4 A. *ի նոյն իսկ—զգոլն]* El. ἐν αὐτῇ [τῇ καθόλου οὐσίᾳ] τὴν ὕπαρξιν ἔχει 167,15—16. 4 A. *լուս. ընթանուր պատահումն.* 5—6 A. *Թէպէտ—գոյ]* El. κἂν εἰ ἀσώματος τύχῃ οὖσα 167,17. 6 A. *ուղղ. անուրեք.* 7 A. *ուրպէս.* 7 A. *է տեսանել]* El. *չիք.* 10 A. *գոյացութիւնսն]* El. *չիք.* 15—16 A. *նախանձականս պատահմանց]* El. προαγωγοὺς τῶν συμβεβηκότων 167,24—25. 19—5 A. *Ստորոգիցելոցն—տեսակում]* El. *չիք.*

*տահումն գոյացութեան՝ որպէս սպիտակ մարդում: Իսկ եթէ ոք ասիցէ, եթէ եւ ստորոգիլն պատահմանց պատահումն ըստ ընութեան է, որպէս գոյն սպիտակում՝ ասեմք եթէ այսոքիկ ոչ որպէս պատահմունք պատահմանց ստորոգին, այլ որպէս սեռ տեսակում:*

*Եւ պարտ է գիտել, եթէ ի վերայ ումանց պատահմանց ումանք համանունաբար ստորոգին գոյացութեան, փաղանունաբար եւ ոչ երբեք, որգոն՝ սպիտակն ստորոգի մարմնում (քանզի սպիտակ մարմին ասեմք, իսկ քան սպիտակին ոչ ստորոգի մարմնում), քանզի ոչ կարէ զսահման սպիտակին ընդունել մարմին. քանզի ոչոք ասէ՝ մարմին է սպիտակգոյն արտաղատող աչաց. իսկ մարդ ոչ համանունաբար եւ ոչ փաղանունաբար ստորոգի, որպէս գոյն. քանզի ոչոք ասէ, եթէ մարդ գոյն, այլ եւ ոչ զսահման գունոյ ընդունի. քանզի ոչոք՝ կարասի գոյն եւ կամ եթէ կարասի գոյն է յատուկ զգալի աչաց:*

## ԸՆԴ ԱՅՍՈՄԻԿ ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՎ ԱՌԱՋԻԿԱՅ ՊՐԱԿՔՍ ԻԴ

*„Իսկ երկրորդ գոյացութեանցն յաւէտ գոյացութիւն"...*

*Եւ եւս վասն այսորիկ նախադրէ զանհատ գոյացութիւնն Արիստոտէլ՝ քանզի յերկրորդ գոյացութիւնս յաւէտ գոյացութիւն տեսականն քան զսեռականն, որպէս յաւէտ հուպ գոլով յանհատ գոյացութիւնն, որ մանաւանդ գոյացութիւն ցուցաւ. քանզի որպէս հպագոյնքն ի հուր առաւել ջեռնուն եւ հպագոյնքն ի միակն առաւել միականք են՝ նոյնպէս եւ տեսական գոյացութիւնն հպագոյն գոլով յանհատն՝ մանաւանդ է. քանզի ամենայն որ ունի յայնմանէ հպագունիցն մանաւանդ բաշխէ: Եւ զի*

---

8 A. *որգոն — մարմնում]* El. οἷον τὸ λευκὸν κατηγορεῖται τοῦ σώματος ὁμωνύμως, οὐ συνωνύμως 167,29—30. 8—10 A. *քանզի սպիտակ — մարմնում]* El. *չիք*. 12 A. *իսկ մարդ]* El. τινὰ δὲ 167,32. 13 A. *որպէս գոյն]* El. ὡς ἐπὶ τοῦ χρώματος 167,32. 14 A. *քանզի ոչոք կարասի գոյն]* El. οὐδὲ γὰρ λέγει τὸν κύκνον χρῶμα 168,1. 19 A. *նախադրէ*. 21 A. *ուղղ. զսեռականն է*. 25 A. *յանհատն մանաւանդ է]* El. τῇ ἀτόμῳ οὐσίᾳ μᾶλλον οὐσία ἐστι 168,10.

*յաւէտ գոյացութիւն տեսակականն քան զսեռականն է՝ երկակի նիւթէ՝ ի հպաւորութենէ եւ ի վերաբանութենէ (այսինքն՝ ի համեմատութենէ). * այսպէս՝ եթէ ընտանեգոյն է եւ մաւտաւորագոյն զՍոկրատէս մարդ ասել, քան եթէ կենդանի: Իսկ ի վերաբանութենէ այսպէս՝ զի եթէ զանհատ գոյացութիւնն ոչ այլ ինչ կերպարանէր եւ առնէր յաւէտ գոյացութիւն, եթէ ոչ ենթակայանալն ամենեցուն՝ որ շուրջ զնովաւ. արդ՝ այս ենթակայանալս տեսակացն առ սեռոյն գոյ, իսկ սեռիցն առ տեսակս ոչ երբեք (քանզի ոչ երբեք ենթակայանան սեռք տեսակաց). վասն զի առաւել գոյացութիւն տեսակականն քան զսեռականն՝ որպէս ենթակայացեալ նմա: Բայց ասի ի վերաբանութենէ, զի կարող գոյ վերաբանութեամբ հիւսիլ այսպէս. եթէ զոր քան ունի անհատ գոյացութիւն առ ամենայնս, որք առ նովաւ են ենթակացեալ նոցա, վասն զի առաւել գոյացութիւն ասիցեալ՝ զնոյն քան ունի տեսակականն առ սեռականն. քանզի ենթակացեալ է նմա, վասն զի առաւել գոյացութիւն է: Եւ այսոքիկ այսպէս:*

*Աստուստ տարակուսեն ոմանք՝ ասելով, եթէ զիա՞րդ ասես դու յաւէտ գոյացութիւն եւ նուազ գոյացութիւն, տակաւին ոչ եւս ասացեալ զյատկութիւնս գոյացութեան: Այլ հանդերձեալ ասել զոչ ընդունիլն զյաւէտն եւ զնուազն, եւ չընդունի. քանզի գոյացութիւն գոյացութեան բաղդատեալ, որգոն՝ սեռականն առ տեսականն՝ ընդունիլ զյաւէտն եւ զնուազն. իսկ ինքն առ ինքեան յարարկեալ, ոչ ձգտի եւ ոչ ամփոփի. քանզի ոչ ոք ասէ յաւէտ մարդ եւ յաւէտ Սոկրատէս:*

*Դարձեալ այլ տարակուսութիւն, զի՞, ասէ, որպէս զանհատ*

---

2 A. *ի վերաբնութեն է.* 2—3 A. *այսինքն ի համեմատութենէ]* El. *չկք.* 3 A. *այսպէս]* El. καὶ ἀπὸ μὲν τῆς ἐγγύτητος οὕτως 168,12—13. 5 A. *ի վերայբանութենէ.* 16 A. *վասն զի]* El. καὶ διὰ τοῦτο 168,22. 18—22 A. *եթէ զիարդ—բաղդատեալ]* El. ὅτι πῶς λέγει μᾶλλον οὐσίαν καὶ ἧττον οὐσίαν αὐτός, ὡς ὂν οὕτω ἓν ἴδιον καὶ τοῦτο, μέλλων καταλέγειν τὰ ἴδια τῆς οὐσίας καὶ ἓν ἴδιον καὶ τοῦτο λέγειν τὸ μὴ ἐπιδέχεσθαι τὸ μᾶλλον καὶ ἧττον. καὶ λέγομεν ὅτι καὶ ἐπιδέχεται τὸ μᾶλλον καὶ ἧττον καὶ οὐχ ἐπιδέχεται· οὐσία μὲν γὰρ ουσίᾳ παραβαλλομένη 168,24—28. 25 A. *յաւէտ մարդ եւ յաւէտ Սոկրատէս]* El. μᾶλλον ἄνθρωπον Πλάτωνα καὶ ἧττον ἄνθρωπον Σωκράτην 168,30—31. 26—2 *Դարձեալ—երկրորդ]* El. Διὰ τί, φασίν, ὥσπερ τὴν ἄτομον οὐσίαν πρώτην ἐκάλεσεν οὐσίαν δι' ἃς εἴπομεν αἰτίας, μὴ καὶ τὴν

*գոյացութիւնն առաջին գոյացութիւն կոչեաց, վասն երկուց ասացաք պատճառաց, զի ոչ զտեսականականն երկրորդ եւ ոչ զսեռականն երրորդ կոչեաց, այլ միով անուամբ զերկոսին անուանեաց՝ զտեսականսն եւ զսեռականսն: Եւ ասեմք, եթէ վասն այնորիկ միում հանդիպան անուան, վասն զի զմի եւ զնոյն ալէտս տայ նոցա անհատ գոյացութիւն առ ստորոգութիւն:*

*„Ծանաւթագոյն եւ ընտանեգոյն բացատրեսցէ զտեսակն քան զսեռն բացատրելով“.*

*Զի՞ ասացեալ „ծանաւթագոյն“՝ առաղրեաց եւ „զընտանեգոյնն“: Եւ ասեմք, եթէ ծանաւթագոյնն միայն ոչ կարէ յայտ գոյացութիւն առնել զանհատն, վասն զի եւ պատահմունք բազում անգամ ծանաւթագոյնք են, քան զանհատ գոյացութիւն. որպէս՝ փոխանակ ասելոյն „կոչեա զՊաւիթ“՝ ասեմք „կոչեա զփիլիսոփոսն“: Վասն այնորիկ առաղրեաց զընտանեգոյնն. քանզի ծանաւթագոյնն ոչ ամենայն իրաւք յայտնէ զբնութիւն իրին, որպէս բազումք ի պատահմանցն, իսկ ընտանեգոյնք առաւել յայտնեն:*

*„Քանզի սա ուրոյն առաւել ուրումն մարդոյ“.*

*Զի՞արդ առաւել է ուրոյն ոչ ամենեւին ուրոյն: Եւ ասեմք, որպէս զնուազ ծանրն առաւել թեթեւ ասեմք՝ նոյնպէս եւ զնուազ հասարակն առաւել ուրոյն ասեմք. քանզի մարդ նուազ հասարակ է առ կենդանեաւն. քանզի սեռք տեսակացն ստորոգին, իսկ տեսակք զսեռիցն ոչ հակադարձին. պարտ է առաղրել՝ ըստ բնութեան ելոյ ստորոգութեանն. քանզի ստորոգութիւն եռակի է՝ կամ ըստ բնութեան կամ ոչ ըստ բնութեան կամ ըստ պատահման: Ըստ բնութեան՝ յորժամ սեռք տեսակաց ստորոգին, իսկ ոչ ըստ բնութեան՝ յորժամ տեսակք սեռից, որպէս յորժամ՝*

---

εἰδικὴν δευτέραν 168,32—33. 1 A. *առաջ. զառաջին.* 9 A. *բացատրելով պլասկք.* 13—15 A. *որպն — զփիլիսոփոսն]* El. οἷον ἀντὶ τοῦ εἰπεῖν 'κάλεσον τὸν Σωκράτην' λέγω 'κάλεσον τὸν φιλόσοφον' 169,7—8. 23 A. *է առ կենդանեաւն]* El. ὡς πρὸς τὸ ζῷον 169,15. 24 A. *պարտ է առաղրել]* El. *չիք.* 28—1 A. *որպէս յորժամ ասեմք]* El. ὡς ἵνα εἴπῃ τις 169,19.

*ասեմք, թէ որ գայ կենդանիս մարդ է (քանզի այսպէս ասելով կենդանումս ստորոգի մարդ), իսկ ըստ պատահման ստորոգութիւն է, որպէս յորժամ զնոյնս, որք ի նորին ենթակայում են պատահմունք՝ միմեանց ստորոգես. որգոն՝ Սոկրատայ ելոյ կընտի եւ իմաստասիրի՝ ասեմք, եթէ կունտս այս իմաստասէր է: Եւ դարձեալ ըստ պատահման ստորոգութիւն է, յորժամ գոյացութիւն պատահման ստորոգի. որգոն՝ յորժամ ասեմք, եթէ սպիտակս որ գայ՝ կենդանի է. քանզի այսպէս ասելով՝ զկենդանին գտանեմք ստորոգեալ սպիտակում, որ է պատահման:*

## ԸՆԴ ԱՅՍՈՍԻԿ ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՎ ԵՒ ՆՈՑԱ ՏԵՍԱԿԱՑՆ ՈՐ ՄԻԱՆ... ՊՐԱԿՔ ԻԵ

*Բաղդատեալ Արիստոտելի զգոյացութիւնս ըստ խորութեան, յորժամ զանհատն առ հանուրն բաղդատէր, ցուցեալ ** եթէ առաւել գոյացութիւն է տեսակականն քան զսեռականն՝ այժմ ըստ լայնութեան բաղդատէ զանհատսն եւ զհանուրսն, եւ ասէ, եթէ անհատ գոյացութիւնքն նմանաբար են գոյացութիւն, որպէս ամենեցուն զնովաւցն զմի եւ զնոյն պէտս վճարելով՝ որպէս է Դաւիթ եւ Արգոս շուն եւ Ծղիսարն պիսակ ձի: Իսկ եթէ անհատ գոյացութիւնքն նմանաբար գոյացութիւնք են՝ ապա եւ տեսակական գոյացութիւնքն նմանաբար գոյացութիւնք են, որպէս զհանգէտն բացակացեալք յանհանգիտից գոյացութեանցն: Արդ՝ այսպէս մեք: Իսկ Արիստոտէլ այլ կարգաւորութեան պիտանացեալ. քանզի նա նախ զտեսակականսն բաղդատէ եւ ապա զանհատսն: Եւ արժան է տարակուսել, եթէ ընդէ՞ր ոչ նախ զանհատս գոյացութիւն բաղդատեաց, զի որպէս*

---

1—2 Ա. *քանզի — մարդ]* El. εὑρίσκεται γὰρ κατηγορῶν τὸν ἄνθρωπον τοῦ ζώου 169,20—21. 7—9 Ա. *որգոն — պատահման]* El. οἷον ἵνα εἴπω ὅτι τὸ λευκὸν τὸ προσερχόμενον ζῷόν ἐστιν· εὑρίσκομαι γὰρ κατηγορῶν τοῦ συμβεβηκότος τὸ ζῷον 169,24—26. 13—15 Ա. *ցուցեալ — զհանուրսն]* El. δεικνὺς ὅτι μᾶλλον οὐσία, καὶ ὅτε τὴν καθόλου <πρὸς τὴν καθόλου> συνέκρινε, δεικνύων ὅτι μᾶλλον οὐσία ἡ εἰδικὴ τῆς γενικῆς, νῦν κατὰ πλάτος συγκρίνει αὐτάς, τάς τε ἀτόμους καὶ τὰς καθόλου 169,30—170,3. 18 Ա. *որպէս է — պիսակ ձի]* El. ὥσπερ Σωκράτης καὶ Ἄργος ὁ κύων καὶ Ξάνθος ὁ ἵππος 170,4—5. 18—22 Ա. *Իսկ — գոյացութեանցն]* El. εἰ δὲ αἱ ἄτομοι οὐσίαι, καὶ αἱ εἰδικαὶ οὐσίαι ὁμοίως οὐσίαι ὡς ἴσον ἀφεστηκυῖαι τῶν ἀτόμων οὐσιῶν 170,5—6.

*ստուերացուցումն յայտացիկ պէտս առեալ՝ այնպէս ապա բաղդատէր զտեսականն գոյացութիւնս: Եւ է լուծումն սորին, եթէ զայս որպէս զխոստովանեալ եւ զյայտնի ինչ եթող. քանզի յայտնի է եւ սովորաբար, եթէ նմանաբար գոյացութիւնք են անհատքն յենթագրութենէն, վասն զի գերադրականիւք ձայնիւք արտաբերեաց, ասելով՝ իսկագոյն եւ նախկին եւ մանաւանդ. քանզի ոչ է գերադրականին գերադրական: Իսկ եթէ այս այսպէս է՝ ապա ուրեմն՝ ոչ է յաւէտ անհատ գոյացութիւն քան զայլ անհատ գոյացութիւն, թէպէտ եւ աննմանատեսակք են: Դարձեալ տարակուսեն ասելով, եթէ մինչ նմանաբար գոյացութիւնք են անհատքն, եղիցի այս մրջիւն եւ արեգակն նմանաբար գոյացութիւնք: Առ որս ասեմք, եթէ ըստ դիտաւորութեան Ստորոգութեանցս նմանաբար գոյացութիւնք են. քանզի դիտաւորութիւն Ստորոգութեանցս է յաղագս իրողութեանց ոչ եթէ զիրողութեանց բուռն հարկանել եւ զբնութիւն նոցա քննել, այլ ըստ որում նշանակեն յայսպիսեաց եւ յայնպիսեաց ձայնից. քանզի յաղագս ձայնից միայն քննել քերթողաց է, իսկ յաղագս բնութեան գոյիցն՝ աստուածաբանութեան կամ բնաբանութեան: Եւ այսոքիկ այսպէս:*

*Իսկ Արիստոտէլ տարակուսէ յինքեան, եթէ „զիա՞րդ ի վերագոյնսն երկրորդ գոյացութիւնս ասաց զսեռս եւ զտեսակս անհատ գոյացութեան եւ ոչ պարզաբար՝ եթէ սեռքն եւ տեսակքն“: Եւ լուծանէ ասելով, եթէ զի մի պարառից զպատահմունսն. քանզի են եւ նոցա սեռք եւ տեսակք՝ որպէս գոյն եւ սպիտակ: Արդ՝ ցուցանէ աստանաւր, եթէ սեռք եւ տեսակք առաջնոց գոյացութեանցն գոյացութիւնք են, իսկ սեռք եւ տեսակք անհատից պատահմանցն ոչ են գոյացութիւնք: Եւ ցու-*

---

2—7 A. *եւ է — գերադրական*] El. καὶ λέγομεν ὅτι ὡς ὁμολογούμενον τοῦτο παρῆκεν· ἔγνωσται γὰρ τοῦτο συνήθως ὅτι ὁμοίως οὐσίαι ‹αἱ› ἄτομοι ἐκ τῆς ὑπογραφῆς, ὅτι ὑπερθετικαῖς φωναῖς ἐχρήσατο, τῷ κυριώτατα καὶ μάλιστα, τοῦ δὲ ὑπερθετικοῦ οὐκ ἔστιν ὑπερθετικώτερον. 170,10—13. 13—15 A. *քանզի — հարկանել*] El. σκοπὸς γὰρ ταῖς Κατηγορίαις οὐ περὶ πραγμάτων ἢ πράγματα διαλαβεῖν 170,16—17. 18 A. *աստուածաբանութեան կամ*] El. *չիք*. 21 A. *ասաց*] El. εἶπον 170,22. 23—25 A. *եւ լուծանէ — սպիտակ*] El. καὶ φησιν, ἵνα μὴ τὰ συμβεβηκότα περιλάβωμεν· ἔστι γὰρ καὶ ἐν αὐτοῖς γένη καὶ εἴδη, ὡς τὸ χρῶμα καὶ τὸ λευκόν 170,23—24.

*ցանէ այսպէս ասելով՝ սեռք եւ տեսակք անհատից գոյացութեանց գոյացութիւն բաղալնուն, եւ որք գոյացութիւն բաղալնուն՝ գոյացութիւնք են. իսկ սեռք եւ տեսակք անհատից պատահմանցն ոչ բաղալնուն գոյացութիւն. իսկ որ գոյացութիւն ոչ բաղալնուն՝ ոչ են գոյացութիւնք. ապա ուրեմն՝ սեռք եւ տեսակք անհատից պատահմանցն ոչ են գոյացութիւնք: Եւ այլազգ՝ սեռք եւ տեսակք առաջնոց գոյացութեանցն ենթակայանան հանուր պատահմանց. իսկ որ ընդհանուր պատահմամբք ստորակայանան՝ գոյացութիւնք են. ապա ուրեմն՝ սեռք եւ տեսակք առաջնոց գոյացութեանցն գոյացութիւնք են: Եւ վասն անդրադարձութեան կանոնիս՝ վասն զի սեռք եւ տեսակք անհատից պատահմանց ոչ ենթակայանան հանուր պատահմանցն՝ * ոչ են գոյացութիւնք. ապա ուրեմն՝ սեռք եւ տեսակք անհատից պատահմանցն ոչ են գոյացութիւնք:*

*„Եւ նոցա տեսակացն որք միանգամ ոչ են սեռք".*

*Բարիոք ասաց „որք միանգամ ոչ են սեռք", զի մի զընդմիմեամբքն ոք առցէ. քանզի եթէ զընդմիմեամբքն ոք առնու, ոչ երբեք տեսակ տեսակում բաղդատի, այլ տեսակ սեռում, որ ոչ է մեր այժմ առ ի խնդրել:*

## *ԸՆԴ ԱՅՍՈՍԻԿ ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՎ ԵՒ ԱՌԱՋԻԿԱ ԳՐԱԿՔՍ ԻՋ*

*„Եւ հասարակ զամենայն"...*

*Ցուցեալ Արիստոտելի զայնս՝ որոց գոյացութիւն զհետ երթայ ի ծեռն բաժանման, յորժամ զառաջինն առ հանուրն բաղդատէր, ասելով զնա յաւէտ գոյացութիւն, եւ յորժամ զհանուրն առ հանուրն բաղդատէր, ասելով զտեսակականն քան զսեռականն յաւէտ գոյացութիւն. եւ դարձեալ ըստ լայնութեան բաղ-*

---

1—4 A. *սեռք — պատահմանցն]* El. τὰ γένη καὶ τὰ εἴδη τῶν ἀτόμων οὐσιῶν οὐσίαν συμπληροῦσι, τὰ δὲ οὐσίαν συμπληροῦντα οὐσίαι εἰσί, τὰ γένη ἄρα καὶ τὰ εἴδη τῶν πρώτων οὐσιῶν οὐσίαι εἰσί. διὰ δὲ τὸ ἀνάπαλιν τοῦ κανόνος· ἐπειδὴ τὰ γένη καὶ τὰ εἴδη τῶν ἀτόμων συμβεβηκότων 170,27–30. 13 A. *ոչ են գոյացութիւնք]* El. τὰ τοῖς καθόλου συμβεβηκόσι μὴ ὑποκείμενα οὐσίαι οὐκ εἰσι 171,1 15. 16 A. *որք — սեռք]* El. ὅσα μὴ ἐστι γένη 171,4. 16 A. *որքան փխ. որք.*

դատեալ՝ զանճառն ասէր, եթէ նմանաբար գոյացութիւնք են՝ այժմ ցուցանէ եւ զայնս, որք գոյացութեան հետեւին, եւ ասէ զուրոյնն գոյացութեան: Եւ որում՝ պարտ էր սահման ասել ի վերայ գոյացութեանն՝ ոչ առնէ զայն. վասն զի սեռ սեռականագոյն է գոյացութիւն, իսկ սեռականագունումն ոչ է սեռ եւ ոչ բաղկացուցիչ տարբերութիւնք, յորոց ամենայն սահման առնու: Իսկ յորոց վերայ ոչ կարեմք սահման բացատրել՝ սիրեմք զայ նա ի ձեռն յատկացն բացատրել զնոսին: Արդ՝ վասն այսորիկ եւ Արիստոտէլ ոչ կարացեալ ասել զսահման գոյացութեան՝ զյատուկսն ասէ գոյացութեան. քանզի ունին ինչ նմանութիւն սահման եւ յատուկն առ միմեանս. զհակադարձիլն երկաքանչիւրումն եւ զմիայնում եւ զամենայնում եւ զմիշտն գոլ: Արդ՝ թուէ զուրոյնս գոյացութեան եւ ասէ, եթէ „հասարակ զամենայն գոյացութեան ոչ գոլ ենթակայում": Վասն որոյ եւ տարակուսեն ոմանք ասելով, եթէ վասն է՞ր զյատուկն առաջադրելով առ ի յասել՝ զհասարակ յիշեաց: Եւ ասեն ոմանք առ այս, եթէ ոչինչ անտեղի է զնոյն եւ հասարակ գոլ եւ յատուկ՝ որպէս ծիծաղականն. քանզի առ համատեսակն հասարակ է, իսկ առ աննմանատեսակն յատուկ: Այլ եթէ նոյն եւ հասարակ եւ յատուկ կարող գոյ լինիլ՝ ընդէ՞ր ոչ ասէ յատուկ զորս անուանեաց ընտանեգոյն անուամբ: Զորոյ զպատճառն ասեմք՝ ըստ իւրաքանչիւր յատկի յիւրաքանչիւր ստորոգութեան երկուս ինչս որոնէ իմաստասէրս, եթէ ամենայն գոյացութեան գոյ եւ եթէ ոչ ամենայնում եւ եթէ միայնում կամ ոչ միայնում: Եւ եթէ գտանէ ամենայնում գոյացութեան բայց ոչ միայնում, հասարակ զնա կոչէ, եւ եթէ միայնում գոյացութեան եւ ոչ ամենայնում՝ ապա յատուկ զնա կոչէ. քանզի յատուկքն նեղիլ կամիլով միայնում գոլով կերպարանին եւ ոչ ամենեցուն, որպէս հասարակն ամենեցուն գոլով եւ ոչ միայնում: Բայց ըստ իւրաքանչիւր ստորոգութեան նախադասէ զսուտ ուրոյնսն քան զճշմարիտսն. որպէս զի մաքրիցելոց մեզ մաքուրս մատուցէ

---

7—8 A. *սիրեմք—զնոսին*] El. ἀγαπῶμεν κἂν διὰ τῶν ἰδίων αὐτῶν ἀποδιδόναι 171,16—17. 10 A. ուղղ. *այլ զյատուկսն*. 20—21 A. *ընդէ՞ր—անուամբ*] El. διὰ τί μὴ φύσει ἴδιον αὐτὸ ἐκάλεσε τῷ οἰκείῳ ὀνόματι; 171,25—26.

*զճշմարտութիւնն, որպէս ասէ Պղատոն*** վասն գոյացութեան, եթէ գոյացութիւն կամ առաջին է կամ երկրորդ, եւ զենթագրութիւնս նոցին, եթէ առաջին գոյացութիւնն ոչ զենթակայէ ասի եւ ոչ նենթակայում է, իսկ երկրորդքն զենթակայէ ումեմնէ ասին, բայց նենթակայում ոչ են: Արդ՝ եթէ այսպէս է՝ ապա եւ ոչ մի գոյացութիւն նենթակայում. ոչ մի վասն առաջին առածին. քանզի կամ առաջին է կամ երկրորդ. իսկ ոչ է նենթակայում վասն ենթագրութեանց. եւ արդ այսպէս՝ եթէ եւ ոչ մի գոյացութիւն նենթակայում: Բայց ցուցանէ եւ առանձինն, եթէ եւ ոչ երկրորդ գոյացութիւնքն են նենթակայում, ասելով այսպէս՝ երկրորդ գոյացութիւնքն փաղանունաբար ստորոգին առաջնոց գոյացութեանցն, իսկ նենթակայոցքն ոչ երբեք փաղանունաբար ստորոգին առաջնոց գոյացութեանցն, այլ կամ հոմանունանաբար, որպէս սպիտակն Սովկրատում, կամ յարանունաբար՝ որպէս ի քերականութենէ քերականն, եւ կամ այլանունաբար. ապա ուրեմն՝ երկրորդ գոյացութիւնքն ոչ են նենթակայում: Այլ վասն զի երկրորդ գոյացութիւնքն զենթակայէ ումեքէ ասելով՝ զքաղումն իմն եւ կարծիս տան նենթակայում զոլ՝ ցուցանէ եթէ ոչ են նենթակայում, ասելով այսպէս. եւ եթէ էին, ասէ, նենթակայում՝ ոչ անա այն ինչ ենթակայում պիտանանային իւրեանց անհատիցն առ ի գոյացութիւն, որ եւ նոքին իսկ խոստովանաբար նենթակայում զոն ոչ պիտանանան ենթակայից իւրեանց անհատիցն առ ի գոյացութիւն, այլ առաջնոց գոյացութեանցն: Զի եթէ նենթակայում եղիցին երկրորդ գոյացութիւնքն՝ բազում անպատեհութիւն ունի քանս. քանզի զտցին առ նենթակայումն զոլով նենթակայումն զոլով անհատիցն պատահմանց, եթէ արդարեւ ցուցաւ ոչինչ նենթակայոջացն իւրոց անհատիցն պիտանացեալ որպէս ենթակայում՝ առ ի գոյացութիւն:*

---

1 El. 172,1 μὴ καθαροῖς — *մինչեւ* 172,9 τὴν διαίρεσιν] A. *չիք*. 6—9 A. *ոչ մի վասն առաջին առածին — եւ ոչ մի գոյացութիւն նենթակայում*] El. *չիք*. 15—16 A. *եւ կամ այլանունաբար*] El. ἢ ἑτερωνύμως, ὡς ἀπὸ τῆς ἀρετῆς ὁ σπουδαῖος 172,18. 18 A. *զքաղումն իմն եւ կարծիս*] El. φαντασίαν 172,20. 26—27 A. *առ նենթակայումն — պատահմանց*] El. πρὸς τῷ ἐν ὑποκειμένῳ αὐτὰς εἶναι καὶ ἐν ὑποκειμένοις οὖσαι τοῖς οἰκείοις ἀτόμοις 172,26—27.

## ԸՆԴ ԱՅՍՄԻԿ ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՎ ԵՒ ԱՌԱՋԻԿԱ ՊՐԱԿՔՍ ԻԸ

*„Բայց ոչ ուրոյն է այս գոյացութեան“...*

*Ցուցեալ Արիստոտելի, եթէ ամենայնում՝ գոյացութեան գոյ ոչ նենթակայոյզացն գոլ՝ այժմ ցուցանէ, թէ ոչ միայնում՝ գոյացութեան գոյ, այլ եւ տարբերութեան: Եւ ձեռնարկել պարտ է յԱստուծոյ եւ ի նիւթոյ (քանզի կարծին այսոքիկ ոչ գոլ գոյացութիւն, Աստուած՝ որպէս վերագոյակ եւ առաւելաբնոյթ. իսկ նիւթ՝ որպէս ոչինչ յէակացն գոլով, այլ յոռագոյն քան զամենեսեան. քանզի ծայրք էակացն ի բացասութենէ սահմանին, որպէս ուսաք վերագոյն. քանզի եւ ոչ նիւթ նենթակայում՝ է, զի մի տացուք նիւթ նիւթոյ, եւ ոչ աստուածայինն նենթակայում՝ է), եւ քանզի այսոքիկ աստուածաբանութեան կամ՝ բնաբանութեան են՝ ձեռնարկէ ի տարբերութեանց՝ տրամաբանականի եղոյ անուան եւ իրի. քանզի ասէ, եթէ տարբերութիւնք ոչ են նենթակայում: Զի՞նչ ասես, ո՛վ Արիստոտէլ. հակորոշեցեր զգոյացութիւնս ընդդէմ՝ տարբերութեանց՝ որպէս տարբերութեանց ո՛չ եղոց գոյացութեանց: Եւ զի՞նչ արդեւք իցեն տարբերութիւնք, հարցցուք զքեզ, գոյացութի՞ւնք եթէ պատահմո՞ւնք: Եթէ գոյացութիւնք՝ վասն է՞ր հակորոշեցեր: Իսկ եթէ պատահմունք են, վասն զի ի տարբերութեանց են (՞) սահմանք գացին, գոյացութիւնք ի պատահմանց եղեալք եւ մասնունք գոյացութեանց պատահմո՛ւնք՝ եւ զիա՞րդ դու ի՛նքն ասես, եթէ „մասնկունք գոյացութեանց գոյացութիւնք են“: Այսոքիւք տարակուսանաւք վարակւցեալ Արիստոտէլ՝ ոչ ընդարմացաւ մէջ ինչ բնութիւն ասել գոյացութեան եւ պատահման եւ ի նմա դնել զտարբերութիւնս՝ որպէս եւ այնոքիկ, որք յաղագս լուսոյ տարակուսանաւք վարակիցեալ՝ ոմանք մարմին զլոյս ասելով եւ*

---

5—6 Ա. *թէ ոչ — գոյ]* El. ὅτι οὐ τῇ οὐσίᾳ μόνον ὑπάρχει 172,32. 7 Ա. *յաստուծոյ եւ ի նիւթոյ]* El. ἀπὸ τῆς ὕλης καὶ τοῦ θείου 172,33. 8 Ա. *ուղղ. զԱստուած]* El. τὸ μὲν θεῖον 173,1. 24 El. ὁ Πορφύριος 173,18] Ա. *Արիստոտէլ*.

ումանք՝ անմարմին՝ մէջ ինն ապա ընութիւն ստորագրեցին մարմնոյ, եւ անմարմնոյ եւ անմարմին մարմին ասացին զլոյս: Եւ վասն այնորիկ երկուց ծայրից հաղորդութիւն ունի՝ կամ հանգիտաքար նոցին ունի եւ կամ առաւելաքար: Առաւելաքարն երկակի՝ կամ ի միոջէն առաւել ի միոջէն նուազ, կամ ի միոջէն նուազ եւ միւսմէն առաւել. վասն այսորիկ եռակի ասէին գոլ զզանազանութիւնս՝ կամ առաւել գոյացութիւն եւ նուազ պատահումն, որպէս բանական եւ անբանն. քանզի առաւել գոյացութիւնք են այսոքիկ, որպէս լցուցանելով զգոյացութիւն եւ ի սահմանս ներմուծանելով, բայց սակայն պատահմունք՝ որպէս ի ներում որպիսի ինչ էին ստորոգիցեալք. քանզի մի է պատահմանցն ստորոգութիւն՝ որակութիւն: Իսկ հանգէտ գոյացութեան եւ պատահման՝ որպէս ի հրում ջերմութիւն եւ ի ձեան սպիտակութիւն. քանզի որպէս յորակիցելում մարմնում գոյացութիւնք են, որպէս լցուցանողք գոյացութեանց նոցին. իսկ որպէս յանորակում մարմնում՝ պատահմունք. քանզի յայնժամ լինին եւ բացալինին թանց ենթակային ապականութեան ** Եւ առաւել պատահմունք քան եթէ գոյացութիւն, այն որ ի կարափում սպիտակութիւն եւ յեթիոպացիում սեւութիւն՝ լինին եւ բացալինին առանց ենթակային ապականութեան, որպէս ասէ Պորփիւրիոս „բայց կարէ ընդ միտ ածել եւ իմանալ * ագռաւ սպիտակ եւ Եթիոպացի ի բաց ընկեցեալ զգոյն առանց ենթակային ապականութեան“: Բայց սակայն կարծին գոյացութիւնք գոլ վասն գոլոյ ամենայն տեսակի կարապին սպիտակութիւն եւ ագռաւուն սեւութիւն: Արդ՝ եռակի ըստ նմա

---

1—7 A. *մէջ ինն — զզանազանութիւնս]* El. μέσην τινὰ φύσιν ἐπέθεντο εἰπεῖν τὸ φῶς ἀσωμάτου καὶ σώματος. ἐπεὶ δὲ τὸ ἀμφοτέρων τῶν ἄκρων μετέχον ἢ ἐξ ἴσου αὐτῶν μετέχει ἢ μᾶλλον τοῦδε ἧττον δὲ τοῦδε, καὶ τοῦτο διχῶς, τριττὰς ἔλεγεν εἶναι τὰς διαφορὰς 173,16—19. 2 A. *ասիցին*, ուղղ. *ասացին*. 7 A. *ըզզանազանութիւնս*. 10—11 A. *բայց սակայն — ստորոգիցեալք]* El. ὀλίγως δὲ συμβεβηκότα ὡς ἐν τῷ ὁποῖόν τι κατηγορούμενα 173,21—22. 12—13 A. *Իսկ — պատահման]* El. ἐξ ἴσου δὲ οὐσίαι καὶ συμβεβηκότα 173,23. 18 El. ὅτε γὰρ ἐν τῷ πυρὶ ἡ θερμότης ἐστίν, οὐσία ἐστίν, ἐπειδὴ ἀδύνατον ἐπινοηθῆναι πῦρ δίχα θερμότητος ὅταν δὲ ἐν σιδήρῳ γένηται, συμβεβηκός ἐστι 173,26—28] A. *չիք* 19 A. ուղղ. *կարապում*. 19 A. *Եթիոպիիում*, ուղղ. *Եթիոպացիում*. 20—22 A. *որպէս ասէ — սպիտակ]* El. καθά φησιν ὁ Πορφύριος, ὅτι 'δύναται', φησίν, 'ἐπινοηθῆναι καὶ κύκνος μέλας καὶ κόραξ λευκός 173,30—32 24 A. ուղղ. *կարապին*.

հաւաքին զանազանութիւնք: Այլ, Պորփիւրիէ, հակասութիւն առնեն գոյացութիւն եւ պատահումն, որ ներնթակայում՝ է եւ որ ոչ ներնթակայում. իսկ հակասութեան ոչինչ է մէջ, քանզի հակասութիւն հակադրութիւն է. որոյ ընդ մէջ ոչինչ է ըստ ինքեան: Եւ բարիոք առադրեցաք ըստ ընքեան. քանզի ըստ պատահման մարթի գոլ մէջ ինչ. քանզի սպիտակի եւ ոչ սպիտակի ոչինչ է մէջ, բայց եթէ հանդիպի եւ ոչ սպիտակն թուխ իմանայցի. քանզի յայնժամ գտանիցի մէջ ինչ հակասութեան, թէպէտ եւ ըստ պատահմանէ: Եւ արդ զի՞նչ պարտ է ասել: Եթէ գոյացութիւնք են տարբերութիւնքն, բայց գոյացութիւնք ոչ որպիսիք այժմն մեզ առաջի կան յայցելել ծանուցեալք ի յոլովիցն մարդս. քանզի յոլովն մարդ եւ կենդանի ասէ եւ մարդ եւ Սոկրատէս: Ապա եթէ ասես. եթէ „եւ արդ զի՞նչ մի է թէ չասեն բանական եւ անբան, որք են տարբերութիւնք“. ասեմք՝ եթէ բանականն եւ անբանն շարադրիցելոց իրաց անուանք են, իսկ զբանականութիւն եւ զանբանութիւն յոլովն մարդ ոչ գիտէ, որք են տարբերութիւնք: Արդ՝ վասն այսորիկ հակորոշեաց զզանազանութիւնս ընդդէմ գոյացութեան: Եւ այսոքիկ այսպէս: Բայց զի իրազգաց եղեւ վասն իւր Արիստոտէլ զտարբերս պատահումն առնելոյ վասն հակորոշելոյ ընդդէմ գոյացութեան՝ ի վերայ ածէ, եթէ մասունք գոյացութեանցն գոյացութիւնք են. իսկ տարբերութիւնք մասունք են սահմանաց եւ գոյացութեանց լցուցիչք. ապա ուրեմն՝ գոյացութիւնք են տարբերութիւնք՝ որպէս մասունք գոյացութեան: Բայց վրդովեցուցանէ զմեզ բանն, որ ասէ, եթէ մասունք գոյացութեան պատահմունք են. քանզի այսպէս ասէին ոմանք, եթէ մասունք գոյացութեան յումեք են, որք յումեքն են՝ պատահմունք են. ապա ուրեմն՝ եւ մասունք գոյացութեան պատահմունք են. քանզի ոչ եթէ այսպէս պարզաբար ասէաք զումեքն ներնթակայում, այլ զումեքն մի որպէս մասն գոլ:

---

1 El. ἀλλ', ὦ Πορφύριε 173,35] A. ուղղ. ասէ Պորփիւրիէ. 7 A. բայց — իմանայցի] El. εἰ μή τι δἂν συμβῇ τὸ οὐ λευκὸν ἐπὶ τοῦ μέλανος νοηθῆναι 174,5—6. 10—12 A. բայց — մարդս] El. οὐσίαι δὲ οὐχ αἱ νῦν προκείμεναι ἡμῖν εἰς ἐπίσκεψιν αἱ συνεγνωσμέναι τῷ πολλῷ ἀνθρώπῳ 174,7—9. 12 A. ասի, ուղղ. ասէ. 13—14 A. եւ արդ — եւ անբան] El. 'τί οὖν οὐ λέγουσι λογικὸν καὶ ἄλογον 174,10. 19 A. զտարբերս] El. τὰς διαφορὰς 174,15. 27 A. ուղղ. եւ որք.

*իսկ այժմ յումեքն, որպէս մասն ի բոլորումն ասէ են տարբերութիւնք:*

*„Բայց ոչ ուրոյն գոյացութեան է այս“.*

*Պարտ էր ասել, եթէ ոչ միայնում գոյացութեան գոյ՝ ասաց՝ ոչ եթէ ուրոյն. քանզի ուրոյնն միայնումն կերպարանի եւ ոչ ամենայնիւն:*

## *ԸՆԴ ԱՑՍՈՍԻԿ ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՎ ԵՒ ԱՌԱՋԻԿԱՑ ՊՐԱԿՔՍ ԻԸ*

*„Եւ է գոյացութեանցն եւ տարբերոյ“...*

*Երկրորդ յատուկ գոյացութեան փաղանունաբար ստորոգիլն: Այլ այս եւ պատահմանցն է. քանզի գոյն սպիտակում փաղանունաբար ստորոգի: Այլ այսպէս ասէ, եթէ երկրորդ յատուկ գոյացութեան փաղանունաբարն միայն ստորոգիլ. քանզի պատահմունքն եւ փաղանունաբար ստորոգին եւ հոմանունաբար եւ յարանունաբար եւ այլանունաբար, որպէս ապացոյցք ասացան վերագոյն: Եւ կամ այլազգաբար ասել, եթէ երկրորդ յատուկ գոյացութեան փաղանունաբարն ստորոգիլ առաջնոց գոյացութեանցն. քանզի պատահմունքն թէպէտ եւ փաղանունաբար ստորոգին՝ ոչ եթէ առաջնոց գոյացութեանցն, այլ իւրեանց անհատիցն: Բայց այս յատուկ ոչ ամենայնում գոյացութեան է եւ ոչ միայնում. ամենայն գոյացութեան ոչ է վասն անհատ գոյացութեան, վասն զի անհատ գոյացութիւն անստորոգելի է: Այլ եւ ոչ միայնում գոյացութեան է. քանզի եւ տարբերութիւնք փաղանունաբար ստորոգին: Արդ՝ զիա՞րդ յատուկ ամենեւին ոչ յատուկն. քանզի եթէ ոչ ամենայնում եւ ոչ միայնում գոյ ամենեւիմբ՝ ոչ կարէ յատուկ գոլ, վասն զի յատուկն ամենայնում եւ միայնում եւ միշտ գոյ, որոյ էն յատուկ: Արդ՝*

1—2 A. *որպէս — տարբերութիւնք]* El. ὡς μέρος ἐν ὅλῳ ὑπόκειται, οἷον ἡ διαφορὰ 174,22—23. 12 A. *Այլ այսպէս ասէ]* El. ἀλλ’ εἶπεν οὕτως 174,31. 14 A. *համանունաբար.* 20—21 A. *Բայց — միայնում]* El. τοῦτο δὲ οὐδὲ πάσῃ ὑπάρχει τῇ οὐσίᾳ οὐδὲ μόνῃ 175,4. 27 A. *որոյ են յատուկ]* El. *չկա.*

*մի գուցէ որպէս այլ՝ հասարակ է գոյացութեան եւ տարբերութեանց, որպէս զի եթէ ասէր՝ եթէ հասարակութիւն ունի առ պատահումն, ըստ որում երկաքանչիւր ոք փաղանունաբար ստորոգի: Այլ վասն զի յայդպէս ասելոյդ հինգ յատկութիւնք զտանին գոյացութեան, իսկ պատմիչք Արիստոտելական իմաստասիրութեան վեց սովորեալ են ասել՝ ասա եթէ արհամարհեաց այժմ զհակորոշութիւնն գոյացութեան առ տարբերութիւն եւ զերկոսեան որպէս գոյացութիւն էառ: Ցայնժամ յատուկ զտանի գոյացութեան եւ առաւել յատուկ. քանզի առաջին յատկին ամենայնում գոլոյ եւ ոչ միայնում՝ սա միայնում գոյ եւ ոչ ամենայնում. քանզի յատուկքն նեղիլ կամելով՝ միայնումն կերպարանին եւ ոչ ամենայնին:*

*Ցետ որոց տարակուսեն՝ եթէ զիա՞րդ ասէ զտարբերութիւնս փաղանունաբար ստորոգիլ, եթէ տարբերութիւնք անուան ոչ տան հաղորդութիւն. քանզի ոչ ոք ասէ՝ եթէ մարդ բանականութիւն է: Առ որս ասեմք, եթէ փաղանունն երկակի ասի առ ի յԱրիստոտելէ. կամ այն՝ որ հաղորդատրեն անուան եւ իրի, կամ այն՝ որ ատարտակիցն լինի առ գոյացութիւն. քանզի այսպէս եւ ինքն ներում Ցաղագս անձինն բանում զանձն փաղանունաբար ասէ կենդանւոյն ստորոգիլ, վասն զի ատարտակից լինի առ ի գոյացութիւն սորին, թէպէտ եւ ոչ անուան եւ ոչ իրի հաղորդատրէ. քանզի ոչ ոք ասէ զկենդանին հոգի, այլ եւ ոչ զսահման հոգւոյն ընդունի կենդանին: Այլ վասն զի Արիստոտէլ կամի վասն տարբերութեան, զի եւ անուան եւ իրի հաղորդատրեսցէ՝ մի գուցէ հաղորդատրէ, թէպէտ եւ յարանունաբար. քանզի ասի ի բանականութենէ բանական: Ու կամ այլազգաբար, եթէ զոր աւրինակ սպիտակն երկակի է՝ որպէս եւ սպիտակացեալ փայտն եւ ինքն սպիտակութիւնն՝ մի գուցէ երբեք կարեմք*

---

2—3 A. *եթէ — առ պատահումն]* El. ὅτι κοινωνεῖ ἡ ουσία τῇ διαφορᾷ 175,9—10. 5—6 A. *իսկ — ասել]* El. τῶν ἐξηγητῶν ἓξ εἰωθότων λέγειν 175,12. 8—9 A. *Ցայնժամ յատուկ զտանի]* El. καὶ μήποτε ἴδιον εὑρίσκεται 175,13—14. 14—15 A. *եթէ — հաղորդութիւն]* El. εἴ γε αἱ διαφοραὶ τοῦ οἰκείου ὀνόματος οὐ μεταδιδόασιν 175,18. 24 A. *վասն — հաղորդատրեսցէ]* El. τὴν διαφορὰν οὐ μόνον πράγματος ἀλλὰ καὶ ὀνόματος μεταδιδόναι 175,25—26. 25—26 A. *թէպէտ — բանական]* El. εἰ καὶ παρωνύμως λέγεται ἀπὸ τῆς λογικότητος 175,26—27.

*ասել, եթէ եւ բանականն երկակի է՝ ինքն իսկ բանականութիւն եւ բանական կենդանին: Եւ կամ այլազգաբար. թէպէտ եւ ոչ կարեմք ասել զմարդն բանականութիւն, բայց բանականութիւն ունել կարող եմք ասել: Արդ եցոյց բանս, եթէ տարբերութիւնք տիրապէս փաղանունաբար ստորոգին:*

## *ԸՆԴ ԱՅՍՈՍԻԿ ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՎ ԵՒ ԱՌԱՋԻԿԱ ՊՐԱԿՔՍ ԻԹ*

*„Բայց ամենայն“...*

*Ի վերայ առաջնոց գոյացութեանցն ըստգրեալ Արիստոտելի զառաջին եւ զերկրորդ յատուկսն գոյացութեան, զմին՝ որպէս ամենեցուն եւ ոչ միայնում, իսկ զերկրորդն՝ որպէս ոչ ամենեցուն եւ ոչ միայնում, յայլ յատուկ շրջէ զբանն եւ ասէ՝ եթէ յատուկ է գոյացութեան „զայս ինչ զենթակայ նշանակել“. քանզի եւ այսպէս ինքն ի Բնականսն զնիւթ ենթակայ կոչէ. քանզի երկոքեան սահմանեալք են, եւ այս ինչն՝ որպէս ընդ ցուցմամբ անզանելով, եւ նիւթն՝ որպէս յինքն կալով մնալով եւ ամենեցուն, որք ի նմայն են՝ փոփոխելով, որպէս զկաթսայն կարողութիւն է այլածեւել եւ առնել անդրի, եւ դարձեալ յայլ ինչ փոխածեւել եւ առնել այլ ինչ՝ ոչ ինչ նուազ կալով մնալով պղինձն, որ ինչ էրն՝ յառաջ քան զլինելն կաթսայ կամ անդրի կամ այլ ինչ յայսպիսեաց: Արդ՝ այսպէս Արիստոտէլ զայս ինչն եւ զնիւթն ենթակայս կոչէ: Իսկ ինչն զմասնականսն նշանակէ: Իսկ երկոքեան՝ այս ինչ եւ ինչն՝ զմասնական ենթակայն նշանակէ, այսինքն՝ զանհատ գոյացութիւնն: Արդ՝ այս յատուկ ոչ պատկանի նիւթում, վասն զի ընդհանուր ենթակայ է նիւթ եւ ոչ ունի պատահմունս ըստանուրն (°) բանի, որք առնեն զմասնա-*

3—4 A. *բայց — ասել]* El. λέγομεν αὐτὸν λογικότητα ἔχειν 175,31. 10 A. *զառաջին — գոյացութեան]* El. τῶν πρώτων δύο ἰδίων τῆς οὐσίας 175,34—35. 12—13 A. *եւ ասէ — նշանակել]* El. καί φησι τρίτον ἴδιον τῆς οὐσίας ⟨τὸ⟩ τόδε τι σημαίνειν. δηλοῖ τὸ μὲν τόδε τὸ ὑποκείμενον 176,2—3. 14 El. ἐν ταῖς Φυσικαῖς 176,3] A. *ի բանականսն.* 16—17 A. *եւ նիւթն — փոփոխելով]* El. καὶ ἡ ὕλη ⟨ὡς⟩ ὡσαύτως μένουσα πάντων ἐν αὐτῇ τρεπομένων 176,5. 18—19 *եւ առնել — փոխածեւել եւ]* El. καὶ γενέσθαι ἀνδριὰς καὶ ὁ ἀνδριὰς πάλιν μετασχηματιζόμενος 176,6—7. 26 A. *ոչ ունի — բանի]* El. ὅτι οὐκ ἔχει συμβεβηκότα τῷ ἑαυτῆς λόγῳ 176,12—13.

*կանն (քայց եւ պարզաբար է ասել. եթէ եւ ոչ հանուրն պատկանի նիւթում եւ ոչ մասնականն. քանզի այսոքիկ տեսակարարիցեալք անուանք են. քանզի նիւթ ոչ ունի ըստ ունակութեան զտեսակս, այլ ըստ պատկանութեան), այլ եւ ոչ աստուածային գոյացութեանն պատկանի, վասն զի ոչ ումեք ենթականայ. եւ ոչ դարձեալ երկրորդ գոյացութեանցն. քանզի այսոքիկ՝ թէպէտ եւ միայնին առաջաբերութեամբ թուին զայս ինչ նշանակել, յորժամ ասէ ոք՝ „մարդ“ կամ „կենդանի“, այլ սակայն ոչ զայս ինչ նշանակեն, այլ այսպիսի ինչ, այսինքն՝ նմանութիւն՝ ըստ որում միմեանց նմանեալ են մարդիկ, ըստ որում մարդիկ են, եւ կենդանին՝ ըստ որում կենդանի: Եւ մի կարծիր, եթէ յորժամ ասացի այսպիսի ինչ նշանակել զերկրորդ գոյացութիւնսն, այսպիսի ինչն որակութիւն է, իսկ որակութիւն՝ պատահումն, եթէ եւ երկրորդ գոյացութիւնքն պատահմունք են. քանզի թէպէտ եւ որակութիւն նշանակեն, այլ սակայն գոյեղուտ որակութիւն նշանակեն: Այլ վասն զի եւ հանուր պատահմունք նմանութիւն նշանակեն ըստ մասին պատահմանցն, որով զանազանին յերկրորդ գոյացութեանցն: Եւ ասեմք, եթէ երկրորդ գոյացութիւնքն գոյեղուտ նմանութիւնս նշանակեն, իսկ պատահմունքն՝ մակագոյեղուտ. քանզի երկակի է որակութիւն՝ գոյեղուտ եւ մակագոյեղուտ: Արդ՝ մի գուցէ առ մերձակայ յատուկս այլ գովեստ է անհատ գոյացութեան. քանզի անհատ գոյացութիւն՝ վասն ամենեցուն զնովաւ ենթակայիլ՝ ինքն միայն յինքեան է, իսկ այլքն ամենայն յանհատ գոյացութեան ասին գոլ:*

*Զայսոսիկ Արիստոտէլ եւ այլ ինչ ոչ: Իսկ մեք հինգ իրաւք ունիմք մակացուցանել. նախ՝ եթէ զիարդ ասեմք զգոյացութենէ իրս նշանակել, վասն զի եւ գոյացութիւն է, իսկ իրք նշանակին եւ ոչ նշանակեն: Եւ ասեմք, եթէ դիտաւորութիւն*

---

8 A. *յորժամ ասէ ոք]* El. ὅταν εἴπω 176,17. 11—12 A. *եթէ — գոյացութիւնսն]* El. ἐπειδὴ εἶπον τοιόνδε αὐτὰ σημαίνειν 176,20. 21—23 A. *Արդ — յինքեան է]* El. μήποτε οὖν τὸ παρὸν ἴδιον ἄλλο ἐστὶν ἐγκώμιον τῆς οὐσίας τῆς ἀτόμου· μόνη γὰρ ἡ ἄτομος οὐσία πρὸς τῷ πᾶσιν ὑποκεῖσθαι τοῖς παρ' ἑαυτὴν ἑαυτῆς ἐστι μόνη 176,26—28. 26—28 *զգոյացութենէ — ոչ նշանակեն]* El. τὴν οὐσίαν σημαίνειν, εἰ πρᾶγμα ἡ οὐσία, τὰ δὲ πράγματα σημαίνονται καὶ οὐ σημαίνουσι 176,31—32.

*Ստորոգութեանցս է ոչ յաղագս իրաց եւ կամ զիրաց բուռն հարկանել, այլ ըստ որում նշանակին յայսպիսեաց ձայնից. քանզի երբեմն եւ իրք զտեղի առնեն ձայնից, ոչ որպէս իրք նշանակիլով, այլ որպէս այսպէսաքար անուանիցեալք. որգոն՝ Սոկրատէս ի բազմութեան տեսանելով՝ որք քննենն զնա (բայց նշանակեն երբեմն եւ իրք զձայն՝ որպէս ծգելով առ ինքեանս զիւրեանց զառասութիւնն. բայց նշանակին եւ իրք յիրաց, որգոմն, կաթն՝ զի ծնաւ, ծուխ՝ վասն զի հուր, գլխացաւութիւն՝ վասն զի արեգակնակիզութիւն), իսկ երբեմն եւ ձայնք առնեն զտեղի իրաց, որգոն՝ Սոկրատէս զնայ, ոչ որպէս Սոկրատէս անունն զնայ, այլ իրն՝ որ ունի զայսպիսի անուն: Երկրորդ՝ զի եթէ եւ յայսմ յատկէ երեւի, որ ըստ նմանութեանն յատկին՝ ոչ եթէ ըստ այն որ այս ինչ են, այլ որ ըստ նմանութեան յատուկն է՝ ըստ այնմ երեւի, եթէ գոյացութիւնք են զանազանութիւնք, ոչ միայն զի ոչ են նենթակայում եւ կամ եթէ փաղանունաքար ստորոգին եւ կամ եթէ մասունք գոյացութեան են, այլ զի եւ նմանութիւնս գոյացութեան նշանակեն. քանզի երկրորդ գոյացութիւնքն նմանութիւնս նշանակելով ըստ մասին գոյացութեանցն գոյացութիւնք, նոյնպէս եւ տարբերութիւնք, նմանութիւնս գոյացութեանց նշանակելով՝ գոյացութիւնք ասին**: Իսկ երրորդ իմացուացուք, եթէ զիարդ վերագոյն ասէաք զսեռ եւ զտեսակ ի ներքոյ զինչ էին ստորոգեալ, իսկ այժմ ի ներքոյ որպիսի ինչ էին: Եւ ասեմք, եթէ երկոքեան ճշմարիտ են. քանզի եթէ առցես զներաղասեալն զնոյն ինքն զիրն եւ ոչ որ ըստ կալմանն է յայնոսիկ՝ որ ըստ մասինն են, որգոն՝ զկենդանին կամ զմարդն, յայնժամ ի ներքոյ զինչ էին ստորոգին. իսկ եթէ զքացարձակն, այսինքն՝ զյառաջ քան զփոքունսն եւ որ ըստ կալմանն է, յայնժամ ի ներքոյ որ-*

1—2 A. *ոչ յաղագս — հարկանել* ] El. οὐ περὶ πραγμάτων ἢ πράγματα διαλαβεῖν 176,33. 7—9 A. *որգումն — արեգակնակիզութիւն*] El. οἷον τὸ γάλα ὅτι τέτοκεν, ὁ καπνὸς ὅτι πῦρ 177,2—3. 12—13 A. *ոչ եթէ — են*] El. οὐκ ἐκ τοῦ κατὰ τόδε τι 177,6—7. 13—14 A. *այլ որ — մինչեւ ըստ այնմ երեւի*] El. *չիք*. 20 El. τῶν γὰρ ἀντιδιαιρουμένων μία ἡ ἐπιστήμη, τοῦτ' ἔστιν ὁμοιότητος καὶ ἀνομοιότητος 177,11—12] A. *չիք*. 25—26 A. *եւ ոչ — զմարդն յայնժամ*] El. καὶ οὐ τὸ σχετικὸν ἐν τοῖς κατὰ μέρος ζῷον ἢ τὸν ἄνθρωπον 177,15—16.

*պլիսի ինչ էին ստորոգին. քանզի նմանութիւնս գոյացութեանց նշանակեն. քանզի հակաքաժանիցելոցն դիմակացութիւն նմանութեան եւ աննմանութեան***: Իսկ չորրորդ պարտ է մակացուցանել, եթէ Արիստոտէլ զայս ինչ կոչէ զանհատ գոյացութիւնսն, եւ այսպիսի ինչ զերկրորդն, իսկ Պղատոն՝ ստորընդդիմաքար նմա: Եւ ասեմք, եթէ երկոքեան ճշմարիտ են. քանզի իւրաքանչիւր ոք զսահմանեալն զայս ինչ կոչէ, իսկ զանորիշն՝ այսպիսի ինչ: Բայց է եւ յերկաքանչիւրսն եւ սահմանեալ եւ անորիշ սահմանեալ մի թուով, իսկ անորիշ այն՝ որ եւ ոչ յիւրում առասութեանն կայ միայ. որգոն՝ Սոկրատէս ի ներհոսման եւ ի բացահոսման գոլ ունի, որպէս եւ այլ բնականքն, որք յամենայն ժամ փոփոխին. քանզի ասելն „կոչեալ զնստեալն զայն“ յառնէ եւ ոչ անսաց իւրում առասութեանն. իսկ յերկրորդ գոյացութիւնսն սահմանեալն անփոփոխելին գոլ, որգոն՝ ընդհանուր մարդ եւ կենդանի, իսկ անորիշ է մոլորիլն զընդհանուրն, յորժամ բազմաց ունիմք մտածութիւն. քանզի եթէ ասէ „մարդ“, ներպառեալ ունի զՍոկրատէս եւ այլս բազումս: Իսկ հինգերորդիւ եւ վերջնով պարտ է մակացուցանել, եթէ առ ի յանգիտանալոյ զայս նշանակութիւն՝ լինի ոչնչային անուանեալք զանցաքանութիւնք ըստ Հոմերոսի Ոդիսեայն, որ ի դէպ ժամանակի Ոչնչային անուանեաց զինքն: Եւ ունի զանցաքանութիւնն այսպէս՝ որ ոք ի յԱթենս՝ նա ոչ ի Մեգարս, մարդ որ ի յԱթենս՝ մարդ ոչ ի Մեգարս. ապա ուրեմն՝ ոչ է ի Մեգարս մարդ: Եւ ասեմք, եթէ զանցաքանութիւն է յոր ոքն. քանզի որ ոքն ընդհանուր ջանայ լինիլ, որ է սուտ. քանզի զոր ոքն եթէ ոք ընդհանրում առնու*

---

2—3 A. *քանզի — մինչեւ աննմանութեան*] El. *չիք*. 3 El. 177,19 εἰ μὲν γὰρ αὐτὸ τὸ πρᾶγμα — *մինչեւ* οὐσιώδη δηλοῦσι 177,24] A. *չիք*. 9 A. *սահմանեալ մի թուով*] El. ἐν μὲν τῇ ἀτόμῳ οὐσίᾳ ὡρισμένον μὲν τὸ ἓν τῷ ἀριθμῷ 177,28—29. 12 A. *որք — փոփոխին*] El. ἐν παντὶ νῦν μεταβάλλει 177,31. 13 A. *եւ ոչ — առասութեանն*] El. καὶ οὐκ ἀνέμεινε τὴν οἰκείαν προσηγορίαν 177,32—33. 17 A. *քանզի եթէ ասէ*] El. εἰ γὰρ εἴπω 177,35. 18 A. *եւ այլս բազումս*] El. *չիք*. 21 A. *Ոչնչային*] El. Οὔτιν 178,3. 23 A. *ոչ ի յԱթենս*. 23 A. *մարդ ոչ ի Մեգարս*] El. *չիք*. 25 A. *քանզի — լինիլ*] El. τὸ γὰρ ὅστις ὁ μὲν ἐπὶ τοῦ καθόλου βιάζεται αὐτῷ εἶναι 178,6—7. 26—1 A. *քանզի զոր ոքն — առնու*] El. ὁ δὲ ἐπὶ τοῦ μερικοῦ αὐτὸ λαμβάνει 178,7.

*սուտ է. իսկ եթէ ոք ի վերայ մասնականին առնու, ճշմարիտ է բանն յայնժամ՝ եթէ զմասնականն առնումք. քանզի իք մարդ՝ որպէս Սոկրատէս կամ այլ ոք որ ըստ մասին, որ յԱթենս է՝ ի Մեգարս ոչ, զի մի ացտեսցի ինքն ինքեամբ: Արդ այսպէս է ասել, եթէ որ յԱթենս՝ նա ոչ ի Մեգարս. Սոկրատէս յԱթենս՝ Սոկրատէս ապա ոչ ի Մեգարս:*

## *ԸՆԴ ԱՑՍՈՍԻԿ ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՎ ՆԻ ԱՌԱՋԻԿԱ ՊՐԱԿՔՍ Լ*

*„Բայց է գոյացութեանց եւ ոչ ինչ"...*

*Վասն զի երրորդ յատուկն՝ զայս ինչ նշանակէ, եւ միայնում գոյացութեան գոյ՝ եւ վասն այնորիկ առաւել յատուկ կարծիւր գոլ. եւ թուի ոչ որպէս իրում նմա գոլ, այլ որպէս ձայնում նշանակում (քանզի նշանակելն ձայնի է), ոչ յառաջագոյն դաղարեցուցանէ Արիստոտէլ զյաղագս յատկութեանցն բան՝ նախ քան զգտանել յատուկ ինչ գոյացութեան, որ որպէս իրում նմա գոյ: Եւ վասն զի որպէս իրում է գոյացութեան ներհակացն զնա գոլ ընդունակ, իսկ ներհակացն գոլումն զնա ընդունակ հետեւի ոչ ինչ ընդունիլ ներհակ, եւ դարձեալ այսմ հետեւի ոչ ընդունիլ զյաւէտն եւ զնուազն, զայսոսիկ զերիս զյատկութիւնս գոյացութեան աւանդեալ՝ դաղարեցուցանէ զյաղագս գոյացութեանն բան եւ զյատկութեանցն նորին: Եւ վեցերորդ եւ տիրապէս աւանդէ եւ վերջին յատուկ ներհակացն զնա ընդունական գոլ. բայց չորրորդ յատուկ գոյացութեան է ոչ ինչ ունիլն ներհակ. զոր հաւատարմացուցանէ ի մակածականէն. քանզի եւ ոչ առաջնումն, ասէ, է ներհակ եւ ոչ երկրորդումն: Եւ զայս դարձեալ հաւատարմացուցանէ յայլ մակածութենէ. եւ առաջնումն, ասէ, ոչինչ է ներհակ, վասն զի Սոկրատում ոչինչ է ներհակ, եւ ոչ երկրորդումն դարձեալ է ինչ ներհակ,*

---

3 A. *կամ—ըստ մասին]* El. ἢ ἄλλος τις τῶν κατὰ μέρος ἀνθρώπων 178,9.
10—12 A. *վասն զի—կարծիւր գոլ]* El. Ἐπειδὴ τὸ τρίτον ἴδιον τῆς οὐσίας, τὸ τόδε τι σημαίνειν, καὶ μόνῃ τῇ οὐσίᾳ ὑπάρχειν καὶ διὰ τοῦτο μᾶλλον ἴδιον αὐτῆς δοκοῦν εἶναι 178,15—16.

*վասն զի կենդանում՝ ներմարդում ոչինչ է ներհական. քանզի յոլով մակածականս յառաջիկայում իրողութեանս յաղագս սեռականագունիցն ելոյ, որք ոչինչ յառաջ քան զինքեանս ունին, այլ զամենայն յետոյ ինքեանց: Իսկ մակածութիւն յերկրորդացն եւ ի մասնականացն զընդհանուրսն հաւատարմացուցանէ, իսկ ապացոյց ոչ այսպէս, այլ ի վերնագունիցն զներքոյսն: Եւ վասն զի թանձրամասնական է մակածութիւն՝ որպէս ոչ յամենայն իրում ճշմարտելով՝ ըն՛ր մեք ի ձեռն այլ հարկաւորագունից եղանակի զնոյն ցուցցուք: Պարտ է գիտել, թէ բնաւորական եւ անքարոզ եւ անդաշնելի պատերազմ յարուցեալ է ի զգալի իրողութիւնսն, յորժամ երկուց իրաց պատերազմելոց ընդ միմեանս՝ երկաքանչիւր ոք ունաւղ կամի լինել ենթակայում, իսկ ենթակայն ոչ կարէ ի նոյն եւ ի նմին այժմ ընդունել զներհակսն վասն ըստ մասին ընդունակ գոլոյ ներհակացն: Արդ՝ որք պատերազմինն ընդդէմ միմեանց՝ վասն միոյ ենթակայի պատերազմին, որպէս ասէ Պղոտինոս (քանզի յաղագս տեղւոյն պատերազմին): Եւ պարտ է գիտել, եթէ ենթակայ այժմ ասի տեղի. քանզի իւրաքանչիւր ոք ի ներհակացն ունի յատուկ տեղի, եւ ոչ երբեք պատերազմին ներհակքն հեռի բացակացեալք, այլ մերձենալով ի միմեանս եւ բաղահոսեալք, եւ ի միում գոլով տեղում՝ պատերազմին՝ եթէ ո՞ ոք ի նոցանէ կալցի զտեղին՝ քանզի անհնարին է թարց հակառակութեան կալ մնալ զներհակսն ի միում եղեալ տեղում. արդ՝ ենթակայ զտեղին պարտ է լսել, յորում պատերազմին ներհակքն, եւ ոչ եթէ անորակ մարմինն. ապա ուրեմն՝ որք պատերազմինն՝ նենթակայում են, յայնմ՝ որ տակաւին ոչ եւս աւար եղեալ գոյ յաղթումն. արդ՝ եթէ որք պատերազմինն*

---

1 A. *վասն զի — ներհական]* El. ἐπειδὴ οὔτε ζῴῳ οὔτε ἀνθρώπῳ 178,29—30. 3—4 A. *որք — ինքեանց]* El. τὰ γὰρ γενικώτατα πρὸ αὐτῶν οὐδὲν ἔχει, πάντα δὲ μετὰ ταῦτα 178,31—32. 4 El. ἐκ τῶν δευτέρων 178,32] A. *յերրորդացն*. 9—11 A. *Պարտ է — իրողութիւնսն]* El. δεῖ εἰδέναι ὅτι ἐγήγερται τοῖς πράγμασι φυσικὸς καὶ ἀκήρυκτος καὶ ἄσπονδος πόλεμος 179,1—3. 12 A. *ուղղ. եւ երկաքանչիւր*. 13 A. *ի նոյն — ընդունել]* El. ἀμφότερα ἐν τῷ αὐτῷ νῦν δέξασθαι 179,4—5. 24—4 A. *ապա ուրեմն — ոչ նենթակայում է]* El. τὰ ἄρα μαχόμενα ἐν ὑποκειμένῳ· διὰ τὴν σὺν ἀντιθέσει ‹ἄρα› ἀντιστροφὴν ἐκ τοῦ ἑπομένου γενομένην τῷ μὴ ἐν ὑποκειμένῳ ‹ὅσα μὴ ἐν ὑποκειμένῳ ἐστίν, οὐκ ἔχει ἐναντίον ὡς τῆς ἀφορμῆς τοῦ μάχεσθαι ἀπηλλαγμένα· ἡ δὲ οὐσία οὐκ ἐν ὑποκειμένῳ›. 179,13—16.

*նենթակայում են վասն բաղհակաղրան հակադարձութեանն, որ ի հետեւիլոյն լինի, այսպէս պարտ է ասել. իսկ որք ոչ նենթակայում գոն՝ ոչ պատերազմին միմեանց. իսկ գոյացութիւն ոչ նենթակայում է. ապա ուրեմն՝ գոյացութեան ոչինչ է ներհական՝ որ պատերազմին: Այլ այս չորրորդ ասիցեալ յատուկ ամենայնում ասացեալ գոյացութեան է եւ ոչ միայնում. քանզի ոչ հակադարձի բանս. զի եւ ոչ ամենայն, որ պատերազմի՝ նենթակայում է, եւ ոչ ամենայն, որ նենթակայում են՝ պատերազմին միմեանց. վասն զի ձեւում ոչինչ է ներհակ. քանզի ոչինչ է եռանկիւնի եռանկիւնիոյ ներհական եւ ոչ զքառանկիւնի քառանկիւնում, վասն զի եւ ոչ զ յաւէտն եւ զնուազն ընդունին, թէ արդար եւ եռանկիւնին ոչ լինի ինքեան յաւէտ եռանկիւնի եւ նուազ. քանզի մեծագոյն ասի եռանկիւնի եռանկիւնոյ, այլ յաւէտ եռանկիւնի ոչ է, վասն զի ամենայն եռանկիւնի զմի եւ զնոյն սահման ընդունի. այլ եւ ոչ միջակաց գունոցն է ինչ ներհակ՝ գորշումն եւ խարտեշումն. քանզի ներհակք յոլովիւք տարակացութեամբք դատին. իսկ յոլով տարակացեալ է ոչ մէջն ի ծայրէն, այլ ծայրն ի ծայրէն: Եւ քացորոշիցելոյ քանակի ոչինչ է ներհական, որգոն՝ երկկանգնումն կամ եռականգնումն: Իսկ եթէ թւոյլ տամք անորիշ քանակումն զոլ ներհական՝ զփոքրն մեծումն, զշատն սակաւումն՝ ցուցցի եթէ եւ ոչ այսոցիկ է ինչ ներհակ, վասն զի մեծն ի փոքում փոքուց բաղկացաւ եւ շատն ի փոքր սակաւուց. արդ՝ եթէ պարունակեալ ունին զինքեանս, այլ ** բաղկացուցիչքն ինքեանց, իսկ ներհակք ապականիչք միմեանց են եւ ոչ բաղկացուցիչք: Զայսոսիկ Արիստոտէլ եւ այլ ինչ ոչ:*

*Յետ որոց տարակուսեն ոմանք ˌերիս տարակուսանս: Նախ եթէ զիարդ ասի գոյացութիւն ոչ ունիլ ներհակ. քան-*

5—6 A. *ամենայնում—գոյացութեան է]* El. πάσῃ μὲν ὑπάρχει τῇ οὐσίᾳ 179,17—18. 7—8 A. *զի եւ—նենթակայում է]* El. εἰ γὰρ καὶ πάντα τὰ μαχόμενα ἐν ὑποκειμένῳ 179,18-19. 9—10 A. *վասն զի—ներհական]* El. τῷ γὰρ σχήματι οὐδέν ἐστιν ἐναντίον· οὐ γὰρ ἐστι τρίγωνον τριγώνῳ ἐναντίον 179,20—21. 12—14 A. *քանզի—ընդունի]* El. ἀλλὰ μεῖζον μὲν λέγεται τρίγωνον τριγώνου, μᾶλλον δὲ τρίγωνον τριγώνου οὐκ ἔστιν εἰπεῖν, εἴ γε πᾶν τρίγωνον τὸν ὁρισμὸν τοῦ τριγώνου ἐπιδέχεται 179,23—24. 13 A. *եռանկի.* 21—23 A. *վասն զի—ինքեանց]* El. διότι τὸ μέγα ἐκ μικρῶν πολλῶν συνέστηκε καὶ τὸ πολὺ ἐξ ὀλίγων πολλῶν· εἰ οὖν περιέχουσιν ἑαυτά, οὐκ εἰσιν ἐναντία συστατικὰ ὄντα ἑαυτῶν 179,30—32.

զի ներ Ցաղագս լինելութեան եւ ապականութեան ասէ զտարերցն պատերազմիլ միմեանց՝ զհուր ջրում՝ եւ զաւդ երկրում: Եւ լուծանէ Աղեկսանդրոս ասելով, եթէ „ոչ ամենեւիմք ընդ ընքեանս պատերազմին տարերքն. քանզի ոչ եթէ ըստ մարմնոյ պատերազմին, այլ որակութիւն որակութեան, այսինքն՝ ցրտութիւն ջերմութեան եւ ցամաքութիւն խոնաւութեան“: Իսկ Սիւրիանոս եւ առաւել մակդատելով ասէ, եթէ „եւ ոչ ըստ որակութեանն պատերազմին, եթէ գոյեղուտք առցին ուրեք. քանզի ոչ հակառակի ցրտութիւն ջերմութեան, եթէ ի հրում եղիցի կամ ի ջրում, ապա եթէ ոչ՝ էր երբեք եւ հուր ցուրտ գտանիլ: Այլ թէպէտ եւ ապականէ որակութիւն զորակութիւն, որպէս յանորակ մարմնում պարտ է առնուլ յայնժամ զնոսա. քանզի յայնժամ պատահմունք են եւ լինին եւ բացալինին թանց ենթակային ապականութեան: Երկրորդ տարակուսութիւն է, զի եթէ գոյացութեան ոչինչ է ներհակ՝ զիարդ բան, այսինքն միտք, եւ բարկութիւն պատերազմին միմեանց. քանզի գոյացութիւնք են այսոքիկ. վասն զի այսոքիկ մասունք են անձին՝ բան, բարկութիւն, ցանկութիւն, եւ պատերազմի բարկութիւն բանում, որպէս ասէ Միդիայ.

„Բայց բարկութիւն վեհագոյն է քան զխորհուրդ“:

Առ որ ասեմք, եթէ ոչ ըստ գոյացութեան պատերազմին, այլ ըստ ազդմանցն. քանզի բարկութիւն եւ բան գոյացութիւնք են, իսկ բարկանալն եւ բանաւորիլն ներգործութիւնք (իսկ եթէ ոք մակատարակուսէ ասելով, եթէ ներհակ ներգործութիւնք ի ներհակաց զաւրութեանց առաջաբերին, իսկ ներհակ զաւրութիւնք ի ներհակաց գոյացութեանց՝ ոչ բարիոք ասէ. քանզի միեւնոյն գոյացութիւն ի ներհակէ յառաջաբերէ ազդմունս, որպէս կարծիք. քանզի կարծիք զմինն միայն գիտելով՝ երբեմն կար-

---

5—6 A. *այլ — խոնաւութեան]* El. ἀλλὰ ποιότης ποιότητι, θερμότης ψυχρότητι καὶ ὑγρότης ξηρότητι 180,2—3. 9—11 A. *քանզի — գտանիլ]* El. οὐ γὰρ ἁμιλλᾶται ἡ θερμότης ψυχρότητί τινι, ἐὰν ἐν πυρὶ γένηται, ἢ ἐν ὕδατι ψυχρότης θερμότητι, ἐπεὶ ἦν ποτε εὑρεῖν καὶ πῦρ ψυχρόν 180,4—6. 15—16 A. *այսինքն միտք]* El. *չիք.* 17—18 A. *վասն զի — անձին]* El. τρία γὰρ μέρη τῆς ψυχῆς 180,10. 19 A. *Միդիայ]* El. Μήδεια 180,11. 20 A. *Բայց — զխորհուրդ]* El. 'Θυμὸς δὲ κρείσσων τῶν ἐμῶν βουλευμάτων' 180,12. *Հմմտ.* Eur. Med. 1067.

*ծէ, եթէ հոգի անմահ է. իսկ հաւատացեալ ի մակացուցանէ կարծէ դարձեալ, եթէ անմահ է հոգի). եւ եթէ ոչ երբէք դաշնակիցք լինին ներհակք. իսկ բարկութիւն է ուրեք՝ ուր նուաճի բանում, որպէս ասէ Ոդիսեւս.*

*„Համբեր, ո՛վ սիրտ, քանզի եւ այլ դաժանագունից համբերեցեր“:*

*Երրորդ տարակուսութիւն է, եթէ որովհետեւ ոչ է ներհակ ինչ գոյացութեան, զիա՞րդ ասեմք թշնամիս զմարդիկ, քանզի այն ինչ մարդիկ գոյացութիւնք են: Եւ ասեմք, եթէ ոչ ըստ որում գոյացութիւնք են՝ պատերազմին, այլ պատահումն ինչ արար զնոսա թշնամիս, այսինքն՝ անմտութիւնն՝ որ պատահէ, վասն զի եւ գիտութիւն պատահէ. եւ եթէ ոչ դաշնակիցք լինին ներհակք, իսկ զմեծ թշնամութիւն յոլով մեծ սիրելութիւն ընդունի, եւ եթէ զինքեանս արարին պատահս իւրեանց ինչից. քանզի ասեն իսկ ցմիմեանս, եթէ „զգոյութիւնն զիմ յափշտակեցեր“. գոյութիւն կոչելով զինչսն եւ զինքեանս արարին պատահմունս, եւ ոչ ի դէպ պատահմունս, այլ պատահմանց պատահմունս, այսինքն՝ իւրեանց ինչից:*

## *ԸՆԴ ԱՑՍՈՍԻԿ ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՎ ԵՒ ԱՌԱՋԻԿԱ ՊՐԱԿՔՍ ԼԱ*

*„Բայց թուի գոյացութիւն“...*

*Չորրորդ յատուկ գոյացութեանն՝ ոչն ունել ներհակս՝ յղացաւ այլ յատուկս՝ զոչն ընդունել զյաւէտն եւ զնուազն. քանզի ներհակք կատարումն են, իսկ յաւէտն եւ նուազն ճանապարհ ի ներհակսն: Եւ կոչէ ներհակ, որպէս բերի յասելն՝ զսպիտակն*

---

1 A. *եթէ—անմահ է]* El. ὅτι ἡ ψυχὴ θνητή ἐστι 180,18. 2 A. *կարծէ—հոգի]* El. δοξάζει πάλιν τὸ ἀληθὲς ὅτι ἀθάνατος ἡ ψυχή 180,19. 3 A. *լուս. նաազէր զլնելութիւնքն* (*). 3—4 A. *իսկ—բանում]* El. ὁ δὲ θυμὸς εἴκει ποτὲ τῷ λόγῳ 180,20. 3 A. *ուղղ. նուազի փխ. նուաճի.* 5—6 A. *Համբեր—համբերեցեր]* El. 'τέτλαθι δή, κραδίη· καὶ κύντερον ἄλλο ποτ' ἔτλης' 180,22. *Հմմտ.* Hom. υ 18. 11 A. *այսինքն]* El. *չիք.* 12 A. *գիտութիւն]* El. ἡ γνῶσις αὐτή 180,26. 12—16 A. *եւ եթէ—յափշտակեցեր]* El. καὶ ὅτι οὐ συσπένδονται ποτε τὰ ἐναντία, ὡς ἐπὶ πᾶν δὲ τὰς μεγίστας ἔχθρας μέγισται φιλίαι διαδέχονται, καὶ ὅτι ἑαυτοὺς ἐποίησαν συμβεβηκότα τῶν ἑαυτοῖς ὑπαρχόντων (ἔστι γὰρ αὐτῶν ἀκοῦσαι λεγόντων ὅτι 'τὴν οὐσίαν μου ἥρπασας') 180,26—29. 18 A. *իւրեանց—ինչից]* El. τῶν ἰδίων πραγμάτων 180,31.

*եւ զսեաւն, որք եւ կատարումն ասին զոյգ, իսկ յաւէտն եւ նուազն զատ ի սպիտակէն ի թուխն փոխարկութիւն կամ՝ ի թխոյն ի սպիտակն՝ ոչ միահամուռն եղելոյ, այլ ճանապարհում ումեմն պիտանացեալ, ըստ յառաջմանն ի սպիտակէն ի թուխն փոփոխմանն: Արդ՝ ուր ներհակք՝ անդ յաւէտ եւ նուազ. եւ ուր յաւէտ եւ նուազ՝ անդ ներհակք: Եւ ուր ոչ են յաւէտն եւ նուազն՝ եւ ոչ ներհակք, եւ ուր ոչ ներհակք՝ եւ ոչ յաւէտ եւ նուազ. քանզի միշտ չորք այսոքիկ ասիցեալք հանդիպլին միմեանց: Այլ այսոքիկ ճշմարիտ են ըստ Պղատոնի, որ ամենայն իրի ներմիջակս ասէ. քանզի ոչ միահամուռ բնութիւն վազէ յամենեւիմք ներհակէ ի ներհակ. որգոն՝ սպիտակն ի թուխն ոչ միահամուռ փոխարկի, այլ ճանապարհաւ՝ նախ նուազ լինի սպիտակ, ապա եւս նուազ եւ ապա թուխ: Իսկ ըստ Արիստոտելի ոչ ամենայն ներհակաց միջակ, այլ գիտէ եւ առանց միջակաց ներհակ, թէպէտ եւ երկուս միայն՝ զղար եւ զկոճատ, զցաւ եւ զառողջութիւն: Եւ ոմանք ասեն, եթէ եւ այսոցիկ միջակք են. քանզի ղարին յերկուս բաժանիցելոյ, յերկուս եւ կոճատին բաժանիցելոյ՝ երեք անմիջակքն՝ ղարիցս ղարն, որ մինչեւ ցմիակն յերկուս բաժանի, որպէս լբ ի ժզ յը ի դ յբ ի ա, եւ կոճատաղարն, որ բազում հատմունս ղարինս ընկալեալ՝ ի կոճատ թիւ յանգի, որպէս խը ի իդ ի ժբ ի զ յգ, եւ ղարկոճատն՝ որ յերկուս բաժանեալ՝ նոյնժամայն ի կոճատ թիւ յանգի, որպէս ժը ի թ թ, որք են կոճատք: Այլ այսոցիկ թուոց ղարին եւ կոճատի միջակք են ասացեալքդ, իսկ հիւանդութեան եւ*

---

25—1 A. *Եւ կոչէ — զսեաւն]* El. καὶ καλεῖ μὲν ἐναντία, φέρε εἰπεῖν, τὸ λευκὸν καὶ τὸ μέλαν 181,1—2. 4—5 A. *ըստ — փոփոխմանն]* El. τῇ κατὰ πρόσβασιν ἐκ τοῦ λευκοῦ ἢ τοῦ μέλανος εἰς τὸ ἕτερον μεταποιήσει 181,5. 9—11 A. *Այլ — ներհակ]* El. ἀλλὰ ταῦτα ἀληθῆ καὶ κατὰ Πλάτωνα· ‹κατὰ γὰρ Πλάτωνα› πάντα ἔμμεσα λέγεται· οὐδὲν γὰρ ἀθρόως, φησί, μεταπηδᾷ ἀπὸ τοῦ ἐναντίου εἰς τὸ πάντως ἐναντίον 181,9—12. 12—13 A. *այլ — թուխ]* El. ἀλλ᾽ ὁδῷ τινι κέχρηται καὶ γίνεται ἧττον λευκὸν καὶ ἔτι ἧττον καὶ ἧττον καὶ οὕτω μέλαν 181,12—13. 17—19 A. *քանզի — ի ա]* El. τοῦ γὰρ ἀρτίου τοῦ δίχα διαιρουμένου μέσα τρία, ὁ ἀρτιάκις ἄρτιος, ὅστις ἕως μονάδος δίχα διαιρεῖται, ὡς ὁ τριάκοντα δύο εἰς δεκαὲξ καὶ ὀκτὼ καὶ τέσσαρα καὶ δύο καὶ μίαν 181,16—18. 21—23 A. *եւ ղարկոճատն — կոճատք]* El. καὶ εἰς περιττὸν λήγει τὸν τρία, καὶ ὁ ἀρτιοπέριττος, ὃς δίχα μὲν διαιρεῖται, εὐθέως δὲ τὰ τμήματα αὐτοῦ περιττά εἰσιν, ὡς ὁ ὀκτὼ καὶ δέκα εἰς ἐννέα καὶ ἐννέα διαιρούμενος 181,20—23. 24 A. *միջակք են ասացեալքդ]* El. μέσοι, ὥς φασιν, οἱ εἰρημένοι 181,24.

*ողջութեան վերադարձութիւնն։ Այլ Թերեւս ուրեք ասիցէ Արիստոտէլ, եթէ պարզ դարին, այսինքն հանուրցն, եւ պարզ կոճատին ոչինչ է ընդ մէջ, իսկ դուք զոմն դար ասէք եւ զոմն՝ կոճատ. քանզի դարիցս դարն ոմն դա՞ր է եւ ոչ հանուր։ Եւ հիւանդութեան եւ ողջութեան ոչինչ է ընդ մէջ. քանզի թէպէտ եւ կարծի գոլ մէջ վերադարձութիւնն, զոր ասեն բժիշկք՝ որպէս առ ի զգայութիւն զըստ բնութեանն եւ զոչ ըստ բնութեանն քննելով զողջութիւնն եւ զհիւանդութիւնն՝ ասեն մէջ գոլ զվերադարձութիւնն. իսկ Արիստոտէլ զստոյգ ըստ բնութեան եւ զստոյգ զոչ ըստ բնութեանն դատելով զողջութիւն եւ զհիւանդութիւն՝ ոչինչ ասէ նոցա մէջ գոլ։ Զայսոսիկ Արիստոտէլ։*

*Իսկ արտաքուստ տարակուսեն ասելով, եթէ զի՞արդ վերագոյնն ասէր՝ եթէ գոյացութիւն ընդունի զյաւէտն եւ զնուազն, իսկ այժմ ասէ՝ եթէ ոչ ընդունի։ Լուծանեմք զտարակուսութիւնս զայս. եւ ընդունի եւ ոչ ընդունի. քանզի ինքն ինքեան բաղդատիլով ոչ ասի յաւէտ եւ նուազ (որգոն՝ մարդ քան զմարդ ոչ ասի յաւէտ մարդ եւ նուազ, ոչ մարդ ինքն ինքեան), իսկ անհատ գոյացութիւն առ սեռականսն եւ առ տեսականսն գոյացութիւնն բաղդատելով առաւել գոյացութիւն է։ Երկրորդ տարակուսութիւն է, եթէ զի՞արդ Արիստոտէլ միշտ սովորութիւն ունի ասել ի բացատրութեան գոյացութեան յատկութիւն է (՞), թէ միայնում գոյ եւ ոչ միայնում եւ եթէ ամենայնում գոյ եւ ոչ ամենայնում՝ այժմ ոչինչ ի յայսպիսեաց յիշեաց։ Եւ ասեմք լուծումն այսպիսի, եթէ որպէս այն ինչ զտեալ ունելով զնա ընդ առաջին յատկին՝ այժմ եթող. քանզի եթէ ոչ ունէր ներհակ, որ յառաջ քան զսա էր յատուկ՝ հետեւի ոչ*

1—2 A. *Այլ — Արիստոտէլ]* El. ὁ δὲ Ἀριστοτέλης εἰκότως φαίη ἂν πρὸς τούτους 181,24—25. 2 A. *այսինքն հանուրցն]* El. *չիք*. 3—4 A. *եւ զոմն կոճատ]* El. *չիք*. 4 A. *եւ ոչ հանուր]* El. οὐχ ἁπλῶς ἄρτιος 181,27. 6 A. *զոր ասեն բժիշկք]* El. κατὰ τοὺς ἰατρούς 181,28. 7—8 A. *եւ որ չէ զանցաբանութեանն փխ. զոչ ըստ բնութեանն]* El. καὶ παρὰ φύσιν 181,29. 10 A. *զըստոյգ]* El. *չիք*. 14—15 A. *Լուծանեմք — զայս]* El. καὶ λύομεν τὴν ἀπορίαν οὕτως 181,31—182,1. 16—20 A. *որգոն — գոյացութիւն է]* El. (ἄνθρωπος γὰρ ἀνθρώπου οὐ λέγεται μᾶλλον ἄνθρωπος, οὐδὲ αὐτὸς ἑαυτοῦ), ἡ μέντοι ἄτομος οὐσία πρὸς τὰς γενικὰς καὶ εἰδικὰς παραβαλλομένη μᾶλλον οὐσία ἐστί 182,2—4. 21—22 A. *սովորութիւն — յատկութիւն է]* El. ἔθος ἔχων ἐν τῇ ἀποδόσει τῶν ἰδίων τῆς οὐσίας λέγειν 182,5—6. 24—25 A. *եթէ — եթող]*. El. ὅτι ὡς συνεπικριθὲν αὐτὸ ἔχομεν τῷ πρὸ τούτου ἰδίῳ, νῦν παρῆκεν αὐτό 182,7—8.

ընդունել զյաւէտն եւ զնուազն. իսկ նա ոչ միայնում գոյացութեան գոյ, եւ ոչ սա միայն գոյացութեան գոյ, այլ եւ քանակում. քանզի եռականգունն եւ քառականգունն ոչ ընդունին զյաւէտն եւ զնուազն, եւ ոչ հինգն կամ տասն: Իսկ երրորդ տարակուսութիւն է, զի եթէ զյաւէտն եւ զնուազն, ասէ, ոչ ընդունի գոյացութիւն՝ զիա՞րդ Արիստոտէլ ներում Յաղագս լինելութեան եւ ապականութեան ասէ նուազ ջերմ գոլ զաւդ քան զհուր, որք են գոյացութիւնք: Լուծումն սորին յԱղեքսանդրոսէ, եթէ ոչ ըստ որում գոյացութիւնք են՝ ընդունին զյաւէտն եւ զնուազն, այլ ըստ որակութեանց: Իսկ Սիւրիանոս ասէ, եթէ եւ ոչ ըստ որակութեանց ընդունին զյաւէտն եւ զնուազն, յորժամ գոյեղուտ առցին որակութիւնքն. քանզի իւրաքանչիւր ոք յոլովեն յիւրում յենթակայումն, եւ ոչ եթէ յաւէտիւն եւ նուազիւն զանազանին. քանզի տեսակարարիցեալք են այսոքիկ եւ զիջմունք տեսակաց են: Եւ այլազգաբար. եթէ նուազն, որ ինչ յաւէտն է եղեալ՝ ոչ արտակայացաւ յիւրմէ տեսակէն, իսկ չափաւոր ինչ ջերմութիւն հրոյ ընկալեալ՝ կորոյս զգոլն:

## ԸՆԴ ԱՅՍՈՍԻԿ ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՎ ԵՒ ԱՌԱՋԻԿԱ ԳՐԱԿՔՍ ԼԲ

„Եւ մանաւանդ զի ուրոյն գոյացութեան որ միեւնոյն".

Վեցերորդ յատուկ գոյացութեան զմի եւ զնոյնն թուով ներհակացն գոլ ընդունակ ըստ մասին: Եւ բարւոք առկայացաւ ըստ մասին, վասն զի ոչ համայն եւ սպիտականայ եւ թխանայ Սոկրատէս, եւ ոչ համայն հիւանդանայ եւ ողջանայ: Մի եւ նոյն թուով բարիոք առկայացաւ, վասն զի եւ թիւ ընդունի զներհակսն, այլ ոչ միով թուով տեսակաւ, ուր եւ ոչ միով թուով

5 A. *ասէ]* El. չիք. 8 A. *Լուծումն—յԱղեքսանդրոսէ]* El. καὶ λύει ὁ Ἀλέξανδρος λέγων 182,15. 9 A. *որում* չիք. 10 A. *ասէ]* El. չիք. 12—13 A. *քանզի—յենթակայումն]* El. ἑκάστη γὰρ πλείστη ἐστὶν ἐν τῷ οἰκείῳ ὑποκειμένῳ 182,18—19. 16—17 A. *իսկ չափաւոր—զգոլն]* El. ὁ δὲ ἀὴρ ἀμετρίαν πυρίας θερμότητος ἐπιδεξάμενος ἀπώλεσε τὸ ἀὴρ εἶναι 182,21—22. 25 A. ուղղ. *եւ բարիոք.* 25—1 A. *վասն զի—կոճատն]* El. ἐπειδὴ καὶ ὁ ἀριθμὸς δέχεται τἀναντία, ἄρτιον καὶ περιττόν, ἀλλ' οὐχ εἷς τῷ ἀριθμῷ, ἀλλ' εἷς τῷ εἴδει. ἄλλως τε δὲ οὐδὲ ὡς ἐν ἀριθμῷ συνίσταται τὸ ἄρτιον καὶ περιττὸν 182,30—32.

*բաղկանան դարն եւ կոճատն, այլ որպէս ի նիւթում, որ կարող է ի դար եւ ի կոճատ բաժանիլ ***. քանզի կանգնեան փայտն եւ ի դար բաժանի եւ ի կոճատ: Եւ դարք ծիք կարող գոն կոճատ լինիլ միոյ առաղրիցելոյ կամ ի բաց բարձելոյ: Այլ եւ գոյն թէպէտ եւ ընդունի զներհակսն, որգոն զսեաւն կամ զսպիտակն, այլ ոչ որպէս մի թուով, այլ որպէս մի տեսակաւ: Բայց յատուկս այս միայն գոյացութեան է վասն այսպիսոյ բանի. որ ներհակաց է ընդունական՝ պատահմանց է ընդունակ (քանզի ամենայն ներհակք պատահք են), իսկ որ պատահմանց ընդունակ է՝ ենթակայէ պատահմանց, իսկ պատահմանց ենթակայն՝ գոյացութիւն է. ապա ուրեմն՝ միայնում գոյացութեան է յատուկս այս: Բայց ոչ ամենեցուն է. քանզի երկրորդք գոյացութիւնքն անյեղլիք գոլով՝ ոչ ընդունին զներհակսն, այլ եւ ոչ ամենայն անհատիցն է. քանզի եւ երկնայինքն անյեղլիք գոլով՝ ոչ ընդունին զներհակսն: Այլ եւ ամենայն անհատք զգալեացս ոչ ընդունին զներհակսն, որպէս ումանք կարծեցին վասն կարապին, թերեւս ուրեք, որ ըստ սպիտակութեանն ոչ փոփոխի: Առ որս ասելի է, թէպէտ եւ զհակադրութիւնս զայս ոչ ընդունի, այլ սակայն զայլ հակադարձութիւնսն ընդունի՝ զջերմոյն եւ զցրտոյն, զցամաքոյն եւ զխոնաւոյն: Եւ այսոքիկ այսպէս:*

*Բայց տարակուսէ յընքեան Արիստոտէլ, եթէ ոչ միայնում գոյացութեան գոյ այս. քանզի թուի եւ բան եւ կարծիք ընդունել զներհակսն, յորոց ումն քանակ է, այսինքն բանն, եւ ումն որակ կարծիքն. բայց երկոքին բանք, այլ ումն՝ առաջաբերական եւ ումն՝ ներտրամադրական. քանզի բան, որ ասէ՝ եթէ „Սոկրատէս նստի“՝ ճշմարտէ տակաւին ի նստելն Սոկրատայ, իսկ ստէ յարուցելոյ նորա: Նմանապար եւ զկարծիս իմացիս: Բայց լուծանէ զտարակուսութիւնս զայս Արիստոտէլ ըստ ներկացութեան եւ ըստ հակայյարակացութեան: Եւ սկիզբն առնէ*

---

2 El. 182,33 ὕλης γὰρ ἴδιον — *մինչեւ* 183,4 τὸ εἰρημένον] A. *չիք*. 3—4 A. *կոճատ — առաղրիցելոյ]* El. περιττοὶ γενέσθαι ἑτέρου προσθήκῃ 183,6. 4 A. *կամ ի բաց բարձելոյ]* El. *չիք*. 15—16 A. *Այլ — զներհակսն]* El. ἀλλ' οὐδὲ πᾶσαι αἱ ἐνταῦθα ἄτομοι οὐσίαι ἐπιδέχονται τἀναντία 183,14—15. 16—17 A. *ուղղ. կարափին*. 23—24 A. *յորոց — կարծիքն]* El. ὧν ὁ μὲν λόγος ποσὸν ἡ δὲ δόξα ποιόν 183,20—21. 24 A. *ուղղ. երկոքին են*. 28—29 A. *Բայց — ըստ հակայյարակացութեան]* El. καὶ λύει αὐτὸς καὶ κατὰ ἔνστασιν καὶ κατὰ ἀντιπαράστασιν 183,24.

*ի հակայարակացութենէ, որպէս գործակից լինելով նմա ի ներկացութեան: Եւ ունի այսպէս. զի եթէ տամք՝ եթէ բան եւ կարծիք ընդունին զներհակսն, այլ յեղանակ ընդունելութեանն զանազան է. քանզի գոյացութիւն ըստ ընքեան փոփոխմանն ընդունի զներհակսն, իսկ բան եւ կարծիք ինքեանք անշարժ ամենեւին գոլով, իսկ իրին փոփոխեցելոյ՝ ասին եւ նոքա փոփոխել զաւրէն այնորիկ՝ որ յաջմէ է եւ ապա ի ձախմէ լինի՝ ընգերին փոխակացելոյ: Արդ՝ պէտք են տրամորոշման բանիս. քանզի պէտս ունի առադրութեան ըստ իւր ինքեանն փոփոխման, որպէս զի գոլ բանին այսպէս. եթէ միեւնոյն գոլով թուով՝ գոյացութիւն ընդունական է ներհակացն մասնաքար ըստ իւր ինքեան փոփոխմանն: Բայց է եւ այլազգ լուծանել զտարակուսութիւնս զայս, եթէ ոչ մնաց իսկ նոյն բան. քանզի այլ է որ ասացն „Սոկրատէս նըստի", եւ այլ է, որ ասացն՝ „ոչ նըստի"՝ այն ինչ յարուցելոյ նորա՝ բայ ինչ ասացեալն ոչ է. քանզի ոչ մնայ յիրին փոփոխման, որպէս զի ճշմարտեսցէ կամ ստեսցէ: Նմանապէս եւ կարծիք այլ է՝ որ առ ըստ ձեռնութեանն է՝ որ ասէ „Սոկրատէս նստի", եւ այլ է որ նախաձեռնի որ ասէ, եթէ „Սոկրատէս ոչ նստի"՝ յարուցելոյ նորա: Արդ թէպէտ եւ տամք, եթէ նոյն ինքն կարծիքն ընդունին զճշմարիտն եւ զսուտն, այլ ոչ եթէ կարծիք ըստ ինքեան ճշմարտէ եւ ստէ, այլ անձնն՝ ըստ կարծեաց. քանզի ոչ եթէ կարծիք ըստ ընքեան կարծէ, այլ անձն ըստ կարծեացն կարծէ. քանզի որպէս ոչ ասեմք զձեռն նիւթել, այլ զմարդն ձեռամբ՝ նոյնպէս եւ ոչ կարծիք կարծեն, այլ անձն ըստ կարծեաց կարծէ: Եւ զայսոսիկ հակյարակացութիւնն: Իսկ ներկացութիւն խոտելով զայն*

1—2 A. *որպէս — ի ներկացութեան]* El. ὡς συμβαλλομένης πρὸς τὴν ἔνστασιν 183,25. 5—6 A. *անշարժ — գոլով]* El. ἀκίνητα πάντῃ τε καὶ πάντως διαμένει 183,28—29. 8 A. *ընգերին փոխակացելոյ]* El. τῇ τοῦ ἑτέρου μεταστάσει 183,30. 8 A. *Արդ — բանիս]* El. δεῖται οὖν προσδιορισμοῦ ὁ λόγος 183,31. 14 A. *„ոչ նըստի"]* El. 'Σωκράτης οὐ κάθηται' 183,33. 15—16 A. *բայ — փոփոխման]* El. ὁ γὰρ λόγος ἅμα ἐρρήθη καὶ οὐκ ἔστιν· οὐδὲ γὰρ ἀναμένει τὴν τοῦ πράγματος μεταβολήν 183,36—37. 17 A. *որ — է]* El. ἡ κατὰ προχείρισιν 184,2. 20 A. *եթէ — ընդունին]* El. ὅτι ἡ δόξα ἐπιδέχεται 184,4. 25 A. *ուղղ. եւ զայսոսիկ է.* 26—1 A. *Իսկ — ասաց]* El. ἡ δὲ ἔνστασις τῆς ἀντιπαραστάσεως λαβομένη τῆς λεγούσης 184,9.

զոր հակյարկացութիւնն ասաց, եթէ բան եւ կարծիք ինքեանք անշարժ մնալով եւ իրին փոփոխեցելոյ՝ ընդունակք լինին ներհակացն, արդ ասէ՝ եթէ ոչ ընդունին զներհակսն. քանզի ոչինչ՝ որ ինքն ոչ փոփոխի՝ կարող գոյ զներհակսն ընդունել. ապա եթէ ոչ՝ զի՞նչ իցէ որ արգելու զներհակսն ի միասին գոլ, որգոն՝ զպակասութիւն եւ զթխութիւն ի միում ենթակայում: Եւ է կատարելագոյն ներկացութիւնն քան զհակյարկացութիւն, վասն զի տրամորոշման ոչ ունի պէտս: Եւ այսոքիկ այսպէս: Այլ թերեւս ասիցէ ոք զԱրիստոտէլ, եթէ „զի՞նչ ասես, ո՞վ Արիստոտելէս, բան ո՞չ ընդունի զճշմարիտն եւ զսուտն": Եւ թէ ասիցէ ուրեք Արիստոտէլ, եթէ ոչ բանն միայն էակ ճշմարտէ եւ ստէ, եւ ոչ իրն միայն, այլ ընդ միմեանս հիւսումն բանին եւ իրին. քանզի ձայնակցութիւն երկուցունցն առնէ զճշմարիտն, իսկ անձայնակցութիւն՝ զսուտն. քանզի որպէս ագանիլն զկաւշիկն ոչ ոտինն միայն, այլ ի պատկանութիւն ոտինն առ կաւշիկն՝ նոյնպէս է ի վերայ բանի եւ իրի:

Բայց տարակուսին չորս տարակուսանս. նախ՝ եթէ „զի՞արդ ասես, ո՞վ Արիստոտելէս, եթէ գոյացութիւն միայն ընդունի զներհակսն. քանզի ահա եւ գիծ ունի ուղղութիւն եւ զելութիւն": Առ որս ասեմք, եթէ ո՞ր գիծ՝ ուսմնականն, այսինքն՝ որ մտածութեամբն առեալ լինի: Եւ եթէ զայն ասիցեն՝ այնպիսին յայլ եւ յայլժամ այլաբան իմանի: Իսկ եթէ զբնաւորական գիծն ասիցեն՝ նիւթն ըստ գծին ընդունի զներհակսն: Երկրորդ տարակուսութիւն, եթէ „ահա եւ նոյն ինքն գործ չար աննահանջ գոլով եւ գովելի է եւ պարսաւելի. պարսաւելի առ առաջինին, իսկ գովելի առ անառակն: Լուծումն սորին, եթէ նա որպէս ի

---

2 A. *եւ իրին փոփոխեցելոյ]* El. ἀλλὰ τῇ τοῦ πράγματος περὶ οὐσίαν μεταβολῇ 184,10. 4—5 A. *ապա — գոլ]* El. ἐπεὶ τί κωλύει τἀναντία συνυπάρχειν ἀλλήλοις 184,12—13. 9 A. *Այլ թերեւս ասիցէ ոք]* El. Εἰκότως δὲ ἀπορήσει τις 184,16. 11—12 A. *եթէ — ստէ]* El. ὅτι οὐδὲ ὁ λόγος ἀληθεύει καὶ ψεύδεται ἅμα 184,18. 15 A. *ոչ ոտինն միայն]* El. οὐχ ἐν τῷ ποδὶ μόνον οὐδὲ ἐν τῷ ὑποδήματι μόνον 184,21. 20—22 A. *ուսմնականն — իմանի]* El. εἰ μὲν ἡ μαθηματική, τοῦτ᾽ ἔστιν ἡ ἐπινοίᾳ λαμβανομένη, αὕτη ἄλλοτε ἄλλη ἐπινοεῖται 184,26—27. 23 A. *զներհակսն]* El. *չիք*. 23—26 A. *Երկրորդ — առ անառակն]* El. ἔτι ἡ δευτέρα ἀπορία· ὅτι 'ἰδοὺ ἡ αὐτὴ πρᾶξις, οἷον ἡ ἀκρατής, καὶ φαύλη ὡς πρὸς τὸν σπουδαῖον καὶ ἐπαινετὴ ὡς πρὸς τὸν ἀκόλαστον'. 184,28—30. 26 A. *Լուծումն սորին]* El. καὶ ἔστιν ἡ λύσις 184,30.

*նոյնում այժմ զերկոսեան ունելով ընգալեալ երեւի զներհակսն, իսկ անընդունական կայ. եւ եթէ առ այլ եւ առ այլ յարաբերականիլ գրելով թուի ընդունել զներհակսն, վասն զի զաւրութեամբ եւ ոչ ներգործութեամբ: Երրորդ տարակուսութիւն է, թէ „նոյն շարժումն ընդունի զարագութիւն եւ զյամրութիւն“: Եւ ասեմք, եթէ ոչ է մի թուով. քանզի այլ է արագն եւ այլ է յամրն: Չորրորդ տարակուսութիւն՝ „զիա՞րդ, ասէ, ժամանակ ընդունի զլոյս եւ զխաւար, զտիւ եւ զգիշեր“: Եւ ասեմք, եթէ ոչ ժամանակ, այլ աւդ է՝ որ զայսոսիկ ընդունի: Իսկ աւդ գոյացութիւն է: Այսոքիկ եւ յաղագս գոյացութեան: **

## ՅԱՂԱԳՍ ՔԱՆԱԿԻ

*„Եւ քանակին է՝ ինչ որ տարորոշ եւ է ինչ որ շարունակ“.*

*Յետ գոյացութեան զքանակէ բուռն հարկանէ Արիստոտէլ: Եւ պարտ է վեց գլուխս ոմանս խնդրել ի վերայ մերձակայ ստորոգութեանս. նախ՝ զկարգաւորութիւն նորին առ գոյացութիւն, երկրորդ՝ եթէ սեռ քանակն շարունակին եւ տարորոշիցելոյն, երրորդ՝ եթէ այսոցիկ միայն է սեռ, թէ եւ մւտի, որպէս ասէ Պղատոն եւ Արքիւտաս եւ Պտղոմէոս աստեղաբաշխ. չորրորդ՝ եթէ զի՞նչ է շարունակն եւ զի՞նչ տարորոշեալն. հինգերորդ՝ եթէ ողջաբար ունի զբաժանումնն տարորոշիցելոյն. վեցերորդ՝ եթէ ողջաբար ունի զբաժանումն շարունակին: Արդ՝ վեց ելոց առաջիկայ տեսութեանս՝ զերկուսս զայսոսիկ միայն խնդրելի է, զի՞նչ է կարգաւորութիւն, այսինքն՝ ընդէ՞ր յետ գոյացութեան զքանակէ բուռն եհար: Եւ ասեմք, եթէ ըստ վեց պատճառաց. նախ՝ եթէ երկոքումբք իւր յատկաւք գոյա-*

---

1 A. ուղղ. *երեւի ունել.* 1—5 A. *ընգալեալ—զյամրութիւն]* El. δεδεγμένη ἐστὶ τἀναντία, ἐκεῖ δὲ πρόσκειται τὸ δεκτική, καὶ ὅτι πρὸς ἄλλο καὶ ἄλλο παραβαλλομένη τἀναντία δοκεῖ ἔχειν, οὐ καθ' αὑτήν, διὸ καὶ δυνάμει, οὐχ ἐνεργείᾳ. τρίτη ἀπορία· ὅτι 'πῶς ἡ αὐτὴ κίνησις ἐπιδέχεται καὶ ταχυτῆτα καὶ βραδυτῆτα;' 184,31—34. 10 El. ἐν οἷς σὺν θεῷ καὶ ἡ παροῦσα πρᾶξις 185,2—3] A. *չիք.* 16 A. ուղղ. *սեռ է.* 18 A. *արքիմաս]* El. Ἀρχύτας 185,10. 22—23 A. *Արդ—խնդրելի է]* El. ὧν ἐξ ἡ παροῦσα θεωρία τὰ <πρῶτα> δύο ζητήσει 185,12—13.

*ցութիւն հաղորդի քանակումն՝ ոչինչ ունելովն ներհակս եւ ոչ ընդունելովն զյաւէտն եւ զնուազն, որով յորակէն զանազանի. քանզի որակումն ոչինչ յայսցանէ գոյ: Արդ՝ եթէ հաղորդի քանակն գոյացութեանն, իսկ որք հաղորդինն միմեանց՝ հուպ գոն ի միմեանս՝ յիրաւի յետ գոյացութեան զքանակէ բուռն հարկանէ: Երկրորդ պատճառ՝ եթէ նիւթ անտեսակ գոլով եւ անորակ՝ նախ քանականայ եւ ապա որականայ: Երրորդ՝ եթէ նիւթ յորակէն հանդուրժեաց փախչիլ, իսկ ի քանակէն ոչ. քանզի մի է թուով, իսկ մին եւ եզն քանակին է ըստ Արիստոտէլի: Չորրորդ՝ զոր պարտ էր երկրորդ ասել ի պատճառսն, եթէ պարտ էր յետ լինելոյ զքանն՝ որ յաղագս շատին եւ սակաւուն էր, եւ յաղագս փոքու եւ մեծի, որք յարաքարշին ի քանէն՝ որ յաղագս գոյացութեան (քանզի յիշեաց անդ զշատն եւ զսակաւն, զմեծն եւ զփոքրն), իսկ այժմ փութալի է՝ որ յաղագս նոցա քանն է: Իսկ եթէ տարակուսիցեն ասելով, եթէ „եւ զորակութիւն յիշեաց ի գոյացութեան յառաջ քան զքանակն, յորժամ ասէրն՝ եթէ երկրորդ գոյացութիւնքն այսպիսի ինչ եւ որակութիւն նշանակեն, եւ վասն է՞ր ոչ զորակն նախադասեաց քանակին“: Ասեմ քեզ եւ ես, եթէ զորակութիւն յիշեաց՝ ոչ զայժմու առաջիկացեալս՝ որ առնէ զմի ստորոգութիւն պատահման, այլ զգոյեղուտ որակութիւն յիշեաց. քանզի որ առ գոյացութեամբ որակութիւն է՝ զայն բացորոշեն երկրորդ գոյացութիւնք: Հինգերորդ պատճառ է, թէեւ պարտ էր զքանակէ բուռն հարկանել յետ գոյացութեան, վասն զի եւ գոյացութիւն զառաջին եւ զերկրորդն ընդունի, իսկ առաջինն եւ երկրորդն քանակի են: Վեցերորդ պատճառ է, թէեւ նոյն ինքն կարգաւորութիւն քանակի է, վասն զի եւ թիւ՝ որ առնէ զկարգաւորութիւն՝ քանակի է: Ընդ այսոսիկ եւ առաջին գլուխն:*

---

2 A. *որով յորակէն զանազանի*] El. κατ' ἄμφω ταῦτα τοῦ ποιοῦ διαφέρει 185,16 8 A. *յորակէն — փախչիլ*] El. τὸ μὲν ποιὸν ἴσχυσε διαφυγεῖν (ἄποιος γάρ) 185,20—21. 10—14 A. *եթէ — քանն է*] El. ὅτι ἔδει πληρωθῆναι τὸν περὶ πολλοῦ καὶ ὀλίγου λόγον καὶ μικροῦ καὶ μεγάλου, παρέλκοντα μὲν ἐν τῷ περὶ τῆς οὐσίας λόγῳ (ἐκεῖ γὰρ μέμνηται αὐτῶν), νῦν δὲ κατεπείγοντα 185,23—25. 19 A. *ասեմք փխ. ասեմ*] El. ἐρῶ 185,28. 22 El. αἱ δεύτεραι οὐσίαι 185,31] A. *երկիր գոյացութիւն*. 22 A' *հինգերորդ*. 27 A. *քանակի է*] El. *չիք*.

*Երկրորդ գլուխ՝ եթէ սեռ է քանակն շարունակին եւ տարորոշելոյն. քանզի կարծեսցի ոչ գոլ սեռ, վասն զի յայնոսիկ՝ որք որպէս զսեռ ի տեսակս բաժանին՝ տեսակքն ոչ ունին պէտս միմեանց. որգոն՝ բանականն ոչ ունի պէտս անբանականում եւ անբանն ոչ ունի պէտս բանականումն: Եւ դարձեալ սոցա ի բաց բարձեցելոյ մնան. քանզի մարդոյ ի բաց բարձեցելոյ՝ մնան ձի եւ եզն եւ այլ տեսակք: Իսկ շարունակ քանակն պէտս ունի տարորոշիցելոյն, վասն զի ամենայն մարմնոյ երեք են տարակացութիւնք: Արդ՝ մարմին շարունակ քանակին է, իսկ երեքն տարորոշիցելոյ քանակին: Եւ ասեմք՝ եթէ մարմին երիս պէտս կալաւ տարակացութեան, եւ ոչ եթէ երից թուոց. քանզի պատահեաց նոցա վայրապար երից գոլ. ապա եթէ երեք՝ որպէս երեք բաղկացուցանեն զմարմին՝ պարտ էր զորեւէ երիս առնուլ եւ բաղկացուցանել զմարմին. որգոն՝ զսպիտակն եւ զթուխն եւ զխարտեաշն: Երկրորդն էր ընդդիմակացութիւն, եթէ ոչ է սեռ քանակն շարունակին եւ տարորոշիցելոյն. քանզի յայնոսիկ՝ որք որպէս զսեռ ի տեսակս բաժանին՝ տեսակքն ոչ ունին կարգաւորութիւն. իսկ Արիստոտէլ միշտ զտարորոշիցեալն նախադասէ շարունակումն: Առ որ ասեմք, եթէ ոչ ըստ հասարակ բնութեանն ընկալան զկարգաւորութիւն. քանզի նմանապէս քանակ է երկաքանչիւր ոք ի նոցանէ՝ որպէս բանականն եւ անբանն նմանապէս կենդանիք. բայց նախադասեալ է բանականն վասն պատուականութեան, այսպէս եւ տարորոշիցեալն նախադասեալ է քան զշարունակն, զի նախադասիցեալ է պատուականութեամբ տարորոշեալն քան զշարունակն. քանզի տարորոշիցեալ քանակն միով տեսակաւ իւրով, թուով, ընդ ամենայն էակսն գոյանցեալ. քանզի իւրաքանչիւր ոք յէակացն կամ եզ է եւ կամ բազում:*

---

5—7 A. *եւ անբանն — տեսակք]* El. οὐδὲ τὸ ἄλογον τοῦ λογικοῦ πρὸς ὕπαρξιν· ἀνθρώπου γὰρ ἀναιρεθέντος μένει ἵππος καὶ βοῦς καὶ τὰ τοιαῦτα, καὶ πάλιν τούτων ἀναιρεθέντων μένει ἄνθρωπος 186,3—5. 13—14 A. *պարտ էր — զմարմին]* El. ἔδει τὰ τυχόντα τρία συνιστᾶν τὸ σῶμα 186,10. 19 A. *միշտ]* El. *չիք*· 20 A. *ոչ ըստ հասարակ բնութեանն]* El. οὐ κατὰ τὴν τοῦ κοινοῦ φύσιν 186,14. 25—26 A. *զի նախադասիցեալ է — մինչեւ քան զշարունակն]* El. *չիք*. 26 A. *տարորոշիցեալ քանակն]* El. τὸ διωρισμένον 186,17.

## ԸՆԴ ԱՅՍՈՍԻԿ ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՎ ԵՒ ԱՌԱՋԻԿԱ ՏԵՍՈՒԹԻՒՆՍ ԼԴ

*„Եւ քանակին՝ է ինչ որ տարորոշ է եւ է ինչ որ շարունակ“.*

*Երրորդ գլուխ էր առաջադրեցելոցն ի խնդրել, եթէ այսոցիկ միայն է սեռ՝ թէ եւ միտի՝ որպէս ասէ Պղատոն: Եւ ասեմք, եթէ ոչ կարէ մէտ երրորդ տեսակ գոլ քանակի, վասն զի մէտ կիր է շարունակ քանակի. քանզի ամենայն մարմին կամ թեթեւ է կամ ծանր. քանզի որպէս ջերմութիւն գոյեղուտ որակութիւն է ի հրում, եւ դարութիւն եւ կոճատութիւն որակութիւնք են քանակուտք ի թուում՝ նոյնպէս եւ թեթեւութիւն եւ ծանրութիւն որակութիւնք են քանակուտք ի մարմնում. քանզի ամենայն, որպէս ասացաք, կամ թեթեւ է կամ ծանր է: Եւ այլազգ զայս ցուցանել, եթէ ոչ են տեսակք քանակի թեթեւութիւն եւ ծանրութիւն, այլ կիրք, վասն զի տարորոշիցեալն այն ինչ յաստուածայինսն եւ յաննիւթսն եւ յիմանալիսն տեսանի, յորս ոչ է մէտ: Արդ՝ առաջին տեսակ քանակի տարորոշիցեալն, իսկ երկրորդն սորին հակակայն ոչ տարորոշիցեալն, որ է շարունակ, այսինքն՝ գիծ, մակերեւութիւն, մարմին: Եւ ոչ ոք ի սոցանէ է թեթեւ կամ ծանր՝ ոչ գիծ, ոչ մակերեւութիւն եւ ոչ ուսմնական մարմին եւ ոչ անորակ մարմին, այլ որակիցեալն միայն: Եւ պարզաբար ասել՝ եթէ կիրք եւ ոչ քանակք մէտք:*

*Չորրորդ գլուխ էր, յորում խնդրէաք՝ եթէ զի՞նչ է շարունակն եւ զի՞նչ տարորոշիցեալն, եւ եթէ ողջաբար ունին ենթագրութիւնք սոցին՝ ըստ կարգին ասել արժան է: Արդ՝ շարու-*

9—11 A. *որակութիւնք են — մինչեւ եւ ծանրութիւն]* El. *չիք*. 11 A. *քանակուտք]* El. οὐσιώδεις 186,24. 11—12 A. *քանզի — ծանր է]* El. διὰ τὸ πᾶν σῶμα ἢ κοῦφον εἶναι ἢ βαρὺ 186,25. 13 A. *ուղղ. ցուցանել է*. 17 A. *իսկ — տարորոշիցեալն]* El. δεύτερον δὲ τὸ ἀντικείμενον τῷ διορισμένῳ 186,29. 18—19 A. *եւ ոչ ոք — ծանր]* El. οὐδὲν δὲ τοιοῦτον κοῦφόν ἐστιν ἢ βαρύ 186,30. 21—22 A. *Եւ — մէտք]* El. πάθη οὖν καὶ οὐ ποσὰ ἁπλῶς αἱ ῥοπαί 186,32. 22 A. *Չորրորդ — խնդրէաք]* El. Τέταρτον ἦν τὸ ζητῆσαι 186,33. 25—8 A. *Արդ — Նշան]* El. συνεχὲς τοίνυν ἐστιν εἰπεῖν οὗ τὰ μόρια πρὸς ἕνα κοινὸν ὅρον συνάπτει, τοῦτ' ἔστι τὸ σημεῖον 187,1—2.

*նակ է, որոյ մասնկունք առ միմեանց սահման շարամերձին. որգոն՝ գծին մասնկունք առ մի ումն հասարակ սահման շարամերձին, այսինքն՝ նշան. քանզի եթէ բաժանես զգիծն ի քանիս եւ կամիցիս հատածս՝ մասնկունք նորին ըստ նշանին շարամերձին ի միմեանս: Բայց պարտ է զմասնկունս շարունակին զաւրութեամբ առնուլ եւ ոչ ներգործութեամբ. ապա եթէ ներգործութեամբ առնումք զնոսա՝ առնեմք զշարունակն տարորոշիցեալ, եւ ապականացու եղիցի սահման սահմանելոյն, որով եւ զերկնայինսն՝ շարունակ եղեալս եւ անկիրս՝ առնեմք ապականացուս եւ բաժանելիս: Եւ ոչ միայն զմասնկունս շարունակին զաւրութեամբ առնլի է, այլ եւ զըստիքսն, այսինքն՝ զնշանսն, զաւրութեամբ արժան է առնուլ եւ ոչ ներգործութեամբ. զի եթէ ներգործութեաբ առնումք, որպէս յառաջագոյն ասացաք, տարորոշիցեալ առնեմք զշարունակն. քանզի եզերք գծիցն նշանք, ապա եւ մասանցն գծիցն գիծք. քանզի եւ սոքա գիծք: Արդ՝ այսպէս ասացի յաղագս շարունակի: Իսկ տարորոշիցեալ, որոյ մասնկունք ոչ շարամերձին առ մի ումն հասարակ սահման. քանզի մասնկունք հընգի կամ երից ոչ շարամերձին առ մի հասարակ սահման: Բայց արժան է եւ աստանաւր զմասնկունսն ներգործութեամբ առնուլ եւ ոչ զաւրութեաբ, զի եթէ զաւրութեամբ առնումք զմասնկունսն՝ շարունակ առնեմք զտարորոշիցեալն, եւ եղիցի սահման սահմանելոյն ապականացուն:*

*Հինգերորդ արժան է խնդրել, եթէ ողջաքա՞ր ունի բաժանումն տարորոշիցելոյն. քանզի բաժանի տարորոշիցեալն ի թիւ եւ ի քան. երկաքանչիւր ոք ի սոցանէ տարորոշիցեալ է. թիւ՝ իհարկէ. քանզի թէ էր շարունակ՝ արժան էր գոլ հասարակ ինչ միակ, որ երբեմն ընդ միումն առեալ լինիւր եւ եր-*

---

8 A. *եւ ապականացու — սահմանելոյն]* El. καὶ φθαρτικὸς ἔσται ὁ ὁρισμὸς τοῦ μεριστοῦ 187,6. 13 A. *որպէս յառաջագոյն ասացաք]* El. *չիք*. 16 A. *գիծք]* El. *չիք*. 16 A. *Արդ — յաղագս շարունակի]* El. καὶ ταῦτα μὲν περὶ τοῦ συνεχοῦς 187,12. 21—23 A. *զի եթէ — ապականացուն]* El. ἐὰν γὰρ λάβῃ τις μόρια δυνάμει, ποιήσει τὸ διωρισμένον συνεχές, καὶ ἔσται ὁ ὁρισμὸς αὐτοῦ φθαρτικὸς 187,15—17.

*քեմն ընդ միւսումն. որգոն՝ որպէս ի վերայ մասանց իննանն * արժան էր գոլ միակ, որպէս միջակ ինչ՝ որ ընդ վեցին առնլով՝ ութն առնէր զնա, եւ ընդ երիցն առնլով՝ չորս առնէր զնա, եւ զտանիւր ինն տասն եւ տասն մետասան, որ է անտեղի. քանզի ոչ եթէ որպէս ի վերայ նշանի եւ աստ նոյն համեմատութիւն պատի. քանզի նշան առադրեալ ոչ աճեցուցանէ եւ ոչ ի բաց բարձեալ պակասեցուցանէ, իսկ միակն առադրեալ աճեցուցանէ եւ ի բաց բարձեալ պակասեցուցանէ զքանակն, այսինքն՝ զթիւն: Բայց եւ բան տարորոշիցեալ է, վասն զի ընդ մէջ ամենայն երկուց փաղառութեանց լռութիւն է, որպէս ի Դաւիթ անունն. քանզի ի „դաւ“ փաղառութեանն այլ արտաձայնութիւն է եւ ի „յիթ“ փաղառութեանն այլ արտաձայնութիւն: Արդ՝ դադարումն արտաձայնութեան առաջին փաղառութեանն լռութիւն նորին է, եւ յայնժամ՝ սկիզբն առնէ արտաձայնիլ երկրորդ փաղառութիւն: Եւ զայն պարտ է իմանալ լռութիւն ընդ մէջ փաղառութեանցն զաննմանաբար արտաձայնութիւնս՝ որ ի ձեռն բաղաձայնիցն աննմանութեան. քանզի եւ ընդ մէջ երկուց ներհակաց շարժմանց է դադարումն, որպէս եւ յերակսն ցուցանի: Իսկ եթէ ոչ է բաղաձայն ընդ մէջ, որպէս „աւանդ“, այլ սակայն եթէ ոք կամիցի առնել երկուս փաղառութիւնս եւ երկուս արտաձայնութիւնս՝ հարկ է լռութիւն առնել ի միջումն, որ բաժանէ զնոսա ընդ մէջ նոցին. քանզի ոչ երբեք խնդրէին քերդողք ի վերայ բաղաձայնիցն՝ որ ի միջում՝ քանին, եթէ ո՛յք ի նոցանէ սկզբնականք են եւ ո՛յք յանգականք, այլ նմանաբար ամենայնն սկզբնականք եւ յանգականք էին:*

---

1 El. τοῦ τρία καὶ τοῦ ἕξ 187,22] A. *չիք.* 2 A. *արժան էր — միջակ ինչ]* El. ἔδει εἶναι μονάδα μέσην τὴν συνάπτουσαν 187,22—23. 7—8 A. *իսկ միակն — մինչեւ պակասեցուցանէ]* El. *չիք.* 10—12 A. *որպէս — արտաձայնութիւն]* El. ἐν γὰρ τῷ φῖλος τῆς φι συλλαβῆς ἡ ἐκφώνησις ἄλλη ἐστὶ παρὰ τὴν λος ἐκφώνησιν τῆς συλλαβῆς 187,28—30. 16—17 A. *ընդ մէջ — աննմանութեան]* El. μέσην δύο συλλαβῶν ἀνομοίως ἐκφερομένων διὰ τὴν τῶν συμφώνων ἀνομοιότητα 187,32—33. 19—25 A. *Իսկ եթէ — ոյք յանգականք]* El. εἰ δὲ καὶ μή ἐστι μέσον σύμφωνον μεταξύ, ὡς ἐν τῷ 'ἀπὸ ὄρους', ἀλλ' ἵνα γένωνται δύο συλλαβαὶ καὶ δύο ἐκφωνήσεις, σιωπὴν ἀνάγκη γενέσθαι μέσον αὐτῶν τὴν διαιροῦσαν αὐτάς· οὐκ ἂν γὰρ ἐζήτουν οἱ γραμματικοὶ ἐπὶ τῶν μέσων φωνῶν, ποῖά εἰσιν ἀρχτικὰ καὶ ποῖα ληκτικὰ 187,34—188,2. 25—26 A. *այլ նմանաբար — մինչեւ յանգականք էին]* El. *չիք.*

Վեցերորդ գլուխ էր, եթէ ողջուբար ունի բաժանումն շարունակին. քանզի բաժանի ի հինգ՝ ի գիծ, ի մակերեւութիւն, ի մարմին, ի տեղի, ի ժամանակ. քանզի ասեն ոմանք. եթէ անկատար է բաժանումնդ եւ աւելորդ ըստ այլ եւ այլ իրաց. քանզի զշարժումն ոչ յիշեաց՝ որ է քանակ, իսկ զմակերեւութիւն երկիցս յիշեաց՝ յանուանէ եւ ի ծեռն տեղոյ: Առ որս ասեմք, եթէ վասն այսորիկ եթող զշարժումն որպէս անկատար (քանզի միշտ յինչ հայի շարժումն, իսկ ստորոգութիւնք ի լինիլն ունին զգոլն եւ կատարեալք են ստորոգութիւնք), եւ ի հոմանունացն է շարժումն. քանզի ի գոյացութեան է շարժումն եւ ի քանակումն եւ յորակումն (եւ ի գոյացութեան՝ որպէս լինելութիւն եւ ապականութիւն, իսկ ի քանակումն՝ որպէս աճելութիւն եւ թառամութիւն, իսկ յորակումն՝ որպէս այլայլութիւն ըստ ջերմութեան եւ ըստ ցրտութեան եւ ըստ այլոց որակութեանց), է եւ ըստ տեղւոյ շարժումն: Վասն զի ի հոմանունացն է շարժումն եւ ի զանազանս վերաբերի ստորոգութիւնս՝ եւ յիրաւի ոչ յիշեաց այժմ եւ ոչ ասաց զնմանէ, եթէ քանակի է: Բայց յետ աւանդութեան ստորոգութեանց բուռն հարկանէ զնմանէ: Բայց որոշեաց զտեղի ի մակերեւութենէ, վասն զի տակաւին եւ ոչ է ցուցեալ, եթէ մակերեւութիւն տեղի է, զոր ցուցանէ ի Բնականումն. քանզի Պղատոն եւ որք ի նմանէն՝ մարմին ասէին զոլ զտեղի՝ եռակի տարածեալ:

## ԸՆԴ ԱՅՍՈՍԻԿ ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՎ ԵՒ ԱՌԱՋԻԿԱ ՊՐԱԿՔՍ. ՊՐԱԿՔ ԼԴ

„Եւ քանակին՝ է ինչ որ տարորոշ է“.

Բաժանեալ Արիստոտէլի զքանակն ի տարորոշեալն եւ ի շարունակն, եւ զտարորոշեալն՝ ի թիւ եւ ի բան, եւ զշարունակն՝ ի հինգ՝ ի գիծ, ի մակերեւութիւն, ի մարմին, ի տեղի,

---

1 A. վեցերրորդ. 4 A. բաժանումնդ] El. ἡ διαίρεσις αὐτοῦ 188,5. 4 A. իրաց] El. չիք. 9 A. ստորոգութիւնք] El. չիք. 11 A. շարժումն] El. չիք. 21 A. ի բնաբանումն փխ. ի Բնականումն] El. ἐν τῇ Φυσικῇ 188,17. 23—24 A. ընդ—պրակք լդ] El. չիք.

*ի ժամանակ, որպէս զի լինել զամենայն տեսակս քանակի եւթն, երկու տարորոշիցելոյն եւ հինգ շարունակին. եւ զի երկու տարորոշիցելոյն են եւ հինգ շարունակին՝ հաւատարմանայ ի սահմանէ երկաքանչիւրոցն: Եւ պարտ է ի վերայ թուոյ եւ բանի ցուցանել, եթէ քանակ են եւ տարորոշիցեալ: Արդ՝ ի վերայ թուոյ խոստովանաբար առեալ՝ եթէ քանակ է, վասն զի ամենայն որք սովորաբար՝ որք միանգամ կամին գիտել զթիւ մարդկան եւ ձիոց՝ հարցանէ, եթէ քանի են. որպէս զի թուոյ ոչ այլ ինչ ելոյ այլ քանակ: Իսկ զմիւսն եւս նիւթէ՝ եթէ տարորոշիցեալ. քանզի եթէ էր, ասէ, թիւ շարունակ՝ արժան էր հասարակ ինչ միակ գոլ. որգոն՝ որպէս ի վերայ մասանց ինանն՝ վեցին եւ երիցն, որ ընդ վեցին առնլով եւթն առնէր զնա, եւ ընդ երիցն՝ չորս, եւ լինէր ինն տասն եւ տասնն մետասան, եւ այս յանքաւս. քանզի ոչ եթէ, որպէս ի վերայ նշանի՝ զնոյն եւ աստ որք ունի ասել. քանզի նշանն անմասն գոլով, մասնաւորում առադրելով, այսինքն՝ զգծի՝ ոչ աճեցուցանէ զնա եւ ոչ ի բաց բառնալով նուազեցուցանէ. եւ զիծ անլայն գոլով, լայնութեան առադրելով, լայնութիւն ոչ առնէ. եւ մակերեւութիւն խորութիւն ոչ ունելով, առադրելով խորութեան՝ խորութիւն ոչ առնէ: Եւ այսորիկ այսպէս: Դարձեալ վասն բանի պարտ է ցուցանել, եթէ քանակ է եւ տարորոշիցեալ, որպէս խոստովանաբար առնու, եթէ տարորոշիցեալ է բան՝ վասն զի ամենայն երկուց փաղառութեանց ընդ մէջ է լռութիւն, որպէս յառաջագոյն ասացաւ. եւ զի քանակ է՝ բան ցուցանէ ասելով, եթէ քանակ է բան, վասն զի չափի երկայնիւ եւ սղիւ փաղառութեամբ. իսկ չափիլն քանակի է, ապա ուրեմն՝ բանն քանակ է: Վասն որոյ տարակուսեն, եթէ չատ էր*

---

6—10 A. *եթէ քանակ—տարորոշիցեալ]* El. ὅτι ποσὸν ἐκ τοῦ πάντας ἐν τῇ συνηθείῃ θέλοντας γνῶναι τὸν ἀριθμὸν τῶν ἀνθρώπων ἢ ἵππων ἐρωτᾶν πόσοι εἰσὶν ὡς τοῦ ἀριθμοῦ ποσοῦ ὄντος, τὸ ἕτερον κατασκευάζει ὅτι διωρισμένον 188,28—29. 10 A. *ուղղ. տարորոշիցեալ է.* 12 A. *վեցին եւ երիցն]* El. λέγω δὲ τοῦ ἓξ καὶ τοῦ τρία 188,30. 13—14 A. *եւ լինէր—մետասան]* El. καὶ εὑρίσκεται ὁ ἐννέα δέκα καὶ οὗτος ἕνδεκα 188,32. 19—20 A. *եւ մակերեւութիւն—ոչ առնէ]* El. καὶ ἡ ἐπιφάνεια τῷ βάθος ἔχοντι προστιθεμένη ἀβαθὴς οὖσα βάθος οὐ ποιεῖ 188,36—189,1. 27—2 A. *եթէ—զերկարն]* El. ὅτι ἤρκει εἰπεῖν βραχείᾳ συλλαβῇ λόγος ὁ καταμετρούμενος ⟨καταμετρεῖται⟩· ἡ γὰρ βραχεῖα καὶ αὐτὴν καταμετρεῖ τὴν μακρὰν 189,6—8.

*ասելն սղիւ փաղառութեամբ, զի սուղն եւ զինքն չափէ եւ զերկարն: Առ որ ասեմք, եթէ ոչ միշտ սուղ փաղառութիւն չափէ զերկարն. քանզի երկարն առ ի յերաժշտականացն շորից ամանականաց է, զոր եւ դիսիմոն կոչեն, որ է կրկնակ չափականացն երկարաց. եւ սուղ լինի առ ի յերաժշտականացն երից ամանականաց, որպէս երեքպատիկ զոլով քան զչափականացն սուղն. իսկ այսչափ սուղ զայսպիսի երկար ոչ չափէ. քանզի եւ ոչ երեք զչորս երբեք չափեն, վասն զի ոչ են նորա մասունք. զի չափական մասն թուոյ մասն պարտի զոլ ի նորա. ապա եթէ ոչ՝ ոչ ասի չափել զնա ըստ թուականացն. քանզի թուականք մասն ասեն թուոյ զոլ ոչ զվայրապարն, այլ զայն՝ որ կատարելապէս զնա չափէ՝ որպէս կէս եւ երրեակ եւ նմանք նոցին: Վասն զի եւ եզաքար ասի մասն եւ ոչ մասունք: Եւ վասն այնորիկ մասն ասի, վասն զի ի բազմապատկութեան ծնանի զթիւն աւարտաքար, որպէս զի ոչինչ պակասել եւ առաւելուլ, որպէս երիցս երկու վեց. քանզի աւարտեալ է բացալնուլ եւ կատարել, որպէս ոչինչ պակասել եւ առաւելուլ. քանզի աւարտէ կատարումն անաւելորդն եւ անպակասն ի նախնեացն: Այլ եւ ոչ ի չափականաց *** Եւ այսոքիկ յաղագս տարորոշիցելոյն:*

*Իսկ զշարունակն բաժանէ ի հինգ, որպէս յառաջ ասացաք: Եւ զի իւրաքանչիւր ոք ի նոցանէ շարունակ՝ ցուցանէ յենթագրութեանցն. զիծ շարունակ է, վասն զի մասնկունք նորա առ մի հասարակ սահման շարամերձին՝ առ նշանն. մակերեւութիւն շարունակ է, զի մասնկունք նորա առ մի հասարակ սահման շարամերձին՝ առ զիծն. մարմին շարունակ է,*

2—3 A. *առ որ ասեմք — մինչեւ չափէ զերկարն]* El. *չիք*. 4 A. *զոր — կոչեն]* El. ἣν καὶ δίσημον καλοῦσιν 189,9. 10—13 A. *ապա եթէ — նմանք նոցին]* El. ἐπεὶ οὐ λέγεται μετρεῖν αὐτὸν κατὰ τοὺς ἀριθμητικούς· μέρος γὰρ αὐτοί φασιν αὐτοῦ οὐ τὸ τυχὸν αὐτοῦ, ἀλλ' ὅπερ ἐστὶν ἥμισυ τρίτου, καὶ τὰ ὅμοια 189,14—16. 14 A. *Եւ — ասի]* El. αὐτὸ δὲ τοῦτο μέρος λέγεται 189,16—17. 16—19 A. *որպէս — ի չափականաց]* El. οἷον τρὶς μία τρία, τρὶς δύο ἕξ· ἀπαρτίζειν γάρ ἐστι τὸ ἀναπληροῦν καὶ τελειοῦν, ὡς μὴ λείπειν ἢ πλεονάζειν· ἄρτιον γὰρ τὸ τέλειον καὶ ἀνελλιπὲς καὶ ἀπλεόναστον παρὰ τοῖς παλαιοῖς. οὔτε δὲ παρ' αὐτοῖς τοῖς μετρικοῖς 189,18—21. 19 El. 189,21 ἀεὶ ἡ μακρὰ — մինչեւ 190,3 πλεονάζει] A. *չիք*. 21—22 A. *որպէս յառաջ ասացաք]* El. *չիք*. 22 A. *զիւրաքանչիւր փխ. զի իւրաքանչիւր]* El. ὅτι ἕκαστον 190,5. 24—26 A. *առ նշանն — մինչեւ շարամերձին առ]* El. *չիք*.

զի մասնկունք նորա առ մի հասարակ սահման շարամերծին՝ առ մակերեւութիւն. ժամանակ շարունակ է, զի մասնկունք նորա առ մի հասարակ սահման շարամերծին՝ առ այժմն. քանզի այժմն անմասն գոլով՝ շարամերծէ զանցեալն եւ զապառնին. քանզի որպէս նշանն ի գծում՝ նոյն աւրինակի Թիւս միակն եւ ի ժամանակում՝ այժմն. քանզի անմասունք են երեքն՝ Թիւ, նշան, այժմ: Բայց զանազանին նշան եւ այժմն ի միակէն, վասն զի միակն առադրեալ Թուում՝ աճեցուցանէ, եւ ի բաց բառնալով պակասեցուցանէ, իսկ նշան առադրիլով՝ ոչ մեծացուցանէ, եւ ի բաց բառնալովն՝ ոչ փոքր կացուցանէ: Նոյնպէս եւ այժմն անմասն գոլով առադրելով ժամանակում՝ ոչ աճեցուցանէ զնա, եւ ոչ բառնալով՝ պակասեցուցանէ: Նմանապէս եւ տեղի շարունակ է. քանզի եԹէ մարմին որ ի տեղւոջ է՝ շարունակ է. ապա եւ տեղի շարունակ է. քանզի եԹէ ոչ է շարունակ տեղի, իսկ այն որ ի տեղւոջ է՝ շարունակ է՝ մասն ինչ նորա ոչ ի տեղւոջ: Եւ եԹէ տեղին շարունակ է եւ այն որ ի տեղոջ է՝ ոչ է շարունակ՝ զտցի մասն ինչ տեղւոյ ոչ տեղի. որգոն՝ որպէս զի տեղի իմասցուք զսափորն, իսկ ի տեղւոջ զգինին՝ որ ի նմա: Արդ եԹէ տեղին, այսինքն սափորն, ոչ է շարունակ, այլ որպէս մաղատեսակ ինչ՝ եղիցի մասն ինչ գինոյն, որ ի նմա է՝ ոչ ի տեղւոջ. ապա ուրեմն պարտ է եւ զտեղին շարունակ գոլ: *

„Եւ քանակին՝ է ինչ որ տարորոշ է եւ է ինչ որ շարունակ".

Նախադասէ զտարորոշն շարունակին. որգոն՝ զԹիւ եւ զքան *. քանզի աննիւԹագոյն է Թիւ քան զմիակ, որպէս կարող գոլով անշփոԹաբար զանազան ձեւս ընդունել, որ է յատուկ աննիւ-

5—6 A. *նոյն — այժմն]* El. τοῦτο μονὰς ἐν τῷ ἀριθμῷ καὶ ἐπὶ χρόνου τὸ νῦν 190,11. 6—7 A. *Թիւ, նշան, այժմ]* El. *չիք*. 9—10 A. *իսկ նշան — կացուցանէ]* El. τὸ δὲ σημεῖον τοῖς μεγέθεσι προστιθέμενον οὐ ποιεῖ αὐτὰ μείζονα οὔτε ἀφαιρούμενον ἐλάττονα 190,14—15. 11 A. *անմասն գոլով]* El. *չիք*. 13 A. *քանզի — շարունակ է]* El. εἰ γὰρ τὸ ἐν τόπῳ συνεχές, ἤγουν τὸ σῶμα 190,17. 14—15 A. *քանզի — ի տեղւոջ]* El. εἰ γὰρ μὴ ὁ τόπος συνεχὴς τοῦ ἐν τόπῳ συνεχοῦς ὄντος, ἔσται μέρος τοῦ ἐν τόπῳ μὴ ὂν ἐν τόπῳ 190,17—19. 18 A. *իսկ — ի նմա]* El. ἐν τόπῳ δὲ τὸν ἐν αὐτῷ οἶνον ἢ ὕδωρ ἢ τοιοῦτόν τι 190,21. 21 A. *ապա ուրեմն—գոլ]* El. *չիք*. 21 El. ταῦτα ἔχει ἡ θεωρία 190,23] A. *չիք*. 23 El. τοῦ συνεχοῦς ποσοῦ 190,25—26] A. *չիք*. 24 A. *քան զմիակ]* El. τοῦ μεγέθους 190,21.

թականի. քանզի նոյն իսկ թիւ կարող գոյ բոլորակ միանգամայն եւ քառանկիւնի գոլ: Ու բոլորակ է, որ ի նոյնէն սկիզբն առնէ եւ ի նոյնն յանգի զաւրէն բոլորակի՝ որպէս երեսուն եւ վեցն (քանզի վեցիցս վեց երեսուն եւ վեց՝ ի վեցէն սկիզբն արար եւ ի վեցն յանգեաւ), որպէս եւ քսան եւ հինգն. քանզի հնգիցս հինգ՝ քսան եւ հինգ: Իսկ քառանկիւնի է, որ ի թուոյ զինքն բազմապատկեցուցեալ եղեւ՝ որպէս ինն՝ երիցս երեք՝ ինն: Ցառաջեալ ի միակէն իսկ միակն բոլորակաբար՝ այն ինչ բոլորակաբար փոխաձեւացեալ այլ տեսակ ոչ ընդունի, եթէ ոչ նախ առաջին տեսակն ապականի:

„Ու առ այսոքիւք եւս ամանակ եւ տեղի".

Վասն է՞ր՝ որպէս զգիծն եւ զմակերեւութիւն եւ զմարմին՝ ըստ շարունակութեան թուեաց՝ ոչ նոյնպէս զտեղի եւ զժամանակ ըստ կարգի նոցա, այլ հակորոշեաց: Ու ասեմք երկուս պատճառս. մի զայս՝ եթէ գիծ եւ մակերեւութիւն եւ մարմին ի միում տեսանին. քանզի գիծ եւ մակերեւութիւն ի մեր մարմնում, իսկ տեղի եւ ժամանակ ոչ ի մեզ, այլ արտաքոյ եւ շուրջ զմեւք: Ու կամ այլազգ ասեմք, եթէ զերիսն զայն երկրաչափութեան է գիտել, իսկ զտեղի եւ զժամանակ՝ բնաբանութեան. քանզի բնաբանութիւն յաղագս շարժման յարդարի (զի բնութիւն սկիզբն է շարժման եւ դադարման), իսկ երկրաչափութիւն յաղագս անշարժ եւ շարունակ քանակի յարդարի: Ուս եւ աստեղաբաշխութիւն. քանզի աստեղաբաշխութիւն զտեղի գտեալ՝ զժամանակ խնդրէ. որգոն՝ յառիծուն երբ եղիցի արեգակն: Իսկ երբն ժամանակ գտեալ բնական՝ տեղի խնդրէ. որգոն՝ յետ տասն աւուր եղիցի արեգակն:

---

4—5 A. *ի վեցէն—յանգեաւ]* El. ἰδοὺ ἀπὸ τοῦ αὐτοῦ ἤρξατο καὶ εἰς τὸ αὐτὸ λήγει 190,30—31. 8—10 A. *Ցառաջեալ—ապականի]* El. τὸ δὲ φθάσαν μέγεθος κυκλικῶς μετασχηματισθῆναι ἄλλο εἶδος οὐ δέχεται, εἰ μὴ πρότερον ἀφανισθῇ τὸ ἄλλο σχῆμα πρὸ αὐτοῦ 190,33—34. 13—14 A. *ոչ—հակորոշեաց]* El. μὴ καὶ τὸν τόπον καὶ τὸν χρόνον ἐφεξῆς αὐτοῖς κατὰ συνέχειαν ἠρίθμησεν 191,3—4. 15 A. *գիծ եւ մակերեւութիւն եւ մարմին]* El. τὰ τρία 191,5. 17—18 A. *ոչ ի մեզ—զմեւք]* ].περὶ ἡμᾶς καὶ ἔξωθεν 191,6. 21 A. *շարժման եւ դադարման]* El. κινήσεως, καὶ μεταβολῆς ἢ ἠρεμίας 191,8—9. 25 A. *ուղղ. ժամանակ է.* 25 A. *բնական]* El. ὁ φυσικὸς 191,11. 26 A. *որգոն—արեգակն]* El. οἷον μετὰ δέκα ἡμέρας ποῦ ἔσται ἡ σελήνη 191,12.

„Եւ ասեմ զնոյն ինքն որ ձայնիւն բանն լինի“.

Բան զանազան իրս նշանակէ. քանզի բան ասի եւ ներտրամակացն՝ ըստ որում եւ զհրեշտակս բանականս ասեմք եւ զառաջաբերականն, յաղագս որոյ եւ մեր բանս է: Նշանակէ եւ զճառականն. որգոն՝ զճարտասանականն եւ զբժշկականն: Ասի բան եւ կալումն մխակացն, որպէս յորժամ ասեմք, եթէ զոր բան այս ինչ մխակ ունի առ այս՝ զնոյն բան ունի եւ այս ինչ մխակ առ այս. այլ եւ զպատճառանն՝ ըստ որում եւ Պղատոն ասէ, եթէ „արհեստ ոչ զանբան իրն“, այսինքն՝ զանպատճառն: Արդ՝ վասն այսորիկ ասաց եթէ ասեմ որ ձայնիւն բանն լինի, այսինքն՝ զարտաձայնիցեալն առ հակորոշումն այլոցն բանից, որպէս զի ցուցցէ, եթէ այս բան որ ձայնիւս լինի՝ ի տարորոշեալ քանակն վերաբերի, եւ ոչ այլքն, այսինքն՝ ներտրամադրականն եւ կալումն եւ պատճառն: Եւ տարակուսեն ոմանք ասելով, եթէ զիա՞րդ ասէ Արիստոտէլ զբանն, որ ձայնիւ է՝ քանակին գոլ. քանզի տրամախոհութեան է նշանակիչ, եւ վասն այնորիկ շարադիր է՝ որպէս յանուանէ եւ ի բայէ բաղկացեալ, իսկ ի Ստորոգութիւնսն՝ ոչ եթէ յաղագս շարադրիցելոց ձայնից է բան Արիստոտելի, այլ յաղագս պարզ ձայնիցն. քանզի ինքն իսկ Արիստոտել է՝ որ ասէ, եթէ այնց՝ որք ոչ ըստ միում՝ շարամանութեան ասին՝ կամ գոյացութիւն նշանակէ, կամ որակ, կամ քանակ, եւ որ ի կարգին է: Արդ՝ զիա՞րդ ասէ՝ եթէ բան քանակին է. քանզի շարադրէ ըստ շարամանութեան

---

1 A. *եւ—լինի]* El. Λέγω δὲ αὐτὸν τὸν μετὰ φωνῆς λόγον 191,18. 3 A. *բանակս]* El. λογικοὺς 191,15. 4 A. *յաղագս—զբժշկականն]* El. περὶ οὗ ὁ λόγος ὁ προκείμενος. λέγεται καὶ ὁ ἀποτάδην λόγος, οἷον ὁ ῥητορικὸς καὶ ὁ ἰατρικὸς 191,15—17. 6 A. *մեծակացն]* El. τῶν μεγεθῶν 191,17. 7. 8 A. *մեծակ]* El. τὸ μέγεθος 191,18. 6—11 A. *որպէս—բանից]* El. ὡς ὅταν λέγωμεν ὅτι ὃν λόγον ἔχει τόδε τὸ μέγεθος **, τοιόνδε πρὸς ἄλλο μέγεθος. λέγεται λόγος καὶ ἡ αἰτία, καθὸ καὶ ὁ Πλάτων φησὶ 'τέχνην δὲ ἐγὼ οὐ καλῶ, ὃ ἂν ᾖ ἄλογον πρᾶγμα'. διὰ τοῦτο οὖν εἶπε λόγον τὸν μετὰ φωνῆς, τοῦτ' ἔστι τὸν ἐκφωνούμενον, πρὸς ἀντιδιαστολὴν τῶν ἄλλων σημαινομένων 191,17—21. 10 A. *ասացէ թէ փխ. ասաց եթէ.* 13 A. *եւ ոչ այլքն]* El. οὐ μὴν καὶ τὰ ἄλλα σημαινόμενα τοῦ λόγου 191,23. 18 A. *իսկ ի Ստորոգութիւնսն]* El. νῦν δὲ 191,27. 19—20 A. *քանզի—ասէ]* El. αὐτὸς γὰρ ὁ Ἀριστοτέλης λέγει 191,28. 21—22 A. *կամ որակ]* El. *չիք*.

*անուանց եւ քայից: Եւ ասեմք, եթէ աստ յիշեաց զքան՝ ոչ որպէս շարադրեցեալ, այլ որպէս տարրորոշ եւ որպէս քաղկացեալ ի փաղառութեանց, որպէս եւ ինք իսկ յայտ արար Արիստոտէլ ասելով, եթէ չափի ըստ երկար եւ սուղ փաղառութեանց՝ որ ձայնիւ բանն է՝ ցուցանէ զնա տարրորոշ քանակին: Եւ յայտ է՝ եթէ բան աստանաւր զմի անունն ասէ եւ զմի բայ, եւ պարզաբար զմի բառն, եւ զանշարադրական ձայնն. քանզի եւ այսորիկ չափին երկար եւ սուղ փաղառութեամբ: Իսկ ներում՝ Յաղագս մեկնութեան բան առնու զշարադրեցեալն եւ զնշանականն. քանզի սահմանելով ասէ, եթէ բան է ձայն նշանական, որոյ մասանցն իմն նշանակ է զատ...*

*„Որգոն՝ հինգն եթէ են տասանցն մասունք՝ առ ոչ մի հասարակ սահման շարամերձին“.*

*Եւ յիրաւի ստորադրաբար զքանս յառաջ էած հինգ, եթէ ասելով տասնին մասն, վասն զի հինգ ոչ միայն տասանց է մասն, այլ եւ տասին եւ քսանի եւ այլոց բազմաց, եւ զի ոչ է սահմանեալ տասին հինգն. քանզի կարողութիւն է տասին մասն գոլ՝ միոյ եւ ինան, երկուց եւ ութի, երից եւ եւթան, վեցի եւ չորից, հնգի եւ հնգի:*

*„Քանզի մակարդակին մասնկունք առ ումն հասարակ սահման շարամերձին“.*

*Առ ի հնոցն նոյն կարծիւր գոլ մակարդակ եւ մակերեւութիւն. քանզի ի միոյ իրի վերայ առնուին՝ զմակարեւութեանն*

---

2—3 A. *այլ—ի փաղառութեանց]* El. ἀλλ' ὡς διωρισμένου ἁπλῶς καὶ συγκειμένου ἐκ συλλαβῶν 191,32—33. 4 A. *չափի]* El. τὸ καταμετρεῖσθαι 191,34. 9 A. *բան առնու]* El. διαλαμβάνει 194,4. 14—19 A. *հինգ—եւ հնգի]* El. ὁ πέντε εἰ ἔστι τῶν δέκα μόριον, διότι ὁ πέντε οὐ μόνον τοῦ δέκα δύναται μέρος εἶναι, ἀλλὰ καὶ τοῦ δεκαπέντε καὶ τοῦ εἴκοσι καὶ ἄλλων πολλῶν, καὶ ὅτι οὐκ ἔστιν ὡρισμένον μέρος ὁ πέντε· δυνατὸν γὰρ τοῦ δέκα μέρη λαβεῖν τὸν ἑπτὰ καὶ τρία καὶ τὸν ἓξ καὶ τέσσαρα 192,9—13. 23—5 A. *քանզի—խորոփեաց]* El. ἐπὶ τοῦ αὐτοῦ γὰρ καὶ τὸ τῆς ἐπιφανείας καὶ τὸ τοῦ ἐπιπέδου λαμβάνουσιν ὄνομα. παρὰ δὲ τοῖς νεωτέροις διακέκριται ἐπιφάνεια ἐπιπέδου· τὸ μὲν γὰρ ἐπίπεδον ἐπὶ μόνης τῆς ὁμαλῆς ἐπιφανείας λαμβάνουσι τῆς ἐξ ἴσου ταῖς ἑαυτῆς εὐθείαις κειμένης, τὴν δὲ ἐπιφάνειαν καὶ ἧς τὰ μέσα τοῖς ἄκροις ἐπιπροσθεῖ καὶ † τῆς ἐλαχίστης τῶν παθῶν τὰ αὐτὰ πέρατα ἐχουσῶν, κοίλων τυχὸν ἢ κυρτῶν 192,17—23.

*անուն եւ զմակարդակին: Իսկ առ ի նորագունից որոշեալ է մակերեւութիւն եւ մակարդակն. քանզի մակարդակ զհարթ մակերեւութիւնն կոչէ, որ հանգէտ լիցովք ուղղականաւքն զատ եղեալ եւ որոյ մէջն ծայրիցն առաջակայմեայ ամենեցուն՝ որք զնոյն զերսունսն ( ) կորընթեաց եւ կամ խորոփեաց: Արդ՝ ի նորագունից համարակ ինչ է մակերեւութիւն, որ ընդի եւ ըստ հարթ մակերեւութեան, որ է մակարդակ, եւ ըստ խորոփիոյն եւ ըստ կորընթոյն:*

*„Նմանապէս եւ ի վերայ մարմնոյ մարթի առնուլ համարակ սահման զմակերեւութիւն, առ որ մարմնոյն մասնկունք շարամերձին“.*

*Քանզի մարմնոյ մասունք շարամերձին առ համարակ սահման՝ մակերեւութիւն, եւ ի ձեռն նորա առ գիծ. քանզի մակերեւութիւն ըստ խորութեան բաժանելով զմարմին, իսկ գիծ ամենեւին անտարակաց գոլով ըստ խորութեան մասանց մարմնոյն անտարակացաբար ըստ խորութեան շարամերձիլ առ միմեանս, եւ աստանաւր դարձեալ զաւրութեամբ պարտ է առնուլ զբաժանումն՝ որ ըստ մակերեւութեանն լսի, որպէս զի պահեսցի մարմինն շարունակ: Եւ ի ձեռն մակերեւութեան առ գիծն շարամերձին մասնկունք մարմնոյն. քանզի ըստ երկրաչափաց ծայր մակերեւութեան, եւ պարտ է նմա՝ որ բաժանէն զմարմին՝ ըստ մակերեւութեան սկիզբն առնել ի գծէն եւ զնա որպէս ծայր ցուցանել եւ մակերեւութիւն առնել եւ նովաւ բաժանել զմարմինն: Արդ՝ վասն զի ըստ բոլորին ինքեան մակերեւութիւն հատանէ զմարմին՝ հարկ է եւ ըստ եզերն իւրում, այսինքն՝ ըստ գծին, շարամերձեալ զծայրս մարմնոյն:*

---

4 A. *միջն փխ. մէջն.* 10 A. *զմակերեւութիւն]* El. γραμμὴν <ἢ> ἐπιφάνειαν 192,26. 13 A. *ուղղ. առ գիծն]* El. πρὸς γραμμὴν 193,1. 15—18 A. *մասանց — լսի]* El. ἐξ ἀνάγκης καὶ τὰ μέρη τοῦ σώματος ἀδιαστάτως καὶ κατὰ βάθος συνάπτουσι πρὸς ἄλληλα κατὰ τὴν ἐπιφάνειαν, κἀνταῦθα πάλιν δυνάμει τῆς διαιρέσεως ἤτοι τῆς ἐπιφανείας λαμβανομένης 193,2—5. 20—21 A. *քանզի — մակերեւութեան]* El. ἐπειδὴ γὰρ κατὰ τοὺς γεωμέτρας ῥυεῖσα <ἡ> γραμμὴ ποιεῖ τὴν ἐπιφάνειαν 193,6—7. 21 A. *լուս. գիծ է = ծայր գիծ է մակերեւութեան* (՞). 22—23 A. *եւ զնա — առնել]* El. καὶ ταύτην οἱονεὶ ἐπισύροντα ποιεῖν ἐπιφάνειαν 193,8—9. 26 A. *շարամերձեալ]* El. συνάπτειν 193,11.

„Բայց է եւ ամանակ եւ տեղի յայսպիսեացս“.

Եւ զի շարունակ քանակ է եւ տեղի եւ ժամանակ՝ այժմ ցուցանէ. քանզի եւ սոցա մասնկունքն առ ումն հասարակ սահման շարամերծին. քանզի զժամանակին մասնկունս արդեանն անտարակաց զոլով ամենեւին շարամերծէ ինքեամբ՝ զանցեալն եւ զապառնին, իսկ զտեղւոյ մասնկունս շարամերծէ գիծն, վասն զի մակերեւութիւն կարծի զոլ տեղի, իսկ մակերեւութեան մասնկունք ըստ գծին շարամերծին:

„Քանզի յեղանակաւ իմն զմարմնոյն մասնկունս ունի տեղի, որք առ ումն հասարակ սահման շարամերծին. ապա եւ տեղւոյ մասնկունք, որք ունին զիւրաքանչիւր ոք ի մասանց մարմնոյն՝ առ նոյն սահման շարամերծին, առ որ մարմնոյն մասնկունք“.

Եւ զի տեղւոյն մասնկունք՝ որպէս շարունակի՝ առ ումն հասարակ սահման շարամերծի՝ նիւթէ յայնմանէ որ ի տեղւոջ. քանզի եթէ տեղի եզերէ այնմ որ ի տեղւոջ է, իսկ նորա մասնկունք որ ի տեղւոջ է՝ առ ումն հասարակ սահման շարամերծին՝ հարկ է եւ ի տեղւոյն մասնկաց ունել հասարակ ինչ սահման՝ առ որ շարամերծին. քանզի եթէ այս որ ի տեղւոջ է՝ շարունակ է, իսկ տեղի ոչ*, այլ տրամատեցեալ, հանդիպեսցի մասն ինչ այնորիկ՝ որ ի տեղւոջն ոչ զոլ ի տեղւոջ: Արդ՝ եթէ իւրաքանչիւր ոք, ասէ, ի մարմնոյն մասնկաց զումն տեղի ունի, եւ այս մասնկունք առ ումն հասարակ սահման շարամերծին՝ հարկ է եւ մասնկաց տեղւոյն, որք ունին զայն որ ի տեղւոջն է, առ ումն սահման շարամերծիլ. ապա ուրեմն՝ շարունակ եղիցի

7 A. վասն զի—տեղի] El. διότι ἐπιφάνειά τις εἶναι δοκεῖ ὁ τόπος 193,17—18. 13 A. որպէս շարունակի] El. ὡς συνεχοῦς ὄντος 193,24. 14 A. ուղղ. ի տեղւոջն. 15 A. քանզի եթէ—մինչեւ ի տեղւոջ է] El. չիք. 17—18 A. հարկ է—շարամերծին] El. ἀνάγκη καὶ τὸν τόπον ἔχειν τὰ μόρια πρός τινα κοινὸν ὅρον συνάπτοντα 193,26—27. 19 A. իսկ տեղի ոչ] El. ὁ δὲ τόπος μὴ εἴη συνεχής 193,27—28. 19 A. ուղղ. զի հանդիպեսցի. 19—20 A. հանդիպեսցի—ի տեղւոջ] El. συμβήσεται μέρος τοῦ ἐν τόπῳ, ὃ οὐκ ἔστιν ἐν τόπῳ 193,28—29. 23 A. որք ունին զայն որ ի տեղւոջն է] El. չիք. 24 A. առ ումն սահման] El. πρός τινα κοινὸν ὅρον 193,31.

*եւ տեղի, վասն զի առ մի ումն համարակ սահման մասնկունք նորա շարամերծին. քանզի շարունակացն համարակ սահման է՝ մասնկաց նոցա առ ումն համարակ սահման շարամերծիլ, եւ պատկանեցաւ այս սահման տեղում. ապա ուրեմն՝ եւ տեղի շարունակ է:*

## ԸՆԴ ԱՅՍՈՐԻԿ ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՎ ԵՒ ԱՌԱՋԻԿԱ ՊՐԱԿՔՍ. ՊՐԱԿՔ ԼԸ

*„Եւ եւս դարձեալ արտադիր ունակս լայն".*

*Վաղ ուրեմն բաժանեալ Արիստոտելի զքանակն ի տարորոշն եւ ի շարունակն, եւ զշարունակն ի հինգ՝ ի գիծ, ի մակերեւութիւն, ի մարմին, ի տեղի, ի ժամանակ, իսկ զտարորոշն յերկուս՝ ի թիւ, ի բան՝ այժմ վերստին բաժանէ զքանակն ի դրելին եւ յանդրելին, եւ զդրելին՝ ի գիծ, ի մակերեւութիւն, ի մարմին, ի տեղի, եւ ոչ երբեք ուրեք ի բաց եբարձ ի շարունակացն զժամանակ, իսկ զանդրելին յերիս՝ ի թիւ, ի բան եւ ի ժամանակ. քանզի առծանէ տարորոշումն զժամանակ: Բայց արժան է խնդրել զանդրաբարձութիւն ժամանակի պատճառ վերստին բաժանման քանակի: Եւ ասելի է, եթէ երկուց ելոց ծայրից ներհակաց միմեանց, այսինքն՝ տարորոշին եւ շարունակին, որպէս եւ առասպելարկուքն ասեն բոլորովիմք եւ ամենեւիմք զանազանիլ զյոյժ տարուկացեալսն, այսինքն՝ ներհական տեսակաւք քանակին զբոլորովինն ի վերայ շարունակին դասելով, իսկ զամենայնն ի վերայ տարորոշին, եւ Պղատոնի զամենայն ներհակն միջաւորս ասելով գոլ, որպէս զի զյաւէտն եւ զնուազն ընկալցին՝ պարտ է եւ տարորոշին եւ շարունակին միջակ ինչ գոլ, եւ միջակ տարորոշին եւ շարունակին զժամա-*

14—15 A. *եւ ոչ երբեք — զժամանակ*] El. οὐκέτι εἰς πέντε (ἀφεῖλε γὰρ τὸν χρόνον) 194,9. 16 A. *քանզի առծանէ տարորոշումն զժամանակ*] El. *չիք*. 16—18 A. *Բայց — քանակի*] El. ἄξιον δὲ ἐπιζητῆσαι διὰ τί ἡ ἀφαίρεσις τοῦ χρόνου αἰτία γέγονε τῆς τοῦ ποσοῦ ἐπιδιαιρέσεως 194,10—11. 20 A. *առասպելարկուքն*.

նակ. քանզի որպէս շարժումն ինչ գոլով՝ շարունակ է ժամանակ (քանզի ամենայն շարժումն շարունակ է), իսկ որպէս թուիցեալ շարժումն՝ որ եւ դարձեալ թուելովն տարորոշ է ժամանակ: Բայց երիւք ոմամբք կերպարանէ զդրելին Արիստոտէլ՝ զբոլորն միանգամայն ստորակայելովն եւ ընդ ցուցմամբ ստորանկանելովն եւ ընդունելովն զվեց դրական մակբայսն: Արդ՝ ցուցցուք զերեսեան ի վերայ իւրաքանչիւրոյ տեսակի շարունակացն՝ զիծ, բոլորն, միանգամայն ստորակայիցաւ թզականն կամ առաւել կամ պակաս, նմանապէս եւ մակերեւութին եւ մարմին: ** Այլ եւ զվեց դրական մակբայսն ընդունի գիծ. քանզի ասել՝ ունիմք եթէ գծիս ոմն առաջոյ եւ ոմն վերջոյ, ոմն յաջմէ եւ ոմն յահեկէ, ոմն վերին, ոմն ներքին, նմանապէս եւ ի վերայ մակերեւութեան եւ ի վերայ մարմնոյ ասեմք: Իսկ անդրելի քանակ բոլորն միանգամայն ոչ ստորակայի եւ ոչ ընդ ցուցմամբ ստորանկանի եւ ոչ զվեց դրական մակբայսն ընդունի. քանզի ահա ժամանակ բոլորն միանգամայն ոչ ստորակայի. քանզի պարտ է ապականիլ այսմ աւուր եւ լինիլ վաղուին: Եւ ոչ բան միանգամայն բոլորն ստորակայի. քանզի է ինչ որ ասացաւ եւ ոչ է, եւ է ինչ որ հանդերձեալ է ասիլ: Նմանապէս եւ ի վերայ թուոյն՝ որ թուեն. քանզի այս թիւ որ թուիս՝ կամ ի կարծիս է կամ յառաջաբանութեան է ինչ նորա որ ասացեալ է եւ ոչ է եւ ինչ որ լինի: Այլ եւ ոչ ընդ ցուցմամբ անգանի. քանզի եթէ ոչինչ մնայ, այլ անցանէ՝ զիարդ մատամբ

1 A. *քանզի—ժամանակ]* El. ὡς μὲν γὰρ κίνησις συνεχὴς ὁ χρόνος 194,18. 2—4 A. *իսկ—ժամանակ]* El. ὡς δὲ ἀριθμηθεῖσα κίνησις τῷ πάλιν καὶ πάλιν ἀριθμεῖσθαι διωρισμένος ὁ χρόνος 194,19—20. 8 A. *թզական]* El. σπιθαμιαία οὖσα 194,23. 10 El. ἀλλὰ καὶ δείξει ὑποπίπτει ἡ γραμμὴ ὡς δακτύλῳ δεικνυμένη, καὶ ἡ ἐπιφάνεια καὶ τὸ σῶμα 194,24—25] A. *չիք.* 13 A. *ասեմք]* El. τὰ αὐτὰ ἐροῦμεν 194,28—29. 17—18 A. *քանզի—վաղուին]* El. δεῖ γὰρ φθαρῆναι τὸ σήμερον, ἵνα γένηται τὸ αὔριον 194,31. 18 A. *բոլորն]* El. *չիք.* 18—19 A. *քանզի—ասիլ]* El. τὸ μὲν γὰρ αὐτοῦ εἴρηται καὶ οὐκ ἔστι τὸ δὲ μέλλει 194,32—33. 19 A. *նմանապէս]* El. *չիք.* 20 A. *թիւ որ թուիս]* El. *չիք.* 21 A. *յառաջաբանութեան է]* El. ἐν προφορᾷ 194,34. 22—3 A. *Այլ եւ—տարորոշին]* El. ἀλλ' οὐδὲ δείξει οὐδὲν τούτων ὑποπίπτει· ὁ γὰρ οὐδὲν ὑπομένει ἤτοι καταλιμπάνεται, πῶς τοῦτο δακτύλῳ ἔδει δειχθῆναι; οὐδὲ τὰ θετικὰ ἐπιρρήματα οὐδὲν τῶν τριῶν ἐπιδέχεται· πῶς γὰρ τοῦ μὴ ὄντος ὅλως τὸ μὲν ἄνω τὸ δὲ κάτω εἴποι τις ἄν, ἢ δεξιὰ ἢ ἀριστερά; ἀλλ' εἰ ἄρα τάξιν τινὰ τὰ εἴδη τοῦ διωρισμένου ἐπιδέχονται 194,34—195,3.

*ցուցանի: Այլ եւ ոչ զվեց դրական մակբայսն ընդունի ոք յերիցն. քանզի զհա՞րդ՝ որ ամենեւիմբ ոչն է՝ կամ ի վեր է կամ՝ ի վայր: Բայց կարգաւորութիւն իմն ընդունին տեսակք տարորոշին. քանզի բանին նախագոյն է նախերգանն քան զպատմութիւնն, նոյնպէս եւ ի վերայ թուոյ՝ մինն քան զերկուսն յառաջագոյն է: ** Վասն որոյ տարակուսեն, եթէ ընդէ՞ր ոչ բաժանեաց զքանակն ի կարգաւորեալն եւ յանկարգն: Եւ ասեմք՝ եթէ կարգաւորութիւն ընդ բոլոր տեսակս քանակին էանց՝ շարունակին եւ տարորոշիցելոյն. քանզի ի վերայ ամենեցուն պատկանի ասել առաջին: Արդ՝ եթէ կարգաւորութիւն է յամենեսին, զիա՞րդ որ զկարգաւորութիւնն ունէր՝ ի կարգաւորեալ եւ յանկարգ բաժանիւր: Եւ այսոքիկ այսպէս:*

*Բայց մակաբաժանէ զքանակն եւ այլազգ ասելով, եթէ քանակին ումն տիրաբար քանակ է եւ ումն երեւաբար. եւ տիրաբար քանակ է ոչ մեծն եւ փոքրն եւ կամ շատն եւ սակաւն՝ որ անմիջաբար ստորոգին. քանզի մեծն եւ փոքրն ի վերայ ամենայն շարունակացն ասի. քանզի մեծ զիծ ասեմք եւ փոքր մակերեւութիւն եւ տեղի եւ մարմին ասելով տիրապէս. իսկ շատն եւ սակաւն ի վերայ բանին եւ թուոյ եւ ժամանակի տիրապէս ասի: Արդ՝ այսոքիկ տիրապէս քանակք: Իսկ ոչ տիրապէս այնոքիկ, որոյ մեծն եւ փոքրն եւ շատն եւ սակաւն ոչ անմիջաբար, այլ ընդ մէջ միոյ ուրուք տեսակացն քանակի ստորոգի. որգոն՝ շատ ասեմք սպիտակութիւն ընդ մէջ մակերեւութեան. քանզի շատ սպիտակն է ոչ վասն ինքեան, այլ վասն մակերեւութեան. քանզի զմակերեւութիւն սպիտակին եթէ որպէս սպիտակի կամեսցուք նշանակել՝ ոչ ասեմք շատ սպիտակ*

6 El. καὶ ἐπὶ τοῦ χρόνου τὸ σήμερον τοῦ αὔριον πρότερον 195,4—5] A. *չիք.* 10 A. *առաջին]* El. τὸ πρῶτον καὶ τὸ δεύτερον 195,8. 12 A. *բաժանիւր]* El. εἶχε διαιρεῖσθαι 195,9—10. 13 A. *մակաբանէ]* El. ἐπιδιαιρεῖ 195,11. 14—16 A. *եւ տիրաբար—ստորոգին]* El. καὶ κυρίως μὲν ποσὸν οὐ τὸ μέγα καὶ μικρὸν καὶ πολὺ καὶ ὀλίγον ἀμέσως κατηγορεῖται 195,12—13. 17 El. λέγομεν 195,14] A. *ասի.* 17 A. *քանզի]* El. *չիք.* 17 A. *ասեմք]* El. *չիք.* 20—21 A. *Իսկ ոչ տիրապէս այնոքիկ]* El. ⟨φαινόμενα δὲ ποσὰ⟩ 195,16—17. 22 A. *ընդ—տեսակացն]* El. διὰ μέσου ἑνὸς τῶν ἑπτὰ εἰδῶν 195,18. 25 A. *զմակերեւութիւն]* El. τὴν ἐπίτασιν 195,20. 26—1 A. *ոչ—սպիտակ սպիտակ]* El. οὐ λέγομεν πολὺ λευκὸν ἀλλὰ λευκῶν λευκὸν 195,21.

էր, այլ սպիտակ սպիտակ եւ կամ սպիտակագոյն: Եւ զՏրովական պատերազմն մեծ ասեմք ոչ վասն ինքեան, այլ վասն ժամանակի պատերազմին. եւ զգործսն երկար ասեմք վասն ժամանակին եւ ոչ վասն ինքեան՝ կամ առաւրէ կամ ամսաւրեայ կամ տարեւորական: **

„Եւ այսպէս դաս ինչ կալցցի, այլ դիր ոչ կարի քաջ գտցես առնուլ“.

Եւ վասն զի իմացաւ Արիստոտէլ, եթէ ի վերայ քանակական թուոյ որք թուինն, այսինքն՝ ծիք տասն, կամարք տասն, յորոց վերայ կարողութիւն է դրութիւն առնուլ եւ ցուցանել՝ եթէ ուր կան՝ վասն այսորիկ նախանչեաց զառաջին ասացեալն, եթէ ոչ դիր ինչ քաջ գտցես առնուլ:

## ՑՈՐՍ ՀԱՄԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՎ ԱՌԱՋԻԿԱ ՊՐԱԿՔՍ.
## ԼԶ ՊՐԱԿՔ

„Եւ այլ եւս քանակին ոչինչ է ներհական“.

Ցետ երից բաժանմանց քանակին՝ ի տարորոշն եւ ի շարունակն, ի դրելին եւ յանդրելին, ի տիրաբար քանակն եւ յերկաքար՝ փոխարկէ զքանն ի յատուկս քանակին: Եւ ահա այն ինչ վերագոյն մի յատուկ քանակի աւանդեաց մեզ ի չափելն, յորժամ ասէր եթէ քան չափի երկար եւ սուղ փաղառութեամբ եւ վասն այնորիկ քանակ ցուցանիւր քան որպէս զի ամենայն քանակի չափիցելոյ: Եւ զի զայս զմի յատուկս բացատրեաց մեզ՝ յայտ արար եւ վասն ասելոյն „եւ այլ եւս քանակին ոչինչ է ներհական“, որպէս զի ըստ լռեցելոյ միոյ մեզ յատկին աւանդիցելոյ: Այլ ունիմք, ասեն ոմանք, եւ զերկրորդ յատուկն աւանդեալ վերագոյն ի

---

3 A. *պատերազմին*] El. *չիք*. 3 A. *եւ զգործսն — ժամանակին*] El. καὶ τὴν πρᾶξιν μικρὰν λέγομεν διὰ τὸν χρόνον 195,23. 5 El. ταῦτα ἔχει ἡ παροῦσα θεωρία] A. *չիք*. 9—12 A. *այսինքն — գտցես առնուլ*] El. οἷον ἵππων δέκα ἢ ἀνθρώπων ἢ ξύλων ἢ λίθων, ὅτι ἔστι θέσιν λαβεῖν καὶ δεῖξαι ποῦ κεῖται, διὰ τοῦτο ἐκόλασεν τοῦτο εἰπὼν ὅτι θέσιν ἐπὶ τούτου οὐ πάνυ λάβοις ἂν 195,28—30. 18—19 A. *Եւ — մեզ*] El. καὶ ἤδη μὲν ἀνωτέρω ἓν ἴδιον ἡμῖν παρεδίδου τοῦ ποσοῦ] 196,1. 19 A. *ի չափելն*] El. τὸ μετρεῖσθαι 196,2. 22—23 A. *յայտ — ասելոյն*] El. δηλοῖ διὰ τοῦ ἔτι, λέγων 196,4—5.

ներում՛ յաղագս գոյացութեան քանումն, յորժամ՛ ասէր թէ յատուկ գոյացութեանն ոչ ունիլն ներհական. բայց այս ամենայնում՛ գոյացութեան է, ոչ միայնում՛. քանզի եւ քանակի է: Եւ ասեմք՝ եթէ եւ յերկքայս էր անդ՝ եթէ ոչինչ է քանակումն ներհական, ասելով «բայց եթէ ոք զմեծն փոքումն եւ զշատն սակաւուն ասասցեն ներհական». այլ զայս յարաքարշէր ի ներում՛ յաղագս գոյացութեան քանումն առ ի խնդրել, իսկ այժմ՛ առաջի իսկ կայ. քանզի յաղագս քանակի է բանս: Արդ՝ երկրորդ յատուկ քանակի ոչինչ ունիլն ներհական, եւ մի ոք ասասցէ զմեծն փոքուն եւ զշատն սակաւուն. քանզի այսոքիկ ոչ ներհականք: Եւ զի ոչ են ներհականք եւ ոչ քանակք, այլ առընչին՝ ցուցանէ ըստ ներկացութեան եւ ըստ հակայարկացութեան: Եւ ըստ ներակացութեան այսպէս՝ եթէ ոչ են քանակք, այլ առընչիցն են. իսկ ըստ յարկացութեան այսպէս՝ եթէ ոչ են ներհականք, այլ առընչիցն՝ որպէս գոլ հասարակ իջաւան ներկացութեան եւ հակայարկացութեան զառինչսն. քանզի եթէ ցուցանեմք՝ եթէ առինչք են՝ ապա ոչ են քանակք (քանզի բաժանի քանակն յառընչիցն), եւ եթէ ցուցանեմք դարձեալ՝ եթէ առընչիցն են՝ ապա ոչ են ներհականք. քանզի քառակի հակակայիցն առիցելոց՝ որով հակաբաժանին ներհակքն յառընչիցն:

Եւ պարտ է գիտել եթէ երկուց ձեռնարկութեանց պիտանանայ ներկացութիւն, առաջնոյ՝ որ ասէ եթէ մեծն եւ փոքրն, շատն եւ սակաւն առ այլ ասին, իսկ քանակ ըստ ինքեան է. ապա ուրեմն՝ մեծն եւ փոքրն ոչ են քանակիս: Երկրորդում՛ ձեռնարկութեան՝ եթէ մեծն եւ փոքրն, շատն եւ սակաւն անորոշք են. քանզի մինչեւ ցքանակին է մեծ, եւս քանակին է փոքր՝ անյայտ է. իսկ քանակն սահմանեալ է, քանզի քանիաւնութիւն յայտ առնէ, վասն զի յորժամ՛ կամիմք զթիւ իրիք գի-

---

5—6 A. *բայց — ներհական]* El. 'εἰ μή τις φαίη τὸ μέγα τῷ μικρῷ καὶ τὸ πολὺ τῷ ὀλίγῳ ἐναντίον' 196,11—12. 6—10 A. *այլ զայս — սակաւուն]* El. *չիք*. 12 A. *ըստ ներկայութեան*. 14 A. *իսկ ըստ յարկացութեան]* El. κατὰ δὲ ἀντιπαράστασιν 196,14. 15 A. *ուղղ. որպէս զի*. 20 A. *առիցելոց]* El. λαμβανομένων 196,18. 22 A. *ներկացութեան]* El. ἡ ἔνστασις 196,20. 26—28 A. *եւ — յայտ առնէ]* El. καὶ μέχρι πόσου μικρόν, ἄδηλον εἰπεῖν· τὸ δὲ ποσὸν ὡρισμένον ποσὸν δηλοῖ 196,24—25. 28 A. *վասն զի — գիտել]* El. τὸν ἀριθμὸν μαθεῖν τῶν ζητουμένων 196,25—26.

*տել, հարցանեմք՝ եթէ քանի են. ապա ուրեմն՝ մեծն եւ փոքրն, շատն եւ սակաւն ոչ են քանակք: Արդ՝ զայսոսիկ ներաստութիւնն: Իսկ հակայարակացութիւն չորից պիտանանայ ծեռնարկութեանց, առաջնումն՝ եթէ մեծն եւ փոքրն, շատն եւ սակաւն ինքեանք, որ ինչ ենն՝ այլոց ասին գոլ, իսկ ներհականքն ոչ ասին առ այլ. որգոն՝ թուխն ոչ ասի սպիտակ ի թուխ, այլ ներհական. ապա ուրեմն՝ մեծն եւ փոքրն ոչ են ներհականք: Իսկ երկրորդում պիտանանայ ծեռնարկութեան, որ ասէ՝ զի եթէ մեծն եւ փոքրն ներհականք են՝ ի միասին եղեցին ներհականքն նոյնումն կարող եղելում եւ մեծ գոլ եւ փոքր առ այլ եւ առ այլ: Իսկ երրորդում պիտանանայ ծեռնարկութեան, որ ասէ՝ եթէ մեծն եւ փոքրն, շատն եւ սակաւն ներհականք են՝ եղիցի ինքն ոք ինքեան ներհական. քանզի կարող գոյ նոյն ինքն եւ մեծ գոլ եւ փոքր ըստ նոյն ժամանակում առ այլ եւ առ այլ, որ է անտեղի: Իսկ չորրորդում պիտանանայ զոր ոչ ասէ Արիստոտէլ, այլ եթէ մեծն եւ փոքրն, սակաւն եւ շատն ներհականք՝ ոչ երբեք ներհականքն ապականողք եղիցին միմեանց, այլ ապրեցուցանողք. շատ փոքունք մի մեծ առնեն եւ շատ սակաւք մի մեծ առնեն. իսկ ներհականքն միշտ ապականողք միմեանց գոն:*

## ԸՆԴ ԱՅՍՈՍԻԿ ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՎ ԵՒ ԱՌԱՋԻԿԱՑ ՊՐԱԿՔՍ. ՊՐԱԿՔ ԼԷ

*„Մանաւանդ զի ներհակութիւն քանակին է“...*

*Ազատեալ Արիստոտելի զքանակն ի ներհակութենէ՝ մեծի եւ փոքու, շատի եւ սակաւու, որք քանակ թուին գոլ եւ ներհականս՝*

1 A. *հարցանեմք]* El. λέγομεν 196,26. 2 A. *ներաստութիւնն]* El. ἡ ἔνστασις 196,27. 4 A. *առաջնումն եթէ]* El. πρῶτον λέγουσα 196,28. 6—7 A. *ոչ ասի — ներհական]* El. οὐ λέγεται πρὸς λευκὸν μέλαν, ἀλλὰ λευκῷ ἐναντίον καὶ ἐπὶ τοῦ λευκοῦ ὁμοίως 196,30–31. 7—8 A. *Իսկ — ասէ]* El. δεύτερον ἐπιχείρημα 196,32. 11 A. *Իսկ — ասէ]* El. τρίτον ἐπιχείρημα 196,34. 14—15 A. *որ է անտեղի]* El. չիք. 15—16 A. *Իսկ — մեծն]* El. τέταρτον ἐπιχείρημα, ὃ οὐ λέγει ἡ λέξις ἀλλ' ἡμεῖς· εἰ τὸ μέγα 197,1–2. 18—20 A. *շատ փոքունք — գոն]* El. πολλὰ γὰρ μικρὰ ἓν μέγα ποιοῦσι, καὶ πολλὰ ὀλίγα πολύ· τὰ δὲ ἐναντία ἀεὶ φθαρτικά εἰσι 197,3–5.

ըստ ճշմարտութեան ցուցեալ ոչ քանակ գոլ եւ ոչ ներհական ի ձեռն սաստութեան եւ հակայարսաստութեան՝ խրատ տայ ի ձեռն այսոցիկ այնմ, որ կամիցի ներհակութիւն ի քանակումն դնել՝ ոչ ձեռնարկել ի մեծէն եւ փոքուէ, ի շատէն եւ ի սակաւէ, այլ ի տեղւոյ ձեռնարկել. քանզի տեղի խոստովանաբար քանակ է, եւ ներհական վերին տեղի ներքին տեղւոյ: Առ որ ասեմք՝ եթէ ոչ է վերին տեղի ներքին տեղւոյ ներհական. քանզի վերին եւ ներքին երկակի ասի, ոմն՝ առ բնութիւն, եւ ոմն՝ առ մեզ. առ մեզ, յորժամ զվերին եւ զներքինն ոտիւք սահմանեմք եւ գլխով, ի վեր ասելով՝ զի վեր քան զգլուխն կիսագունդ, իսկ ներքին զայն՝ որ ընդ ոտիւքն է: Իսկ առ բնութիւն վերին ասի եւ ներքին. վերին՝ բոլոր երկին, առ որ միտէ թեթեւն, իսկ ներքին՝ զերկիր, յոր միտեն ծանունք: Բայց եւ ոչ որ առ մեզ է վերին եւ ներքին ներհական է վասն երից ձեռնարկութեանց. նախ այն՝ զոր եւ ի հակյարսաստութեան ասացաք: Որոց առաջին էր այս՝ եթէ վերինն եւ ներքինն ինքեանք, որ ինչ ենն՝ այլ այլոց ասին գոլ, իսկ ներհականք ինքեանք, որ ինչ ենն՝ այլց ոչ ասին գոլ, որպէս ասացաւ. ապա ուրեմն՝ վերինն եւ ներքինն ոչ են ներհական: Երկրորդ ձեռնարկութիւն եթէ վերին եւ ներքին ներհականք են՝ ի միասին գոյացին ներհականքն նմին իրի կարող գոլոյ լինիլ եւ վերին եւ ներքին: Երրորդ՝ եթէ վերինն եւ ներքինն ներհականք են՝ եղիցի ոք ինքն ինքեան ներհական. քանզի կարող է վերին լինիլ եւ ներքին ի նմին ժամանակում առ այլ եւ առ այլ: Արդ՝ այսպէս ցուցանեմք եթէ որ առ մեզ վերինն եւ ներքինն ոչ են ներհականք: Այլ եւ ոչ՝ ոք առ վերինն եւ ներքինն է բնութիւն՝ ներհականք են. եւ մի որ ասացէ զայն՝ եթէ եզերք ներհականց շարժմանցն ներհականք են եւ եզր ի վերն շարժման վերին տեղւոյն, իսկ ի վայրն շար-

---

2 A. *ի ձեռն — հակայարսաստութեան*] El. διὰ τῆς ἐνστάσεως καὶ ἀντιπαραστάσεως 197,10—11. 5 A. *ձեռնարկել*] El. *չէք*. 8. 11 A. *ասի*] El. *չէք*. 9 A. *կիտիւք սահմանեմք*] El. τοῖς ποσὶν ὁρίζομεν 197,16—17. 10 A. *ուղղ. եւ զի վեր*. 15 A. *նախ այն — ասացաք*] El. ἃ καὶ ἐπὶ τῆς ἀντιπαραστάσεως ἐλέγομεν 197,21. 19 A. *է թէ փխ. եթէ*. 20 A. *ուղղ. եւ ի միասին*. 20 A. *նմին իրի*] El. τοῦ αὐτοῦ 197,25. 28—1 A. *եւ եզր — տեղւոյ*] El. καὶ πέρας μὲν τῆς ἐπὶ τὰ ἄνω κινήσεως ὁ ἄνω τόπος τῆς δὲ ἐπὶ τὰ κάτω ἡ κάτω τόπος 197,30—31.

ժման ներքին տեղւոյ: Մի՛ ոք ասասցէ զայս. քանզի եզերք ներհականացն շարժմանց ոչ եթէ տեղիք են, այլ դադարմունք: Բայց եթէ եւ տամք իսկ, եթէ եզերք ներհականացն շարժմանց տեղիք են վերին եւ ներքին՝ ոչ եթէ այն ինչ տեղիք են ներհականք, այլ վերին եւ ներքին. եւ պարզաբար ասել եթէ եռակսն մակքայքն ամենայն ոչ եթէ տեղի առնեն, այլ կալուածս առելոցն. այսպիսի ինչ առլոցն. քանզի նոյն ինքն վերինն եւ ներքինն առընչին է եւ այլ իմն ունիլ առի, իսկ տեղի ոչ է առընչիցն, այլ ըստ պատահման ի վերն լինելոյ: Արդ՝ այլ է վերին եւ այլ է վեր լինիլ. քանզի վերինն տեղի է եւ ի քանակն վերաբերի, իսկ ի վերն լինիլ ի տեղւոջ է լինիլ եւ յուր ստորոգութիւնն վերաբերի: Զնոյնս եւ վասն ներքին տեղւոյ ասասցուք, եթէ այլ է ներքին տեղի եւ այլ է ի ներքնումն լինիլ: Բայց ցուցցուք, եթէ եւ ոչ տեղի՝ որպէս տեղի տեղում ներհական, վասն զի եւ ոչ վերին տեղի՝ որպէս տեղի ներքին տեղւոյ ներհական քան**:

## ԸՆԴ ԱՅՍՈՍԻԿ ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՎ ԵՒ ԱՌԱՋԻԿԱ ԳՐԱԿՔ. ԳՐԱԿՔ ԼԸ

„Եւ մանաւանդ զի ներհակութիւն քանակ“.

Ցանդիմանեաւ Արիստոտելի զայնոսիկ, որք ասէին՝ եթէ ներհակ է վերին տեղին ներքնում, եւ ըստ ներսաստութեան եւ ըստ հակյարսաստութեան ի բառնալ զձեռնարկութիւնն որ ասէր՝ եթէ „եզերք ներհականացն շարժմանց ներհակք են“

---

2 A. *այլ դադարմունք]* El. ἀλλ' αἱ ἠρεμίαι 197,32. 4—15 A. *ոչ եթէ — ներհական քան]* El. οὐχ ἄντικρυς αὐτοὶ οἱ τόποι, ἀλλὰ τὸ ἄνω καὶ κάτω γενέσθαι. ἄλλο δὲ τὸ ἄνω παρὰ τὸ ἄνω γενέσθαι· τὸ γὰρ ἄνω τόπος καὶ ὑπὸ τὸ ποσὸν ἀνάγεται, τὸ δὲ ἄνω γενέσθαι ἐν τόπῳ ἐστὶ γενέσθαι καὶ ὑπὸ τὴν ποῦ κατηγορίαν ἀνάγεται. τὰ αὐτὰ καὶ ἐπὶ τοῦ κάτω λεκτέον, ἄλλο τὸ κάτω γενέσθαι καὶ ἄλλο τὸ κάτω· τὸ μὲν γὰρ ἐν τόπῳ τοπικόν, τὸ ἐν τόπῳ γενέσθαι τῷ κάτω, καὶ ὑπὸ τὴν ποῦ κατηγορίαν τελεῖ, τὸ δὲ κάτω τόπος καὶ ὑπὸ τὸ ποσὸν ἀνάγεται. δείξομεν δὲ ὅτι οὐδὲ τῷ τόπῳ ὡς τόπῳ ἐστί τι ἐναντίον, διὸ οὐδὲ ὁ ἄνω τόπος τῷ κάτω ὡς τόπῳ ἐναντίον· ὥσπερ γὰρ 197,33—198,6. 13 El. 198,6 ὥσπερ γὰρ — [illegible] 198,27 μαχόμενοι] A. *չէք*. 21—22 A. *ի բառնալ — ասէր]* El. ἀνελὼν τὸ ἐπιχείρημα τὸ λέγον 198,31—32.

*այժմ դարձեալ զնոյն ինքն զայս ի ձեռն այլ ձեռնարկութեան նիւթելով յանդիմանէ: Իսկ ձեռնարկութիւնն է այսպիսի. երկրին ի յերկրէ յոլովիւ տարակացեալ. քանզի թէպէտ եւ մեծագոյն տարակացութիւն ի քեւեռէն է առնուլ՝ զտրամաչափն, այլ որպէս բոլորակ ի քեւեռէ եւ ծիր ի միջոցէ՝ կարի շատ գոյ տարակացեալ. իսկ որ կարի շատն գոն տարակացեալ՝ ներհականք են միմեանց. ապա ուրեմն՝ երկրին ներհական է երկրի: Եւ զի ներհական է՝ յայտ է, որ հանդիպաւն նոցա, այսինքն՝ կարի յոյժ տարակացութիւն, որ եւ սահման եղեւ ներհականացն: Առ որ ասեմք, եթէ ոչ է բովանդակ կարի յոյժ տարակացութիւն առ ի յառնելը զներհականս. քանզի եթէ որ կարի յոյժ տարակացութեամբ ներհականքն որոշին եւ յայսմանէ ցուցանի երկրին ներհական երկրում, վասն զի մեծագոյն է տարակացութիւնն՝ մարթի առնուլ զբոլոր տրամաչափն երկնի կէս տրամաչափի որ ի քեւեռէն է՝ եղիցի ըստ մեզ վերինն եւ ներքինն մանաւանդ ներհական՝ այսինքն՝ որ ի վերայ երկրի կիսագունդն եւ որ ի ներքոյ երկրի, որպէս բոլորիւն տրամաչափաւն տարակացեալք, քան զայն որ ըստ բնութեան, այսինքն՝ բոլոր երկրին, առ որ միտեն թեթեւքն, եւ երկիր, առ որ միտեն ծանունքն, որք ի քեւեռէն միայն ·են տարակացեալք. քանզի կրկնակ է ամենայն տրամաչափ բոլորակին քան զայն՝ որ ի քեւեռէն է տարակացեալ: Այլ եւ ոչ հուր ջրում եղիցի ներհական, այլ մանաւանդ երկրում եղիցի ներհական՝ որպէս կարի յոյժ տարակացեալ. քանզի նախ հուր է ի վեր եւ ապա աւդ եւ ապա ջուր եւ ապա երկիր: Արդ ոչ երբէք ըստ որակութեանց ներհականք են միմեանց հուր եւ ջուր, վասն զի հուր է տաք եւ չոր, իսկ ջուր՝ հով եւ զէջ, այլ հուր եւ հող մանաւանդ ներհականք են միմեանց՝*

---

4 A. *զտրամաչափն]* El. τὴν ὅλην διάμετρον 199,1. 7 A. *միմեանց]* El. *չիք*. 8—9 A. *որ—ներհականացն]* El. τὸ γὰρ συμβὰν τούτοις, λέγω δὲ ἡ πλείστη διάστασις, ὁρισμὸς γέγονε τῶν ἐναντίων 199,3—4. 13—16 A. *վասն զի—ներհական]* El. ἐπειδὴ μείζω τῆς ἐκ τοῦ κέντρου πρὸς τὸν κύκλον διαστάσεως ἔστι λαβεῖν, τὴν ὅλην τοῦ κύκλου διάμετρον, ἔσται τὰ πρὸς ἡμᾶς ἄνω καὶ κάτω μᾶλλον ἐναντία 199,7—9. 20—23 A. *քանզի—տարակացեալ]* El. διπλασία γὰρ ἡ πᾶσα τοῦ κύκλου διάμετρος τῆς ἐκ τοῦ κέντρου πρὸς τὸν κύκλον διαστάσεως. ἀλλὰ καὶ τὸ πῦρ οὐκέτι τῷ ὕδατι ἐναντίον ἔσται, ἀλλὰ μᾶλλον τῇ γῇ πλεῖστον διεστώσῃ 199,12—15. 24 A. *ի վեր]* El. *չիք*. 27—3 *այլ հուր—տարակացեալ]* El. ἀλλὰ πῦρ καὶ γῆ μᾶλλον ἐναντία

*որպէս կարի յոյժ տարակացեալք միմեանց** առաջ ուրեմն՝ բաւանդակ տեղեաւն միայն կարի յոյժ տարակացան, այլ եւ բնութեամբ արժան է կարի յոյժ տարակայանալ: Այլ եւ ոչ այս միայն է բաւանդակ. քանզի անա գոյացութիւն եւ պատահումն, զոն եւ ոչ զոն եւ կարի յոյժ են տարակայացեալ եւ ոչ են ներհականք. քանզի եւ ապրեցուցիչք եւս է գոյացութիւնն պատահմանն. քանզի ի նմա ունի զգոլն: Այլ պարտ է եւ ի մի մի սեռ վերաբերիլ. այս միայն բաւանդակ է. քանզի անա սպիտակութիւն եւ ջերմութիւն ի մի սեռ վերաբերին յորակութիւն եւ ոչ են ներհականք: Այլ արժան է եւ ի միում զոլ յենթակայում զնոսա. քանզի ջերմութիւն եւ սպիտակութիւն ոչ ի միում ենթակայում են. քանզի ջերմութիւն յանորակ մարմին է, իսկ սպիտակութիւն յորակիցելում՝ որպէս երկրորդ որակութիւն. զի նախ յանորակ մարմնում լինի ցրտութիւն, ջերմութիւն, խոնաւութիւն, ցամաքութիւն, եւ ապգոյն սպիտակութիւն կամ թխութիւն: Այլ եւ ոչ այս միայն բաւանդակ. քանզի անա սպիտակութիւն ի կարափում եւ թխութիւն յագռաւում ի միում ենթակայում են (քանզի որակացեալ ի մարմնում են), եւ ոչ են ներհականք միմեանց. քանզի ոչ փոփոխին ի միմեանս. բայց արժան է ի միմեանս փոփոխել: Արդ՝ ոչ է բաւանդակ ի վերայ ներհակացն տեղական կարի յոյժ տարակացութիւն, այլ արժան է եւ բնութեամբ կարի յոյժ տարակայանալ, այլ եւ զայլ առացեալսն ունել, որպէս զի եղիցին ներհականքն. քանզի եթէ ոչ լինին*

---

διὰ τὸ πλεῖστον ἀλλήλων διεστάναι, εἴπερ ποιήσομεν τὰ πρὸς ἡμᾶς ἄνω καὶ κάτω μᾶλλον ἐναντία ὡς διπλασίονα διάστασιν ἀφεστηκότα τοῦ φύσει ἄνω καὶ κάτω, τὴν ὅλην διάμετρον. οὐκ ἀρκεῖ οὖν τὸ τοπικῶς διεστάναι πλεῖστον, ἀλλὰ καὶ τῇ φύσει δεῖ πλεῖστον διεστάναι 199,18—22. 3 *բաժան է* փխ. *արժան է*. 5—8 A. *զոն եւ ոչ—բաւանդակ է]* El. καὶ ὂν καὶ μὴ ὂν τῇ φύσει πλεῖστον διεστήκασι καὶ οὐκ εἰσιν ἐναντία, τοὐναντίον δὲ καὶ σωστικὴ ἡ οὐσία τοῦ συμβεβηκότος ἐν αὐτῇ τὸ εἶναι ἔχοντος. ἀλλὰ χρὴ καὶ ὑπὸ τὸ αὐτὸ γένος ἀνάγεσθαι. καὶ οὐδὲ τοῦτο ἀρκεῖ μόνον 199,23—26. 8 A. ուղղ. *սպիտակութիւնն*. 9 A. *յորակութիւն]* El. *չիք*. 13 A. *յորակիցելում]* El. ἐν πεποιωμένῳ σώματι 199,29. 15 A. *եւ ապգոյն]* El. καὶ τότε 199,31. 17 El. ἐν ἑνὶ ὑποκειμένῳ εἰσίν 199,33] A. *ի միում ենթակայում յենթակայում են*. 21 A. *տարակուսութիւն* փխ. *տարակացութիւն]* El. διάστασις 199,35. 23—10 A. *քանզի եթէ—ստորոգին]* El. εἰ μὴ γὰρ ταῦτα πάντα συνδράμῃ, οὐκ εἰσιν ἐναντία. ἀλλὰ ταῦτα τείνει ἤτοι ἁρμόζει πρὸς Πλάτωνα τὰ λεχθέντα ἐπιχειρήματα ὑπὸ τῶν κατα-

*ընթացակիցք այս ամ՝ նա ոչ են ներհականք: Այլ այսոքիկ պատկանին Պղատոնում ծեռնարկութեանցն, որք ցուցանեն՝ եթէ երկին երկրում ներհական՝ որպէս կարի յոյժ տարակացեալ. քանզի հետեւի Պղատոնում՝ որ տեղական կարի յոյժ տարակացութեամբք սահմանէ զներհականսն՝ ոչ է ասել զջուր հրում ներհական ըստ տիրաբար ներհականսն, այլ զերկիր հրում ասէ ներհական՝ որպէս կարի յոյժ տարակացեալ. քանզի յոյժ տարակացեալքն միմեանց ներհակութեամբ մէջս ասէ զոլ: Եւ այսքան յաղագս երկրորդ յատկի քանակիս: Իսկ այլ երկու յատուկքն քանակիս՝ զչափիլն ստորոգին:* ***

---

σκευαζόντων ὅτι ἐναντίος ὁ οὐρανὸς τῇ γῇ ὡς πλεῖστον διεστὼς τῷ τόπῳ· ἕπεται γὰρ τῷ Πλάτωνι τὰ ἐναντία ὁρίζοντι τῇ πλείστῃ τοῦ τόπου διαστάσει μὴ λέγειν τὸ ὕδωρ τῷ πυρὶ ἐναντίον κυρίως ἐναντίον ἀλλὰ τὴν γῆν τῷ πυρὶ ἐναντίαν ὡς πλεῖστον διεστῶσαν· τὰ γὰρ πλεῖστον ἀλλήλων διεστῶτα κατ' αὐτὸν ἐναντία, τὰ δὲ τῇ θέσει μέσα καὶ τῇ φύσει μέσα λέγονται. καὶ ταῦτα μὲν περὶ τοῦ δευτέρου ἰδίου τοῦ ποσοῦ. Τὰ δὲ δύο ἴδια τοῦ ποσοῦ, τὸ μετρεῖσθαί φημι 199,37—200,8. 10 El. 200,8 *մինչեւ* 255,33] A. *չիք*.

## ‹ՀԱՏՈՒԱԾ ԻՆՉ ՄԵԿՆՈՒԹԵԱՆ ՍՏՈՐՈԳՈՒԹԵԱՆՑՆ ԱՐԻՍՏՈՏԵԼԻ›.

. . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .

*անունութենէն եւ ապա ելեսցուք յիրն: Եւ պարտ է գիտել, զի հերձուածն միջակ գոյ ղրութեան եւ հասարակ մտածութեան: Եւ ղրութիւնն ամենեւին ոչ ճայնակցի, իսկ հասարակ մտածութիւնն յամենայնի ճայնակցի: Եւ զոր ասեմս այս է՝ Երակղիտոս արտաղրեաց զամենայն ինչ անշարժ գոլ: Եւ Եփեկտեանք հասարակապէս մտածեցին՝ ոչինչ գոլ անշարժ, որ եւ եռոտնեայք անուանին. քանզի եռակի տային զպատասխանիսն: Քանզի հարցեալք՝ թէ՞ է տիվ, ասէին՝ կամ է, կամ չէ, կամ է եւ չէ. եւ զի է ... հասարակ մտածութիւնն յամենայնի ճայնակից յասելն, թէ հուր ջեռուցանէ եւ ջուր ցրտացուցանէ: Արդ այսպիսիքս ամենեւին ճայնակցին:*

*Արդ ասասցուք՝ զի՞նչ է հերձուած: Հերձուած է ժողով բազում արանց առ միմեանս ճայնակցեալք: Եւ վասն ասելոյն „բազում արանց“՝ տորհեաց զնայ ի ղրութենէն. քանզի նա միոյ առն կարծիք գոյ: Եւ վասն ասելոյն՝ „առ միմեանս ճայնակցեալ առ այլս ոչ ճայնակցեալք՝“ տորհեաց զնա ի հասարակ մտածութենէն. քանզի նա ամենեւին ճայնակցի: Այլ թէպէտ եւ ասաց՝ „բազում արանց“ ոչ աննշանից, այլ արհեստականաց եւ մակացականաց:*

---

A. չիք վերնագիր եւ սկիզբն թերի. 12 A. Մի քանի բառ. քերուած. 15—22 Հմմտ. Եղիաս 2,18—3,8.

*Արդ՝ վասն զի այս ասացաւ՝ ասասցուք ըստ քանի եղանակս անուանին իմաստասիրութեանն հերձուածք: Քանզի անուանին հերձուածքն՝ կամ ի սկզբնաւորէ հերձուածին, որպէս ի Պղատոնէ Պղատոնականքն եւ յԱրիստոտելէ Արիստոտելականք, կամ ի գաւառէն՝ որպէս Ցիւրենացոցն կամ Գենէտացոց եւ Եղէղացոց իմաստասիրութիւնն, որպէս զի սոյն Էղէղացւոյ՝ ոչ Կիտրացւոյն, որ ի ծեռն ե ծեռնարկութեան ի բաց բառնայ զշարժութիւն, կամ ի յեղանակէ կենացն որպէս Կիւնիկեցւոց իմաստասիրութիւնն: Կիւնիկեցիք կոչեցան, զի որպէս շունք անամաւթաբար կեան: Եւ պարտ է գիտել, թէ անամաւթութիւնն կրկին է՝ կամ ի վեհագոյնն կամ ի վատթարագոյնն: Նմանապէս եւ ամաչելն կրկին է՝ կամ ի բարի կամ ի չար: Արդ՝ այժմ զանամաւթութիւնն, որ ի վեհագոյնն է՝ ասէ կէին (°). քանզի ասէին, թէ համագոյանալն բարի է թէ չար: Արդ՝ եթէ չար է՝ ո՛չ ի կիր առցուք զնա, որպէս թէ բարի պարտ է յորում ժամանակի եւ յոր տեղւոջ եւ իցէ կրել: Զի որպէս ասացեալ է՝ համագոյանալն վասն ծննդեանն զտաւ, եւ վասն ուտելոյն զնոյն ասէին: Եւ դարձեալ՝ ըստ այլ յեղանակի կոչեցան Կիւնեկեցիք, զի որպէս շունք ունին ինչ իմաստութիւն, զի զընդանիսն՝ եւ յորժամ հարկանին եւ խաքին՝ սիրեն, իսկ զաւտարսն, թէ եւ կերակրիցեն՝ ատեն, այսպէս եւ նոքա՝ զտուփողս իմաստասիրութեանն խընդութեամբ ընդունին, իսկ զյիմարսն ի բաց մերժեն: Դարձեալ՝ Կիւնիկեցիք ասացան, զի պաշտէին զշունս՝ որպէս ի Հելլենացւոց անշունչ դրաւշեալքն պաշտէին: Վասն որոյ եւ Պղատոնն ասաց՝ զՆէեմա շուն Եգիպտացի:*

*Եւ կամ ի կատարմանէն՝ որպէս Իդոնիկեանքն, զի սոքա ամենեւին զցանկութիւն պատուէին՝ ոչ զաղտեղին, այլ զվեհագոյնն՝ որ առ ի յԱստուծոյ է:*

*Եւ կամ ի տեղւոջէն, յորում վարժէինն. քանզի յԱթենայ զանազան սրահք գոյին՝ էր որ զեղեցիկ կոչէին վասն զեղեց-*

---

1—9 Համմտ. Եղիաս. 3,9 եւն. 9—26 Համմտ. Եղիաս 6,17—8,8. 30—3 Համմտ. Եղիաս 3,19—21.

*կութեանն, եւ էր որ կոչէր Ակադամիկեան: Եւ որ ի գեղեցիկ սրահսն ուսուցանէին՝ Ստոյիկեանք անուանէին: Իսկ որ յԱկադամիկեան սրահին վարժէին՝ կոչեցան Ակադոմիկեանք:*

*Կամ՝ ի յեղանակէ համեմատութեանցն՝ որպէս Եփեկտիկեանք իմաստասիրութիւնք: Եւ Եփեկտիկեանք կոչեցան, վասն զի յինքեանս ունէին զպատասխանիսն. վասն զի հարցեալ, թէ է՞ Աստուած՝ պատասխանէին՝ կամ՝ է, կամ՝ չէ, կամ՝ է եւ չէ:*

*Կամ՝ ի բախտէ եւ յիմնքէ պատահմանէ, որպէս կոչեցան Արիստոտելականք, այսինքն՝ ծեմականք. քանզի ի գնացս ուսուցանէին ըստ նմանութեան Պղատոնի: Վասն զի նա ասէր, եթէ չէ պարտ միայն զհոգին կրթել, այլ եւ զմարմինն. զի առողջ ունիցին զներգործութիւնսն: Վասն որոյ հրաման տայր բժշկապետն զյղիսն կրթել, զի ի ժամանակի արձակմանն քարեկիրթ լինիցի մանուկն:*

*Արդ՝ ըստ եւթն յեղանակի են եւ ասին իմաստասիրական հերձուածքն: Ցորս Ներկայ պրակս:*

## *ՏՆՍՈՒԹԻՒՆ ԵՐՐՈՐԴ*

*„Հոմանունք ասին“.*

*Հինգերորդ յեղանակ իմաստասիրական հերձուածոյն որ Իղոնիկեանցն է:*

*Արդ՝ ցանկութիւն ասեմ ո՛չ զաղտեղին՝ որ զոշոտ շարժութեանն է, այլ զհամեստականն: Արդ՝ է երբեք եւ աղտեղին ընդունելի ի դէպ ժամանակի. քանզի այս որ աղտեղիս թուի՝ է մեր բնութիւնս, վասն զի առանց սորա՝ կամ՝ միայն մնալ եւ կամ՝ բառնալ ազգի մարդկան: Այլ սովաւ հարկաւորաբար ի խաղանցականն յառաջածէ բնութիւնս:*

*Արդ՝ են Իղոնիկեցիք՝ Արիստիպպոս եւ Կղէոմբրոտոս, որոյ ընթերցեալ զՊղատոնական գիրսն, որ վասն խոկման մահուն, եւ ոչ իմացեալ զասացեալսն՝ ընկեց զինքն ի պարըսպէն:*

---

4—8 Հմմտ. Էլիաս 4,19—25. 8—14 Հմմտ. Էլիաս 9,14—18. 13 A. բըժըշկապետն. 16 A. էր կա փխ. Ներկայ. 27—4 Հմմտ. Դաւ. Սահ. 164,5—12.

*Վասն որոյ ասացեալն է ի Պասիլէ. „Բերկրեսջի՛ր, Կղէոմպրոտոս Ամբրակացի վազեալ ի բարձր պարըսպէն ի գետին, արժանի ոչինչ գործեաց մահու, այլ զՊղատոնի, որ վասն հոգւոյ գրէր՝ ընտրեալ“:*

*Արդ՝ վասն զի սոքա Իդոնիկեանք էին, եւ ընդ սոքաւք եւ Փիւղուս եւ Եպիկորուս՝ յայտնի է աստի. զի զոյր Սոկրատ ի բանդի՝ ոչ երթեալ առ նա, ուստի հարցեալ Քսենոկրատայ զՍոկրատ, թէ „ընդէ՞ր Արիստիպպոս եւ Կղէոմբրոտոս ոչ եկին“՝ ասաց՝ „քանզի են Իդոնիկացիք՝ ոչ կամին հուպ առ տրտմեալս լինել“: Եւ վասն զի Փղոս Իդոնիկեան էր՝ յայտնէ անունն, զի ցանկութիւն ասի. ուստի եւ փղոս անուանեմք զտարփաղսն:*

*Դարձեալ զի եւ Էպիկորոս Իդոնիկեան էր՝ յայտ է յասելոյ նորա՝ մինչեւ ի լուսնական գունդն եւ եթ գոլ զնախախնամութիւնն: Քանզի ասէր, թէ վերնոցն առնէ աստուածայինն նախախնամութիւն, զի կատարուն ունին զցանկութիւնն: Իսկ որ ընդ լուսնովս են՝ այդպէս տղացեալք են, վասն որոյ ոչ առնէ զնախախնամութիւնն:*

*Արդ՝ վասն զի Իդոնիկեանք էին՝ պատրաստէին զայդ ի չորից ձեռնարկութեանց. քանզի ասէին, թէ ամենայն ի հեշտութիւնն մերձենայ: Արդ՝ որ ի հեշտութիւնն մերձենայ՝ կատարեալ ունի զքարին՝ զցանկութիւն կատարեալ արդեամբք. ցանկութիւնն այսպէս է առ նոսին, զի թէպէտ եւ ամենայն ի հեշտութիւնն մերձենայ, այլ ո՛չ որ առ ի մէնջն է, այլ որ առ աստուածայինն. քանզի ամենայն յաստուածայինն մերձենայ, եւ այդպէս դարձուցանեմք ձեռնարկութիւնս զայս:*

*Երկրորդ ձեռնարկութիւն ասէին՝ թէ զտրտմականսն հեշտ գոլով ախորժեմք. իսկ քարիքն տրտմականք են՝ ի բաց մերժեմք. վասն զի աղքատութիւնն մարմնոյն, այլ ոչ եթէ հոգւոյն է չափ. զոր եւ Պղուտինոս հրամայէ՝ մարմնով աղքատանալ, իսկ հոգւով ճոխանալ:*

*Երրորդ ձեռնարկութիւնն՝ զոր Ազոնտէսն ասէ, թէ մինչ*

---

9 A. Տ..պ. 12—18 Հմմտ. Եւլիաս 8,16—19.

*աստուածայինն ունի զանհոգ կեալն՝ առաւել մեզ պարտ է անհոգաբար կեալ: Այլ ոչ զայդ ասէ Ազոնտէս, այլ եթէ աստուածայինն՝ զոր ինչ եւ կամի՝ անխափանաբար եւ կատարէ. իսկ մարդիկ ո՛չ զամենայն՝ զոր ինչ եւ կամին՝ կատարել կարեն:*

*Չորրորդ ձեռնարկութիւն, իբրու թէ յարարչէն իսկ ասացեալ՝ միշտ յարախրախանալ յաղագս հիւրոց եւ բարեկամաց ելամտից: Այլ եւ ոչ զայս ընդունիմք, զի մարմնականքն առ հոգեկանսն փոփոխեալ եղեն ուրախութեանն մեզ կերք. եւ վասն Իդոնիկեանցն:*

*Վեցերորդ յեղանակ իմաստասիրութեանն է Եփիկտիկեանցն: Եփիկտիկեանք կոչեցան առ պատասխանեալն նոցա ստորասութեամբ եւ բացասութեամբ: Քանզի հարցեալք թէ՞ է տիւ ասէին՝ կամ է, կամ չէ, կամ է եւ չէ: Եւ առաջնորդ էր նոցա Էռակլատոս եւ Պիւռոն եւ Պռոտագորաս՝ ուստի եւ Պռոտագորացիք կոչեցան: Արդ են նոքա նոր Ակադեմեանք, ո՛չ եթէ հինքն՝ ուստի զայրն Պղատոն. վասն որոյ ոմանք կարծեցին զՊղատոնէ վասն ասելոյն նորա թէ ոչի՛նչ գիտեմ, եւ որ ասաց ի բանս իւր՝ զարդարն մակացութիւն զոլ եւ ոչ մակացութիւն: Այլ որ ասացն, թէ „կարծեմ"՝ վասն իմաստասիրական բարուցն առնէր, այլ ոչ եթէ Եփիկտիկեան էր: Եւ որ ասացն, թէ „ոչինչ գիտեմ"՝ վասն իմանալեացն ասաց. քանզի իմանալիքն անհասանելիք են: Եւ որ զարդարն կոչէր մակացութիւն եւ ոչ մակացութիւն՝ դայեկաբար առնէր, կամելով զմեզ պատրել եւ տալ մեզ զվճիռն, որպէս դայեակք՝ յորժամ զմանուկս կամիցին պատրել՝ տալ նոցա խաղալիկս: Այսպէս եւ Պղատոն, որպէս իմաստասէր այր՝ եթող մեզ զվճիռն: Եւ զի ոչ էր Իփիկտիկեան՝ յայտ էր յասելոյ նորա առ Պռոտագորաս, որ ոչ զոլ ասէր զհասումն. „Հարցանեմ զքեզ, զիա՞րդ ասես ոչ զոլ հասութիւն, որպէս հասեալ: Յայտ է՝ եթէ զոյ հասութիւն: Ապա եթէ*

11 A. *վեցերրորդ.* 144,11—145,10 Հմմտ. Էլիաս 4,25—5,18. 15 A. *Պռոտուգորաս.* 26 A. *ըզվըճիռն.*

